«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2019

Արտաքին կենցաղի տեր օգնություն։
Ա. Ասատրյան 11.10.19թ. ժ. 15:40.

ՆԱԽԱԲԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է համալսարանի ներկայացրած դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային (Հոլանդիայից ժամանած) փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երեք խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու ակադեմիայի հավակնությունների տեսանկյունից,
3) փաստել հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվություններին համահունչ բարեփոխումների իրականացումը ՄՈՒՀ-ում:

Այս զեկույցը պարունակում է ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, ինչպես նաև միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 20

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 26

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 26

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 27

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 30

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 30

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 33

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 38

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 47

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 62

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 68

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 77

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 86

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 94

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 97

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 103

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 110

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 111

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 113

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 115

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 118

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ_Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 119

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 120

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

ՄՈՒՀ-ը, 2011թ. գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն, հավատարմագրում անցել է 2015թ.-ին: Հավատարմագրման ներկա գործընթացին համալսարանը մասնակցել է իր դիմումի համաձայն:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀՊՄՀ-ն «կրթական, գիտահետազոտական և մշակութային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձորակ մասնագետների պատրաստումը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը և հմտությունների ձևավորումը, պահպանումը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածումը»:

ՀՊՄՀ 2016-2020թթ. ռազմավարական զարգացման ծրագրում ձևակերպված են հաստատության առաքելությունն ու նպատակները: Հարկ է ընդգծել, որ «Արդիական հետազոտություն և նորարարություն» ուղղության ներքո, ՄՈՒՀ-ը, որպես առանձին նպատակ, սահմանում է համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացումը, մրցունակ գիտական և նորարարական ներուժի ձևավորումը և աստիճանական հետազոտական կարգավիճակին անցում կատարելը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանի կողմից իրականացվող գործունեությունը, ընդհանուր առմամբ, համահունչ է սահմանված առաքելությանը: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող ՄԿԾ-ները առաքելությամբ սահմանված ոլորտներում են, թողարկում են տարբեր որակավորումներով մասնագետներ, այս պահին՝ հիմնականում մանկավարժի որակավորմամբ, թեև հարկ է փաստել, որ ՄՈՒՀ-ն ունի լիցենզիաներ՝ շնորհելու նաև այլ, ոչ մանկավարժի որակավորումներ: Այնուամենայնիվ, թե՛ արտաքին, և թե՛ ներքին շահակիցները ՄՈՒՀ-ն ընկալում են որպես բուն մանկավարժական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն և ոչ որպես դասական կամ «գիտահետազոտական համալսարան»:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո վերաձևակերպված առաքելությամբ ՄՈՒՀ-ը առաջնայնորեն չի շեշտադրում իր մանկավարժական ուղղվածությունը: Փորձագիտական խումբը կարծում է, որ այս կերպ խզում է առաջանում ՄՈՒՀ-ի մասին առկա հանրային ընկալումների և անվան հիմնական շեշտադրման հետ: Բացի այդ, մանկավարժությունը, որը ՄՈՒՀ-ի ավանդական կողմնորոշումն է և ռազմավարական նշանակություն ունի երկրի համար մանկավարժական կադրերի պատրաստման առումով, միտում ունի երկրորդ պլան մղվելու: Այս մոտեցումը շահեկան չէ ՄՈՒՀ-ի համար՝ հաշվի առնելով, որ պրոֆիլային լուրջ փոփոխությունը պահանջելու է նոր ՊԴ կազմի ներգրավում և բովանդակության ստեղծում: Որպես դասական համալսարան զարգացմանը միտված այսպիսի քայլերը ՄՈՒՀ-ում դեռևս իրողություն չեն՝ պայմանավորված նաև վերակողմնորոշման համար պահանջվող նոր կադրային, նյութատեխնիկական և ֆինանսական բազայի սահմանափակությամբ:

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: Փորձագիտական խմբի անդամների համառոտ ինքնակենսագրականները

Նախորդ հավատարմագրման արդյունքում ՄՈՒՀ-ը ստացել էր կառավարմանն ու վարչարարությանը վերաբերող բազմաթիվ խորհրդատվություններ, որոնց իր հաջորդիվ գործունեությամբ անդրադարձել է մասնակիորեն կամ ֆորմալ կերպով: Թեև ՄՈՒՀ-ի 2016-2020թթ. ՌԾ-ում ներկայացված նպատակները կապված են առաքելությանը, շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ***առաքելությունն ու ռազմավարական նպատակները***[2] թույլ են արտացոլում ներքին և արտաքին շահակիցների կարծիքը: ՌԾ ԳԱՑ-երի, ինչպես նաև արդյունավետության գնահատման հստակ ու հուսալի մեխանիզմների բացակայությունը վտանգի տակ է դնում բացթողումների վերհանումը, պլանավորմանը և բյուջետավորմանն ուղղված որոշումների կայացման հիմնավորվածությունը:

Նախորդ փորձագիտական գնահատումից հետո ՀՊՄՀ-ն ընդլայնել է գործունեության շրջանակը՝ իրականացնելով բնական, հումանիտար, սոցիալական գիտությունների և արվեստի ոլորտների 99 ՄԿԾ-ներ, ուսուցման առկա և հեռակա ձևերով, բակալավրական և մագիստրոսական մակարդակներում: ՄՈՒՀ-ն նաև իրականացնում է մի շարք ծրագրեր միջին մասնագիտական և հետբուհական մակարդակում: ՄԿԾ-ներն ունեն միասնականացված ձևաչափեր, կրթամասերի համար կրեդիտների բաշխման միասնական մոտեցում, որի հիմքում ընկած է կրթամասի առարկաների կրեդիտների գումարը, ոչ թե կրթամասը ներկայացնող ուսումնառության արդյունքի համար նախատեսված բեռնվածությունը: ՄԿԾ-ները կառուցված են վերջնարդյունքահեն մոտեցմամբ: Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը քարտեզագրել է հավատարմագրման համար ներկայացված ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները՝ աղյուսակի մեջ նշելով, թե ՄԿԾ-ի որ արդյունքն է վերաբերում ՈԱՇ-ի կոնկրետ նկարագրիչին: Թեև համապատասխանության խորքային վերլուծություն առկա չէ, փորձագիտական խումբը փաստում է, որ ՄԿԾ ուսումնառության արդյունքները, ըստ ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված աղյուսակի, հիմնականում արտացոլում են ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչի պահանջը: Այնուամենայնիվ, մի շարք դեպքերում վերջնարդյունքները կրկնական են ՄԿԾ-ներում, նաև առարկայական մակարդակում: Բակալավրական ծրագրերի ուսումնառության արդյունքները ձևակերպված են ընդհանրական, առանց գիտակարգային բովանդակությանն անդրադարձի: Կրեդիտների հիմքում ընկած բեռնվածության հստակեցման, վերջնարդյունքների չափելիության բարելավման անհրաժեշտություն կա:

ՄԿԾ-ների մասնագրերում, ինչպես նաև առարկայական ծրագրերում ՄՈՒՀ-ը թվարկել է դասավանդման և ուսումնառության հավանական մեթոդները՝ ըստ ուսումնառության արդյունքների: Փաստաթղթերի ուսումնասիրության (ՄԿԾ-ների մասնագրեր, առարկայական նկարագրեր, դասընթացների թեմատիկ տրոհումներ), շահակիցների հետ քննարկումներից ստացված տեղեկատվության, ինչպես նաև դասալսումների ընթացքում ՄԿԾ մասնագրերում և առարկայական ծրագրերում հատկորոշված մեթոդների մեծ բազմազանության կիրառման փաստեր չեն արձանագրվել:

ՄՈՒՀ-ում գործում է գնահատման բազմագործոն համակարգ, ընդ որում փորձագիտական խումբը գտնում է, որ գործոնների տեսակարար կշռի որոշարկումն ու փոփոխությունները միշտ չէ, որ բխում են կրթության արդյունավետ իրականացման պահանջից՝ խաթարելով օբյեկտիվ և թափանցիկ գնահատման պահանջի բավարարումը: Առարկայական ծրագրերի և առանձին դասընթացների առաջադրանքների/հանձնարարությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հիմնականում կիրառվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատումը, ձևավորող գնահատմանը

[2] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «....որ գործող առաքելությունն ու ռազմավարական նպատակները թույլ են արտացոլում ներքին և արտաքին շահակիցների կարծիքը»:

միտված առաջադրանքները փոքրաթիվ են: Բացի այդ, գնահատման փաստացի կիրառվող մեթոդները սակավաթիվ են, հիմնականում միտված են գիտելիքի գնահատմանը: Հմտությունների ու կարողությունների գնահատման գլխավոր հարթակը մասնագիտական (ուսումնական, մանկավարժական, գիտահետազոտական, մանկավարժահետազոտական) պրակտիկաների ընթացքն է՝ տարբեր փուլերով (ուսումնաճանաչողական», կիրառական և վերլուծական, ամփոփիչ-գնահատողական): Հաշվի առնելով այն, որ ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքների՝ ՈԱՇ-ին, ինչպես նաև առանձին դասընթացների արդյունքներին համապատասխանեցման գործիքներն ի ցույց են դնում էական բացեր, իսկ դասավանդման և ուսումնառության ու գնահատման մեթոդները միշտ չէ, որ համապատասխանեցված են ուսումնառության արդյունքին և դրա ձևավորման համար անհրաժեշտ բովանդակությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ում կա ուսումնառության ակնկալվող արդյունքների ուղղահայաց և հորիզոնական ավելի սերտ համապատասխանեցման անհրաժեշտություն:

ՄՈՒՀ-ում առկա են ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի մշակման պահանջներ և գնահատման չափանիշներ՝ ըստ առանձին բաղադրիչների, ցիտման նորմեր և գրագողության դեմ պայքարի կանոնակարգ: Սակայն ավարտական աշխատանքների և թեզերի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ չնայած պահանջների առկայությանը՝ ոչ բոլոր աշխատանքներն ու թեզերն են դրանց բավարարում. մասնավորապես՝ ավարտական աշխատանքներում և թեզերում գերակշռում էին ռեֆերատիվ բնույթի նյութերը, գրեթե բացակայում էին հետազոտական և կիրառական բաղադրիչները: Բացի այդ, հետազոտական աշխատանքների ընտրված թեմաները երբեմն չեն համապատասխանում «մանկավարժ» որակավորմանը և գրեթե չեն առնչվում դպրոցի հիմնախնդիրներին: Ակադեմիական ազնվությանն օժանդակող կանոնակարգի առկայության պարագայում անգամ, անազնվության դեմ պայքարի գործող մեխանիզմներ չկան: Ավարտական աշխատանքներում և թեզերում գրագողության դեպքերի բացահայտմանը միտված կանոնակարգված միջոցառումներ չեն իրականացվում: Փորձագիտական այցի ընթացքում ուսումնասիրված ավարտական աշխատանքներում և թեզերում առկա էին գրագողության տարրեր, երբեմն բացակայում էր ուսանողի ինքնուրույն վերլուծությունը, այնինչ այսպիսի աշխատանքներն արժանացել էին դրական, անգամ՝ բարձր գնահատականների:

ՀՊՄՀ-ում իրականացվել է ՄԿԾ-ների բենչմարքինգ. համեմատություններ են արվել այլ ՄՈՒՀ-երի նմանատիպ ՄԿԾ-ների հետ, սակայն բենչմարքինգի արդյունքում տեղ գտած փոփոխությունները հատվածական են: Բենչմարքինգը հիմնականում սահմանափակվել է այլ՝ ազգային և միջազգային բուհերի առարկայացանկերի մեխանիկական հարադրմամբ. հենանիշ բուհերի ընտրության մոտեցումները չեն արտացոլում ՄՈՒՀ-ի կողմից որդեգրված քաղաքականության դրույթները:

ՀՊՄՀ-ն գիտակցում է[3]ուսանողակենտրոն ուսումնառության միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը, այդուհանդերձ այս պահին կիրառվող դասավանդման մեթոդներից գերակշռում են դասախոսակենտրոնները: Միևնույն ժամանակ նկատելի է ուսումնառության միջավայրերի բազմազանեցման միտումը. ՀՊՄՀ ղեկավարությունը ձգտում է ապահովել համապատասխան ռեսուրսներ՝ ժամանակակից մեթոդների հնարավորինս լայն կիրառության համար: ՄՈՒՀ-ը ներդրել է Google Classroom հարթակը: Թե՛ ՊԴ կազմի, թե՛ ուսանողների կողմից հարթակի օգտագործումը նախկինում ընկալվել է որպես հավելյալ բեռնվածություն: Վերջերս հարթակի ակտիվ օգտագործման պահանջի նվազեցման և բեռնվածության վերանայման ֆոնին՝ ՊԴ կազմը և ուսանողներն ավելի են հակված

[3] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «Թեև լինելով մանկավարժական բուհ՝ ՀՊՄՀ-ն գիտակցում է. . . . »:

գնահատել վիրտուալ հարթակի արժանիքները: Փորձագիտական խումբը գտնում է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների ուղղությամբ ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների իրականացման արդյունքում ձեռքբերումները չեն հանգեցրել ***վերհանված խնդիրների***[4] մեծ մասի լուծմանը և իրավիճակի էական, բովանդակային բարելավմանը:

Նախորդ փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա ՄՈՒՀ-ում մշակվել են ստորաբաժանումների գործառութային շրջանակը որոշարկող փաստաթղթեր, առկա են ուսումնաօժանդակ կազմի պաշտոնների անձնագրերը, ՊԴ կազմի տարակարգերի նկարագրերը: ՀՊՄՀ-ն թափուր պաշտոնների համալրումն իրականացնում է մրցութային կարգով և դասախոսներին հրավիրելու մեխանիզմով: Թեև ՀՊՄՀ-ում չի իրականացվել ՊԴ կազմի հավաքագրման և ընտրության մեխանիզմների արդյունավետության գնահատում, այդուհանդերձ, շահակիցները հիմնականում բավարարված են ՊԴ կազմից, ընդ որում, ուսանողներն ավելի զոհ են երիտասարդ դասախոսներից: Դասախոսական կազմի հավաքագրումն իրականացվում է ըստ դասընթացների հիման վրա ամբիոնների ներկայացրած պահանջների: Հարկ է նշել, որ ՀՊՄՀ-ն ներգրավում է նաև համատեղությամբ՝ քիչ բեռնվածությամբ կամ ժամավճարով աշխատող դասախոսների, որոնց մի մասը պրակտիկ ոլորտի մասնագետներ են, իսկ մյուսները դասավանդում են նաև այլ ուսումնական հաստատություններում: Հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքների հիման վրա ՄՈՒՀ-ը ՄԿԾ մասնագրերում ներառել է դասախոսին ներկայացվող պահանջներ, սակայն այդ պահանջները չեն արտացոլում կոնկրետ ՄԿԾ-ի առանձնահատկությունը, ընդհանրական են և կրկնվող:

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է դասախոսական կազմի բեռնվածության խնդիրը՝ մասնավորապես, այն հանգամանքը, որ բեռնվածության նորմերը շատ բարձր են, գործունեության բոլոր ձևերը չէ, որ փաստացի հաշվարկվում են, և քիչ ժամանակ է մնում հետազոտական գործունեության համար: ՀՊՄՀ-ում խիստ տարածված է մեկ դասախոսի կողմից բազմաթիվ առարկաներ (անգամ մինչև 17) դասավանդելը, ինչը կարող է մի կողմից ազդել դասավանդման որակի վրա, մյուս կողմից՝ վտանգել կրթական գործընթացի բնականոն ընթացքը, օրինակ՝ դասախոսի անաշխատունակության կամ այլ պատճառով տնական բացակայության դեպքում: ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի որակի և արդյունավետության վերլուծության և գնահատման որոշ մեխանիզմներ՝ ուսանողների շրջանում հարցումներ, դասալսումներ և քննարկումներ, թեև այս գնահատումների, մասնագիտական զարգացման, առաջխաղացման և վճարման միջև կապը բացակայում է: ՄՈՒՀ-ը նախատեսում է մեկ անգամ փորձարկված վարկանիշավորման համակարգի ամբողջական ներդրում, սակայն այս համակարգի կիրառությունն առանց վերոնշյալ համակարգայնացման արդյունավետ չի կարող լինել:

Թեև փորձագիտական նախորդ գնահատմամբ ՄՈՒՀ-ին առաջարկվել էր կազմել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագիր, այսպիսի ծրագիր դեռևս մշակված չէ. մասնագիտական զարգացումը հիմնականում իրականացվում է ՊԴ կազմի սեփական նախաձեռնողականության հաշվին: ՄՈՒՀ-ում գործում են դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի խրախուսման մեխանիզմներ (ՀՊՄՀ գիտական հանդեսում տպագրություն, միջազգային շտեմարաններում տպագրվելու դեպքում վճարների փոխհատուցում, ապահովագրություն):

---

[44] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «. . . . ձեռքբերումները չեն հանգեցրել առանձնացված խնդիրների մեծ մասի լուծմանը . . . .»:

Ներկայումս ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան ՄԿԾ-ների իրականացման համար հիմնականում բավարար է. ***համալսարանի մի մասնաշենքի***[5] ֆիզիկական մաշվածությունը և վթարայնությունը լուրջ ֆինանսական ներդրումներ է պահանջում: Ոչ վթարային մասնաշենքերում կա ենթակառուցվածքների բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման կարիք: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը՝ միտված ուսումնական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովելուն, էներգաարդյունավետ լուծումներ ներդնելուն: ՀՊՄՀ-ն վերջին շրջանում ***տեխնիկական***[6] միջոցներով հարստացրել է լսարանները, ստեղծվել են նոր լաբորատորիաներ: Սակայն լսարանները հիմնականում հարմարեցված չեն ինտերակտիվ, համագործակցային կամ ուսանողակենտրոն այլ մեթոդներ կիրառելու համար: ***ՄՈՒՀ-ի լսարանային ֆոնդի 60%-ն ապահովված է պրոյեկտորներով և «սմարթ» հեռուստացույցներով, որոնք բուհը համարում է ինտերակտիվ մեթոդի կիրառման կարևոր պայման***[7]: Ռեսուրսային բազայի խոշորածավալ հարստացումը հիմնականում կատարվում է միջազգային ծրագրերի կամ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, ***որոնք մեկանգամյա բնույթ կրող միջոցառումներ են և չեն երաշխավորում գործընթացի կայունությունը***[8]: ՄՈՒՀ-ը սեփական միջոցներից նույնպես հատկացումներ է արել մի շարք տեխնիկական միջոցների ձեռքբերման համար:

ՀՊՄՀ-ի բյուջեն ձևավորվում է պետբյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից, դրամաշնորհային միջոցներից և այլ աղբյուրներից, սակայն հիմնական մասը ուսանողական վարձավճարներն են: Եկամուտների գոյացման այս աղբյուրի հիմնականը լինելու փաստը վտանգում է ՄՈՒՀ-ի ֆինանսական կայունությունը՝ հաշվի առնելով ուսանողական համակազմի քանակական տատանումները: ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների կառավարման և մուտքերի բազմազանեցման համակարգը կայացած չէ, հատկապես ՄՈՒՀ-ն իր պրոֆիլային ուղղությունից բխող լրացուցիչ ծառայությունների մատուցումը (վերապատրաստումներ, ուսումնամեթոդական խորհրդատվություն և այլն) չի դիտարկում որպես հավելյալ եկամուտի աղբյուր: Ֆինանսական միջոցների բաշխումը դեռևս չի իրականացվում ըստ ռազմավարական նպատակների, թեև նախորդ փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա և հավատարմագրման այս գործընթացին ընդառաջ ՀՊՄՀ-ն 2019 - 2020թթ. բյուջեի նախահաշիվ է կազմել ՌԾ նպատակներին համապատասխան, վերջինս սակայն դեռևս հաստատված չէ և կիրառության մեջ չի մտել:

ՀՊՄՀ-ում ուսանողների հավաքագրումը, ընտրությունն ու ընդունելությունն իրականացվում են ընդունելության հանրապետական և համալսարանական կարգերի հիման վրա: ՄՈՒՀ-ը կազմակերպում է դիմորդների իրազեկման աշխատանքներ, ունի նախապատրաստական դասընթացներ: Արդեն ընդգրկված ուսանողների համար խորհրդատվությունների հնարավորությունները սահմանափակվում են կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարման և հեռակա բաժնի առաջին կուրսի ուսանողների համար նոյեմբեր ամսին իրականացվող խորհրդատվություններով, ինչպես

---

[5] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «....կան մի շարք ՄԿԾ-ներ, որոնց մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը և վթարայնությունը լուրջ ֆինանսական ներդրումներ է պահանջում»:

[6] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «....տեխնոլոգիական միջոցների....»:

[7] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «...Մի շարք լսարաններ ունեն պրոյեկտորներ և «սմարթ» հեռուստացույցներ, որոնք բուհը համարում է ինտերակտիվ մեթոդի կիրառման բավարար պայման»:

[8] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «Ռեսուրսային բազայի խոշորածավալ հարստացումը հիմնականում կատարվում է միջազգային ծրագրերի կամ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում»:

նաև քննություններից առաջ ուսանողի անհատական նախաձեռնությամբ ոչ ֆորմալ ուղղորդմամբ՝ ըստ կարիքի: Արտասահմանցի ուսանողներին տրվում է ոչ ֆորմալ ուղղորդում: Լրացուցիչ պարապմունքներ չեն իրականացվում: ՄՈՒՀ-ում գործում են Պրակտիկայի կենտրոնը և Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնը, սակայն երկու ստորաբաժանումների գործունեության արդյունքում ուսանողների զբաղվածության ու զբաղունակության խթանման գործընթացներ գրեթե չեն իրականացվում: Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի գործունեությունը հիմնականում սահմանափակվում է շրջանավարտների տվյալների հավաքագրմամբ և հետադարձ կապի ամրապնդման մեխանիզմների ներդրմամբ: Սակայն կենտրոնը դեռ չի տիրապետում այնպիսի գործիքակազմի, որը կապահովեր շրջանավարտների հետագծելիությունը, նրանց հետ ուղիղ և հետադարձ կապը, քանակական տվյալները շրջանավարտների զբաղվածության մասին բուհն ավարտելուց հետո ավելի, քան մեկ տարի անց: Ուսանողի շահերը և իրավունքները պաշտպանող հիմնական կառույցը ՈՒԽ-ն է, որն իր ֆակուլտետային մարմինների միջոցով բարձրաձայնում է ուսանողությանը հուզող հարցերը: ՄՈՒՀ-ն ունի «Ուսանողի ուղեցույց», որում զետեղված տեղեկատվությունը հստակ կողմնորոշում է ուսանողին ՄՈՒՀ-ում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ:

Գիտահետազոտական գործունեությունը ՀՊՄՀ գործունեության կարևորագույն գերակայություններից է, այնուամենայնիվ, չարձագանքելով նախորդ փորձագիտական խորհրդատվությանը, ՄՈՒՀ-ը դեռևս հստակ չի սահմանել իր հետազոտական ուղղությունները: Թեպետ 2016-2020թթ. Ռազմավարական զարգացման ծրագրում նշված են հետազոտության ոլորտի հզորացմանն ու խթանմանն ուղղված խնդիրները, վերջիններս իրենց ձևակերպմամբ ընդհանուր են, հիմնված չեն բուհի հետազոտական ներուժի և ելակետային կարողությունների գնահատման վրա: Բացահայտված չեն կոնկրետ հետազոտական ուղղություններ, բուհը չի կենտրոնացել իր՝ ավանդաբար հիմնական ուղղություն ընկալվող մանկավարժության և հարակից գիտակարգերի վրա: Գիտահետազոտական գործունեության իրականացմանը, զարգացմանն ու կայունության ապահովմանն ուղղված ֆինանսական հատկացումներն, ըստ բյուջեի, հաշվետու ժամանակահատվածում չեն հասնում 5%-ի: Թեև ՄՈՒՀ-ը ներգրավում է միջոցներ ԳՊԿ-ից, այդ միջոցները բազային կամ թեմատիկ հետազոտական ծրագրերից են: ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել հետազոտությունների իրականացմանը և դրանց զարգացմանը միտված հստակ քաղաքականություն կամ ընթացակարգեր: ՄՈՒՀ-ը եկամուտ չի գոյացրել հետազոտական արդյունքի ապրանքայնացումից. ՀՊՄՀ-ում դեռևս արմատավորված չէ հետազոտությունները (և դրանց արդյունքները) որպես եկամուտի կայուն աղբյուր դիտարկելու մոտեցումը: Այսպիսի մոտեցման որդեգրումը թույլ կտար ակտիվորեն առևտրայնացնել հետազոտական գործընթացն ու դրա վերջնարդյունքները, խթանել առավել կիրառական և արդիական (մասնավորապես, միջազգային մակարդակով գիտահետազոտական գործունեության արդի միտումներին համահունչ) հետազոտությունները՝ համապատասխանաբար զգալիորեն նպաստելով ֆինանսական մուտքերի կայունությանը: Միջամբիոնային և միջգիտակարգային հետազոտությունները խիստ սահմանափակ են, այնինչ այսպիսի հետազոտությունները կարևոր են մանկավարժական կողմնորոշում ունեցող ՄՈՒՀ-ի ***համար:***[9] ***ՄՈՒՀ-ում*** իրականացվող

[9] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «. . . այնինչ այսպիսի հետազոտությունները կարևոր են մանկավարժական կողմնորոշում ունեցող ՄՈՒՀ-ի համար: Այս փաստը նաև անուղղակիորեն վկայում է, որ ՄՈՒՀ-ը հիմնական շեշտը չի դնում մանկավարժական հետազոտությունների վրա»:

ուսանողական հետազոտությունները ***բավարար չափով չեն առնչվում***[10] դպրոցի կամ կրթության հիմնախնդիրներին: Ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում սահմանափակ է, դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունը հիմնականում իրականացվում է նրանց անձնական նախաձեռնությամբ: Զգացվում է առավել ակտիվ և գործնական քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն՝ հետազոտական և ուսումնական գործընթացների միջև ներդաշնակ կապ և շարունակականություն ապահովելու առումով: ՄՈՒՀ-ը զգալի ձեռքբերում ունի իր կողմից ներկայացվող «Իմաստություն» ամսագրի միջազգային Web of Science և SCOPUS շտեմարաններում ընդգրկման տեսանկյունից, սակայն հարկ է փաստել, որ այդ նույն ամսագրում ՀՊՄՀ դասախոսների տպագրման ցուցանիշը ցածր է: Միջազգային ազդեցության գործոնով ամսագրերում ՀՊՄՀ ՊԴ կազմի տպագրությունների ցուցանիշը փոքր է: Չնայած ՄՈՒՀ-ի կողմից մշակված ցիտման նորմերին և գրագողության կանխարգելմանը միտված կանոնակարգին, ուսանողական հետազոտական աշխատանքներում երբեմն նկատելի է հղումների ձևական ճշգրտություն, մինչդեռ խիստ սակավ է ուսանողի ինքնուրույն վերլուծականությունը: ՄՈՒՀ-ում ստեղծված հետազոտական նորարար որևէ արդյունքի՝ ուսումնական գործընթաց և կրթական բովանդակություն ներդրման հիմքեր չկան: Փորձագիտական խումբը գտնում է, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների ուղղությամբ ՄՈՒՀ-ում ձեռնարկված միջոցառումների իրականացման արդյունքում ձեռքբերումները չեն հանգեցրել առանձնացված խնդիրների մեծ մասի լուծմանը և իրավիճակի էական բարելավմանը:

Առաքելության մեջ միջազգային մակարդակի մասնագետների պատրաստումը կարևորելով՝ ՀՊՄՀ-ն փորձում է տեղորոշել իրեն միջազգայնացման տարբեր գործողություններում: Այնուամենայնիվ, միջազգայնացման հստակ քաղաքականության, ռազմավարության ու կոնկրետ ընթացակարգերի մշակման անհրաժեշտություն կա: Այսպիսի մոտեցումը կարող է նպաստել կոնկրետ նպատակներին և խնդիրներին միտված գործողությունների հստակեցմանը, ակտիվացնել միջազգային համագործակցությունը և խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունը: Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ՄՈՒՀ-ն ունի մի շարք կայացած միջազգային համագործակցության ծրագրեր իր ուժեղ կողմը հանդիսացող մասնագիտություններով մի շարք արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: Լավ փորձը, այնուամենայնիվ, դեռևս չի փոխանցվում ՄՈՒՀ-ի այլ ստորաբաժանումներին: ՄՈՒՀ-ն արդեն կարողացել է դուրս գալ Արևելյան Եվրոպա՝ հիմնելով կրկնակի դիպլոմի շնորհումով ՄԿԾ: Միևնույն ժամանակ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը մասնակցել է մի շարք «ՏԵՄՊՈՒՍ» և «ԷՐԱԶՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ» ծրագրերի, որոնցից մեկի համակարգողն է եղել: Սակայն փորձագետները շեշտում են միջազգային ծրագրերում և միջազգայնացման գործողություններում լավագույն փորձի և հաջողության պատմությունների տարածման անհրաժեշտությունը: ՄՈՒՀ-ը միջազգայնացում է իրականացնում նաև Ամառային դպրոցների շրջանակներում՝ ներգնա և ***արտագնա ձևաչափերով***[11]: Ամառային դպրոցի աշխարհագրությունը տարեցտարի ընդլայնվում է. Հայաստանում կազմակերպվող Ամառային դպրոցի նպատակը հայ ժողովրդի մշակութային ժառանգության հանրահռչակումն է: ՄՈՒՀ-ն ունի մի շարք պայմանագրեր «ԷՐԱԶՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ» փոխանակման ծրագրի շրջանակներում, որտեղ հանդես է գալիս ոչ միայն որպես ուղարկող, այլ նաև օտարերկրյա ուսանողներին ընդունող հաստատություն: Տեղական

---

[10] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «. . . ուսանողական հետազոտությունները քիչ են առնչվում դպրոցի կամ կրթության հիմնախնդիրներին»:

[11] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «ՄՈՒՀ-ը միջազգայնացում է իրականացնում նաև Ամառային դպրոցների շրջանակներում՝ ներգնա և արտագնա ձևաչափերով՝ հոգալով որոշ ծախսեր»:

կազմակերպությունների հետ համագործակցությունը սահմանափակվում է հիմնականում պրակտիկայի ժամանակ ընդունող կազմակերպությունների շրջանակով, որոնք հիմնականում դպրոցներ են: Միջազգային համագործակցության խթանման նպատակով ֆինանսական ռեսուրսների բացակայությունը, միջազգային դրամաշնորհային ծրագրերին պասիվ մասնակցությունը խոչընդոտում են միջազգային հաստատությունների ու կառույցների հետ արդյունավետ համագործակցության գործընթացը:

Փորձագիտական խումբը մտահոգված է ՀՊՄՀ-ի կառավարման ոլորտում առկա խնդիրներով: Հոգաբարձուների խորհրդում ՄՈՒՀ-ի հետագա զարգացման ուղղությամբ տարակարծությունը ներքին և արտաքին անդամների միջև խոչընդոտում է փոփոխություններին միտված որոշումների կայացումը: Բացի այդ, ՄՈՒՀ-ում կառավարումը խիստ կենտրոնացված է, ինչը խաթարում է տարբեր օղակներում մասնակցային որոշումների կայացումը:

ՀՊՄՀ-ում կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց առկա չէ: Բացի այդ, ՄՈՒՀ-ը չի գնահատում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունն իր նպատակների իրականացման համար՝ վտանգելով ծախսերի նպատակայնությունը: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգն ապահովված է մարդկային ռեսուրսներով, սակայն որոշ դեպքերում հարկ է համալրել ստորաբաժանումների հաստիքային կազմը, իսկ որոշ դեպքերում, անգամ հաստիքների առկայության դեպքում, ստորաբաժանումները չեն գործում: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը ֆորմալ առումով հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել որոշումների ընդունման գործընթացին. սակայն թե ՄՈՒՀ-ի սեփական գնահատականով, թե փորձագիտական այցի արդյունքներով ուսանողների փաստացի մասնակցությունը որոշումների կայացմանը պասիվ է, ինչի պատճառները բացահայտելու և ակտիվությունը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ում որևէ մեխանիզմ չի կիրառվում: ՄՈՒՀ-ում ռազմավարական նպատակների իրականացման մեխանիզմների ու գործիքների դեռևս արմատավորված չլինելու, կարճաժամկետ պլանների և երկարաժամկետ զարգացման ծրագրի միջև կապի անհստակության արդյունքում՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը ամենօրյա գործողությունները պայմանավորող և ուղղորդող փաստաթուղթ չէ: Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ում գործող մի շարք ընթացակարգեր վերանայվել են, մի մասը միայն վերջերս է մշակվել, մի մասն առկա է նախագծի տեսքով, իսկ հաստատված և կիրարկվող փաստաթղթերի, կարգերի և ընթացակարգերի համար արդյունավետության գնահատման և վերանայման հստակ մեխանիզմներ չեն կիրառվել: ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունն ընդհանրական է, քանի որ վերաբերում է առհասարակ ՀՀ կրթական դաշտին և ոչ թե կոնկրետ ՀՊՄՀ-ին, ուստի այն չի նպաստում ՄՈՒՀ-ի գործունեության ռազմավարական պլանավորման գործողություններին:

ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգը ՀՀ բուհական համակարգի համատեքստում բավականին երկարամյա պատմություն ունի, այնուամենայնիվ, այն դեռևս բավականաչափ ինտեգրված չէ գործընթացներում, չի կիրարկվում ըստ հաստատված քաղաքականության: Չնայած սկզբունքներ և ուղենիշեր պարունակող քաղաքականությանը, գոյություն ունեցող որոշ գործընթացների առկայությանը, ՈՆԱ համակարգը դեռևս չի կայացել: Թեև ՄՈՒՀ-ը մշակել է որակի ապահովման քաղաքականություն (ընդ որում, քաղաքականություն, որը դեռևս 2012թ.-ին է հաստատվել, արդի զարգացումների ֆոնին և նաև ըստ ՄՈՒՀ-ի գնահատման վերանայման և արդիականացման կարիք ունի)՝ հիմնականում միջազգային փորձագիտական աջակցությամբ, հստակեցված և ամբողջական չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատել հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ձևավորման ընթացքը: Թեև ՀՊՄՀ-ն

ներդրել է որակի ամբիոնային պատասխանատուների ինստիտուտը, որակի ամբիոնային պատասխանատուների կողմից ՈՆԱ մեխանիզմների և ՈԱ գործընթացների թերի ընկալում կա, նրանք ներգրավված չեն ՈԱԲ գործընթացներում՝ բացառությամբ հարցումների անցկացման գործողությունների: Հստակեցված չեն որակի ամբիոնային պատասխանատուների գործառույթներն ու պատասխանատվությունները: Ուստի, համակարգի արդյունավետ գործարկմանն ուղղված քայլերը դեռևս համակարգված բնույթ չեն կրում, թույլ է համագործակցությունը տարբեր ստորաբաժանումների միջև: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների, մեթոդաբանության և գործիքակազմի անկատարությունը, ինչպես նաև ստացված տվյալների հիմքով բովանդակային վերլուծությունների բացակայությունը կամ մակերեսայնությունը հնարավորություն չեն տվել բուհին գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և ՄՈՒՀ-ի գործունեության բարելավման վրա: Խաթարվում է ապացուցահեն պլանավորման և իրականացման տրամաբանությունը: Չնայած ՄՈՒՀ-ի գործունեության տարբեր ոլորտներում ՊԻԳԲ շրջափուլի ներդրման ջանքերին, այն դեռևս արմատավորված չէ: ՀՊՄՀ-ում առկա մեխանիզմները և գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի հիմնականում առաջին երկու փուլերում: Փորձագիտական գնահատման պահի դրությամբ ՄՈՒՀ-ը հիմնականում չի հասել գնահատման փուլին: ՀՊՄՀ-ում որակի մշակույթի ձևավորումը ապագայի մարտահրավերներից է: Բոլոր շահակիցներից համակարգված և արդյունավետ հետադարձ կապի բացակայության, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների թույլ ներգրավվածության արդյունքում ՈՆԱ համակարգը դեռևս չի իրացրել իր ողջ ներուժը: ՈՆԱ-ն կապված չէ ռազմավարական նպատակների հետ և դեռևս չի դարձել ՄՈՒՀ-ի ***ուժեղ և թույլ կողմերի***[12] կենսունակ հայտորոշիչ համակարգ: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի հարաբերական բազմափորձությունը ՈԱ գործընթացում՝ ՄՈՒՀ-ը կարող էր որակի արտաքին ապահովման գործընթացում ներկայանալ քանակական տվյալների, որակական գնահատականների վրա հիմնված ավելի կուռ ու խորքային ինքնավերլուծությամբ:

Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ՀՊՄՀ-ն մասամբ է իրականացրել հավատարմագրման նախորդ շրջափուլով տրված խորհրդատվությունները՝ հիմնականում կենտրոնանալով փաստաթղթային հենքի ապահովման վրա: Բարեփոխումների բովանդակային կողմը զիջել է փաստաթղթավորման, տարբեր ոլորտներում և ուղղություններով հատվածական գործողություններին: ՄՈՒՀ-ի համար շահեկան կլիներ կրթության կազմակերպման արդյունավետության վրա անմիջական ազդեցություն ունեցող բարեփոխումների իրականացումը ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական փակմամբ:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ը գտնվում է սեփական տեղորոշման փուլում՝ ձգտելով հստակեցնել իր հետագա դերակատարությունը հայաստանյան և տարածաշրջանային կրթական համակարգում: Մշակված փաստաթղթային հենքը, ՄՈՒՀ-ի արձանագրած որոշ հատվածական ձեռքբերումներն ու հաջողության պատմությունները կարող են բավարար հիմք հանդիսանալ հետագա բովանդակային բարեփոխումների, կրթության որակի բարձրացման, հետազոտական կարողությունների հզորացման համար: ՄՈՒՀ-ն ունի լուրջ ներուժ՝ կրթության և մանկավարժության ոլորտում կարծիք ձևավորող դառնալու, սակայն այդ ուժեղ կողմի կապիտալիզացման փոխարեն ՄՈՒՀ-ը գնում է այլ ճանապարհով:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. ՄՈՒՀ-ի կրթական և այլ գործընթացները կանոնակարգող փաստաթղթային հենքի առկայությունը,

[12] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «. . . ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերի կենսունակ հայտորոշիչ համակարգ»:

2. ՄԿԾ-ների ֆորմալ կառուցվածքային ամբողջականությունը և հրապարակվածությունը,
3. ASPU Google Classroom էլեկտրոնային հարթակի գործարկումը,
4. Մոտիվացված և նվիրյալ դասախոսական կազմի առկայությունը,
5. Սկսնակ դասախոսների առաջխաղացման համար ստեղծված հնարավորությունների առկայությունը,
6. ՄՈՒՀ-ի կողմից միջազգային ինդեքսավորված պարբերականներում հրապարակվող աշխատակիցներին տրվող աջակցության հանձնառությունը,
7. Ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի առկայությունը,
8. Տեղեկատվության հրապարակման և հանրայնացման միջոցների ակտիվ գործածությունը,
9. Դպրոցների հետ սերտ համագործակցության արժեքավոր փորձի առկայությունը,
10. ԱՊՀ, Ասիայի, Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջատար և զարգացած բուհերի և այլ կառույցների հետ միջազգային համագործակցության ընդլայնվող շրջանակը,
11. Նախադպրոցական և տարրական մանկավարժություն, Հոգեբանություն և Հատուկ կրթություն ՄԿԾ-ների շրջանակներում հաջողված փորձի առկայությունը,
12. Համեմատաբար կայուն ուսանողական համակազմի առկայությունը հանրապետության դիմորդների թվի կրճատման ֆոնին,
13. Հասարակությանը գիտելիքի փոխանցման մեծ ներուժի առկայությունը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Գործողությունները և զարգացումները միասնականացնող և ուղղորդող տեսլականի բացակայությունը,
2) ՄՈՒՀ-ի առաքելության ընդհանրականություն՝ միևնույն ժամանակ օտարելով և ստորադասելով հաստատության հիմնական և ավանդաբար անքակտելի բնութագիրը՝ մանկավարժական բուհ լինելը,
3) Ռազմավարական առաջնահերթությունների վերհանման գործիքների բացակայությունը, ինչպես նաև ՄՈՒՀ-ի ***ռազմավարական նպատակների***[13] որոշարկման ժամանակ շահակիցների փաստացի թույլ ներգրավվածությունը,
4) Կառավարման համակարգի կենտրոնացվածությունը՝ թե որոշումների կայացման, թե ֆինանսական տեսանկյունից, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների ծախսային արդյունավետության և ռեսուրսների բաշխման հիմնավորումների բացակայությունը,
5) ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերում թույլ ուղղահայաց և հորիզոնական համապատասխանեցումը, բովանդակային և մեթոդական արդիականացման անհրաժեշտությունը,
6) Շնորհվող որակավորման հետ ուսանողական հետազոտությունների սերտ կապի բացակայությունը,
7) ՄՈՒՀ-ում ***ռազմավարական նպատակների և այլ***[14] գործընթացների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման կառուցակարգերի սահմանափակ կիրառությունը,
8) Ուսուցման գործընթացում առաջընթացի օբյեկտիվ և թափանցիկ արձանագրման համար գնահատման քաղաքականության, գնահատման ձևերի և մեթոդների անկատարությունը,

---

[13] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «. . . ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելության որոշարկման ժամանակ շահակիցների փաստացի թույլ ներգրավվածությունը»:

[14] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «. . . ՄՈՒՀ-ում գործընթացների մշտադիտարկման. . . »:

9) Ակադեմիական անազնվության դեմ պայքարի հստակ և համահամալսարանական մեխանիզմների և աշխատակարգերի բացակայությունը, ուսանողների ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում ուսանողների ինքնուրույն հետազոտական և վերլուծական արդյունքի սակավությունը,
10) Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի առանձին փուլերի ոչ լիարժեք իրականացումը, մասնավորապես՝ պլանավորում-գնահատում-խրախուսում-վերապատրաստումներ-առաջխաղացում փոխկապակցվածության բացակայությունը,
11) Հետազոտական արդյունքի առևտրայնացման ոչ պատշաճ կարևորումը և այս ուղղությամբ գործուն մեխանիզմների բացակայությունը,
12) Միջազգային համատեղ հետազոտական ծրագրերի և միջազգային գիտական կենտրոնների հետ համագործակցության բացակայությունը,
13) Լսարանային ֆոնդի, գիտական լաբորատորիաների թարմացման, ենթակառուցվածքային ռեսուրսների ***շարունակական*** բարելավման անհրաժեշտությունը[15],
14) Միջազգային ՄՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդողների փոխանակման/շարժունության սակավությունը,
15) ՈԱ մեխանիզմների և գործիքակազմի հուսալիությունը և վավերությունը հավաստող մեխանիզմների բացակայությունը,
16) Արտաքին շահակիցների ոչ լիարժեք ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի կառավարման, ռազմավարական զարգացման, ՄԿԾ-ների մշակման/վերանայման և որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև համալսարան-շրջանավարտ կապի փաստացի բացակայությունը,
17) Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական կիրառումը ՄՈՒՀ-ի տարբեր գործընթացներում, բարելավման գործընթացների՝ գնահատման արդյունքների հետ փոխկապակցման, վերհանված խնդիրներին անդրադարձող քայլերի բացակայությունը,
18) Լավագույն փորձի վերհանման և տարածման գործուն մեխանիզմների բացակայությունը:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքելությունը և նպատակները

1. Ապահովել ՄՈՒՀ-ի երկարաժամկետ տեսլականի և առաքելության հստակ ձևակերպումը որպես ՄՈՒՀ-ի գործունեության կողմնորոշիչ՝ երաշխավորելով այս տեսլականին և առաքելությանը համահունչ, նախորդ ՌԾ-ի կատարողականի բացթողումները և թերակատարումները ճշգրտող նոր ՌԾ-ի մշակումը,
2. Վերանայել ՄՈՒՀ-ի առաքելությունը՝ հստակեցնելով ՀՊՄՀ-ի պրոֆիլային ուղղությունը, արտացոլելով ՄՈՒՀ-ի հստակ դիրքավորումը ՀՀ բարձրագույն կրթության դաշտում, ինչպես նաև ՌԾ-ում իրատեսորեն պլանավորելով անհրաժեշտ բարեփոխումներն ու կարողությունների զարգացման քայլերը,
3. Սահմանել առավել իրատեսական, չափելի ու համալսարանի շահակիցների հետ համաձայնեցված, բուհի գործունեության ոլորտների համար ընկալելի հավակնություններ՝ գլխավորապես շեշտադրելով ՄՈՒՀ-ի կարևոր դերը մանկավարժական կրթության ոլորտում,
4. Ապահովել ՌԾ-ում սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը և վերլուծել ՌԾ-ում ամրագրված ԳԱՑ-երը՝ գնահատելով ռազմավարական

[15]Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «. . . ենթակառուցվածքային ռեսուրսների բարելավման անհրաժեշտությունը . . .»:

նպատակների իրականացման ոչ միայն քանակական, այլև որակական/բովանդակային կողմը,

5. Խթանել բոլոր շահակիցների առավել ակտիվ ներգրավվածությունը ՌԾ մշակման/վերանայման գործընթացում՝ կարևորելով շարունակական և անընդհատ կապը հատկապես արտաքին շահակիցների հետ:

Կառավարումը և վարչարարությունը

6. Հստակեցնել և օպտիմալացնել կազմակերպական կառուցվածքը՝ ելնելով զարգացման գերակա ուղղություններից, ռազմավարական նպատակների իրականացման և ֆունկցիոնալ կարևորություններից,
7. Ապակենտրոնացնել կառավարումը՝ ավելի մեծ ինքնավարություն շնորհելով ֆակուլտետներին և ամբիոններին, ինչպես նաև ներդնելով կառավարման այլ, պակաս հիերարխիկ մոդելներ,
8. Ապահովել կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց,
9. Ամբողջացնել ՄՈՒՀ-ի գործունեության կանոնակարգման շրջանակը՝ ներդնելով բաց մնացած հատվածները կարգավորող կամ դեռևս նախագծային փուլում գտնվող փաստաթղթերը: Ապահովել ընդունված կանոնակարգային հենքի փաստացի և գործնական կիրարկումը՝ ի նպաստ ՄԿԾ և այլ գործընթացների բովանդակային մշակումների, մշտադիտարկումների և վերանայումների,
10. Հաստատել կառավարման էթիկայի նորմեր, ներդնել որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմներ, վերլուծել կառավարման արդյունավետությունը որակական և քանակական տվյալների հիման վրա,
11. Ներդնել ՄՈՒՀ-ի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ամբողջական համակարգ՝ հստակ մեխանիզմներով և գործիքակազմով, իրականացնել նախորդ ՌԾ արդյունքների և աշխատաշուկայի բովանդակային վերլուծություններ՝ որպես հիմք նոր ՌԾ մշակման համար: Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ,
12. Ապահովել ռազմավարական ծրագրի և փաստացի գործող կարճաժամկետ պլանների միջև կապը: Ներդնել միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշտադիտարկման, գնահատման ***և հաջորդիվ բարելավման*** գործուն մեխանիզմներ և գործիքակազմ[16],
13. Որոշումների կայացման գործընթացներում ակտիվացնել և մոտիվացնել ներքին և արտաքին շահակիցների փաստացի մասնակցությունը՝ որոշումները դարձնելով շահակիցների կարիքների համար առավել նպատակային,
14. Իրականացրել կանոնակարգված գործընթաց կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ,
15. Ներդնել մեխանիզմներ ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատելու համար:

Մասնագիտության կրթական ծրագրերը

[16] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «Ներդնել միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործուն մեխանիզմներ և գործիքակազմ»:

16. Ռեսուրսների խնայողության և օգտակար գործունեության ավելացման նպատակով օպտիմալացնել կրկնական ՄԿԾ-ները անգամ, եթե դրանք մշակվել են՝ արձագանքելով դպրոցական ուսպլանի պահանջներին, սակայն չեն կարող ապահովել շրջանավարտների զբաղվածությունը դպրոցներում այդ առարկաների սահմանափակ ժամաքանակի պատճառով,
17. Սահմանել ՄԿԾ-ների համար համապատասխան պատասխանատու մարմին՝ թողարկող ամբիոնի կամ ծրագրի ղեկավարի մակարդակում, որը պատասխանատու կլինի ՄԿԾ-ի բովանդակության մշակման և ՊԻԳԲ-ի արդյունքում ապացուցահեն վերանայման գործողությունների համար,
18. Ապահովել ուսումնառության ակնկալվող արդյունքների չափելիությունը: Ապահովել ուսումնառության ակնկալվող արդյունք - դասավանդման ու ուսումնառության մեթոդ և գնահատման մեթոդ կապը,
19. Հստակեցնել կրեդիտների բաշխման և հաշվարկման քաղաքականությունը՝ փոխկապակցելով ուսումնառության արդյունքների հետ, վերանայել մագիստրատուրայի և հեռակա բաժնի ուսանողների բեռնվածքը, կրեդիտների բաշխումը՝ փոփոխությունները հիմնավորելով կրթության որակի բարելավման և արդյունավետության խթանման համար վերհանված կարիքներով և ոչ թե ռեսուրսախնայողությամբ,
20. Հստակեցնել Google Classroom հարթակի օգտագործման ձևը, ակտիվության մակարդակը, կիրառման մեթոդաբանությունը և պարբերականությունը՝ ելնելով առարկայի առանձնահատկությունից, ուսումնառության մեջ ստեղծվող հավելյալ արժեքի հիմնավորումից, դասընթացի արդյունավետության գնահատման արդյունքում հատկորոշված բացերից, ուսանողների՝ տեխնիկական միջոցների հասանելիության մակարդակից՝ դիտարկելով այն որպես հավելյալ գործիք, որը նաև մեծ օգտակարություն կարող է ունենալ հատկապես հեռակա ուսուցման համակարգում,
21. Խթանել ուսանողակենտրոն մոտեցման վերահիմաստավորումն ու գերակայումը ՄՈՒՀ-ում՝ ուսանողների կողմից իրականացվող ինքնուրույն և հետազոտական աշխատանքների առանձնակի կարևորմամբ,
22. Բազմատեսակացնել կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները և ներդնել դրանց ընտրության հստակ քաղաքականություն՝ ապահովելով ուսումնառության արդյունքների ձեռքբերումը և ուսանողակենտրոն ուսումնառության մոտեցման արմատավորումը,
23. Հստակեցնել գնահատման մեթոդները՝ ապահովելու ուսումնառության կոնկրետ արդյունքների չափելիությունը, խթանելու ձևավորող գնահատումը և որոշարկելու գնահատման բազմաբաղադրիչ համակարգի առանձին բաղադրիչների տեսակարար կշիռները,
24. Ներդնել ակադեմիական ազնվության երաշխավորման գործուն մեխանիզմներ՝ բացառելով ռեֆերատիվությունը հետազոտական աշխատանքներում և ապահովելով գործնականում արվող ***օրիգինալ***[17] ուսումնասիրությունների ու անմիջական որակավորմանն առնչվող թեմաներով աշխատանքների իրականացումը,
25. Իրականացնել ՄԿԾ-ների բովանդակային բենչմարքինգ՝ հիմնավորելով հենանիշ ՄՈՒՀ-երի ընտրությունը, անդրադառնալով ուսումնական արդյունքներին, դասավանդման և ուսումնառության մեթոդներին, ինչը հնարավորություն կտա

[17] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «...ապահովելով գործնականում արվող ուսումնասիրությունների ու անմիջական որակավորմանն առնչվող թեմաներով աշխատանքների իրականացումը»

մոտարկել ՀՊՄՀ ՄԿԾ-ների բովանդակությունը և իրականացման մեթոդաբանությունը այլ ՄՈՒՀ-երի համադրելի ՄԿԾ-ների հետ,

26. Արմատավորել ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, նրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացները՝ ընդլայնելով ՄՈՒՀ-ի շահակիցների ներգրավվածությունը: Ապահովել ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացը՝ ՊԻԳԲ շրջափուլի լիակատար գործարկմամբ:

Ուսանողները

27. Վերանայել ուսանողների կրթական, խորհրդատվական և ուսումնառությանը վերաբերող այլ կարիքների վերհանմանն ուղղված մեխանիզմները՝ ապահովելու դրանց վավերությունը, թիրախայնությունը, նպատակայնությունը, ինչը կնպաստի ուսանողների կարիքների հստակ պատկերի հիման վրա ապացուցահեն պլանավորմանը և բարեփոխումներին,
28. Վերաիմաստավորել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների դերն ու նշանակությունը՝ սահմանելով ՄՈՒՀ-գործատու-շրջանավարտ կապի ավելի գործուն մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն ուսանողների և շրջանավարտների զբաղվածության բարելավված ցուցանիշներ և ՄՈՒՀ-ին կտրամադրեն հստակ վիճակագրական տվյալներ շրջանավարտների և աշխատաշուկայի մասին,
29. Հստակ քայլեր ձեռնարկել՝ խթանելու ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում՝ ներդնելով թիմային հետազոտության ձևաչափեր, խրախուսման հստակ քաղաքականություն, օժանդակելով ՈՒԳԸ-ի գործունեության համակարգմանը և ուսումնառողների մոտ հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը,
30. Ստեղծել մասնագիտական պրակտիկայի մասնակցության հավասար հնարավորություններ առկա և հեռակա համակարգերում սովորող տեղացի և օտարազգի ուսանողների համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

31. Բարելավել ՊԴ կազմի ընտրության չափանիշները և մշակել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, որոնք հաշվի կառնեն ՄԿԾ-ների առանձնահատկությունները և միտված կլինեն դասախոսների՝ մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների գնահատմանը,
32. Բարելավել ՊԴ կազմի գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը՝ խթանելով դասախոսների մասնագիտական կատարելագործումը և ուսուցման որակի բարձրացումը,
33. Ներդնել դասախոսական կազմի կարիքների պարբերաբար վերհանման համակարգ: Համապատասխանաբար բարելավել ՊԴ կազմի կատարելագործմանն ուղղված աշխատանքները՝ ներդնելով ՊԴ կազմի համակարգված և պարբերական վերապատրաստման ծրագիր, որը կբխի ՄՈՒՀ-ի ռազմավարական խնդիրներից և հիմնված կլինի ՊԴ կազմի մասնագիտական կարիքների գնահատման վրա:
34. Մշակել և ներդնել ՊԴ կազմի մասնագիտական առաջխաղացման և խրախուսման հստակ և կանոնակարգված մեխանիզմներ՝ երաշխավորելու ՊԴ կազմի կայունությունը և մոտիվացիայի բարձրացումը,
35. Հստակեցնել ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականությունը՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի ուղղվածությունը և առանձնահատկությունները,
36. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման հստակ քաղաքականություն՝ ուղղված աշխատակազմի՝ արժանիքների հիման վրա համալրմանը,

երիտասարդացմանը, երիտասարդ կադրերի հոսունության կանխմանը, ինչպես նաև մասնագիտական և սոցիալական կարիքների բավարարմանը:

Հետազոտություն և զարգացում

37. Ներդնել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության վերաբերյալ քաղաքականություն, որում կարտացոլվեն ՄՈՒՀ-ի գերակա գիտական ուղղությունները, հավակնություններն ու հետաքրքրությունները, և կկարևորվի հետազոտական արդյունքի առևտրայնացումը,
38. Հստակորեն ծրագրել, տարանջատել և բովանդակային առումով բարելավել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ասպեկտները, ապահովել դրանց տրամաբանական և ժամանակային կապակցվածությունը,
39. Ելնելով ՄՈՒՀ-ի փաստացի առաքելությունից՝ ընդլայնել հանրակրթական դպրոցին առնչվող տարբեր՝ հանրակրթության կառավարման, ուսումնամեթոդական, հոգեբանամանկավարժական, կրթության իրավունքի և սոցիալական արդարության և այլ հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների շրջանակը,
40. Մեծացնել հետազոտական գործունեության ֆինանսական հատկացումները՝ նախընտրություն տալով ՄՈՒՀ-ի կողմից սահմանված գերակա ուղղություններին, ինչպես նաև կենտրոնանալով գերազանցության կենտրոնների ստեղծման վրա,
41. Խրախուսել միջառարկայական ուսումնասիրությունների զարգացումը միջամբիոնային, միջֆակուլտետային, ինչպես նաև միջհամալսարանական մակարդակներում՝ միտված նորարարությանը և միջառարկայական ՄԿԾ-երի ստեղծմանը,
42. Խրախուսել ՊԴ կազմի հետազոտական կարողությունների զարգացումը՝ ուշադրություն դարձնելով վերապատրաստումներում համապատասխան մոդուլների ներդրմանը, աշխատանքային բեռնվածության մեջ հետազոտական բաղադրիչի արտացոլմանը, ներհամալսարանական դրամաշնորհների հիմնմանը, մասնագիտական զարգացման արտահամալսարանական ծրագրերի համաֆինանսավորման կիրառմանը,
43. Որդեգրել գիտահետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն՝ ընդլայնելով միջազգային կազմակերպությունների և հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերի ազդեցությունը հետազոտական գործունեության վրա,
44. Ուժեղացնել ՄԿԾ-ներում գիտական մտածողության կարողությունը որպես վերջնարդյունք՝ դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդների կիրառմամբ, հատկապես մագիստրոսական ծրագրերում հետազոտական կարողությունները զարգացնող մոդուլների ներդրմամբ, ուսանողների հետազոտական (կուրսային աշխատանքերի, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի) և այլ ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջների և վերջիններիս գնահատման չափանիշների մշակմամբ և ներդրմամբ,
45. Ներդնել մեխանիզմներ գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ սերտացնելու ուղղությամբ: Որդեգրել հստակ քաղաքականություն, համաձայն որի հետազոտական աշխատանքը կդառնա ուսումնառության մեթոդ՝ երաշխավորելով իրականացվող հետազոտության ընթացիկ և վերջնական արդյունքների կիրառությունն ուսումնական գործընթացում:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

46. Որդեգրել ֆինանսական կառավարման այնպիսի քաղաքականություն, որը կերաշխավորի ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով համալսարանի ապահովումը,
47. Համապատասխանեցնել ֆինանսական ռեսուրսների կառավարումը ռազմավարական ուղղություններին և առաջնահերթություններին՝ ապահովելու ծրագրային ժամանակահատվածի համար գերակա համարվող ուղղություններով սահմանված ԳԱՑ-երի ձեռքբերումը,
48. Ակտիվացնել ֆինանսական ռեսուրսների տարազանեցմանն ուղղված աշխատանքները՝ շեշտադրելով բուն ակադեմիական գործունեության արդյունքը և դրան փոխկապակցված ծառայությունների մատուցումը,
49. Պարբերաբար իրականացնել ծախսային արդյունավետության և նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման նպատակայնության և արդյունավետության գնահատում՝ արդյունքները ծառայեցնելով հետագա ավելի իրատեսական պլանավորմանը,
50. Ավելի ակտիվ ջանքեր ներդնել վթարային շենքերի, համընդհանուր ներառականությունն ապահովող ենթակառուցվածքների և հանրակացարանի խնդիրների լուծման ուղղությամբ՝ երաշխավորելու անվտանգ, ապահով, գրավիչ և ներառական ուսումնական միջավայր: ***Շարունակել լսարանների տեխնիկական վերազինումը***[18] և համալրել լաբորատորիաներն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով,
51. Արդիականացնել գրադարանային ռեսուրսները՝ ապահովելով անդամակցություն միջազգային թվային գրադարանային ֆոնդերին և շտեմարաններին,
52. Կատարելագործել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը և վերջնականացնել դրա ներդնումը՝ տեղեկատվական հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հասարակական պատասխանատվություն

53. Ապահովել վերլուծական հաշվետվողականության մեխանիզմներ բոլոր օղակներում՝ արդյունքների գնահատման ցուցիչների կիրառմամբ՝ երաշխավորելով ՊԻԳԲ շրջափուլի գործարկումը,
54. Բարելավել և կատարելագործել հասարակության լայն շրջանակների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները՝ հասարակության հետ շարունակական ու հետևողական հաղորդակցմամբ ստանալով գործունեության բոլոր կողմերի մասին արձագանք,
55. Ներդնել հետադարձ կապի արդյունավետության գնահատման և վերլուծության հստակ մեխանիզմներ,
56. Ներդնել լրացուցիչ/շարունակական կրթության հանրօգուտ համակարգ ՄՈՒՀ-ի պորֆիլային, թեմատիկ ուղղություններով՝ իրացնելով ՊԴ կազմի և ուսանողների մասնագիտական ու կազմակերպչական ներուժը:

Արտաքին կապեր և միջազգայնացում

57. Գնահատել ՄՈՒՀ-ի ելակետային կարողությունները՝ ապահովելով միջազգայնացման տեսլականին միտված իրատեսական ցուցիչներով ռազմավարական պլանավորում,
58. Վերանայել միջազգայնացմանն ուղղված գործունեությունը՝ ուղղորդելով ջանքերն այն թիրախներին, որոնք կարող են համակարգային նպաստ բերել ՄՈՒՀ-ին,

[18] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «Վերասարքավորել և համալրել. . .»:

59. Ապահովել օտար լեզվակրթության հնարավորություններ ուսանողների, դասախոսների և վարչակազմի համար՝ լրացուցիչ պարապմունքների, մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում որպես շարժունության և միջազգային հնարավորությունների իրացման նախապայման,
60. Ընդլայնել ուսանողների և ՊԴ կազմի շարժունության հնարավորությունները՝ շարժունությունը օգտագործելով որպես ռազմավարական նպատակներին միտված, լրացուցիչ բովանդակային և մեթոդաբանական արդիականացման հնարավորություն,
61. Արմատավորել տեղում միջազգայնացման (internationalisation at home) հասկացությունը՝ օգտագործելով միջազգային համաձայնագրերը, ներգնա շարժունեության հնարավորությունները և օտար լեզուների դասընթացները,
62. Ակտիվացնել տեղական և միջազգային համագործակցությունը, կնքված պայմանագրերը/համաձայնագրերը՝ իրականացնելով ընթացիկ համագործակցությունների արդյունավետության գնահատում:

Որակի ներքին ապահովում

63. Վերանայել ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգը՝ կյանքի կոչելով տեղայնացված և հաստատված կարգերը, իսկ մշակված կարգավորման շրջանակն ու գործիքակազմը ինտեգրել մեկ ընդհանուր ՈՆԱ համակարգում,
64. Ապահովել ՈՆԱ շրջանակում գործընթացների արդյունավետության գնահատման նպատակայնությունը, գործիքակազմի վավերությունը, քանակական և որակական ցուցիչների սահմանումը,
65. ՈԱ մեխանիզմների կիրառման արդյունքում գոյացած տվյալների հիման վրա իրականացված բովանդակային վերլուծությունները և եզրահանգումները ծառայեցնել որպես հիմք ՄԿԾ-ների և բուհական գործընթացների բարելավման համար,
66. Ստեղծել գործընթացների արդյունավետության ներքին գնահատման միասնական համակարգ, որը կամբողջացնի ՈԱ բոլոր մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ դրանք դարձնելով ավելի նպատակային,
67. Մասնագիտական վերապատրաստումների միջոցով բարելավել ՈԱԲ-ի, որակի պատասխանատուների և ստորաբաժանումների միջև համագործակցությունը՝ նպաստելով ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը,
68. Ակտիվացնել արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում՝ պասիվ դերակատարությունից անցնելով գործընկերային ներգրավվածության,
69. Հստակեցնել և բարելավել տվյալների հավաքագրման, վերլուծության և տարածման գործընթացները,
70. Ներդնել լավագույն փորձի վերհանման և տարածման գործուն մեխանիզմներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դիտարկումներ

ՀՊՄՀ-ն՝ որպես ուսումնական հաստատություն, հարուստ ավանդույթներ ունի և աստիճանաբար մեծացնում է հետազոտության և հանրային ծառայության ոլորտներում ներդրումները: ՀՊՄՀ-ի գործող ռազմավարական ծրագիրը (ՌԾ) ՄՈՒՀ-ի երկրորդ ՌԾ-ն է: Ցավոք, ՄՈՒՀ-ի նախորդ ՌԾ-ի վերլուծություն առկա չէ: Փոխարենը, կան միկրո և մակրո գործոնների՝ ընդհանրական գաղափարներով լեցուն վերլուծություններ, որոնք

հաստատության նկատմամբ կիրառելի չեն: Թեև նոր ՌԾ-ն նշում է 7 հստակ ռազմավարական նպատակներ, ԳԱՑ-երը դեռևս բավականին աղոտ են և հաճախ սահմանված չեն կոնկրետ, չափելի, ընդունելի, իրատեսական և ժամանակային առումով սահմանափակ կերպով (SMART): Հստակ թիրախային քանակական ցուցանիշներ առկա չեն, և նշված չեն հստակ ժամկետներ, ինչը հնարավոր կդարձներ առաջընթացի մշտադիտարկումը: Բյուջեն համապատասխանեցված չէ նպատակներին և առաջնահերթություններին:

ՀՊՄՀ-ն առաջարկում է ՄԿԾ-ների մեծ բազմազանություն, որոնցից շատերի նպատակը այնպիսի մանկավարժների պատրաստումն է, որոնք ունեն տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և առնչվել են հետազոտության որևէ մի տեսակի (հիմնականում՝ մանկավարժական հետազոտության) հետ: Ուսանողների բեռնվածությունը չափվում է կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS-ի կիրառմամբ: Այդուհանդերձ, դասընթացներում կատարված փոփոխությունները, Google Classroom-ի գործարկումը կամ պրակտիկայի վերանայումը հաճախ արդեն իսկ հատկացված կրեդիտների քանակի վրա ազդեցություն չեն ունեցել: Դժվար է պատկերացնել, որ այսպիսի էական փոփոխությունները չեն ազդել ուսանողների բեռնվածության վրա. արդյունքում անտրամաբանական իրավիճակներ են ի հայտ գալիս:

Վերջին տարիներին բոլոր ծրագրերի համար սահմանվել են ուսումնառության արդյունքներ (ՈՒԱ-ներ): Սակայն ամենօրյա աշխատանքն ու գործելակերպը ոչ միշտ են համապատասխանում գրված փաստաթղթերին: Հետևապես, իրողություն չէ ՈՒԱ-ների հետևողական կիրառումը, որը պետք է հիմք հանդիսանար ուսումնառության և դասավանդման համապատասխան ձևերի ընտրության և օբյեկտիվ գնահատման համար՝ այդպիսով հնարավորություն տալով ստուգել, թե արդյո՞ք ՈՒԱ-ները ձեռք են բերվել, թե ոչ: Պրակտիկայի դեպքում ՈՒԱ-երն ավելի ընդհանրական կերպով են ստուգվում, ինչը չափազանց նեղ մոտեցում է:

Ուսանողակենտրոն ուսուցումը հիմնականում կենտրոնացած է ուսանողի մասնակցության, դասախոսների և ուսանողների միջև լավ հարաբերությունների և սոցիալական հեռավորության կրճատման վրա: Կառավարման տարբեր մարմիններում ուսանողական ներկայացուցչականությունը կազմում է մոտ 25%: Գործնականում միայն փոքրաթիվ ուսանողներ են մասնակցում հանդիպումներին՝ ըստ գրանցման թերթիկների, թեև մասնակցության հնարավորություն ընձեռվում է: Ուսանողների ձայնը լսելի է, և նրանք որպես ուժեղ կողմ նշել են դասախոսների՝ ուսանողներին աջակցելու և օգնելու պատրաստակամությունը: Ուսումնառության և դասավանդման ռազմավարություններն ու մեթոդները դեռևս դասախոսակենտրոն են:

Մյուս կողմից, ՄՈՒՀ-ը պատրաստ է հարմարվել յուրաքանչյուր ուսանողի և հաշվի է առնում ուսանողների անհատական կարիքները: ՄՈՒՀ-ը համապատասխան պայմաններ է ապահովում ուսանողների համար՝ հարմարվելու ՄՈՒՀ-ի համատեքստին և միջավայրին:

Մեծ ուշադրություն է դարձվում ուսանողներին գրավելու, հավաքագրելու և ընտրելու գործընթացներին: ՀՀ դպրոցներում կողմնորոշման նախաձեռնություններն արդյունավետ են, սակայն դրանք հիմնականում կախված են դասախոսների անձնական նախաձեռնություններից ու կապերից:

ՀՊՄՀ-ն նաև մեծապես աշխատում է ուսանողներին աշխատանքի տեղավորման, աշխատատեղերի մասին տեղեկության և աջակցության տրամադրման ուղղությամբ: Բավականին տարօրինակ է, որ ուսումնառության մեջ առաջընթացին մեծ կարևորություն չի տրվում: ՄՈՒՀ-ից դուրս մնալը հաճախ պայմանավորված է ուսման վարձավճարների չվճարմամբ և ոչ թե վատ առաջադիմությամբ:

Արդյունքում, դպրոցները միշտ չէ, որ գոհ են շրջանավարտներից, ինչը կարող է պայմանավորված լինել նաև այն փաստով, որ դիմորդների գիտելիքները ցանկալի

մակարդակի չեն: Մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ժամանակը բավարար չէ:

ՀՊՄՀ-ն ամուր կապեր է հաստատել արտերկրի ՄՈՒՀ-երի հետ, որոնցից ամենանշանավորը հայագիտության ոլորտում Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի (Հունգարիա) հետ համագործակցությունն է: Բացի այդ, ՄՈՒՀ-ը համագործակցային կապեր ունի Բելառուսի, Չինաստանի, Չեխիայի Հանրապետության, Ֆինլանդիայի, Լիտվայի, Ռուսաստանի, Շվեյցարիայի ՄՈՒՀ-երի հետ: ՄՈՒՀ-ը կազմակերպում է վարպետաց դասեր և ամառային դպրոցներ՝ արտասահմանից առաջատար մասնագետներ գրավելու համար: Ուսանողների փոխանակման ծրագրերը դեռևս ընդլայնման ներուժ ունեն: Նույնը կարելի է ասել աշխատակազմի շարժունության մասին:

ՄՈՒՀ-ը աշխատում է միջազգայնացման ուղղությամբ, սակայն կարող է մեծացնել իր գործողությունների ազդեցությունը միջազգայնացման այնպիսի հստակ քաղաքականության միջոցով, որը կներառի միջազգայնացման տարբեր ոլորտներ, այդ թվում՝ համալսարանների միջև գործընկերությունը, համատեղ և կրկնակի դիպլոմների շնորհումը, ուսանողների և աշխատակազմի շարժունությունը, «տեղում միջազգայնացման» գործընթացների իրականացումը:

ՊԴ կազմը շատ մոտիվացված է և մեծ ջանքեր է գործադրում՝ իր պատասխանատվության շրջանակում ներառված բոլոր գործառույթների իրականացման համար: ՊԴ կազմի բեռնվածությունը շատ մեծ է, և դասախոսներից ոմանք դասավանդում են մինչև 17 առարկա: Արտերկրից մասնագետներ հրավիրելուն խոչընդոտող հանգամանքը ֆինանսական դրությունն է և այն փաստը, որ բավականին դժվար է ապահովել միջազգային չափանիշներին համապատասխանող վարձատրություն:

ՄՈՒՀ-ը մշակել է ՊԴ կազմի վարկանիշավորման համակարգ, որում գործընկերային դասալսումների հիման վրա դասախոսի անհատական գնահատում է իրականացվում: Թեև գաղափարն ինքնին գնահատելի է, դասախոսներն այն լիարժեք կերպով չեն կիրառում: Նրանք միմյանց չեն քննադատում, և հետադարձ կապով տրվող կարծիքը գրեթե միշտ դրական է: Այս իսկ պատճառով ՊԴ կազմի վերապատրաստումը կարող է և փոխկապակցված չլինել գնահատման արդյունքների հետ:

Անհրաժեշտ է ապահովել գնահատում-վարկանիշավորում-վերապատրաստում-ՊԴ կազմի խրախուսում կապը՝ դասախոսների գործունեության զարգացումն ապահովելու համար:

2015 թվականից ի վեր ՀՊՄՀ-ն ներդրումներ է կատարում լսարանների և լաբորատորիաների տեխնիկական վերազինման և բոլոր դասընթացներում Google Classroom-ի ներմուծման և գործածման ուղղությամբ:

Ուսանողներին տրվող աջակցությունը հիմնականում կախված է անհատ դասախոսներից և ուղղորդողներից, ընդ որում դասախոսների բեռնվածությունը արդեն իսկ խիստ մեծ է:

Ուսանողների ընտրությունը հիմնված չէ որակի վրա. ՄՈՒՀ-ն ուսանողներից կախում ունի հիմնականում նրանց կողմից ՄՈՒՀ-ին տրամադրվող ֆինանսական ռեսուրսների պատճառով: ՄՈՒՀ-ը տեսականորեն կարող է ընդունելություն կազմակերպել և չընդունել ուսանողներին, սակայն դրա արդյունքում ուսանողների թիվը և նրանց ուսման վարձավճարներից գոյացող ֆինանսական միջոցները կնվազեն: Հետևապես, բարդ է թողարկել խելամիտ գիտական և հետազոտական կարողություններով զինված բարձորակ շրջանավարտներ: Սա ոչ միայն ՀՊՄՀ-ի, այլ ՀՀ բոլոր ՄՈՒՀ-երի համար է խնդիր:

ՀՊՄՀ-ն մեծ ներդրումներ է կատարում հանրության լայն շերտերին տեղեկատվություն տրամադրելու գործում. ՄՈՒՀ-ն ունի կայք, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ, «Հաջողության բանաձև» հեռուստահաղորդում և «Ֆամա» ռադիո: Այսուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը դեռևս սահմանափակ

է և հիմնականում պայմանավորված է դպրոցների, ինչպես նաև արվեստի և մշակույթի ոլորտներում գործող կառույցների հետ հաստատված կապերով:

Իրականացվում են տարբեր հարցումներ՝ և՛ ներքին (աշխատակազմ, ուսանողներ), և՛ արտաքին (շրջանավարտներ, գործատուներ) շահակիցների կարծիքը իմանալու նպատակով: Հարցման արդյունքները հաշվի են առնվում գործողությունների պլանների մշակման ժամանակ: Միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ը կարող էր շահակիցներին ներկայացնել/նրանց հետ քննարկել հետադարձ կապով ստացված տեղեկությունն այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է կիրառել հարցման արդյունքները:

Թեև բոլոր ՄԿԾ-ները վերանայվել են, բենչմարքինգի գործընթացները սահմանափակվել են առարկայացանկի համեմատությամբ՝ առանց համատեքստի և բովանդակության վերլուծման: Բացի այդ, նույն ոլորտում երբեմն տարբեր ծրագրեր են իրականացվում, որոնցից որոշները կազմակերպվում են մեծաքանակ ուսանողների, որոշներն էլ՝ փոքր թիրախ լսարանի համար:

Որակի արտաքին շրջափուլային ապահովումն իրականացվում է ՈԱԱԿ-ի կողմից: Որակի ներքին ապահովումը մշակման փուլում է: Գործունեության մի շարք ոլորտներ դեռևս պլանավորման կամ իրականացման փուլում են:

Որակը գնահատվում է հարցումների անցկացման միջոցով, օրինակ՝ «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցումը, որն իրականացվում է ուսանողների կողմից ՊԴ կազմին գնահատելու համար: Փոփոխություններ կատարվում են, սակայն դրանց ազդեցությունը մշտադիտարկման չի ենթարկվում: Մշակվել են ՈԱ քաղաքականություններ, որոնք, սակայն, համակարգային կերպով դեռևս չեն իրականացվում: Երբ հարց է տրվել ՈԱ գործողությունների վերաբերյալ, հիմնական պատասխանը եղել է այն, որ ՄՈՒՀ-ում կատարվել են փոփոխություններ որակի բարելավման ուղղությամբ, սակայն հաճախ հստակ չէ, թե ինչն է ընկած փոփոխության հիմքում, և դրա ազդեցությունն ինչպես է մշտադիտարկվելու:

Խորհրդատվություններ

- Անհրաժեշտ է ռազմավարական նպատակների իրականացման հստակ ԳԱՑ-եր սահմանել, կազմակերպել մշտադիտարկում և հետագա գործողություններ, վերլուծել վերջնարդյունքները և ապահովել դրանց թափանցիկությունը:
- Անհրաժեշտ է ավելի շատ կենտրոնանալ ռազմավարական նպատակների սահմանման վրա, լինել ավելի իրատեսական՝ կարճաժամկետ կտրվածքով նպատակներին հասնելու առումով:
- Հարկ է փորձել դիրքավորվել որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ հաշվի առնելով ՀՀ-ում կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումներն ու միտումները: Բուհը կարող է իր դերն ունենալ հանրային քննարկումներում և ազդեցություն ունենալ տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումների վրա: Բացի այդ, եվրոպական հանրույթին վերաբերելի կարողությունների զարգացմանն ուշադրություն դարձնելը կարող է օգնել ուսանողներին դառնալ առաջնորդներ հաջորդ սերունդների համար:
- ՄՈՒՀ-ի կառավարման տեսանկյունից հաղորդակցման հորիզոնական և ուղղահայաց կապերը կարելի է ավելի համակարգային դարձնել, իսկ որոշումների կայացման գործընթացը կարելի է ավելի հստակ/պարզորոշ նկարագրել՝ կամ վերևից ներքև, կամ ներքևից վերև, կամ երկուսի համակցմամբ:
- Անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ակադեմիական ազնվության պահպանման ուղղությամբ, քայլեր ձեռնարկել գրագողության կանխարգելման ուղղությամբ և ստեղծել ակադեմիական ազատությունն ու անկախությունն

ապահովող միջավայր ինչպես ամբողջ բուհի, այնպես էլ նրա բոլոր աշխատողների համար:

- Թեև ուսանողներն իսկապես մասնակցում են բուհի կառավարմանը, ցանկալի է հետագայում ավելի խթանել նրանց մասնակցությունը: Ցանկալի է ուսանողներին ակտիվորեն ներգրավել կառավարման բոլոր մարմիններում և ապահովել նրանց փաստացի ներկայությունը հանդիպումներին: Ուսանողներին տալով հնարավորություններ (օրինակ՝ դասերից հարգելի բացակայություն՝ ուսանողական ներկայացուցչականության ապահովման պարտականությունները կատարելու նպատակով, առաջադրանքները հանձնելու համար լրացուցիչ ժամանակի տրամադրում, քննությունների ժամանակացույցի փոփոխության հնարավորություն և այլն)՝ բուհը կարող է ավելի դյուրին դարձնել ուսանողական ներկայացուցչական գործունեությունը:
- ՄՈՒՀ-ն արժեքավոր փորձ ունի ուսումնառության արդյունքների սահմանման խնդրում: Հաջորդ քայլը կարող է լինել դրանց օգտագործումը դասընթացների վերամշակման համար և դրանց համապատասխանեցումն ուսումնառության ու դասավանդման մեթոդների և գնահատման ձևերի հետ:
- ՄՈՒՀ-ը պետք է գիտակցի, որ կրթությունը և գիտությունն անբաժանելի են միմյանցից: Հետազոտությունը պետք է ուղեկցի կրթական գործընթացին և պետք է դասավանդմանը համահունչ լինի: Այս կապն անհրաժեշտ է պահել ուշադրության կենտրոնում և ապահովել ՊԴ կազմի և հետազոտողների սերնդափոխությունը:
- Մեծապես խորհուրդ է տրվում ապահովել աշխատակազմի մասնագիտական զարգացումը, խթանել ուսումնառության ու դասավանդման նորարարական և ուսանողակենտրոն մոտեցման կիրառման մոտիվացիան:
- Google Classroom-ը կարելի է ավելի շատ օգտագործել՝ ըստ ուսանողների տարբեր խմբերի/ուսանողների տարբեր տեսակների ուսումնառությունն ու դասավանդումը տարբերակելու համար՝ այդպիսով լուծելով ուսանողական համակազմի բազմազանության հարցը:
- ՄՈՒՀ-ը պետք է փորձի ներդրում կատարել (արտալսարանային, առցանց...) մոդուլներում՝ դիմորդներին հնարավորություն տալով հասնել մուտքի ցանկալի մակարդակի: Այդպիսով, խմբերի ներսում իմացության մակարդակի չափազանց մեծ բազմազանությունը կնվազի, իսկ դասավանդումն ավելի արդյունավետ կլինի:
- ՄՈՒՀ-ը պետք է կենտրոնանա միջազգային պայմանագրերի ոչ թե քանակական, այլ որակական կողմի վրա՝ կարևորելով համագործակցությունների բարձր արդյունավետությունը: Բազմաքանակությունը միշտ չէ, որ բարելավում է ենթադրում:
- ՄՈՒՀ-ը պետք է ներդրում կատարի աշխատակազմի և ուսանողների լեզվական իմացության բարելավման ուղղությամբ՝ ընդլայնելով անգլերեն և ռուսերեն լեզուներով դասընթացների շրջանակը և այդպիսով մեծացնելով ՄՈՒՀ եկող ուսանողների քանակը:
- Անհրաժեշտ է ներդրումներ կատարել ուսանողների միջազգային շարժունության ապահովման ուղղությամբ՝ արդյունավետ կերպով ընտրելով մի քանի միջազգային գործընկերներ, ինչպես նաև մշակել շարժունության պատուհաններ և արտասահմանցի ուսանողների համար գրավիչ ուսպլաններ:
- Հարկ է խրախուսել ՊԴ կազմին մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերին՝ առաջարկելով խթանման միջոցներ, օրինակ՝ բեռնաթափված/կրճատված ծանրաբեռնվածություն, ավելի բարձր վարկանիշային միավոր, ավելի բարձր աշխատավարձ կամ ավելի բարձր պաշտոն:

- ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող լեզվական դասընթացները կարող են արտագնա ուսանողներին օգնել ավելի պատրաստ լինել արտասահման մեկնելու և/կամ այնտեղ ուսանելու համար:
- Անհրաժեշտ է որոշել՝ արդյոք հնարավոր է կրճատել ծրագրերի քանակը՝ դրանք միացնելով ավելի լայն շրջանակ ունեցող մեկ ծրագրի մեջ, որը հավանաբար կարելի է կատարել մագիստրատուրայի մասնագիտական դասընթացների պարագայում: Դա կարող է ՄՈՒՀ-ին օգնել վերաբաշխել ՊԴ կազմը և թեթևացնել նրանց ծանրաբեռնվածությունը:
- Անհրաժեշտ է ծրագրերում ավելացնել դասավանդման ժամանակակից հմտությունների և մեթոդաբանության հատվածը, քանի որ դպրոցներում իրականացվող պրակտիկայի ընթացքում դա չի իրականացվում (ավելի շատ պահպանողական մոտեցումն է կիրառվում):
- Անհրաժեշտ է շարունակել արտաքին շահակիցներին ներգրավել կրթական ծրագրերի, ուսպլանների մշակման ու զարգացման և գնահատման գործընթացներում՝ հավաստելու, որ բուհի շրջանավարտներն ուղղակի կերպով ներգրավված կլինեն/աշխատանք կունենան աշխատաշուկայում:
- ՄՈՒՀ-ը պետք է հաշվի առնի, որ որակի ապահովումը շատ ավելին է, քան ժամանակ առ ժամանակ փոփոխություններ կատարելը:
- ՄՈՒՀ-ը պետք է պարբերաբար հետադարձ կապ ապահովի՝ բոլոր շահակիցներին տեղեկացնելով հարցման արդյունքների, մշտադիտարկման նախաձեռնությունների և գործողությունների պլանների, այսինքն՝ որակի ներքին ապահովման գործընթացների մասին:

11 հոկտեմբերի 2019թ.

Քրիստինե Սողիկյան
Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից (տե՛ս կից հավելված 1՝ փորձագետների ինքնակենսագրականները)՝

- **Քրիստինե Սողիկյան՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
- **Նարինե Խաչատրյան՝** Երևանի պետական համալսարանի անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
- **Գագիկ Քթրյան՝** ՀՀ ՊՆ տեղեկա-տվու-թյան և հասարակայնության հետ կապերի վարչության Հասարակայության հետ կապերի բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
- **Պիտեր Լուիս Ժոզեֆ Քաղիս՝** Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության ավագ քաղաքականության խորհրդատու (senior policy advisor), բնական գիտությունների դոկտոր,
- **Սրբուհի Միչիկյան՝** ԵՊՀ Սոցիոլոգիա ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու Անի Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Որակի ապահովման կենտրոնի համակարգող Անի Շահինյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողն ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Դիմում պետական հավատարմագրման համար

Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՀՊՄՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո (15.11.2018) ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր (10.12.2018): Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանն ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են հինգ վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[19]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

---

[19] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի ժամանակացույց

ՀՊՄՀ ինքնավերլուծություն

Հաստատությունն, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանված ձևաչափի, 14.03.2019թ.ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծության զեկույցը հիմնականում պարունակում էր ընդհանրական և նկարագրական տեղեկատվություն, հիմնված չէր վերլուծությունների վրա և չէր շեշտադրում բուհի ձեռքբերումները:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ (08.05.2019թ.) փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և Ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավարի և փորձագիտական գնահատման գործընթացի համակարգողի մասնակցությամբ: Նախապատրաստական այցի ընթացքում համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, մասնակիցների ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. մայիսի 20-ից 24-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, դեկանները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ ՄՈՒՀ-ի կողմից նախօրոք տրամադրված ցանկից: Ըստ պլանավորվածի՝ իրականացվել են ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումները, դասալսումները, ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանությունների դիտարկումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[20], ռեսուրսների դիտարկում[21] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ

[20] ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[21] ՀԱՎԵԼՎԱԾ 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Ամփոփիչ փակ հանդիպման ժամանակ չափանիշների բավարարման կամ չբավարարման վերաբերյալ եզրահանգումները և վերջնական եզրակացությունները բաց քննարկման միջոցով համաձայնեցվել են խմբի բոլոր անդամների հետ՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրսբերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 24.07.2019թ.:
Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ՀՊՄՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 13.09.2019թ.-ին: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն, որը տրամադրվել է տեղացի փորձագետներին, ինչպես նաև քննարկվել է միջազգային փորձագետի հետ: 2019թ. հոկտեմբերի 4-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի դիտողությունները և մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 11.10.2019թ.: Զեկույցի նախնական տարբերակում խմբի կողմից կատարված փոփոխությունների վերաբերյալ նշումներ են կատարված համապատասխան էջերի տողատակերում:

11 հոկտեմբեր 2019թ.

Անի Մկրտչյան
Համակարգողի ստորագրություն

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – ՀՊՄՀ-ն հիմնադրվել է 1922 թվականին, և 1948 թվականից կրում է մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը: Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2016 թվականի N 138-Ն որոշմամբ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորել է «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի:

ՄՈՒՀ-ի ՊԴ կազմը համալրված է ԳԱԱ-ի ակադեմիկոսներով, ՄՈՒՀ-ում դասավանդում է շուրջ 400 գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, պրոֆեսորներ և դոցենտներ:

Համալսարանի կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են ֆակուլտետները, ամբիոնները, վարչությունները, գիտաուսումնական կենտրոններն ու ինստիտուտները, ծառայությունները, գիտական գրադարանն ու եռաչափ թանգարանը: Համալսարանում գործում են նորաստեղծ Շախմատի գիտահետազոտական և Ա. Պուշկինի ինստիտուտները, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, Հոգեբանության գիտահետազոտական, Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի և «Նաիրի» ինժեներական լաբորատորիաները, Մետափիլիսոփայության և փաստարկման տեսության միջազգային ինստիտուտը և այլ հետազոտական կառույցներ: ՀՊՄՀ բաղադրիչ մասն են կազմում No57 հիմնական դպրոցն ու ավագ դպրոց-վարժարանը:

ՀՊՄՀ առաքելությունն է. «ՀՊՄՀ-ն կրթական, գիտահետազոտական և մշակութային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը նպատակաուղղված է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծմանը և հմտությունների ձևավորմանը, պահպանմանը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածմանը»:

ՀՊՄՀ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրով: Ինքնավերլուծության և ռազմավարական ծրագրի մեջ սահմանված են ՄՈՒՀ-ի ձգտումներն ու հավակնությունները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ – ՀՊՄՀ-ն 2004-2005 ուսումնական տարվանից իրականացնում է բնական գիտությունների, հումանիտար ոլորտի, սոցիալական գիտությունների և արվեստի ոլորտների 99 ՄԿԾ-ներ, ուսուցման առկա և հեռակա ձևերով, բակալավրական (44), մագիստրոսական (55) և հետբուհական (5) մակարդակներում: Համալսարանում սովորում է շուրջ 9.000 ուսանող: Ներկայումս ՀՊՄՀ-ն ունի 10 ֆակուլտետներ՝ 43 մասնագիտական ամբիոններով, որոնցից 7-ը համահամալսարանական:

Իր առաքելության մեջ կրթության ոլորտի վերաբերյալի ի թիվս այլ կարևորումների, համալսարանը ընդգծում է՝

- տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծրագրեր՝ հագեցած արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով,
- ներդնել նորարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

Նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները՝

- իրականացնել ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի վերափոխումներ,
- ապահովել ուսումնական գործընթացի, հետազոտական և ստեղծագործական գործունեության միասնականությունը,
- մասնագիտական զարգացման դպրոցների հիմնադրում և պրակտիկայի, կարիերայի և ուսումնառության կողմնորոշման ու որակի ապահովման միասնական կառուցակարգերի ներդրում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ – Այս ոլորտում որպես ռազմավարական նպատակ համալսարանը սահմանել է՝

- զարգացնել համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել համալսարանի հետազոտական կարգավիճակին:

Նպատակի իրականացման համար ձևակերպվել են հետևյալ խնդիրները՝

- նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- նպաստել համալսարանում գիտական կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը,
- աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ – Միջազգային գործունեության ընդլայնումը համարվում է ՀՊՄՀ 7-րդ ռազմավարական ուղղությունը: Այս ուղղության ներքո ՄՈՒՀ-ը նպատակ ունի ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ՀՊՄՀ գործունեության միջազգայնացումը: Որպես խնդիրներ ձևակերպված են՝

- ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում,
- ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավմանը եվրոպական հետազոտական տարածքին,
- նպաստել օտարերկրյա ուսանողների համակազմի աճին ՀՊՄՀ-ում:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ – Այս ոլորտում համալսարանը որպես այդպիսին ռազմավարական ուղղություն չի սահմանել, մինչդեռ խնդրի տեսքով անդրադարձել է «Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումները» ուղղության ներքո: Մասնավորապես՝ «բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը»: Համալսարանի Որակի ապահովման համակարգի նպատակներն ու խնդիրները սահմանված են ՀՊՄՀ որակի ներքին ապահովման քաղաքականությունում: Որպես խնդիրներ ձևակերպված են՝

- տրամադրել հրահանգավորումներ ՀՊՄՀ-ի վարչական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչներին՝ որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման և ներդրման նպատակով,

- տրամադրել հրահանգավորումներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակի ներքուհական ապահովման չափանիշների մշակման նպատակով,
- ապահովել որակի մշակույթի ստեղծման նախադրյալներ,
- պահպանել մանկավարժական կրթության բնագավառում առկա ձեռքբերումները, ազգային առանձնահատկությունները, հիմնարար գիտելիքը՝ իրականացնել պետության, հասարակության և անհատի՝ տվյալ ժամանակահատվածին համահունչ բարձրորակ կրթություն՝ բարձրագույն մասնագիտական կրթության բոլոր երեք մակարդակներում,
- կրթության որակի ապահովման ճկուն ընթացակարգերի և մեխանիզմների միջոցով ապահովել ՀՊՄՀ-ի ինտեգրումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և բարձրացնել համալսարանի գրավչությունը,
- նպաստել և խթանել հետազոտության ինտերգրումը դասավանդման և ուսուցման գործընթացներում, ապահովել դրանցում ուսանողների ներգրավվածությունը,
- նպաստել և խթանել որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրմանը,
- մշակել չափանիշներ նմանատիպ կրթական ծրագրեր իրագործող համալսարանների հետ՝ համեմատությունների իրականացման և լավագույն փորձի տարածման նպատակով:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է **«համապատասխանություն նպատակներին»** սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ՉԱՓԱՆԻՇ I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

«2016–2020թթ. Ռազմավարական ծրագրում» ՀՊՄՀ-ն վերանայել է իր նախկին առաքելությունը՝ առաջադրելով հետևյալ ձևակերպումը. «ՀՊՄՀ-ն կրթական, գիտահետազոտական և մշակութային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը նպատակաուղղված է կրթության, սոցիալական, հումանիտար, բնական գիտությունների և արվեստի ոլորտներում ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծմանը և հմտությունների ձևավորմանը, պահպանմանը և հանրային ոլորտում մանկավարժական արժեքների տարածմանը»: ՄՈՒՀ-ի սույն առաքելությունն ընդգրկում է մարդկային գործունեության լայն շրջանակ և դուրս է գալիս մանկավարժների պատրաստման գործառութային շրջանակից: Այնուամենայնիվ, փորձագիտական ուսումնասիրությունը վկայում է, որ անկախ առաքելության մեջ տեղ գտած փոփոխությունից, ՄՈՒՀ-ը շարունակում է առաջնորդվել հին առաքելության՝ մանկավարժական համալսարան լինելու հիմնադրույթով: Ուսումնասիրված ՄԿԾ-ները պարունակում են հոգեբանամանկավարժական կրթամաս, մասնագիտական պրակտիկայի հիմնական ձևը մանկավարժական պրակտիկան է, հետազոտական կրթամասում առկա է մանկավարժահետազոտական բաղադրիչ: ՊԴ հիմնական կազմն անփոփոխ է: Փորձագիտական այցի ընթացքում տեղ գտած քննարկումներում բուհի ուսանողներն ու դասախոսները, ինչպես նաև այլ շահակիցներն իրենց նույնացնում են մանկավարժական հաստատության հետ, ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների, հատկապես՝ գործատուների հիմնական մասը դպրոցներն են: Ըստ էության, թե՛ կրթական բովանդակությունը, թե՛ ՊԴ կազմը, թե՛ արտաքին շահակիցների՝ գործատուների պրոֆիլը մնացել է անփոփոխ:

Նոր ռազմավարությամբ ՀՊՄՀ-ն հավակնություն ունի զարգանալ նոր ուղղությամբ՝ դառնալ հետազոտական համալսարան, ինչը վերահաստատեց նաև ՀՊՄՀ ռեկտորը փորձագիտական այցի ընթացքում: Նոր առաքելության և ՌԾ-ի այս նպատակի շրջանակներում ՄՈՒՀ-ը ձգտում է զարգացնել իր գիտական ներուժը, ստեղծել լրացուցիչ առաջատար գիտական ինստիտուտներ և ներդրում կատարել ուսուցման և դասավանդման միջև կապի ապահովման ուղղությամբ:

ՀՊՄՀ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրում նշվում է 7 ռազմավարական գերակա ուղղություն, որոնցից մի քանիսն ուղղակիորեն առնչվում են ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներում սահմանված նկարագրիչների պահանջներին բավարարող բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ների իրականացմանը, մասնավորապես. «Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ», «Արդիական հետազոտությունն ու նորարարություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Կողմնորոշված դիմորդներ և ուսումնառողներ», «Արդյունավետ կառավարում, ֆինանսական կայունություն, ժամանակակից ենթակառուցվածք» և այլն: Այս գերակա ուղղություններն ի ցույց են դնում ՀՊՄՀ-ի հավակնությունները՝ նոր սերնդին առաջադրված կրթական խնդիրների լուծման համար ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, նորարարության, ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման մեթոդների ներդրման միջոցով: Հավատարմագրման նախորդ շրջափուլի ժամանակ ՄՈՒՀ-ին խորհուրդ է տրվել ավելի կոնկրետ լինել ՌԾ-ի

նպատակների, որակական և քանակական ցուցիչների սահմանման մեջ, այնուամենայնիվ, ՌԾ-ի և գործողությունների պլանի ուսումնասիրությունն ի ցույց դրեց մի շարք նպատակների, դրանցից բխող խնդիրների անչափելի, երբեմն անիրատեսական բնույթը՝ հատկապես բոլոր ուղղություններով սահմանված ԳԱՑ-երի քանակական ցուցիչների չհիմնավորվածության, ռազմավարական կոնկրետ խնդիրների իրականացման համար չնախատեսված ռեսուրսների պայմաններում: ՄՈՒՀ-ը քայլեր է իրականացնում սոցիալական բոլոր խմբերին հասանելի կրթություն և դիմորդներին ու ուսումնառողներին մասնագիտական կողմնորոշում տրամադրելու ուղղությամբ: Ըստ ՌԾ-ի՝ նախատեսվել է վերանայել բոլոր ՄԿԾ-ները, որպեսզի հավաստվի ՈԱՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանությունը:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՄՈՒՀ-ն ունի առանձին փաստաթուղթ՝ «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքի գնահատում», որտեղ որպես ՄՈՒՀ-ի շահակիցներ հատկորոշում է ուսանողներին, ՀՊՄՀ-ի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, դիմորդներին, շրջանավարտներին, գործատուներին, հասարակությանը և պետական մարմիններին: ՄՈՒՀ-ում ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատումն իրականացվում է տարբեր հարցումների միջոցով, երբեմն նաև շահակիցների անհատական նախաձեռնությամբ բարձրացված հարցադրումների միջոցով:

Շահակիցների տարբեր խմբերի՝ համալսարանի կոլեգիալ մարմիններում քննարկումների ընթացքում երբեմն բարձրաձայնվում են հարցադրումներ, որոնք ինչ-որ չափով ապահովում են շահակիցների կարիքների՝ ՄՈՒՀ-ի կողմից հաշվառումը: Կարիքների վերհանման մյուս մեխանիզմը հարցումներն են: Ներքին շահակիցները հիմնականում միջնորդավորված եղանակներով և տարբեր չափերով են ներգրավվում ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների մշակման գործընթացում: Արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմները թեև թվարկված են «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» կարգում, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դրանք չենք գործարկվում, և փաստացիորեն չի ապահովվել արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունն առաքելության և ՌԾ մշակմանը, իսկ կարիքների վերհանման գործողությունները կրել են ֆորմալ բնույթ:

Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցները հիմնականում հավաստեցին իրենց բավարարվածությունը ՌԾ-ում իրենց կարիքների արտացոլումից: Ներքին շահակիցները նաև բավարարված էին այն հանգամանքով, որ ՄՈՒՀ-ը չի բարձրացրել ուսման վարձերը՝ հաշվի առնելով հասարակության լայն շերտերի և թիրախային խմբերի վճարունակությունը: Այնուամենայնիվ, ուսման վարձերի ներկայիս մակարդակը երաշխավորում է ռեսուրսներով ապահովվածության գոյատևման մակարդակ և չի գոյացնում զարգացմանն ուղղված միջոցներ:

Ուսանողների կարիքների բացահայտմանը նպաստում է նաև ՄՈՒՀ-ում գործող Ուսանողական Խորհուրդը: Վերջիններս պարբերաբար կազմակերպում են քննարկումներ և հանդիպումներ՝ ուսանողներին հուզող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և փոխանցելու նպատակով:

Փորձագիտական այցի ընթացքում արտաքին շահակիցները փաստեցին ՄՈՒՀ-ի հետ իրենց կապի թույլ լինելը, անգամ կառավարման որոշ օղակներում ՄՈՒՀ-ի առաքելությունում կամ կառավարման գործընթացներում հասարակության լայն շերտերի կարիքների և տեսլականի ներդրման դժվարությունները, ինչպես նաև կարիքների ոչ միշտ հստակ արտացոլումը:

Հարկ է ընդգծել, որ արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություններում ներկայացված չեն շրջանավարտների կարիքները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բնույթով գերակայորեն մանկավարժական բուհի առաջնային գործատուները՝ դպրոցները, շահագրգռված են ակտիվացնել իրենց համագործակցությունը բուհի հետ: Արտաքին շահակիցները փաստում են, որ ՄՈՒՀ-ի կողմից ներկայումս իրականացվող կրթության և իրական պահանջների միջև անջրպետ կա, քանի որ ՄԿԾ-ները փաստացիորեն ավելի շատ տեսական գիտելիք են փոխանցում, քան գործնական հմտություններ են ձևավորում:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Ներկայումս իրականացվող ՌԾ-ն հիմնված չէ նախորդ՝ 2010 - 2015 ՌԾ-ի արդյունքների վերլուծության վրա: Այդպիսի վերլուծություն առկա չէ. փոխարենը, «ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդեղ մակրո- և միկրո գործոնների վերլուծություն 2010 - 2015» փաստաթուղթն առաջադրում է ընդհանուր հարցադրումներ, որոնք բուհի նախորդ շրջափուլի ՌԾ-ին և հատկապես դրա փաստացի կատարողականին չեն անդրադառնում:

ՀՊՄՀ 2016 – 2020 ՌԾ-ն պարունակում է Նպատակների իրագործման համար նախասահմանված Խնդիրներ, որոնք իրենց հերթին ամփոփվում են առաջընթացի գնահատման ցուցիչներով: ՄՈՒՀ-ը մշակել է «Ռազմավարական ծրագրի (2016 - 2020) գործողությունների կատարման պլան»՝ սահմանելով քայլերը, կատարման ժամանակահատվածը, պատասխանատուներին, անհրաժեշտ ռեսուրսները, վերջնարդյունքները և ԳԱՑ-երը: Այս պլանում նշված ԳԱՑ-երը նույնպես կոնկրետ չեն և շատ լայն են ձևակերպված, ոչ միշտ են ընդգրկում նշված խնդրի իրականացման շրջանակները: ՀՊՄՀ-ում իրականացվող գործընթացները միշտ չէ, որ միտված են ՌԾ-ով սահմանված նպատակի գործունեության արդյունավետության քանակական ցուցիչին: Օրինակ՝ հետազոտության, հատկապես գիտական ներուժի և կարողությունների խթանման չափելի չափանիշներն ու ցուցանիշները բացակայում են:

2016-2020թթ. ՌԾ-ի իրականացման ժամկետը մոտենում է ավարտին: 2017 – 2018թթ. համար ՄՈՒՀ-ը հանձն է առել ՀՊՄՀ Ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանի ընթացքի մասին հաշվետվության կազմումը՝ որպես միջանկյալ ճշգրտող մեխանիզմ: Սակայն այս հաշվետվության մեջ ցուցիչների և ցուցանիշների ճշգրտման վերլուծություն առկա չէ:

ՄՈՒՀ-ի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմը ըստ ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում նախանշված աստիճանակարգության հաշվետվությունների համակարգն է: Հարկ է նշել սակայն, որ այս հաշվետվություններն ունեն տեղեկատվական և նկարագրական բնույթ, արձանագրում են կատարված աշխատանքներն ու փաստերը, հիմնականում չկան հղումներ ՌԾ նպատակներին և առաջընթացի ցուցիչներին:

Մյուս տարի՝ 2020թ. լրանում է ՄՈՒՀ-ի ՌԾ-ի գործողության ժամկետը: Փորձագիտական այցի ընթացքում տեղ գտած քննարկումների ժամանակ ՄՈՒՀ-ի ղեկավարությունը հաստատեց, որ «ՌԾ-ի նպատակները գրեթե իրագործված են»:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի առաքելության, դրա հիման վրա ռազմավարական նպատակների մշակման, որոշ գերակա ուղղությունների, ոլորտների և կողմնորոշումների հատկանշումը: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը, նոր վերաձևակերպմամբ, ընդհանրական է, ներառում է մարդկային գործունեության գրեթե բոլոր ասպարեզները՝ միևնույն ժամանակ օտարելով և

ստորադասելով հաստատության հիմնական և ավանդաբար անքակտելի բնութագիրը՝ մանկավարժական բուհ լինելը, ինչը ներկայացված է բուհի անվանման մեջ: Այս կերպ, ՀՊՄՀ-ն չի տեղորոշում իրեն ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, չի մասնավորեցնում իրեն որպես մանկավարժական կրթություն իրականացնող, խոսում է մանկավարժական արժեքների մասին, որոնք մանկավարժի կարողունակության մի փոքր հատվածն են միայն: Առաքելության, ՄՈՒՀ-ի անվանման և դրա ավանդական հանրային ընկալումներում այսպիսի տարամիտումը կարող է հանգեցնել ՄՈՒՀ-ի կողմից ավանդաբար ուժեղ կողմ հանդիսացած սեփական բնութագրի անտեսմանը և դիմորդների համար ավելի մեծ գրավչությամբ անհապաղ տնտեսական շահի հետապնդման արդյունքում՝ ՄՈՒՀ-ի դիմանկարի աղճատմանը: Փորձագիտական խումբն առանձնապես կարևորում է այս հանգամանքը՝ նկատի ունենալով, որ կրթությունը, հարակից գիտակարգերը և մանկավարժությունը մերօրյա հասարակության համար առանցքային գիտակարգեր են և հենց այստեղ է, որ ՄՈՒՀ-ը կարող է հավակնել առաջատարի և կարծիք ձևավորողի դիրքին ողջ հանրապետությունում: Այս պահին, ցավոք, փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՄՈՒՀ-ի կողմնորոշումը և տեսլականն այդպիսի առաջատարի դիրքի գրավումը չէ:

Ուղղության այսպիսի փոփոխությունը, այնուհանդերձ, կարող է խնդրահարույց լինել նաև այն իմաստով, որ անկախ առաքելության վերաձևակերպումից, ի վերջո, թե՛ կրթության բովանդակությունը, թե՛ աշխատակազմը նույնն են մնացել: Թեև գործատուներն ու շրջանավարտներն ընդգծում են մանկավարժական փորձի կարևորությունը և մատնանշում են ուսանողների մանկավարժական գիտելիքների կիրառման ու գործնական հմտությունների զարգացման հրամայականը, իսկ արտաքին շահակիցները ՀՊՄՀ-ն ընկալում են որպես մանկավարժական կադրեր պատրաստող համալսարան, ՄՈՒՀ-ի ղեկավար կազմն ավելի շատ հակված է ներդրումներ կատարել բուհի հետազոտական բնույթի ապահովման ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի հոգաբարձուների խորհրդի (որն ըստ էության ՄՈՒՀ-ի զարգացման քաղաքականությունը հաստատող մարմինն է) արտաքին ներկայացուցչական կազմի և ՄՈՒՀ-ի ղեկավարության տեսլականները տարամիտվում են, ինչը վտանգում է ՄՈՒՀ-ի հստակ կողմնորոշված զարգացումը: Հոգաբարձուների խորհրդի նախագահը շեշտադրեց կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերը՝ եղածի պայմաններում նշաձողը բարձրացնել, ուսանողներին հանուն եկամուտի ընդգրկելուց խուսափել:

Բացի այդ, նոր առաքելությամբ և ՌԾ-ով ՄՈՒՀ-ը հանդես է գալիս շատ մեծ հավակնությամբ՝ դառնալ հետազոտական հաստատություն: Այսպիսի զարգացման հավակնությունը ռիսկային է այն առումով, որ բուհի աշխատակազմի հետազոտության ոլորտում առկա սահմանափակ ձեռքբերումների, նրանց խրախուսման մեխանիզմների անկայունության, սահմանափակ ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսների և շահակիցների ակնկալիքների միջև առաջացած անհամապատասխանությունները կհանգեցնեն անհաղթահարելի խոչընդոտների՝ ռիսկի տակ դնելով ՌԾ իրագործումը:

Հաշվի առնելով այն, որ ՀՊՄՀ-ի շրջանավարտների մեծ մասն ուսուցիչ է աշխատում, հատկապես տարրական դպրոցներում և հատուկ կրթության ոլորտում, բուհը կարող է խիստ շահեկանորեն դիրքավորվել որպես ոլորտի մենաշնորհատեր: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբն ընդգծում է, որ այս պահին ՄՈՒՀ-ի գործունեությունը չի ընդգրկում կրթության և մանկավարժության մի շարք հիմնական ոլորտներ: ՄՈՒՀ-ի տեսլականում կրթության, հարակից գիտակարգերի և մանկավարժության ողջ տիրույթի ընդգրկումը կարող է ապահովել ՄՈՒՀ-ի կայուն և շարունակական գործունեությունն այն ոլորտում, որտեղ այն ավանդաբար ունեցել է մրցակցային առավելություն: Բացի այդ, ՄՈՒՀ-ի կայուն և շարունակական գործունեությանը կնպաստեր առաջնահերթությունների և արժեքների հիմնավոր փոփոխությունը՝ քանակական արդյունքից որակականի անցմամբ, մասնավորապես՝ հեռակա համակարգից հրաժարվելու և մուտքի, ինչպես նաև ուսանողների

առաջադիմության համար ավելի բարձր շեմ, ***ՊԴ կազմի համար ավելի իրատեսական բեռնվածություն սահմանելու*** միջոցով[22], ինչի արդյունքում ՄՈՒՀ-ը կունենար ավելի բարձր որակ՝ ստեղծելով ավելի բարձր, այդ թվում նաև տնտեսական արժեք:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ՌԾ-ի, դրա իրականացման գործողությունների մշակման նախաձեռնությունները: Այնուամենայնիվ, նոր ՌԾ-ի նախկինի կատարողականի արդյունքների հիման վրա չմշակելու փաստը վկայում է այն մասին, որ ՄՈՒՀ-ի համար երկարաժամկետ տեսլականի, այդ տեսլականին միտված քայլերի շարունակականությունը խաթարված է:

Համալսարանի առաքելության գերընդհանրականությունը, ռազմավարական ուղղությունների համընդգրկուն բնույթը, նպատակների ու խնդիրների SMART չլինելը, ինչպես նաև առկա ռեսուրսների՝ ՌԾ նպատակներին չկապակցված բաշխումը նվազեցնում են համալսարանի կողմից դրանց իրագործման հավանականությունը, ինչպես նաև խաթարում են այդ գործողությունների հասցեականությունը: Ընդ որում, հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի ոչ բոլոր ստարաբաժանումների ծրագրերում ՌԾ նպատակների արտացոլումը և դրանց՝ սեփական գործունեության հետ կապակցումը ռիսկային է դարձնում սահմանված նպատակների իրագործման համար պատասխանատվության ստանձնումը բոլոր օղակներում:

Ողջունելի է, որ ռազմավարական նպատակների մշակման և դրանց իրագործման նպատակով հաստատությունը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը: Շահակիցները հիմնականում անուղղակիորեն են մասնակցել իրենց կարիքների վերհանման և ՌԾ-ի մշակման գործընթացներին: Չնայած անցկացված հարցումներին, հարկ է բարելավել թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցների գործուն ներգրավվածությունը նշված գործընթացներում: Մասնակցային հնարավորությունները թույլ են հատկապես արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի թերի լինելու պատճառով, ինչը վտանգում է արտաքին շահակիցների, հատկապես աշխատաշուկայի հետ համագործակցությունը՝ նվազեցնելով աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելու, դրանց արձագանքելու, իրականացվող ՄԿԾ-ների ընտրության, տնտեսական պահանջարկվածության որոշարկման և կրթական ծրագրերը բարելավելու գործընթացների արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ում գործող առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման հաշվետվողականության մեխանիզմը բարելավման կարիք ունի: ՄՈՒՀ-ի աստիճանակարգային սանդղակով վերընթաց և փաստերն արձանագրող հաշվետվողականությունը չպետք է լինի գնահատման հիմնական եղանակը: ՄՈՒՀ-ի՝ ՌԾ կատարողականի միջանկյալ գնահատման մեխանիզմի ներդրման փորձը կարիք ունի բարելավման և տարածման: Բացի այդ, ՌԾ դրույթների համար ապացուցողական հենք հանդիսացող առաջընթացի ցուցանիշների նկարագրական և ոչ չափելի բնույթը, հաշվետվությունների նկարագրական/փաստավավերագրական բնույթը, դրանց (այդ թվում նաև 2017-2018թթ. միջանկյալ հաշվետվության) հետագա վերլուծությունների սակավությունը, ստորաբաժանումների գործունեության վերջնարդյունքների անչափելիությունը, որակական արդյունքների գնահատման հստակ ցուցիչների բացակայությունը խոչընդոտում են ՄՈՒՀ-ի և դրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ծրագրային բյուջետավարման փորձը, որը սակայն դեռ չի կիրարկվել: Այնուամենայնիվ, նույնիսկ ՌԾ հստակ կապակցվածությամբ ֆինանսական պլանավորման պարագայում քանակական և

[22] Փոփոխվել է փորձագիտական խմբի նախաձեռնությամբ: Նախկին տարբերակում եղել է «...ինչպես նաև ուսանողների առաջադիմության համար ավելի բարձր շեմ միջոցով...»:

որակական վերլուծությունների բացակայությունը խոչընդոտում է նպատակների իրագործմանն ուղղված ռեսուրսների օգտագործման արդյունավետության հիմնավորումը՝ այս կերպ ռիսկային դարձնելով ՄՈՒՀ-ի ՌԾ հետագա բարելավումը, երկարաժամկետ զարգացման արդյունավետությունը:

Փորձագիտական խումբն, այնուամենայնիվ, ընդգծում է, որ ՀՊՄՀ-ին չի հաջողվել իրագործել ՌԾ-ի մեծ մասը՝ հատկապես շահակիցների ներգրավման, հետազոտականության, միջազգայնացման ուղղություններով սահմանված ԳԱՑ-երի նկատմամբ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՀՊՄՀ-ի ձևակերպված առաքելության, դրան հիմնականում համահունչ ռազմավարական ուղղությունների, ՌԾ նպատակներից բխող խնդիրների և «անհրաժեշտ քայլերի» առկայությունը, առաքելության՝ ընդհանուր առմամբ ՈԱՇ-ին համահունչությունը, առաքելությանը համապատասխանող գործունեությունը, գնահատման որոշ մեխանիզմների առկայությունը, ՄՈՒՀ-ի կողմից շահակիցների ներգրավման ուղղությամբ մասնակի գործողությունները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը **բավարարում է** չափանիշ 1-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում ***է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի հիմքում ընկած է կանոնադրությամբ հաստատված, ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցումը: ՄՈՒՀ-ի կառավարման բարձրագույն մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը (24 անդամով) և գիտական խորհուրդը (մինչև 70 անդամ), որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով: Այս պահին, հաշվի առնելով հարաբերականորեն վերջերս տեղ գտած համահայաստանյան փոփոխությունները, հոգաբարձուների խորհրդի գործունեությունը խորհրդի նախագահն արդյունավետ չի համարում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՄՈՒՀ-ի զարգացման մասին քննարկումները խորհրդում անարդյունք են մնում, քանի որ որպես կանոն ՀՊՄՀ ներկայացուցիչները դեմ են քվեարկում առաջադրվող փոփոխություններին, և կարծիքները ***հակադիր*** կիսվում են[23]: Ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, որին կից գործում է ռեկտորատը՝ որպես խորհրդատվական մարմին: Կառավարման մարմինները և կառուցվածքային ստորաբաժանումները գործում են հաստատված կանոնակարգերի և կանոնադրությունների հիման վրա: Գիտական խորհրդից և ռեկտորատից զատ գործում են

[23] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «...ՀՊՄՀ ներկայացուցիչները դեմ են քվեարկում առաջադրվող փոփոխություններին, և կարծիքները միշտ կիսվում են»:

ֆակուլտետային խորհուրդներ, որոնք վարչական և ուսումնագիտական ոլորտներին առնչվող որոշումներ են կայացնում:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքը և դրա փոփոխությունները հաստատվում են Հոգաբարձուների խորհրդի կողմից: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ երբեմն միևնույն աշխատակիցը կամ ստորաբաժանումը պատասխանատու է մի շարք տարբեր գործընթացների համար: Կառավարման համակարգում առկա են ստորաբաժանումներ, որոնց ֆունկցիոնալ նշանակությունները հստակեցված չեն, կամ գործառույթները տրամախաչվում են (օրինակ՝ ՄՈՒՀ- գործատու կենտրոն և պրակտիկայի բաժին) կամ փաստացի գործող կառույցը կազմակերպական կառուցվածքում արտացոլված չէ (օրինակ՝ ՈՒԳԸ-ն): Կազմակերպական կառուցվածքում առկա են ստորաբաժանումներ, որոնք գործունեություն չեն ծավալում, (օրինակ՝ Ներքին աուդիտի բաժինը): Ըստ կազմակերպական կառուցվածքի՝ հստակ տարանջատված չեն ենթակայություններն ու անկախության մակարդակները: Հորիզոնական կապերը կազմակերպական կառուցվածքից չեն երևում. տարբեր ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը և փոխգործության շրջանակը սահմանված չեն: Հատկանշականն է, որ ֆակուլտետները գտնվում են անմիջապես ռեկտորի ենթակայության տակ:

ՄՈՒՀ-ը փորձագիտական այցից առաջ իրականացրել է կազմակերպական կառուցվածքի արդյունավետության վերլուծություն, որն այլ փաստաթղթերի հիման վրա կազմված, ՄՈՒՀ-ի կառուցվածքին անդրադարձող բնույթով նկարագրողական փաստաթուղթ է և վեր չի հանում ՄՈՒՀ-ի կառուցվածքային խնդիրները, գործառույթների կրկնությունը և չի քննարկում դրանց հաղթահարման ուղիները կամ բաց մնացող գործառույթների առաջացրած խնդիրները: Հարկ է նշել, որ կազմակերպական կառուցվածքը վերջերս վերանայվել է, ինչպես առաջարկվել էր նախորդ հավատարմագրման ժամանակ: Սակայն վերանայման հիմքում դրված չի եղել կառուցվածքի արդյունավետության վերլուծությունը: Մասնավորապես՝ ստորաբաժանումների փակվելու արդյունքում գործառույթները դրվել են այլ ստորաբաժանումների վրա, առանց հաշվի առնելու վերջիններիս ծանրաբեռնվածությունը կամ այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու հնարավորություններն ու կարողությունը: Օրինակ՝ ռազմավարական պլանավորման, վերլուծության և հաշվետվության գործառույթ իրականացնող ստորաբաժանման գործառույթները դրվել են Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության վրա: Գործառույթների արդյունավետ իրականացման համար տարանջատման կարիքը փաստում է նաև վարչությունը: Փորձագիտական այցի ժամանակ ՄՈՒՀ-ի ղեկավար կազմը դժվարացավ նշել որևէ հիմնավորում Ներքին աուդիտի բաժինը փակելու համար, ընդ որում բաժինը դեռ ներկայացված է հաստիքացուցակում:

ՄՈՒՀ-ում առկա են տարբեր ստորաբաժանումների գործունեությունը և տարբեր գործընթացները կարգավորող փաստաթղթեր: Մասնավորապես, կառավարման մարմիններն իրենց գործողություններում առաջնորդվում են կանոնակարգերով և ընթացակարգերով, որոնք վերաբերում են վարչարարության, կրթական ծառայությունների, հետազոտության, միջազգային կապերի, որակի ապահովման, շահառուների հետ համագործակցության ոլոտներին:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հիմնականում երաշխավորում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, այնուամենայնիվ փորձագիտական այցի ընթացում պարզ դարձավ, որ որոշումների կայացման գործընթացում հիմնական շահակիցները պասիվ մասնակցություն ունեն: Ավելին որոշումների կայացման գործընթացի համակարգված կազմակերպման համար մշակված չեն առանձին էթիկայի կանոններ: Այդուհանդերձ, կանոնակարգերն ու ընթացակարգերը հիմնականում հասանելի են առցանց:

ՄՈՒՀ-ը մշակել է ուսումնաօժանդակ կազմի գործառույթները հստակեցնող աշխատանքային նկարագրեր:

Կրթական և այլ նպատակների իրականացման համար ՀՊՄՀ-ն հատկացնում է նյութական և մարդկային ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսների պլանավորումն իրականացվում է ըստ հաստիքացուցակի, սակայն ՄՈՒՀ-ում մարդկային ռեսուրսների բավարարության, նպատակներին և գործառույթների համապատասխանության, ինչպես նաև աշխատակազմի արդյունավետության վերլուծություններ չեն իրականացվում: Նյութական ռեսուրսները ստորաբաժանումներին տրամադրվում են ըստ պահանջագրերի և բյուջեի հնարավորությունների: ՄՈՒՀ-ում առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարության վերլուծությունները համակարգված բնույթ չեն կրում: Ֆինանսատնտեսական գործունեության ներքին աուդիտ չի իրականացվում, ՄՈՒՀ-ում իրականացվում է միայն արտաքին ֆինանսական աուդիտ: Բացակայում է ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորումը՝ չնայած ՄՈՒՀ-ը հավատարմագրմանն ընդառաջ փորձել էր կազմել նման նախագիծ, հիմնվելով նախորդ հավատարմագրման խորհրդատվության վրա: ՌԾ-ի ուղղությունների կապակցված նախահաշվի նախագիծը, սակայն, դեռ հաստատված չէ: ՄՈՒՀ-ը համարում է, որ ֆինանսական միջոցների սակավությունը կարևոր մարտահրավերներից մեկն է, և մատնանշում է, որ ՌԾ որոշ նպատակների իրականացմանը խոչընդոտում է նաև ֆինանսական ռեսուրսների սղությունը:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՀՊՄՀ կանոնակարգային հենքը հնարավորություն տալիս է ՊԴ կազմին և ուսանողներին 25% համամասնությամբ ներգրավվել բուհի կառավարման կոլեգիալ մարմիններում՝ հոգաբարձուների խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում և ռեկտորատում: Այս կերպ ներքին շահակիցներն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով հնարավորություն են ստանում մասնակցելու համալսարանի կառավարման գործընթացին, հարցերի քննարկմանն ու դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: ՈՒԽ-ն՝ որպես ուսանողության ինքնակառավարման մարմին, առաջադրում և ընտրում է ՀՊՄՀ կոլեգիալ կառավարման մարմիններում ուսանողության ներկայացուցիչներին: Սակայն վերոնշյալ կառավարման մարմիններում շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություններ չեն իրականացվում: ՌԾ և ՄԿԾ մշակման և վերանայման համար ձևավորված աշխատանքային խմբերում ներգրավվել են ՊԴ և ուսանողության ներկայացուցիչներ: Սակայն ուսանողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ նրանց նախաձեռնողականությունը և հետաքրքրությունը կառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացների նկատմամբ թույլ է: Ուսանողները նաև սակավ նախաձեռնողականություն են ցուցաբերում ՀՊՄՀ-ում իրականացվող փոփոխությունների առումով կամ պասիվ են բարելավմանը միտված առաջարկություններ ներկայացնելիս (չնայած որ ուսանողների առաջարկությունների հիման վրա որոշ փոփոխություններ իրականացվել են): Շահակիցների հետ հանդիպումներից նաև պարզ դարձավ, որ հանդիպումներին մասնակցած ուսանողները չեն գիտակցում որոշումների կայացման գործընթացում իրենց դերակատարումը: ՄՈՒՀ-ն ևս ինքնավերլուծությունում նշում է, որ չնայած առկա են մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, այդուհանդերձ այդ մեխանիզմները դեռևս լիարժեք չեն գործում կամ դեռևս պահպանում են իրենց ֆորմալ բնույթն ավանդույթի կամ այլ գործոնների ազդեցության հետևանքով:

Կառավարման մարմինների կողմից արդեն ընդունված որոշումները շահակիցների համար հասանելի են համալսարանի կայքում: Դասախոսների և ուսանողների բավարարվածությունը՝ համալսարանի կողմից իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացին ներգրավումից դեռևս չի ուսումնասիրվում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՀՊՄՀ-ն պլանավորումն իրականացնում է երկու մակարդակում: Որպես երկարաժամկետ պլանավորում՝ մշակվել են ՌԾ-ն և նրա գործողությունների կատարման պլանը, իսկ կարճաժամկետ պլանավորումը նախատեսված է մեկ օրացուցային և (կամ) ուստարվա համար և իրականացվում է ՀՊՄՀ գործունեության բոլոր ուղղություններով: Միջնաժամկետ պլանավորում, որպես այդպիսին, չի իրականացվում: ՌԾ-ն տրոհված չէ ըստ միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի: ՄՈՒՀ-ում երկարաժամկետ պլանավորման ճշգրտում միջնաժամկետ պլանավորման և ռիսկերի գնահատման հիման վրա չի իրականացվում: Որոշ ֆակուլտետներ կազմել են իրենց ռազմավարական ծրագիրը՝ առանձնացնելով իրենց վերաբերող հատվածն ընդհանուր ՌԾ-ից, այնուամենայնիվ, այս փաստաթղթերը գործնական կիրառում չեն ստացել: Ֆակուլտետների հաշվետվությունները կառուցված չեն կազմած ծրագրերի հիման վրա: ԻՎ զեկույցում ՄՈՒՀ-ը ևս մատնանշում է, որ ռազմավարական և օպերատիվ պլանների իրականացման փոխհամաձայնեցվածության ապահովման կարիք կա: ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների աստիճանական արտացոլումը այլ ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերի և աշխատանքային պլանների մակարդակում միշտ չէ, որ տեսանելի է: Ավելին, մի շարք ֆակուլտետների հնգամյա ռազմավարական ծրագրերը կրկնական են ինչպես ՌԾ-ի դրույթների, այնպես և այլ ֆակուլտետների ծրագրերի հետ, առանց ադապտացիայի վերարտադրում են ՄՈՒՀ-ի ՌԾ-ում իրենց վերաբերող դրույթները և չեն կապակցում ՌԾ նպատակները և խնդիրները սեփական գործունեությանը:

ՄՈՒՀ-ում տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլանների և հաշվետվությունների ձևաչափերն էապես տարբերվում են: Ամբիոնների մակարդակում կային աշխատանքային պլանների ձևաչափային տարբերություններ, և ոչ բոլորն էին հաստատված ամբիոնի նիստով: Չկա համահամալսարանական մոտեցում ստորաբաժանումների աշխատանքային պլանների կազմման համար: Բացի այդ, ՌԾ-ից բխեցված վերջնարդյունքներ և ցուցիչներ սահմանված չեն: ՄՈՒՀ-ն առայժմ չի գնահատում, թե որքանով է պլանավորման գործընթացը նպաստում համալսարանի առաքելության արդյունավետ իրականացմանը:

ՀՊՄՀ բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի համար՝ մեկ տարվա նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլվում են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների ամբողջ հաստատության համար: Ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետության տեսանկյունից ՄՈՒՀ-ը հավատարմագրմանն ընդառաջ փորձ է արել կապակցել բյուջեն ռազմավարական ծրագրի ուղղությունների և նպատակների հետ, սակայն մշակված սույն նախագիծը դեռևս հաստատված չէ, և ըստ ռազմավարական նպատակների բյուջեի համակարգված ֆինանսական պլանավորում ՄՈՒՀ-ի կողմից չի իրականացվում:

Համալսարանում պլանավորված գործողությունների արդյունքների գնահատման և մշտադիտարկման համար կիրառվում է հաշվետվությունների մեխանիզմը: Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են ընթացիկ և տարեկան հաշվետվություններ՝ ըստ համապատասխան աստիճանակարգի: Հաշվետվությունները կազմված չեն ըստ ռազմավարական նպատակների, թեև հարկ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ը որդեգրել է հաշվետվության նոր ձևաչափ՝ ընդօրինակելով ՌԱԱԿ-ի ինքնավերլուծության ձևաչափը որոշ հարմարեցումներով: Ձևաչափի փոփոխությունը չի հանգեցրել վերլուծությունների խթանման, հաշվետվությունները փաստացիորեն կատարված աշխատանքների թվարկում են: ՌԾ տարեկան հաշվետվությունները ընդամենը իրականացված գործընթացների կատարողականի ներկայացում են: Չեն վերլուծվել ԳԱՑ-

երը: ՄՈՒՀ-ի ՌԾ-ի և դրա ֆակուլտետների զարգացման ռազմավարական ծրագրերի գործողությունների կատարման պլանների մշտադիտարկման հստակ գործուն մեխանիզմներ չկան, չնայած առաջարկվել էր նախորդ զեկույցի խորհրդատվություններում:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ՀՊՄՀ-ն իր ՌԾ մշակման և ընդունման կարգում կարևորում է ՌԾ մշակման նախնական փուլերից՝ ներկա իրավիճակի վերլուծությունը: Ըստ այդ կարգի. «ԿԲՈ վարչության պետը պատրաստում է հրամանի նախագիծը համալսարանի ներկայիս վիճակի արտաքին և ներքին միջավայրի գնահատման վերլուծության համար, առանձնացվում են հիմնական վտանգներն ու հնարավորությունները, ինչպես նաև վերլուծվում՝ գործունեության տարատեսակ շրջանակներ և որոշվում են համալսարանի ուժեղ և թույլ կողմերը (SWOT վերլուծություն. վտանգների և հնարավորությունների վերլուծություն, այլ վերլուծական մեթոդներ)»:

Հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվությունների արդյունքում 2016թ. Հայաստանի ազգային մրցունակության 2010-2015թթ. զեկույցների հիման վրա ՀՊՄՀ-ն մշակել է ՀՀ բարձրագույն կրթության վրա ազդող մակրո և միկրո գործոնների վերլուծություն: Այն նկարագրում է բարձրագույն կրթության ընդհանուր խնդիրները, չի առանձնացնում կոնկրետ ՀՊՄՀ-ի խնդիրները, նրա գործունեության վրա հնարավոր ազդեցությունները և դրանց լուծման տարբերակները: Այն ըստ էության նկարագրողական բնույթի փաստաթուղթ է: Ուսումնասիրության արդյունքները ռազմավարության ընտրության կամ ռազմավարական պլանավորման հիմք չեն ծառայել: ՌԾ մշակման հիմքում դրված չեն միջավայրային գործոնների խորքային ուսումնասիրություններ՝ մակրո միջավայրի ուսումնասիրման համար ընդունված որևէ գործիքակազմով: Արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը կրել է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չէ նախապես մշակված ընթացակարգով կամ հստակ մեթոդաբանությամբ: Առկա չէ միկրո միջավայրի վերլուծություն ըստ որևէ հստակ գործիքակազմի:

Տվյալների հավաքագրման արդյունքում կոնկրետ ՄՈՒՀ-ի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների այլ վերլուծություններ չկան: Գործունեության վրա ազդող գործոնների պարբերական, համակարգված և համապարփակ ուսումնասիրություն դեռևս չի իրականացվում: Տվյալների հավաքագրում նույնպես համակարգված չի իրականացվում, իսկ որոշումների կայացումը չի հիմնվում հուսալի տվյալների հիման վրա: Համալսարանում տվյալների հավաքագրման գործընթացը փոխկապակցված չէ ռազմավարական ծրագրերի մշակման կամ վերանայման գործընթացների հետ: Գնահատված չէ տվյալների հավաքագրման գործընթացի արդյունավետությունը:

Նախորդ 2011-2015թթ ՌԾ արդյունքների ձեռքբերման ամբողջական վերլուծություն ևս չի կատարվել: ՀՊՄՀ-ն փորձել է իրականացնել նաև հարցումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում՝ ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով: Հարցման արդյունքներն ըստ էության չեն դիտարկվել ՌԾ մշակման հիմքում: Դրանց հիման վրա հետագա բարելավման հիմքեր չկան:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՀՊՄՀ-ն կարևորում է վարչարարության իրականացումը որակի կառավարման սկզբունքով և ՈԿՀ ուղեցույցում սահմանել է հետևյալ փուլերը՝ ա/ռազմավարական պլանավորում, բ/պլանավորում՝ ըստ գործընթացների, գ/գործընթացների փաստաթղթավորում, դ/կրթության որակի մշտադիտարկում, ե/գործընթացների ներքին աուդիտ, զ/անձնակազմի վերապատրաստման չափորոշիչների մշակում: Սակայն փորձագիտական այցից պարզ

դարձավ, որ ՊԻԳԲ շրջափուլը հիմնական գործընթացների մասով փակված չէ: Կառավարման տարբեր գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ-ի տարբեր փուլերում: Շատ գործընթացների վարչարարությունը ՊԻԳԲ շրջափուլի կիրառման տեսանկյունից վերջին 2՝ գնահատման և բարելավման փուլերին չի հասել՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ նախորդ հավատարմագրումից հետո մշակվել են փաստաթղթերի զգալի մասը, որոնք դեռ նոր են կիրառության մեջ դրվում: Ուստի վերջիններիս ձեռքբերումների կամ արդյունավետության գնահատումների վերաբերյալ հիմքեր փորձագիտական խմբին չեն ներկայացվել: Պլանավորման և իրականացման քայլերից հետո գնահատման և բարելավման փուլերը հստակ ընթացակարգով չեն իրականացվում: Ստորաբաժանումները չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար մշակված ցուցիչներ՝ ՌԾ-ի առաջընթացի գնահատման ցուցիչներից բխող: Գնահատվում են կրթական որոշ գործընթացներ, սակայն վերջիններս չեն իրականացվում հստակ մեթոդաբանությամբ, համակարգված և նպատակային, իսկ գնահատումների արդյունքները ոչ միշտ են հիմք հանդիսանում բարելավումների համար: Բարելավմանը միտված գործողությունները ոչ միշտ են հիմնավորված հավաստի տվյալներով: Վարչարարությունը գտնվում է հիմնականում իրականացման փուլում, այլն էլ ոչ միշտ պլանավորմանը համապատասխան: Թե ինքնավերլուծությունում, թե՛ փորձագիտական այցի ժամանակ ՄՈՒՀ-ն էլ է նշում, որ տարբեր ոլորտներում կառավարման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում 2012թ-ից հաստատված են «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ» և գնահատման գործիքները, ըստ որի՝ ՄԿԾ պարբերական մշտադիտարկումը ենթադրում է սիստեմատիկ ինքնուսումնասիրություն և ինքնագնահատում»: Նույն կարգում նշվում է. «Մշտադիտարկումն իրականացվում է դասալսումների, ուսանողների և դասախոսների հետ խորհրդակցությունների և ուսանողներից ու դասախոսներից հարցաթերթիկների միջոցով ստացված տեղեկատվության ուսումնասիրության միջոցով»: Այդուհանդերձ, ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ փաստացի ՀՊՄՀ-ում գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներն են գիտական և ֆակուլտետի խորհուրդներում, ռեկտորատում կրթական և այլ գործընթացների քննարկումները, դասալսումները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների, կազմակերպություններում պրակտիկաների ղեկավարների /արտաքին շահակիցներ/ հետ պարբերական իրականացվող հանդիպումները ու նրանց հաշվետվությունների քննարկումները: Ինչպես նաև իրականացվել են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում ՄԿԾ-ների վերաբերյալ հետադարձ կապ ստանալու նպատակով: Այդուհանդերձ, այդ հարցումների անցկացման և տվյալների վերլուծության մեթոդաբանությունը հստակ չէ, ոչ միշտ է մասնակիցների ներկայացուցչականությունն ապահովվում, իսկ մեխանիզմի և գործիքակազմի արդյունավետությունը գնահատված չէ: Բացի այդ, ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն՝ որակական և քանակական տվյալներով հիմնավորված, չներկայացվեց: Գործատուների և շրջանավարտների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները ***մեծամասամբ սահմանափակվում են***

ամփոփիչ ատեստավորման և պրակտիկայի պաշտպանության մասնակցությամբ[24], ինչպես նաև հիմնականում ՄԿԾ-ների վերաբերյալ տվյալներն արտաքին շահակիցներին տրամադրվում են ոչ ֆորմալ կերպով անհատական շփումների մակարդակով: Իսկ հարցումներին ոչ բոլոր են ներգրավվում:

Տվյալների հավաքագրման գործընթացի հուսալիության վերաբերյալ վերլուծություններ չկան: Հավաքագրված տվյալների հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ վերլուծությունները ևս բացակայում են: Համալսարանն այժմ ներդնում է գործընթացների էլեկտրոնային (ավտոմատացված) կառավարման համակարգ, որը նաև ուղղված է նախորդ հավատարմագրման խորհրդատվություններին: 2015-2018թթ. իրականացվել են ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի նախագծման, մշակման, ներդրման և գործարկման աշխատանքները: Ներկայումս մշակման և ներդրման աշխատանքները շարունակվում են: Կրթական գործընթացներից զատ այլ գործընթացների արդյունավետության գնահատման գործընթացները պարբերական բնույթ չեն կրում և համակարգված կերպով չեն իրականացվել, իսկ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող գործող մեխանիզմների որակի ապահովման գործընթացները սահմանված չեն: ՄՈՒՀ-ն էլ է նշում, որ տեղեկատվության հավաքագրման գործող մեխանիզմները ամբողջական գնահատում չեն անցել: Տեղեկատվության հավաքման գործընթացը համակարգված կերպով չի իրականացվում, իրականացման ինստիտուցիոնալ մոտեցումը բացակայում է:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Չնայած ՀՊՄՀ-ում բացակայում է տեղեկատվության տարածման հստակ քաղաքականությունն ու ընթացակարգը, կիրառվում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակման մի շարք մեխանիզմներ՝ ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջը, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը, «Հաջողության բանաձև» հաղորդաշարը, ուսանողի ուղեցույցը, բուկլետները և բրոշյուրները: Տեղեկատվության հրապարակման համար օգտագործվում է ռեկտորի հաշվետվությունների հրապարակումը կայքում: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հուսալի և օբյեկտիվ մեխանիզմներ և գործիքներ առկա չեն: Հրապարակման մեխանիզմների արդյունավետության ամբողջական գնահատում չի իրականացվում: ՄՈՒՀ-ում կանոնակարգված չէ հրապարակման ենթակա կամ արգելվող, ինչպես նաև ներքին օգտագործման համար տեղեկատվության տրամադրումը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ ՀՊՄՀ կառավարման համակարգը բուհական միջավայրին բնորոշ կառավարման համակարգ է՝ հիմնված ստորաբաժանումների տարանջատման և դրանց գործունեության համակարգման սկզբունքների վրա: Կառավարման մարմինների, ստորաբաժանումների և առանձին պաշտոնների գործառույթները հստակեցնող փաստաթղթերի, ինչպես նաև ոլորտային կանոնակարգերի և ընթացակարգերի առկայությունն ապահովում է ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի գործունությունը: Կոլեգիալ մարմինների առկայությունն ապահովում է որոշումների ընդունման

[24]Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «. . . բացակայում են արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման գործուն մեխանիզմները . . .»:

մասնակցային գործընթաց՝ կոլեգիալության սկզբունքի պահպանմամբ: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում կառավարման վերին օղակ հանդիսացող հոգաբարձուների խորհրդի գործունեության մեջ դեռևս չձևավորված համագործակցային մթնոլորտը, ՄՈՒՀ-ի կողմից խորհրդի առաջարկների հանդեպ ոչ կառուցողական մոտեցման ցուցաբերումը: Հոգաբարձուների խորհրդի դերը ՀՊՄՀ առօրյա գործունեության մեջ խիստ պասիվ է: Իսկ արտաքին շահակիցների սահմանափակ ներգրավվածությունը կարող է հանգեցնել արտաքին կարիքների և զարգացումների վերաբերյալ իրազեկության նվազմանը և միակողմանի ընկալմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում կառավարման համակարգում աստիճանակարգի առկայությունը: Միևնույն ժամանակ համալսարանի կազմակերպական կառուցվածքը ճկուն չէ. ակնհայտ են կոշտ հիերարխիկ կապերը, մինչդեռ հորիզոնական կապերը թույլ են և մասնատված: Փորձագիտական խումբը կազմակերպական կառուցվածքի առավել հստակեցման անհրաժեշտություն է տեսնում՝ ելնելով զերակա ուղղությունների, ռազմավարական նպատակների իրականացման և ֆունկցիոնալ կարևորություններից: Քանի որ կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթաց չի իրականացվում, ՄՈՒՀ-ը նաև չի գնահատում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունն իր նպատակների իրականացման համար վտանգելով ծախսումների նպատակայնությունը: Սակայն այն, որ նյութական ռեսուրսներն ստորաբաժանումներին տրամադրվում են ըստ նրանց պարբերական պահանջագրերի և բյուջեի հնարավորությունների, որոշ չափով ապահովում է անհրաժեշտ նյութական ռեսուրսների առկայությունը, սակայն չի երաշխավորում կայունությունը: Սահմանված էթիկայի նորմերի և/կամ հանձնաժողովի, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունն երաշխավորող մեխանիզմների, ինչպես նաև արդյունավետության գնահատման որակական և քանակական տվյալների բացակայությունը ռիսկային է դարձնում կառավարման համակարգի արդյունավետությունը և ռազմավարական նպատակների թիրախային իրականացումը:

Ռազմավարական ծրագրին համապատասխան ֆինանսական պլանավորման բացակայությունը խզել է կապը ՄՈՒՀ-ի ֆինանսական քաղաքականության և ռազմավարական զարգացման հետ, ինչն ազդում է զարգացման արդյունավետության վրա և վտանգում ռազմավարական նպատակների իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ում հաստատված կարգերը ֆորմալ առումով հնարավորություն են տալիս ներքին և արտաքին շահակիցներին ներգրավված լինել իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետության գնահատման բացակայությունը թույլ չի տալիս պարզել՝ արդյոք մեխանիզմները ծառայում են իրենց նպատակներին, թե ոչ: Այսպիսի իրավիճակը կարող է հանգեցնել ոչ համապատասխան կոմպետենցիաներով օժտված մարդկանց ներգրավմանը՝ վտանգելով կայացված որոշումների նկատմամբ վստահությունը և արժանահավատությունը: Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները պասիվ են օգտագործում իրենց ընձեռված հնարավորությունները որոշումների կայացման, առաջարկությունների ներկայացման հարցում, և մասնակցությունը շատ դեպքերում կրում է ֆորմալ բնույթ: Վերջինիս պատճառները բացահայտելու և ակտիվությունը խթանելու նպատակով ՄՈՒՀ-ում որևէ մեխանիզմ չի կիրառվում: Ուսանողների ձայնի ոչ լիարժեք արտահայտումը որոշումների կայացման գործընթացում զգալիորեն վտանգում է այդ որոշումների ուղղվածությունն ուսանողների կարիքներին և ուսանողակենտրոնությունն ընդհանրապես:

ՄՈՒՀ-ում ռազմավարական ծրագրերի իրականացման մեխանիզմների ու գործիքների դեռևս արմատավորված չլինելու, կարճաժամկետ պլանների և ՌԾ կապը հստակ

չլինելու արդյունքում ՌԾ-ն ամենօրյա գործողությունները պայմանավորող և ուղղորդող փաստաթուղթ չէ, որը վտանգի տակ է դնում սահմանված նպատակների ձեռքբերումն ու արդյունավետ իրականացումը: Գործունեության գնահատման համար ՀՊՄՀ-ն կիրառում է հաշվետվությունների մեխանիզմը, սակայն չեն վերլուծվում նույնիսկ ՌԾ-ում ամրագրված ԳԱՑ-երը՝ չգնահատելով ռազմավարական նպատակների իրականացման բովանդակային կողմը, ինչը հանգեցնում է որակական փոփոխությունների և դրանց համապարփակ, համակարգային ազդեցության անտեսման:

Այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում չեն իրականացվել բովանդակային վերլուծություններ՝ կոնկրետ իր գործունեության վրա ազդող գործոնների դուրսբերման և դրանք հաշվի առնելու ուղղությամբ, սահմանափակում է համալսարանի ղեկավարության հնարավորությունները տեսնել արտաքին միջավայրի ընդհանրացված պատկերը, առանձնացնել կազմակերպության վրա առավել ազդեցություն ունեցող գործոնները և համապատասխանաբար կողմնորոշվել ռազմավարության ընտրության կամ շուկայում դիրքավորման հարցում: Իսկ նախորդ ՌԾ արդյունքների չվերլուծելը, ռիսկերը չգնահատելը և արտաքին ու ներքին գործոնները հաշվի չառնելը, խոչընդոտել են իրատեսական ռազմավարական ծրագրի մշակումը:

Առհասարակ, տարբեր գործընթացների գնահատումների և մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեքությունը, կառավարման համակարգի արդյունավետության գնահատումների թափանցիկ արդյունքների բացակայությունը կարող են նվազեցնել շահակիցների վստահությունը կայացվող որոշումների հիմնավորվածության և գործող համակարգի նկատմամբ: Համալսարանը նախկինում չի իրականացրել ներքին գործընթացների արդյունավետության ինքնավերլուծություն, այդ իսկ պատճառով ՄՈՒՀ-ում դեռևս չի ձևավորվել վերլուծություններ իրականացնելու մշակույթ: Այդ մասին է վկայում նաև ինքնավերլուծության զեկույցի առավել նկարագրական և ոչ թե վերլուծական լինելը:

ՄՈՒՀ-ում տեսանելի են որակի կառավարման շրջափուլի հիմնականում պլանավորման և իրականացման փուլերը՝ պայմանավորված նաև նրանով, որ ստորաբաժանումները դեռևս չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար մշակված ցուցիչներ, մասամբ նաև փաստաթղթերի նոր մշակված կամ ներդրված լինելու փաստով: Իսկ կիրառվող հաշվետվողականության մեխանիզմը չի ապահովում հիմք հետագա բարելավման համար: Քաղաքականությունները, նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա վերանայվել են, սակայն դա կատարվել է առանց արդյունավետության կանոնավոր գնահատման և վերլուծական հենքի: Արդյունքում, քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը դեռևս չի իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով:

Այն, որ ՀՊՄՀ-ն մինչ այժմ չի իրականացրել կանոնակարգված գործընթաց կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ, ինչպես նաև միջոցներ չի ձեռնարկում այդ ուղղությամբ, վտանգում է գործընթացների բարելավման նպատակայնությունն ու հիմնավորվածությունը:

Թեև ՄՈՒՀ-ի տեղեկատվության տարածման մեխանիզմների՝ տպագիր, էլեկտրոնային և մեդիա լրատվամիջոցների, առանձին կայքէջի արդյունավետության ամբողջական գնահատում չի իրականացվել, դրանց բազմազանությունն արդեն իսկ ապահովում է հրապարակայնության որոշակի մակարդակ, ինչը փորձագիտական խումբը գանահտում է: Մինչդեռ ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների բացակայությունը վկայում է համալսարանում որակի ապահովման և/կամ վերահսկման գործընթացի անկատարության

մասին, քանի որ համալսարանի կողմից դեռևս խնդիր չի դրվում գնահատելու դրանց արդյունավետությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին համապատասխան բարելավման պլանով սահմանված գործողությունները հիմնականում թերի են իրականացված կամ իրականացված չեն, կարճաժամկետ գործողությունների պլանները չեն մշակվում ռազմավարական խնդիրներին համապատասխան, կառավարման համակարգի և դրա առանձին օղակների գործունեության արդյունավետության գնահատման կանոնակարգված գործընթացը բացակայում է, դասախոսներն ու ուսանողները պասիվ ներդրում ունեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, էթիկայի սահմանված նորմերը բացակայում են, ներքին և արտաքին միջավայրային գործոնների ուսումնասիրության կանոնակարգված գործընթացը բացակայում է, վարչարարության իրականացման ՊԻԳԲ շրջափուլ արմատավորված չէ, կարելի է եզրակացնել, որ ՀՊՄՀ կառավարման համակարգը, վարչական կառույցներն ու դրանց գործառնումը բավարար չափով միտված չեն նպատակների իրագործմանը և արդյունավետության ապահովմանը՝ ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն **չի բավարարում** չափանիշ 2-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի 2 պահանջներին գնահատվում է ***անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀՊՄՀ-ն իրականացնում է բնական, հումանիտար, սոցիալական գիտությունների և արվեստի ոլորտների 99 ՄԿԾ-ներ, ուսուցման առկա և հեռակա ձևերով, բակալավրական և մագիստրոսական մակարդակներում: ՀՊՄՀ-ի բոլոր ՄԿԾ-ներն իրենց նպատակների ձևակերպումներով համապատասխանում են առաքելության առաջին հատվածին, այն է՝ գործունեության ոլորտների ցանկին և ՄՈՒՀ լինելու բնորոշմանը, քանի որ ըստ նպատակների մշակված են որպես ՄՈՒՀ-ի առաքելությանը համապատասխանող կրթական բովանդակություն, որն իրականացվում է կրթական գործընթացների միջոցով:

ՄՈՒՀ-ը փորձեր է անում արձագանքել սոցիալ-տնտեսական և կրթական ոլորտներում ի հայտ եկող նոր զարգացումներին, օրինակ՝ ներդրվել են «Շախմատ», «Բնագիտություն», «Շրջակա միջավայրի գիտություններ», «Իրավագիտություն», «Հասարակագիտություն», «Հագուստի մոդելավորում», «Կառավարում», «Լանդշաֆտային պլանավորում» բակալավրական և մագիստրոսական ծրագրեր: Այնամենայնիվ, նոր ՄԿԾ-ների ներմուծման անհրաժեշտության, դրա տնտեսական հիմնավորվածության,

աշխատաշուկայում շրջանավարտների համար զբաղվածության հնարավորությունների ուսումնասիրություններ առկա չեն:

2014-2015թ.-ից միջազգային համագործակցության շրջանակներում ՄՈՒՀ-ը **ձեռնամուխ է եղել ՄԿԾ-ների վերաբերյալ համապատասխան մեթոդական շրջանակի մշակմանը: Բացի այդ**, ՄՈՒՀ-ը մշակել է բենչմարքինգի իրականացման կարգ[25]:

Հետևելով արտաքին շահակիցների ներգրավումն ակտիվացնելու մասին նախորդ շրջափուլի ժամանակ տրված խորհրդատվություններին՝ ՄԿԾ-ների վերանայման ու բարեփոխման համար ստեղծվել են համապատասխան աշխատանքային խմբեր, որոնց փաստաթղթավորված կազմը վկայում է հավանական շահակիցների լայն ներկայացուցչական ընդգրկման փորձի մասին: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում արտաքին և ներքին շահակիցների տարբեր խմբերի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ շահակիցները գործուն մասնակցություն չեն ունեցել ՄԿԾ-ների վերնայմանը:

Անդրադառնալով նախորդ հավատարմագրման՝ բենչմարքինգին վերաբերող խորհրդատվությանը՝ փորձ է արվել բենչմարքինգի հիման վրա վերանայել ՄԿԾ-ները: Միջազգային փորձի հիման վրա ստեղծվել է մասնագրի մեկ միասնական ձևաչափ, որը կիրառվել է բոլոր 99 ՄԿԾ-ներում:

Հատկանշական է, որ մասնագիտությունների համար ընտրվել են նույն մոտեցումները կրեդիտների բաշխման, ընդհանրական և մասնագիտական կարողությունների սահմանման իմաստով, օրինակ՝ «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությունում տարբեր լեզուների մասնագրերը, «Հատուկ մանկավարժության» մասնագրերը և այլն: Այսպիսի ընդհանրացման արդյունքում կրկնվում է մասնագրերի հիմնարար բովանդակությունը՝ երբեմն համապատասխան հարմարեցումներով, երբեմն՝ առանց:

ՄԿԾ-ների կրեդիտների հատկացման քաղաքականությունը ինստիտուցիոնալ մակարդակում, հատկապես՝ ուսպլանների ընդհանուր, մանկավարժական և այլ կրթամասերի (բակալավրական ՄԿԾ-ներում՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական կրթամասի, ընդհանուր բնագիտական և մաթեմատիկական կրթամասի, մանկավարժական-հոգեբանական դասընթացների կրթամասի, ընդհանուր մասնագիտական կրթամասի և կրթական այլ մոդուլների, իսկ մագիստրոսական ՄԿԾ-ներում՝ ընդհանուր գիտական և հոգեբանամանկավարժական կրթամասի, ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամասի և հետազոտական կրթամասի) միջև բաշխումը հիմնված չէ կոնկրետ սկզբունքների համակազմի վրա, չնայած, որ հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվություններում հատուկ անդրադարձ կար կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման հստակեցման անհրաժեշտությանը: Առկա չէ հիմնավորված պատճառահետևանքային կապ ՄԿԾ կոնկրետ կրթամասերին վերաբերող գիտելիքի, կարողությունների և հմտությունների համար անհրաժեշտ բեռնվածության և հատկացված կրեդիտների միջև: Ներկայիս բաշխումը ներկայացնում է ուսպլանի տվյալ կրթամասի առարկաներին հատկացված կրեդիտների հանրագումարը:

Նախորդ հավատարմագրման գործընթացից ՄՈՒՀ-ը ստացել է ՄԿԾ-ների ակնկալվող արդյունքների հստակեցման և ՈԱՇ-ին համապատասխանեցման խորհրդատվություն: Ըստ այդմ, ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները բաժանվել են մասնագիտական գիտելիքի և իմացության, ինչպես նաև մասնագիտական և ընդհանրական կարողությունների: ՄՈՒՀ-ը քարտեզագրել է և ներկայացրել է ՄԿԾ-ների և ՈԱՇ-ի բնութագրիչների միջև համապատասխանությունը, այնուամենայնիվ, այս քարտեզը ներառված չէ մասնագրերում, իսկ քարտեզագրման հիմքում ընկած մեթոդաբանությունը տեսանելի չէ: Ինչպես հավատարմագրման ներկայացված հինգ ՄԿԾ-ների, այնպես և

[25]Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «2015թ. միջազգային համագործակցության շրջանակներում ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել ՄԿԾ-ների վերաբերյալ համապատասխան մեթոդական շրջանակի մշակմանը, օրինակ՝ «Որակի ապահովման ձեռնարկը»:

փորձագիտական խմբի կողմից պատահականության սկզբունքով ընտրված ավելի քան տասը ՄԿԾ-ների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջնարդյունքները ոչ միշտ են չափելի: Մագիստրոսական ծրագրերում, ի տարբերություն բակալավրական ՄԿԾ-ների, ուսումնառության արդյունքներն ավելի ընդհանրական բնույթ ունեն,իսկ գիտակարգային բովանդակությանն անդրադարձն ավելին է:

Ինքնավերլուծության մեջ ՄՈՒՀ-ը նշում է, որ համադրել է իր ծրագրային վերջնարդյունքները դպրոցական բովանդակության հետ: Այսպիսի հենքով փոփոխությունները, դրանց համար հիմք հանդիսացող նախնական վերլուծություններ սակայն առկա չեն: Միևնույն ժամանակ, ՄՈՒՀ-ում գործող մի շարք մանկավարժական մասնագիտություններ հարմարեցված են դպրոցական ուսումնական ծրագրում ներառված առարկաներին, օրինակ՝ «Բնագիտություն», «Շախմատ»: Սակայն ՄԿԾ-ներում ընդգրկված ուսանողների քանակական տվյալների փորձագիտական վերլուծությունը, ինչպես նաև փորձագիտական այցի ժամանակ ներքին շահակիցների հետ ունեցած քննարկումները ցույց տվեցին, այսպիսի բաժանման արդյունքում ծրագրերի՝ ուսանողներով համալրումը խնդրահարույց է և ռեսուրսատար, հատկապես երբ, օրինակ, «Բնագիտություն» ՄԿԾ-ին զուգահեռ ՄՈՒՀ-ն իրականացնում է «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Շրջակա միջավայրի գիտություններ» ՄԿԾ-ները:

ՊԴ կազմի և ուսանողների հետ քննարկման ընթացքում պարզ դարձավ, որ առանձին ուղղություններով նեղ կենտրոնացման նպատակով ՄՈՒՀ-ը որդեգրել է կամընտրական դասընթացների ներդրման մոտեցումը, սակայն ՄԿԾ (հատկապես մագիստրոսական ծրագրերի) մասնագրերին կից չկան ընտրովի դասընթացների ցանկեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կամընտրական դասընթացները որոշվում են ուսումնական տարվա մեկնարկից մեկ ամիս առաջ: Փորձագիտական խմբի կողմից պատահականորեն ընտրված բակալավրական և մագիստրոսաան ՄԿԾ-ների ուսումնասիրությունը նաև ցույց տվեց, որ առաջարկվող ընտրովի դասընթացները հիմնականում ընդհանրական բնույթի են, որոնք, ինչպես նշվեց հանդիպումների ժամանակ, հատկապես մագիստրատուրայում լուծում են ոչ բազային կրթությամբ մագիստրատուրա եկած ուսանողների կրթական բացի խնդիրը:

Բակալավրական ՄԿԾ-ներում սահմանվում է երկու կուրսային աշխատանքի կատարման պահանջ, սակայն ՄԿԾ մասնագրերում միշտ չէ, որ կուրսային աշխատանքի ուսումնառության արդյունքները քարտեզագրված են ՄԿԾ վերջնարդյունքներին, թեև կուրսային աշխատանքի անհրաժեշտության հիմնավորումը, աշխատանքի կազմակերպման մոտեցումների ընդհանրական նկարագրությունը, կուրսային աշխատանքի վերջնարդյունքները, կատարման ընթացքը ներկայացված են 2018թ.-ին հաստատված «Բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգում»: Փորձագիտական այցի ընթացքում ուսումնասիրված կուրսային աշխատանքներն ունեին ռեֆերատիվ բնույթ, գրեթե չէին պարունակում ուսանողի սեփական վերլուծական արդյունք և չէին ծառայում ՄԿԾ կոնկրետ վերջնարդյունքների ձեռքբերմանը:

ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսուցման հեռակա ձևով իրականացվող ՄԿԾ-ների պարագայում լսարանային հանդիպումների քանակը կիսով չափ կրճատվել է առանց որևէ բովանդակային հիմնավորման. միակ հիմնավորումն այն է, որ այսպես ավելի հարմար է աշխատող ուսանողներին: Այնուամենայնիվ, թե ներքին, թե արտաքին շահակիցների հետ քննարկումների ժամանակ վերջիններս դեմ արտահայտվեցին այսպիսի փոփոխությանը՝ փաստելով, որ գործնական պարապմունքներին և հատկապես պրակտիկային տրվող ժամանակի սղությունը հեռակա բաժնում նվազեցնում է գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման հնարավորությունը:

Փորձագիտական այցի ընթացքում բարձրացված և ուսումնասիրված մագիստրոսական թեզերի քննությամբ պարզվեց, որ աշխատանքների մեծ մասի դեպքում թեմայի ընտրությունն ի սկզբանե կապակցված չէ ՄԿԾ-ի արդյունքում շնորհվող որակավորմանը, հատկապես մանկավարժի որակավորման դեպքում: Մագիստրոսական թեզերը ղեկավարում են առանձին գիտակարգին հարող ամբիոնները, մագիստրոսական թեզերը գրվում են ամբիոնի մասնագիտացումը հանդիսացող գիտակարգի առանձին խնդիրների շուրջ: Բացի այդ, աշխատանքին կցվում է նույն գիտակարգի որևէ թեմայի, երբեմն հենց ուսումնասիրվող թեմայի որևէ նեղ խնդրի դասավանդմանը վերաբերող դասի պլան կամ դասավանդմանն առնչվող այլ խնդիր, որը չի հանդիսանում մագիստրոսական թեզի տրամաբանական, կառուցվածքային, անքակտելի մասը, այլ առդիր է կամ ներդիր, որի հեռացումը թեզից չի խաթարում դրա բովանդակային միասնությունը կամ տրամաբանությունը: Այս հատվածը երբեմն նույնիսկ արտացոլված չէ թեզերի բովանդակությունում: Մագիստրոսական թեզի բովանդակության և այդ բաղադրիչի միջև օրգանական կապ առկա չէ: Մագիստրոսական մակարդակում չի ապահովվում ծրագրերի վերջնարդյունքների և բովանդակության համապատասխանեցում հատկապես հետազոտական բաղադրիչի մասով:

«***Մագիստրոսական ՄԿԾ-ների երրորդ և չորրորդ կիսամյակների բեռնվածությունը բաշխվում է Ընդհանուր գիտական և հոգեբանամանկավարժական, Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամասի դասընթացներ) և հետազոտական կրթամասի միջև, որի մեջ մտնում են մագիստրոսական թեզի պատրաստում, հետազոտական աշխատանք կիսամյակում և դրան նպաստող՝ մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաները: Վերջին կիսամյակում բեռնվածության բաշխումը լսարանային պարապմունքների, պրակտիկայի և հետազոտության միջև չի ապահովում դասընթացների ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը նախքան հետազոտական աշխատանքի մեկնարկը, ընդ որում դրանք գիտական և հոգեբանամանկավարժական և մասնագիտական կրթամասի առարկաներ են***[26]»: Հարկ է հավելել նաև, որ փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցների հետ հանդիպումների ժամանակ պարզվեց, որ մագիստրատուրայի ուսանողները դժվարանում են մագիստրատուրայի չորրորդ կիսամյակում հաճախումները համատեղել հետազոտական աշխատանքի և պրակտիկայի հետ:

ՄՈՒՀ-ը ներդրել է Google Classroom էլեկտրոնային հարթակը, որն իր հետ, ինչպես պարզվեց ներքին շահակիցների հետ հանդիպումների ժամանակ, բերել է բազմապիսի զարգացումներ: Այն ապահովել է ուսանողին փոխանցվող բովանդակության էլեկտրոնային մատուցում՝ միևնույն ժամանակ ինքնավերլուծության ժամանակահատվածի կտրվածքով հանգեցնելով լրացուցիչ բեռնվածության ինչպես ուսանողների, այնպես և դասախոսների համար: Այս բեռնվածությունը մինչև վերջերս արտացոլված չի եղել ոչ ուսանողի, ոչ դասախոսների բեռնվածքում:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

---

[26] Փոփոխվել է համալսարանի ներկայացուցիչների և փորձագետների միջև քննարկման արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «Ուսանողների թերբեռնվածություն կա մագիստրոսական ծրագրերի երրորդ և չորրորդ կիսամյակներում (14 և 12 ժամ շաբաթական բեռնվածություն համապատասխանաբար), հիմնավորված չէ մագիստրատուրայի երկրորդ կուրսում ըստ դասացուցակի ընդամենը երկօրյա հաճախումների դիմաց մեկ կիսամյակում երեսուն կրեդիտին համարժեք բեռնվածությունը, կամ վերջին կիսամյակում բեռնվածության բաշխումը լսարանային պարապմունքների, պրակտիկայի և հետազոտության միջև»:

Իրականացնելով հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվությունը՝ ՀՊՄՀ-ը մշակել է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ուղեցույց, իսկ մասնագրերում ներառված են կրթական վերջնարդյունքների հետ դասավանդման և ուսումնառության համապատասխանության մատրիցներ: Բացի այդ, դասընթացների թեմատիկ տրոհումներում դասավանդման և ուսումնառության մեթոդները նույնպես նշված են: Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ծրագրերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թե՛ ՄԿԾ մասնագրերում, թե՛ դասընթացների թեմատիկ տրոհումներում մեթոդների կազմը կրկնվում է առանց տարբերակման և կոնկրետ վերջնարդյունքի հետ կապի ընդգծման: Այդպիսին է իրավիճակը նաև առանձին դասընթացների թեմատիկ տրոհումներում, հատկապես եթե դրանք ընդհանուր կառուցամասի առարկաներ են և դասավանդվում են դասախոսությունների միջոցով: Չկա ՄԿԾ-ի ավելի խոշոր տարրերի՝ պրակտիկայի, կուրսային և ավարտական աշխատանքների համար առանձնացված մեթոդական շրջանակ:

Փորձագիտական այցի շրջանակներում իրականացված դասալսումներն ի ցույց դրեցին այն հանգամանքը, որ որոշ դասեր անցնում էին ինտերակտիվությամբ, որոշ դասընթացներում գերակշռում է ավանդական դասախոսակենտրոն մոտեցումը: Դասալսումների ժամանակ դիտարկված մեթոդները հիմնականում միտված էին գիտելիքի կամ իմացության ձեռքբերմանը, մասնագիտական կարողություններ ձևավորող առաջադրանք կամ լսարանային աշխատանք փորձագիտական խմբի կողմից չի դիտարկվել:

Նկարագրված և կիրառվող մեթոդների ***մի մասը պատկանում է ուսանողակենտրոն ուսուցման ձևերին, մյուս մասը՝ դասախոսակենտրոն***. այս մասին վկայեցին նաև դասալսումները[27]: Վերջիններիս ընթացքում նաև պարզվեց, որ որոշ դասեր անցնում են բաց մասնակցային մթնոլորտում, կիրառվում են թիմային աշխատանքի տարրեր, սակայն որոշ դեպքերում դրանք հստակ նպատակաուղղված չեն տվյալ դասի թեմայի յուրացմանը: Դասավանդողների կողմից երբեմն պատշաճ հետադարձ կապ չի տրամադրվում: Որոշ լսարաններում ապահովված է էլեկտրոնային ինտերակտիվ ուսուցման հնարավորություններ՝ պրոյեկտոր, էկրան:

ՄԿԾ-ներում նշված մեթոդների շարքում մեծ չէ բազմազանությունը, նշված են դասավանդման և ուսումնառության նկատմամբ ընդհանուր մոտեցումները, ինչպես նաև ըստ Ա (Մասնագիտական գիտելիք և իմացություն), Բ (Գործնական մասնագիտական կարողություններ) և Գ (Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ) կառուցամասերի տրոհված վերջնարդյունքների համար նշված են նույնական մեթոդական համակազմեր: Փոքր է ինքնուրույն ուսումնառության, սեփական ուսումնառության համար պատասխանատվությունը խթանող մեթոդների տեսակարար կշիռը, հատկորոշված չեն անհատական կամ խմբային աշխատանքի մեթոդներն ու ձևերը, անհատական և լսարանային առաջադրանքները: Ինքնուրույն ուսումնառության համար հանձնարարականների շարքում նշված էին ռեֆերատները, էսսեները և կուրսային աշխատանքները, սակայն փորձագիտական գնահատմանը ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ցանկերի ուսումնասիրությունից, ինչպես նաև փորձագիտական այցի ժամանակ ուսանողների և ՊԴ կազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ թեմաներն առաջադրում են դասախոսները կամ ամբիոնը, ուսանողները եզակի դեպքերում են ինքնուրույն ընտրում իրենց ինքնուրույն աշխատանքի կամ հետազոտական թեմաները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության հագեցման միջոց է ընկալվում Google Classroom հարթակը, որը, ըստ ՄՈՒՀ-ի, ավելի ինտերակտիվ և նորարար է

[27] Փոփոխվել է համալսարանի ներկայացուցիչների և փորձագետների միջև քննարկման արդյունքում: Նախկինում եղել է «Նկարագրված և կիրառվող մեթոդների մի մասը ուսանողակենտրոն են, մի մասը՝ դասախոսակենտրոն...»:

դարձնում դասավանդման գործընթացը: Այնուամենայնիվ, Google Classroom-ի գործածության աշխատակարգերի դիտարկումը, ինչպես նաև փորձագիտական այցի ժամանակ ուսանողների և ՊԴ կազմի հետ հանդիպումներից պարզվեց, որ այս հարթակը հիմնականում գործածվում է որպես ուսանողների հետ վիրտուալ հաղորդակցման միջոց, որտեղ տեղադրվում են նախկինում թելադրվող դասախոսությունները: Առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացվող ՄԿԾ-ներում չկա Google Classroom-ի օգտագործման տարբերակվածություն:

Բացի այս հարթակի ներդնումից, համալսարանը ձգտում է տեխնիկապես հագեցնել լսարանները՝ տեղադրելով պրոյեկտորներ, որոնք կարող են օգտագործվել դասախոսությունների ժամանակ: ՄՈՒՀ-ում դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման միջոցները ամբիոնի վարիչի կողմից իրականացվող և փոխադարձ դասալսումներն ու Կրթության որակի կառավարման և ապահովման բաժնի կողմից կազմակերպվող «Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով» հարցումներն են: Այդուհանդերձ փորձագիտական այցի ընթացքում հանդիպած գրեթե բոլոր շահակիցները նշեցին կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավման անհրաժեշտության մասին:

Որպես ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող մեթոդական լուծում՝ ՄՈՒՀ-ը նախաձեռնել է մանկավարժական պրակտիկայի իրականացման եռափուլ մոտեցումը: Նոր մոտեցմամբ ավելի վաղ սկսվող և տարբերակված պրակտիկայի ներդրմանը զուգահեռ՝ տեղի է ունեցել ուսանողի բեռնվածության փոփոխություն: Պրակտիկայի իրականացման ձևի փոփոխության արդյունքում նույնպես տեսանելի չէ ուսանողի բեռնվածության հաշվարկի մոտեցումը, ինչպես նաև վաղ, ուսումնաճանաչողական փուլերում պրակտիկայի ուսումնառության ընթացքի և տվյալ կիսամյակում համալսարանում ուսուցանվող բովանդակության միջև փոխկապակցվածությունը: Այնուամենայնիվ, այն ծրագրերում, որոնց ավարտին մանկավարժի որակավորում չի շնորհվում, պրակտիկայի կազմակերպման գործընթացում փոփոխություններ չեն արվել: Փորձագիտական այցի ընթացքում ներքին և արտաքին շահակիցների հետ քննարկումներից պարզվեց, որ պրակտիկայի դեպքում տարբեր փուլերի նպատակը և գործողությունները հիմնված չեն համալսարանում ստացած գիտելիքի և կարողության վրա, ուսանողից պրակտիկայի ընթացքում ակնկալվում է դասավանդել մի բան, որի դասավանդման մեթոդիկան նա համալսարանում դեռ չի ուսումնասիրել: Խաթարված է տեսություն-պրակտիկա կապը: Թեև այցի ընթացքում ներքին շահակիցները նշել են, որ պրակտիկայի արդյունավետության գնահատումն իրականացնում են ՌԾ ԳԱՑ-երին հղմամբ, այդպիսի գնահատական կամ արդյունավետության վերլուծություն առկա չէ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների՝ գործատուների գնահատմամբ թե մանկավարժական, թե ոչ մանկավարժական պրակտիկայի անցկացման տեղերի, ինչպես նաև ժամանակահատվածի և տևողության ընտրությունը հաճախ օպտիմալ չէ. առանց որևէ հիմնավորման կասեցվում են նախկինում ունեցած համագործակցությունները, օրինակ՝ ՄԿՈՒ հաստատությունների հետ, մի շարք դպրոցների հետ, հատկապես հեռակա բաժնում շատ քիչ է պրակտիկայի տևողությունը, չի ապահովում համապատասխան գործնական կարողությունների ձևավորումը:

Չնայած ուսուցման մեթոդների ընտրության համար մշակված ուղեցույցի առկայությանը՝ ՄՈՒՀ-ը չունի մեթոդների պարբերական արդիականացման քաղաքականություն, չնայած նրան, որ ՀՊՄՀ-ն ընկալվում է որպես առաջնայնորեն մանկավարժական հաստատություն, կրթության և մանկավարժության, ինչպես նաև դասավանդման մեթոդիկայի ոլորտում առնվազն հանրապետության կրթական հաստատությունների համար ոլորտային ուղենիշ:

Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ մեթոդական նորարարությունները հիմնականում ներմուծվում են երիտասարդ ՊԴ կազմի կողմից: Բացի այդ, փորձագիտական այցի ընթացքում տարբեր ստորաբաժանումներ ներկայացնող ներքին շահակիցների հետ քննարկումները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ը գիտակցում է մի շարք ուղղություններով մեթոդապես բարեփոխվելու սուր հրամայականը:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՀՊՄՀ-ում ուսանողների գնահատումը կանոնակարգվում է «ՀՊՄՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման», ինչպես նաև ռեֆերատների, կուրսային, ավարտական աշխատանքների պատրաստման, ներկայացման և գնահատման կարգերով: Վերոնշյալ կարգը սահմանում է բազմագործոն գնահատում, ընդ որում, յուրաքանչյուր բաղադրիչի տեսակարար կշիռը որոշվում է ամբիոնների կողմից: Գնահատականը ձևավորվում է նախասահմանված հաշվարկային բանաձևով: Կարգում ներառված է նաև գնահատման սանդղակ: ՄՈՒՀ-ում առկա է նաև գնահատականի բողոքարկման ընթացակարգ:

Ինչպես դասավանդման և ուսումնառության մեթոդների դեպքում, անդրադառնալով նախորդ շրջափուլի հավատարմագրման ընթացքում գնահատման մեթոդների և ձևերի՝ վերջնարդյունքներին համապատասխանեցման խորհրդատվությանը, ՄԿԾ-ների մասնագրերում փորձ է արված կրթական վերջնարդյունքների հետ համապատասխանեցնել նաև գնահատման մեթոդները: Սակայն, ինչպես և վերը, այստեղ նույնպես գնահատման մեթոդների կազմը նույնական և կրկնվող է Ա, Բ և Գ բաժիններում ներառված բոլոր վերջնարդյունքների համար: Մեթոդներն ուղղակի թվարկված են, առանց հստակ, ուղղակի, տրամաբանական կապի ուսումնառության արդյունքի, դասավանդման և ուսումնառության մեթոդի հետ: Ընտրված գնահատման մեթոդները հիմնականում գիտելիքներ, երբեմն նաև կարողություններ ստուգող և գնահատող մեթոդներ են:

ՀՊՄՀ Google Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրված են դասընթացների առարկայական նկարագրերն ու առարկայական թեմատիկ տրոհումները, միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերը և գնահատման չափանիշները: Այս հարթակում դասախոսները երբեմն նաև տեղադրում են գնահատվող առաջադրանքներ, հիշեցնում են առաջիկա գնահատվող ստուգման մասին:

Գոյություն ունեցող գնահատման համակարգը տարբերակում է առարկաներն ըստ ամփոփման կամ գնահատման ձևերի՝ քննություն, ստուգարք և այլն, սակայն առկա չէ այսպիսի տարբերակման հիմնավորումը: Չկա վկայություն առ այն, որ որևէ դեպքում, դասընթացի ուսումնառության արդյունքը ձեռք չբերելու կամ մյուս դասընթացի համար մուտքի շեմը չապահովելու դեպքում ՄՈՒՀ-ի որևէ ուսանող դադարել է ուսումնառել: Առաջադիմությունը համալսարանից դուրս մնալու պատճառների շարքում չի հիշատակվում:

Բազմագործոն գնահատման գործոնների տեսակարար կշռի վերաբաշխում է տեղի ունեցել 2018թ.-ին, երբ հաճախումների գործոնին տրվող կշիռը նվազեցվել է մինչև 5%, իսկ մնացյալ 5%-ը հատկացվել է կամ ընթացիկ, կամ ինքնուրույն աշխատանքի բաղադրիչին:

Գնահատումը ՀՊՄՀ-ում իրականացվում է ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգում և ամրագրվում էլեկտրոնային ամփոփաթերթերում: Կա պրակտիկայի, ինչպես նաև կամավորական աշխատանքի գնահատականի արձանագրման, պահպանման և ամփոփիչ ատեստավորման ժամանակ վերօգտագործման աշխատակարգ: Պրակտիկայի կատարման ընթացքի և որակի համար ուսանողը գնահատվում է երկու անգամ. բացի մեկ անգամ պրակտիկայի ամփոփիչ գնահատումից, այդ նույն գնահատականը հաշվարկվում է ամփոփիչ ատեստավորման գնահատականում՝ 20% տեսակարար կշռով:

Բացի այդ, ամփոփիչ ատեստավորման գնահատականի բաղադրիչներից է են նաև ուսանողի՝ կամավորական աշխատանքի համար ստացված լրացուցիչ միավորը:

ՄՈՒՀ-ում մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Ցիտման նորմերի և գրագողության մասին կանոնակարգը»: Բացի այդ, ինքնավերլուծության զեկույցում ՄՈՒՀ-ը նշում է, որ որոշ ֆակուլտետներում կիրառվում են գրագողության բացահայտման առցանց և փաթեթային գործիքներ: Նախորդ տարիների կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի էլեկտրոնային շտեմարաններ առկա չեն: Փորձագիտական այցի ընթացքում ՀՊՄՀ ներքին շահակիցները պնդեցին, որ գրագողության դեմ պայքարի մեխանիզմներից մեկը թեմաների կրկնության բացառումն է: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբին ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերում կային թեմատիկ կրկնություններ, անգամ միևնույն տարում, նույն ղեկավարի կողմից ղեկավարվող մի քանի աշխատանքներում միաժամանակ, իսկ փորձագիտական այցի ընթացքում բարձրացված և ուսումնասիրված կուրսային աշխատանքները, ավարտական աշխատանքները և թեզերը պարունակում էին այլ աղբյուրներից ներկրված մեծ ծավալի տեղեկույթ, երբեմն առանց հղումների, երբեմն՝ հղումներով: Վերջին դեպքում ակնհայտ գրագողության բացառմամբ անգամ այս աշխատանքները ներկայանում էին այլոց բովանդակության վերարտադրության տեսքով, ինչը նույնպես սահմանվում է որպես գրագողություն: Այս երևույթները հաշվի չէին առնվել գնահատման ժամանակ, քանի որ ուսումնասիրված աշխատանքները գնահատվել էին բարձր՝ 70 միավոր և ավելի: Ատեստավորման հանձնաժողովների 2017-2018 հաշվետվությունների ճնշող մեծամասնության մեջ նշվում է, որ հարկ է ուժեղացնել հետազոտական բաղադրիչը:

Ըստ էության, ՄՈՒՀ-ը ներկայացրել է ավարտական աշխատանքների մշակման և գնահատման մեխանիզմների նախագծային փաստաթղթեր, որոնք սակայն թվագրված և հաստատված չեն:

2014թ-ին մշակվել են մագիստրոսական թեզերի մշակման պահանջներ և գնահատման չափանիշներ ըստ առանձին բաղադրիչների, սակայն թեզերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չնայած պահանջների առկայությանը՝ փորձագիտական խմբի կողմից պաշտպանությունների դիտարկման և այցի ընթացքում ուսումնասիրման արդյունքներով ոչ բոլոր թեզերն են դրանց բավարարում, մասնավորապես, որոշ թեզերում առկա են հետազոտական և կիրառական բաղադրիչները, որոշ թեզերում՝ ոչ: Վերջիններս ռեֆերատիվ բնույթի գործեր են, որտեղ ծավալի գերակշիռ մասն ապահովված է այլ աղբյուրներից վերցված նյութով:

Փորձագիտական խմբի կողմից ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանությունների դիտարկված գործընթացները վկայել են, որ ուսանողների գնահատման ժամանակ չի կիրառվում գնահատման հստակ սանդղակ, հարաբերականորեն ցածր գնահատականներին գումարվում են պրակտիկայի և «կամավորության» բաղադրիչների միավորները՝ խեղելով ամփոփիչ ատեստավորման իրական պատկերը:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

2015թ.-ին ՄՈՒՀ-ը մշակել և ներդրել է «Բենչմարքինգի նպատակով մասնագիտական ուսումնական հաստատությունների ընտրության ընթացակարգ» և «Բենչմարքինգի (հենանշման) մեթոդական ուղեցույց»՝ ուրվագծելով բենչմարքինգի նպատակը, խնդիրները, ինչպես նաև մեթոդները: Հարկ է նկատել, որ բենչմարքինգի մասին ներկայացված փաստաթղթերն ի ցույց են դնում տեղեկույթ միայն մի քանի ՄԿԾ-ների վերաբերյալ: Ըստ ԻՎ-ի՝ «Սուրդոմանկավարժություն» և «Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրերում

բենչմարքինգի հիման վրա տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Թեև համալսարանն ունի հենանիշ հանդիսացող ՄՈՒՀ-երի ընտրության քաղաքականություն, բենչմարքինգի համար ընտրված համալսարանների կազմը տարբերվում է ՄԿԾ-ից ՄԿԾ. որոշ դեպքերում ընտրվել են միայն ԱՊՀ տարածքի ՄՈՒՀ-եր, մի շարք դեպքերում՝ նաև միջազգային համալսարաններ, կան դեպքեր, երբ բենչմարքինգն իրականացվել է բացառապես ազգային ՄՈՒՀ-երի հետ, այնինչ ՄՈՒՀ-ի կողմից մշակված քաղաքականությունը սահմանում է առաքելության, ռազմավարական նպատակների և խնդիրների, ինչպես նաև ուսանողական համակազմի, ՊԴ կազմի, ռեսուրսների համադրելիություն, թիրախային ոլորտում առաջխաղացում և այլն: Բացի այդ, բենչմարքինգին վերաբերող և փորձագիտական խմբին ներկայացված որևէ փաստաթուղթ թվագրված չէ. ոչ կանոնակարգող փաստաթուղթը, ոչ ձեռնարկը և ոչ «բենչմարքինգի վերլուծություն» զեկույցները:

Բենչամարքինգի մասին վկայող փաստաթղթերում համեմատված են ուսումնական պլանները՝ առարկայակազմով և բեռնվածությամբ: Բացակայում են վերլուծությունները առ այն, թե որոնք են հենանիշ և ՀՊՄՀ ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը, ՀՊՄՀ-ի ՄԿԾ-ներում բարելավման անհրաժեշտություն ունեցող կետերը և բարելավման ուղիները: Համեմատական վերլուծության արդյունքում ծրագրերում էական փոփոխություններ չեն եղել, բենչմարքինգի վերլուծություններում ներկայացված չէ, թե ինչ բաղադրիչներ են փոխառվել կամ գոյություն ունեցող բովանդակությունը, դասավանդման և գնահատման մեթոդները ինչպես են հարմարեցվել:

ՄՈՒՀ-ը, իր միջազգային ծրագրերում մասնակցության շնորհիվ, հնարավորություն է ունեցել ծանոթանալ մի շարք մասնագիտությունների, մասնավորապես նախնական և հատուկ կրթության ՄԿԾ-ների դեպքում ժամանակակից բովանդակությանը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանայի, Ռուսաստանի և Ֆինլանդիայի առաջատար համալսարաններում: Այս ծրագրերի արդյունքում մի շարք ուղղություններով ՄԿԾ-ների բովանդակությունը համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին:

ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները թեև չեն խոչընդոտում ուսանողների և դասախոսների շարժունությանը, ցուցանիշներն, այնուամենայնիվ, ցածր են: Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների ներգնա շարժունեություն է գրանցվել ինքնավերլուծության ժամանակահատվածի միայն վերջին երկու տարիներին՝ 5 և 2 ուսանողով համապատասխանաբար: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ում այդ պահին հյուրընկալվում են Պիտեր Պազմանի անվան համալսարանի հետ կրկնակի դիպլոմի շնորհման ծրագրով ներգնա շարժունությամբ երկու ուսանող: Արտագնա շարժունության հետ կապված՝ հարկ է նշել, որ այն հիմնականում իրականացվում է Էրազմուս ծրագրի և ՄՈՒՀ-ի ունեցած այլ ծրագրերի ***շրջանակներում***[28]: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ շարժունության ծրագրերի մասնակից ուսանողները վերադառնալուն պես, ըստ անհրաժեշտության և հնարավորության, հանձնում են տվյալ կիսամյակի առարկայակազմում ընդունող ՄՈՒՀ-ի հետ ունեցած տարբերությունները, իսկ համընկնող առարկաների կրեդիտները փոխանցվում են:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը, 2015թ.-ի հավատարմագրման փորձագիտական զեկույցի հիման վրա վերանայել է ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները, վերաբաշխել է կրեդիտները, կատարել է հայրենական և միջազգային ՄՈՒՀ-երում համապատասխան կրթական ծրագրերի և դպրոցի առարկայական չափորոշիչների հետ ՀՊՄՀ-ի կողմից իրականացվող ՄԿԾ-ների

[28] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «ՄՈՒՀ-ի ունեցած այլ ծրագրերի շրջանակներում, սակայն հաշվետու շրջանում որևէ տարում չի գերազանցել 11-ը»:

առարկայական անվանացանկերի համապատասխանեցման գործողություններ: Այսպիսի գործողությունների ֆոնին, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ը չունի ՄԿԾ-ների ներսում կրեդիտների բաշխման հստակ մեթոդաբանությունը նկարագրող փաստաթուղթ, որը կբացատրեր տարբեր կառուցամասերի միջև կրեդիտային բաշխվածությունը որպես հավատարմագրման արդյունքում ներմուծված նորարարություն:

ՄՈՒՀ-ը 2012թ.-ին հաստատել է «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը»: Բացի այդ, 2016թ. մշակվել են «Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման աշխատակարգը» և «ՀՊՄՀ-ում արտաքին և ներքին շահակիցների ներգրավում և կարիքների գնահատում» փաստաթղթերը: ՄՈՒՀ-ում գործում են ներքին և արտաքին շահակիցներից տեղեկությունների հավաքագրման հետադարձ կապի մեխանիզմներ՝ հարցումներ, դասալսումներ, արտաքին կարծիքներ: Հարկ է ընդգծել, որ եթե ուսանողների և դասախոսների հետ հարցումներ են անցկացվում, իսկ գործատուներից ստացվում է կարծիք և արձագանք հետադարձ կապի ոչ ֆորմալ ուղիներով, ***ապա ՄԿԾ-ների բովանդակությունների վերանայմանը շրջանավարտների ներգրավման հիմքերը բացակայում են***[29]:

ՄՈՒՀ-ը, իր իսկ SWOT վերլուծությունում ընդգծում է ՄԿԾ-երի արդյունավետության գնահատման կառուցակարգերի անկատարության հանգամանքը: ՄԿԾ-ների, դրանց իրականացման, ինչպես նաև արդյունավետության բովանդակային վերլուծություններ, այդ թվում՝ ՄԿԾ-ների վերանայումների կամ փոփոխությունների վերլուծություններ, ամբողջական գնահատման արդյունքներ առկա չեն: Գոյություն ունեցող վերլուծությունները հանգում են ՄԿԾ-ների առանձին բաղադրիչների գնահատմանը, ուսանողների բավարարվածությանը, մակրո մակարդակի միջավայրային իրողություններին, գործատուներից ստացված ոչ ֆորմալ հետաադարձ կապին, սակայն ամբողջական ՄԿԾ-ների մակարդակով համակողմանի վերլուծություններ, որոնք կներառեին ՄԿԾ-ի մշակման և իրականացման բոլոր կողմերը, առկա չեն: Իրականացված բարելավումները վերաբերում են ՄԿԾ մասնագրերի ձևաչափային փոփոխություններին, առարկայական նկարագրերի բովանդակության վերնայմանը, ՄԿԾ վերջնարդյունքների հետ առարկայի ունեցած կապի ընդգծմանը, գնահատման հաճախման բաղադրիչի տեսակարար կշռի փոփոխությանը: Կրթական ծրագրերի իրականացման ընթացիկ արդյունքները պարբերաբար քննարկվում են ՄՈՒՀ-ի՝ տարբեր օղակներում գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների հսկայական պրոֆիլային բազմազանությանը, դրանք համապատասխանում են ՄՈՒՀ-ի առաքելությանը, քանի որ ՄՈՒՀ-ի վերաձևակերպված առաքելությունը չափազանց լայն և ընդհանրական է: Մանկավարժական մասնագիտություններն ընդգծելու փոխարեն առաքելությունն առաջադրում է «մանկավարժական արժեքների տարածումը», որոնք մանկավարժի մասնագիտության և մասնագիտական կոմպետենցիաների մի ենթաբաղադրիչ են միայն: Այս իմաստով ստացվում է, որ օրինակ, կերպարվեստի ՄԿԾ-ի ուսանող-ՀՊՄՀ շրջանավարտը, որը ստանում է մանկավարժի որակավորում, ավարտում է ՄՈՒՀ, որտեղ պատրաստել են ոչ թե մանկավարժ, այլ մասնագետ, որը մանկավարժական արժեք տարածող է: ՄՈՒՀ-ն ունի կրկնվող, քիչ ուսանողներով ՄԿԾ-ներ, որոնք խլում են ռեսուրսները, չեն արձագանքում աշխատաշուկայի պահանջներին և ենթակա են վերանայման, քանի որ դպրոցի կամ մշակութային կյանքի պահանջներին միշտ չէ, որ բավարարում են:

[29]Փոփոխվել է համալսարանի դիտարկումների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է «ապա շրջանավարտներն, օրինակ, որևէ կերպ առիթ և հնարավորություն չեն ունենում՝ մասնակցել ՄԿԾ-ների բովանդակությունների վերանայմանը»:

ՀՊՄՀ-ի մի շարք ստորաբաժանումներ, արտասահմանյան գործընկերությունների հետ համագործակցության տարբեր ձևաչափերով, ձեռք են բերել ՄՈՒՀ-ական գործընթացների իրականացման մասին արդի և ժամանակակից գիտելիք և կարողություն: Այնուամենայնիվ, այս ձեռքբերված գիտելիքն ու կարողությունը չեն հասել այն բոլոր ստորաբաժանումներին, որոնք պատասխանատու են ՄԿԾ-ների կազմման և մշտադիտարկման համար: Ժամանակակից ՄՈՒՀ-ական աշխարհում գործող կանոնակարգերի փոխառման արդյունքում ՄՈՒՀ-ը հաջողել է ՄԿԾ-ների մշակման և վերանայման, դրա տարբեր բաղադրիչների իրականացման վերաբերյալ արդի պահանջներին բավարարող և ժամանակակից միտումներն արտացոլող փաստաթղթերի ստեղծման գործում: Այնուամենայնիվ, այսպիսի կանոնակարգերի մի մասի դեռևս նախագծային տարբերակով և չհաստատված լինելը վկայում այն մասին, որ դրանք դեռ չեն գործում և դեռևս չեն կարող նպաստել ՄԿԾ իրականացմանը միջազգային գործընկերներից փոխառված և մշակված կարգերում սահմանված ժամանակակից միջազգային չափորոշիչներին համապատասխան: Փաստաթղթերի վրա նշված չէ դրանց մշակման կամ հաստատման ամսաթիվը (քանի որ ՄՈՒՀ-ը ներկայացնում է դրանք որպես գործող փաստաթղթեր), ինչը հնարավորություն չի ընձեռում տեսնել տարբեր գործողությունների միջև կապը և կարող է խաթարել ՄԿԾ-ների վերանայման և դինամիկ փոփոխությունների ընկալումը: ՄԿԾ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման ուղղությամբ ՄՈՒՀ-ում գոյություն ունեցող կարգավորման շրջանակներն ՄՈՒՀ-ում չեն դարձել ամենօրյա աշխատանքային գործիքներ. դրանք դեռևս ներդրման փուլում են:

Գոյություն ունեցող փասթաթղթերի հիման վրա արված փոփոխությունների մասով գնահատելի են ՄՈՒՀ-ի ստանձնած քայլերը՝ ուղղված մասնագրերի ձևաչափի միասնականացմանը, աշխատանքային խմբերում մասնակցայնության ապահովմանը: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների վերանայման նպատակով ստեղծված աշխատանքային խմբերի կազմում ուսանողների մեծաքանակությունը ի համեմատություն ՊԴ կազմի հիմնավորված չէ, և ստեղծվում է թվացյալ մասնակցայնության ապահովման տպավորություն:

ՀՊՄՀ-ում կրեդիտների հաշվարկման, ինչպես նաև ըստ կառուցամասերի բաշխման հստակ և մշակված կարգի բացակայությունը կարող է խաթարել ուսումնառության արդյունքների հետ բեռնվածքի համապատասխանությունը, արժանահավատությունը և շահակիցների վստահությունը: Սա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՊՄՀ-ում չկա «թողարկող ամբիոն» ինստիտուտը ի հակադրություն հիմնական սպասարկող ամբիոնների, ինչը կերաշխավորեր ՄԿԾ բովանդակության համար անմիջական պատասխանատվությունը և բովանդակային խնդիրների համակարգումը:

ՄՈՒՀ-ը դեռևս լուրջ անելիք ունի՝ ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքների վերաձևակերպման, դրանք ՈԱՇ-ին համապատասխանեցման, տաքսոնոմիաների ակտիվ բայերի գործածման, սույնով նաև վերջնարդյունքների չափելիության ապահովման ուղղությամբ: Բակալավրական ՄԿԾ-ներում կրթական վերջնարդյունքների քանակը կառավարելի է, սակայն դրանց ձևակերպումները երբեմն գերընդհանրական են, թույլ չեն տալիս հասկանալ՝ ինչ ոլորտի մասնագետ է պատրաստվում, քանի որ շատ փոքրաթիվ են հղումները բուն գիտակարգային բովանդակությանը: Սա հատկապես վերաբերելի է մանկավարժի որակավորում շնորհող ՄԿԾ-ներին: Ներկա ձևակերպումներով կրթական վերջնարդյունքների չափելիության պակասը, դրանց գերընդհանրականությունը, կոնկրետ մասնագիտության շրջանավարտին չնկարագրելը հանգեցնում են թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցների կողմից թողարկվող շրջանավարտի պրոֆիլի ոչ պատշաճ ընկալմանը, բարդացնում են գնահատման մեթոդաբանության մշակումը: Բացի այդ, բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում ուսումնառության արդյունքների ձևակերպումների տարբերություններ խզվածք են առաջացանում կրթության շարունակականության ընկալման մեջ: Գիտելիքի, կարողության և հմտության նկարագրիչների այսպիսի կիրառումը

խոչընդոտում է հստակ նկարագրված բակալավրական բազային հենքի ընկալումը որպես մագիստրոսական կարողությունների կառուցման նախապայման: ՄԿԾ-ների կամընտրական առարկաների, ավելի մեծ բաղադրիչների՝ պրակտիկայի, կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի համար հստակ վերջնարդյունքների, դրանց՝ ՄԿԾ վերջնարդյունքների հետ ունեցած տեսանելի կապի բացակայությունը խոչընդոտում է ՄԿԾ-ի որպես մեկ միավորի գործարկումը, որի բոլոր տարրերը ծառայում են որոշակի գիտելիքներով և կարողություններով մասնագետի ձևավորմանը:

Թե՛ բակալավրական, թե՛ մագիստրոսական ծրագրերում ինքնուրույն և հատկապես հետազոտական աշխատանքի դրվածքը թույլ է, շատ փոքր է ուսանողի սեփական ներդրումը: Աշխատանքների ռեֆերատիվ բնույթը, ինչպես նաև բուն որակավորման հետ անմիջական առնչության բացակայությունը, օրինակ՝ մանկավարժի որակավորման դեպքում բուն գրականագիտական վերլուծությունը, խաթարում են ՈԱՇ-ով հատկապես մագիստրատուրայի ուսանողի համար մասնագիտական ոլորտում սահմանված հետազոտականության պահանջի իրականացումը, հետազոտական կարողությունների ձեռքբերումը, քննական մտածողության ձևավորումը:

Գնահատելի են ՄՈՒՀի կողմից մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և իրականացման մեջ փոփոխությունները, այնուամենայնիվ, ոչ մանկավարժական մասնագիտությունների նկատմամբ բազմափուլ պրակտիկայի սկզբունքի չկիրառումը թույլ չի տալիս այս ՄԿԾ-ների ուսանողներին ուսումնաճանաչողական պրակտիկայի միջոցով ծանոթանալ մասնագիտական գործունեությանը ուսումնառության վաղ փուլերում, զրկում է նաև այլ մասնագիտությունների ուսանողներին պրակտիկայի տարբեր տեսակներին մասնակցությունից՝ պրակտիկայի հետագա փուլերում կարողությունները լիարժեքորեն փորձարկելու և հմտություններ ձեռք բերելու հնարավորությունից:

Խնդրահարույց է ՄԿԾ-ներում ուսման առկա համակարգում տարբեր պատճառներով կիսամյակում ուսանողների հետ պարապմունքների քանակի կրճատման հարցը: Ռեսուրսախնայողությունը, որը հիշատակված է ԻՎ-ում որպես 15-շաբաթյա ռեժիմին անցման փաստարկ, չի կարող հիմնավորվել ուսուցման որակի ապահովման կարիքով: Մագիստրոսական ծրագրերում երկօրյա հաճախումները և ուսուցման հեռակա ձևով իրականացվող ՄԿԾ-ներում ուստարվա կտրվածով լսարանային պարապմունքների մեկ փուլով անցկացումը (յուրաքանչյուր դասընթացից տարվա մեջ հիմնականում միայն 8 ժամ լսարանային բեռնվածությամբ) վտանգում են կրթական բովանդակության լիարժեք ուսուցումը, խախտվում է կրեդիտներով ենթադրվող բեռնվածության իրականացումը:

Գովելի է ՄՈՒՀ-ի կողմից էլեկտրոնային Google Classroom հարթակի ներմուծումը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս հարթակի օգտագործումը քայլ առ քայլ և ըստ կարիքի ներմուծելու փոխարեն ՀՊՄՀ-ն գնացել է վերևից ներքև հարկադրման և պահանջի իջեցման ճանապարհով, ինչը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների բոլոր շահակիցների կողմից: Գործիքի օգտագործումը այս պահին հիմնականում չի նպաստում ժամանակակից այնպիսի մեթոդների կիրառմանը, ինչպիսիք են համագործակցային ուսուցումը, նախագծի մեթոդը, խնդրի լուծման մեթոդը, հավասարակցային գնահատումը և այլն: Այս հարթակի օգտագործման արդյունավետության, դրանից բխող կոնկրետ խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների վերլուծության բացակայությունը վտանգում է հետագայում այս գործիքի ավելի նպատակային օգտագործման հեռանկարը: Բացի այդ, ՄՈՒՀ-ը պետք է վերանայի որևէ գործիքի օգտագործման պահանջը, եթե այդ գործիքի կիրարկման ռեսուրսային ապահովումը չի իրականացրել: Այսպես խաթարվում է կրթական ռեսուրսին հավասար հասանելիության սկզբունքը:

ՀՊՄՀ-ի դասավանդման և ուսումնառության մեթոդների քարտեզագրման ջանքերը տեսանելի են, այուամենայնիվ, մեթոդների ընտրված կազմը լսարան չի հասնում: Ուսուցման մեթոդների և ուսումնառության նախասահմանված արդյունքների միջև կապը թույլ է, ինտերակտիվ դասի նախապայման է ընկալվում տեսասահիկներով ուսուցման առկայությունը, ինչը վկայում է ՄՈՒՀ-ի ներքին շահակիցների կողմից ինտերակտիվության թյուր ընկալման մասին: Զարմանալի է վերջնարդյունքների ձեռքբերման հարցում լաբորատոր, գործնական, խմբային, համագործակցային, նախագծային մեթոդների սակավությունը ինչպես պլաններում, այնպես և դասավանդման մեջ: Այս կերպ վտանգվում է ուսանողների շրջանում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ չկա ուսանողակենտրոնության պատշաճ հանընդհանուր ընկալում դասախոսների և ուսանողների կողմից: Սահմանափակ է ուսուցման ուսանողակենտրոն մեթոդների կիրառումը, ինչպես նաև ուսանողական նախաձեռնողականությունը հետազոտական գործունեության մեջ, ինչը բացասաբար է ազդում թե՛ այսպիսի առաջադրանքների բովանդակության, թե՛ կատարողականի, թե՛ ուսանողների պատասխանատվության ձևավորման վրա: Հատկանշական է, որ ուսանողակենտրոն ուսուցումը դեռևս մշակույթ չէ ՄՈՒՀ-ում:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները գնահատանքով էին նշում երիտասարդ դասախոսների ներմուծած նոր, ավելի ուսանողակենտրոն մոտեցումները, այնինչ տարեց և փորձառու դասախոսների դեպքում մեթոդական նորարարությունը խիստ սահմանափակ է:

ՄՈՒՀ-ը գիտակցում է ուսուցման մեթոդների արդիականացման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, այս ուղղությամբ ձեռնարկված գործնական քայլերը, որոնք նաև ի ցույց կդնեին ՊԻԳԲ-ի ողջ շրջափուլի համակարգային ներդնումն ու իրականացումը, սակավ են:

ՄՈՒՀ-ն ունի գնահատման մշակված քաղաքականություն, որը հաջողությամբ որդեգրել է ժամանակակից միջազգային հասկացություններն ու միտումները: Այնուամենայնիվ, ինչպես մյուս կարգավորման շրջանակները, սա նույնպես ամենօրյա գործիք չէ:

ՄՈՒՀ-ը ջանքեր է ներդրել՝ գնահատման ձևերն ուսումնառության արդյունքների հետ համապատասխանեցնելու համար, այնուամենայնիվ համապատասխանեցումը չի հանգեցրել գնահատման մեթոդների տարբերակված ընտրության: Գիտելիքի, կարողությունների և հմտությունների առանձին կառուցամասերի համար գնահատման հնարավոր ձևերի և մեթոդների թվարկումը ցույց չի տալիս, թե ուսումնառության կոնկրետ արդյունքի ինչ մեթոդով է գնահատվելու և ինչպես է ապահովվելու ձեռքբերված արդյունքի չափելիությունը:

ՄՈՒՀ-ի կողմից գնահատման համակարգի հաճախումների բաղադրիչում ներմուծված փոփոխությունները հիմնված չեն կոնկրետ վերլուծությունների վրա: Հատկապես բալավարական ՄԿԾ-ներում այսպիսի փոփոխությունը կարող է ուսանողների մոտ նվազեցնել լսարանային պարապմունքների կարևորության ընկալումը:

Ձևավորող գնահատման թույլ կիրառությունը, ինչպես նաև ընթացիկ գնահատման հետ միասին երկու ամփոփիչ գնահատումների առկայությունը, ինչը գերակշռող մոտեցումն է ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ներում, վտանգում է հետադարձ կապի միջոցով ուսանողին տրվող անհրաժեշտ ուղղորդումը և նվազեցնում ուսուցման արդյունավետությունը:

Խաթարված է կոնկրետ բովանդակության միանգամյա գնահատման սկզբունքը պրակտիկայի համար տրվող գնահատականի՝ ամփոփիչ ատեստավորման ժամանակ կրկնակի հաշվարկմամբ: Բացի այդ, կամավորական աշխատանքի գնահատականը, որը հաշվարկվում է ամփոփիչ ատեստավորման գնահատականում, նույնպես խաթարում է բուն մասնագիտական կարողունակության գնահատման օբյեկտիվությունը:

Լուրջ խնդիր է հետազոտականության մակարդակը ՄԿԾ-ներում: Ուսումնասիրված ինքնուրույն և հետազոտական աշխատանքներում ուսանողների սեփական վերլուծությունների սակավությունը, ինչպես նաև մանկավարժի որակավորում շնորհող մասնագիտությունների համար բուն մանկավարժահոգեբանական և դասավանդման մեթոդիկային չառնչվող կամ հպանցիկ անդրադարձով ուսումնասիրությունները խաթարում են մասնագիտական վերջնարդյունքների գնահատման տրամաբանությունը:

Թեև ՄՈՒՀ-ն ունի ցիտման նորմեր, և որոշ ստորաբաժանումներում անողոք պայքար է ընթանում ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման և գրագողության դեմ, բարձրացված աշխատանքներում լուրջ մաս էր կազմում գրագողությունը՝ «աշխատանքի մեծ մասը կազմող ուրիշների մտքերի մեծածավալ օգտագործում անկախ հղման առկայությունից» սահմանմամբ: Գրագողության դեմ պայքարի ավելի կուռ կառուցակարգերի բացակայությունը, ակադեմիական ազնվության խախտումների բացառումը, հետազոտական բաղադրիչի թույլ լինելը լրջորեն վտանգում են ՄՈՒՀ-ում ստեղծվող գիտելիքի վավերությունը:

Գնահատելի է ՄՈՒՀ-ի կողմից բենչմարքինգի կարևորման, դրա իրականացման համար նախատեսված քաղաքականության, մեթոդաբանության մշակման ջանքը, այնուամենայնիվ, իրականացված բենչմարքինգի արդյունքները վկայում են, որ ՄՈՒՀ-ում չի իմաստավորվել բենչմարքինգի՝ որպես ՄԿԾ բովանդակության վերանայման հիմնարար շրջանակի դերը: Ըստ էության, ՄԿԾ-ների բովանդակային բենչմարքինգ ՀՊՄՀ-ում չի իրականացվել. ներկայացված փաստաթղթերն ի ցույց են դնում միայն առարկայացանկերի մեխանիկական զուգադրում, ինչը չի պարունակում վերլուծական համեմատություն և չէր կարող հիմք հանդիսանալ բովանդակային վերանայումների համար: Բենչմարքինգ չի արվել կրթական վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության, գնահատման մեթոդների մակարդակում: Ակնհայտ է, որ այսպիսի մեխանիկական զուգադրումները չէին կարող հանդիսանալ բովանդակային բարելավումների հիմք և չէին կարող նպաստել բովանդակային հիմքով շարժունության խթանման համար:

ՄՈՒՀ-ը կարևորում է ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունը, այնուամենայնիվ, ընդհանուր ուսանողական համակազմի համեմատությամբ թե՛ արտագնա, թե՛ ներգնա շարժունության ցուցանիշները չափազանց ցածր են:

Գնահատելի է ՄՈՒՀ-ի կողմից «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի» ներդնումը, ինչպես նաև «Որակի ապահովման ձեռնարկում» ՄԿԾ-ներին արված հիմնական անդրադարձը: Այնուամենայնիվ, վավեր գործիքակազմով ՄԿԾ մակարդակում կարիքների վերհանման և հստակ տվյալների հենքի բացակայության պայմաններում պարզ է դառնում, որ հավատարմագրմանն ընդառաջ ՄԿԾ վերանայումները կրել են ինստիտուցիոնալացված բնույթ և ուղղված չեն եղել վեր հանված բուն կարիքներին: ՄՈՒՀ-ում մշտադիտարկման հստակ քաղաքականության բացակայությունը, առանց արդյունավետության գնահատման պատասխանատուների և ցուցիչների, առանց համեմատական վերլուծության, արտաքին և ներքին շահակիցների կարիքների, շուկայի պահանջարկի համակողմանի վերլուծության վտանգում է որակյալ կադրերի թողարկման գործընթացը:

Վերանայումների արդյունքում հիշատակվող փոփոխությունները՝ գնահատման համակարգում արված փոփոխություններ, հեռակա ուսուցման ձևում հաճախումների թվի պահանջի նվազեցում և այլն, հիմնավորված չեն բուհի վերլուծություններով: Դա վկայում է այն մասին, որ խզվածք կա ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման գործընթացների կառավարման և իրականացման ժամանակ ՊԻԳԲ շրջափուլի տարբեր փուլերի միջև: Ըստ էության, թեև ՄՈՒՀ-ն ինչ-որ չափով անդրադարձել է նախորդ փորձագիտական գնահատման ընթացքում տրված գրեթե բոլոր խորհրդատվություններին, ձեռնարկված քայլերի արդյունքում արձանագրված փոփոխությունները դեռևս չեն հանգեցրել լուրջ

բովանդակային և որակական բարելավման: ՄՈՒՀ-ին չի հաջողվել ընդլայնել արտաքին շահակիցների իրական ներգրավվածությունը ՄԿԾ-ների վերամշակման գործընթացում: ՄԿԾ-ների համակողմանի մշտադիտարկման գործընթաց չի իրականացվում, վավեր չեն արդյունավետության գնահատման գործիքները, մի շարք հարցումների տվյալները հավաստի չեն: Կրեդիտները վերաբաշխվել են, սակայն չի մշակվել կրեդիտների կուտակման, բաշխման և հաշվարկման քաղաքականություն՝ հստակ բանաձևերով, ինքնուրույն և անհատական աշխատանքի ձևերի հետ կապակցվածությամբ: ՄՈՒՀ-ը մշակել է բենչմարքինգի իրականացման համար ընդհանուր մեթոդաբանություն, սակայն չի ապահովել այդ մեթոդաբանության լիարժեք կիրառումը բենչմարքինգի իրականացման ժամանակ, չի ներդրել բենչմարքինգի արդյունքների արդյունավետ կիրառման մեխանիզմներ: ՄՈՒՀ-ը ներդրել է մի շարք գործիքներ՝ շահակիցների կարիքների վերհանման համար, սակայն գործիքների մշակման մեթոդաբանական հիմքերն արտահայտված չեն, ուստի խնդրահարույց է դրանց կարողությունը խնդիրների վերհանման գործում: Չկա ընտրանքի ներկայացուցչականության մասին հավաստող տեղեկություն: ՄԿԾ-ների մեծ մասում բակալավրական և մագիստրոսական մակարդակների ուսումնառության արդյունքները ձևակերպված են ընդհանրականության տարբեր աստիճաններով, միշտ չէ, որ արտացոլում են ՈԱՇ նկարագրիչները, և երբեմն ունեն հստակեցման կարիք՝ չափելի լինելու համար: ՄՈՒՀ-ը քարտեզագրել է ՄԿԾ դասընթացները ՄԿԾ ուսումնառության արդյունքների հետ, սակայն մի շարք խոշոր բաղադրիչների՝ կուրսային աշխատանքի, պրակտիկայի, ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի ուսումնառության արդյունքները հիմնականում քարտեզագրված չեն: Թեև ՄԿԾ-ներում առարկաների փոխկապակցվածությունը և տրամաբանական հաջորդականությունը հիմնականում ապահովված է, նույնպիսի հաջորդականությունը միշտ չի ապահովվում պրակտիկայի համար: Առարկայական ծրագրերում և թեմատիկ տրոհումներում հիմնականում կոնկրետ չէ ուսումնառության արդյունքի, ուսուցման և գնահատման մեթոդների միջև համապատասխանությունը: ՄՈՒՀ-ին դեռևս չի հաջողվել առաջանցիկ ՄԿԾ-ների մշակման և վերամշակման, արդիականացման և բարելավման փորձը տարածել բուհի մյուս ՄԿԾ-ներում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ թեև նախորդ հավատարմագրման խորհրդատվություններին համապատասխան բարելավումների պլանով նախատեսված գործողությունները մասամբ են իրականացվել, ՄԿԾ-ներն ունեն օպտիմալացման անհրաժեշտություն, ՄԿԾ-ների մշակումը, գնահատումը, բարելավումը և բենչմարքինգը կանոնակարգող առկա մեթոդաբանական փաստաթղթերը փաստացի չեն կիրարկվում, ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքները չափելի չեն, բացակայում են կրեդիտների հաշվարկման և բաշխման հստակ մեթոդաբանությունը, ինչպես նաև կամընտրական առարկայակազմի սահմանման և ընտրության հստակ մեխանիզմները, անցումն ուսանողակենտրոն ուսումնառությանը լիարժեք չէ, ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմների բացակայությունը ռիսկային է դարձնում որակավորումների շնորհման արժանահավատությունը, իսկ ՄԿԾ-ների վերանայումը չի իրականացվում հավաստի տվյալների հիման վրա՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը **չի բավարարում** Չափանիշ 3-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է ***անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀՊՄՀ-ում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմները հիմնականում կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և ՄՈՒՀ-ի կողմից սահմանված նորմատիվային փաստաթղթերով: Մագիստրատուրա ընդունելությունն իրականացվում է ներքին հարցազրույցի միջոցով: ՄՈՒՀ-ը իրականացնում է նաև կարճաժամկետ և երկարաժամկետ նախապատրաստական դասընթաց դիմորդների համար՝ հեռակա բաժնի ընդունելության համար սահմանելով ՀՀ Կառավարության կողմից հաստատված տեղերի մինչև 20% քվոտա դասընթացի ամփոփիչ քննության արդյունքներով: Ըստ ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված կարգի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտները ևս հնարավորություն ունեն ուսումը շարունակել բուհում: Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» համաձայն: Սակայն ՄՈՒՀ-ը դեռևս չի ներդրել ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմների թափանցիկության երաշխավորման հստակ մեխանիզմներ, մասնավորապես հեռակայում և արվեստի բաժիններում ընդունելության համար:

ՀՊՄՀ-ն 2016-2020թթ. ՌԾ-ում նախատեսել է դիմորդների և ուսումնառողների կողմնորոշմանն ուղղված քայլերի իրականացում: ՌԾ այս նպատակի ներքո ՄՈՒՀ-ն իրականացնում է բազմապիսի այցեր և մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում՝ հիմնականում կենտրոնանալով հենց մարզերի ավագ դպրոցների, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնարանների վրա՝ ներկայացնելու ՀՊՄՀ գրավչությունը որպես հետագա ուսումնառության վայր:

Բացի այդ, ՀՊՄՀ-ում կազմակերպվում են նաև բաց դռների օրեր, գործում են պաշտոնական կայքը, թերթը, հեռուստահաղորդումը, ռադիոալիքը, ֆակուլտետների կայքէջերը, որոնք հանդիսանում են ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հիմնական միջոցներ և նույնպես ծառայում են դիմորդների հավաքագրմանը: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը չի ուսումնասիրում, թե այս մեխանիզմներն ինչպե՞ս են ծառայում դիմորդների հավաքագրման նպատակներին, կամ դիմորդների ո՞ր մասն է այս բուհն ընտրել իրականացված միջոցառումների արդյունքում: Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ ի տարբերություն ՀՀ այլ բուհերում վերջին տարիներին նկատվող ընդունելության ցուցանիշի անկման, ՀՊՄՀ-ում ուսանողների ընդունելության ցուցանիշներում մեծ տատանումներ չեն արձանագրվել:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված որոշ մեխանիզմներ, որոնք հիմնականում ուսանողների՝ կոլեգիալ կառավարման մարմինների մասնակցությամբ են դրսևորվում: Մասնավորապես, ուսանողները ներառված են գիտական խորհրդի և ֆակուլտետային խորհուրդների կազմերում: ՄՈՒՀ-ի ուսանողներն ունեն ինքնավար կառավարման մարմին՝ Ուսանողական խորհուրդ, որը ուսանողական

համակազմի անդամների ունեցած խնդիրների, կարիքների բարձրաձայնման և քննարկման հարթակ է: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում ուսանողների հետ տեղի ունեցած հանդիպումները փաստում են, որ ուսանողների ներառվածությունը վերը նշված կառույցներում դեռևս չի նպաստում սեփական իրավունքների գիտակցմանը, նրանք չեն համարում իրենց իրավասու մի շարք խնդիրների բարձրացման և քննարկման համար: Հիմնականում խնդիրները վեր են հանվում լսարանային մակարդակում՝ ուսանող-ուսանող, ուսանող-դասախոս զրույցների և քննարկման միջոցով:

Բացի այդ, ՄԿԾ-ների իրականացման և դասապրոցեսի մշտադիտարկման մի շարք գործիքներ պարունակում են ուսանողի կարիքների վերհանմանն ուղղված հարցաղրումներ. սրանք հիմնականում սոցիոլոգիական հարցումներ են, օրինակ՝ «Դասախոսը և առարկան ուսանողի աչքերով»: ՄՈՒՀ-ն ունի մի շարք վերլուծություններ՝ «Ռեսուրսներով բավարարվածության առկա համակարգում սովորող ուսանողների» կարծիքների վերլուծություն, «Ռեսուրսներով բավարարվածության հեռակա համակարգում սովորող ուսանողների» կարծիքների վերլուծություն կրթական ծրագրից ուսանողների բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն, ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված ուսումնասիրություն, որոնց համար ելակետային տվյալների, ընտրանքի և վերլուծության համար անհրաժեշտ մեթոդաբանությունը հետազոտության զեկույցում կամ որևէ այլ կերպ պարզաբանված չէ: Ավելին, քանի որ ՄՈՒՀ-ը չի հատկորոշել հետազոտության ընտրանքը, փորձագիտական այցի ընթացքում տեղ գտած հանդիպումների արդյունքում պարզվեց, որ հարցումներին մասնակցությունը չի կրում նաև համատարած բնույթ, որոշ կուրսեր ընդհանրապես չեն լսել այդպիսի հարցումների անցկացման մասին: Ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված գործողություններ, հարցումներ չեն իրականացվել հեռակա բաժնում սովորողների շրջանում:

Ուսանողների կարիքների վերհանման համար ֆակուլտետներից մեկում, ֆակուլտետի դեկանի նախաձեռնությամբ, կիրառվել է «Shadowing»՝ խնդիրների անանուն վերհանման մեթոդը: Այս մեթոդի կիրառման այլ դեպքեր չեն արձանագրվել:

Եզակի են դեպքերը, երբ վերհանված կարիքներին հաջորդում են համապատասխան միջոցառումները, այդուհանդերձ ուսանողները նշեցին որոշ դեպքեր, երբ վերհանված կարիքների հիման վրա իրականացվել են բարելավման գործընթացներ, մասնավորապես՝ Google Classroom-ի հետ կապված. էլեկտրոնային հարթակի օգտագործմամբ դասավանդման և ուսումնառության ծանրաբեռնվածությունը կրճատվել է:

Հարկ է նշել, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների ու ընթացակարգերի արդյունավետությունը դեռևս չի գնահատվում, չնայած նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում այս մասին խորհրդատվություն էր ներկայացվել:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՀՊՄՀ-ում ուսանողների համար կազմակերպվող խորհրդատվությունները վերաբերում են նախաքննական պատրաստությանը, կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարմանը, ինչպես նաև պրակտիկայի ընթացքին: ՀՊՄՀ-ում ուսանողների լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և վերոնշյալ պաշտոնական խորհրդատվությունից զատ այլ ուղղորդման կամ խորհրդատվության տրամադրման ֆորմալ ձևակերպված մեխանիզմներ չկան: Լրացուցիչ պարապմունքները հիմնականում սահմանափակվել են անգլերենի դասընթացներով: Միջազգային ուսանողների համար իրականացվում են նախնական օժանդակության և կողմնորոշման աշխատանքներ: Ինչ

վերաբերում է հեռակա համակարգում սովորող ուսանողներին, ապա նրանց համար բուհին և ուսումնառությանը վերաբերող գործընթացների ու մանրամասների մասին խորհրդատվական շրջան է համարվում առաջին կուրսի նոյեմբեր ամիսը, որից հետո սկսում է բուն ուսումնառության շրջանը:

Հետևելով հավատարմագրման նախորդ շրջափուլի փորձագիտական խորհրդատվությանը՝ ուսանողներին ուղղորդելու և աջակցելու նպատակով ՀՊՄՀ-ն մշակել է «Ուսանողի ուղեցույցը», որում զետեղված են տեղեկություններ ՄՈՒՀ-ում ուսանողին վերաբերող բոլոր իրողությունների մասին: Այնուամենայնիվ, փաստաթղթերի ուսումնասիրությամբ և փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը չունի ուսանողի անհատական խորհրդատվության կամ կրթուղու, կամընտրական առարկաների ընտրության կամ այլ օժանդակ խորհրդատվության մեխանիզմ:
Իրականացվող խորհրդատվություններից ուսանողների բավարարվածության գնահատման մեխանիզմներ կամ համապատասխան վերլուծություններ առկա չեն:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:
ՀՊՄՀ-ում վարչակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց առկա չէ, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀՊՄՀ-ում կան մի շարք գործնական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս դիմել վարչակազմին անմիջական դիմումների, կայքէջի հետադարձ կապի, ուսանողական խորհրդի միջնորդության, անմիջապես ամբիոնին դիմելու եղանակներով: Վարչական անձնակազմին դիմելու համար անհրաժեշտ ընթացակարգի նկարագրությունը և դիմումի ձևը զետեղված է «Ուսանողի ուղեցույցում», որը սակայն մշակվել է 2018 թ.-ին՝ հավատարմագրման նոր շրջափուլին ընդառաջ և դեռևս չի հասցրել տարածում գտնել ուսանողների շրջանում: Չնայած հավատարմագրման նախորդ շրջափուլի ընթացքում ուսանողների ուղղորդման և օժանդակման գործընթացների կանոնակարգմանն ուղղված փորձագիտական խորհրդատվությանը, ուսանողների ուղղորդման և օժանդակման մեխանիզմներ դեռ չեն մշակվել:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողների հետ ունեցած հանդիպումները փաստում են, որ ուսանողներն ունեն վարչակազմին ազատորեն դիմելու հնարավորություն և ընդհանուր առմամբ բավարարված են գործընթացից: Այնուամենայնիվ, խնդիրների վերհանման կամ հարցերի դեպքում վարչակազմին դիմելու նրանց մոտիվացիան և ակտիվության մակարդակը բարձր չեն: Ուսանողները հարցերի դեպքում ցանկացած ժամանակ հնարավորություն ունեն դիմելու համապատասխան ամբիոն և դեկանատ: Իր հերթին, ՄՈՒՀ-ը ևս կարևորում է նշված ծառայությունների պարբերական իրականացումն ու բարելավումը, սակայն դեռևս բացակայում են դրանց պլանավորման և իրականացման արդյունավետության վերլուծությունները:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:
Համալսարանում կարիերային նպաստող գործողությունների իրականացման համար գործում են բուհ-գործատու համագործակցության կենտրոնը և Պրակտիկայի կենտրոնը:

Բուհ-գործատու համագործակցության կենտրոնի գործունեության վկայությունները սահմանափակվում են հնարավոր գործատուների վերլուծության փորձով և շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվության շտեմարանի կազմմամբ, որը դեռևս ընթացքի մեջ է և որում զետեղված տեղեկույթը վերաբերում է ավարտելուց հետո մեկամյա ժամանակային կտրվածքին: Շրջանավարտների միություն ուսումնական հաստատությունը չունի: Կենտրոնի կողմից ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործունեությունը այնքան էլ ակտիվ չէ: Իրականացվել են որոշ միջոցառումներ՝ CV, մոտիվացիոն նամակ, ինքնակենսագրություն գրելու վերաբերյալ: Փորձագիտական այցի

ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզվեց, որ գործատուների մի մասն առհասարակ տեղյակ չէ այս օղակի առկայության մասին. նրանք իրենց հարաբերությունը ՄՈՒՀ-ի հետ պահպանում են անձնական կապերի կամ ամբիոնների հետ շփումների մակարդակում: Բացի այդ, շահակիցների հետ այլ հանդիպումներն ի ցույց դրեցին այն հանգամանքը, որ ուսանողները նույնպես չեն արժևորում այս կենտրոնի դերակատությունը՝ իրենց զբաղվածությանը նպաստելու տեսանկյունից:

Պրակտիկայի կենտրոնը ակտիվ է գործատուների մոտ ուսանողների պրակտիկայի կազմակերպման հետ կապված գործառույթների իրականացմամբ: Որոշ դեպքերում պրակտիկայի արդյունքում ուսանողները հայտնվում են գործատուների մոտ հավանական մասնագետների բանկերում կամ հրավիրվում են աշխատանքի:

Համալսարանը օգտագործում է կայքէջը տարբեր գիտաժողովների, կրթաթոշակների, տեղական և միջազգային ծրագրերի մասին տեղեկատվություն տարածելու համար, որը ՄՈՒՀ-ը դիտում է որպես կարիերային նպաստող գործողություն: Երբեմն հրապարակվում են նաև թափուր աշխատատեղերի առկայության մասին հայտարարություններ: Տեղեկատվությունը հրապարակվում է նաև ֆեյսբուքյան էջում և Google classroom-ով ուղարկվում ներքին շահակիցներին: Այս գործողությունների ֆոնին, այնուամենայնիվ, կենտրոնի գործունեության արդյունավետությունը չի գնահատվել. չկան քանակական կամ որակական վերլուծություններ, վիճակագրական տվյալներ:

Հարկ է ընդգծել, որ պրակտիկայի և բուհ-գործատու համագործակցության կենտրոնների կողմից իրականացվող գնահատումների փաստացի տվյալները միանշանակ չեն: Ինքնավերլուծությունում նշվում է, որ համալսարանն ավարտած ուսանողների ընդամենը 20%-ն է աշխատում որպես մանկավարժ: Փորձագիտական այցի ընթացքում այս խնդրի հստակեցմանն ուղղված հարցին ՄՈՒՀ-ի ներկայացուցիչներն արձագանքեցին՝ փաստելով, որ այդ 20%-ի ցուցանիշը վերաբերում է միայն առաջին տարվա ընթացքում աշխատանքի անցածներին: Կենտրոնը չի տիրապետում ավելի լայն կտրվածքով շրջանավարտների զբաղվածության մասին տվյալների:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում կազմակերպվում են գիտական համաժողովներ, սեմինարներ և այլ գիտական միջոցառումներ, որոնց ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու: ՄՈՒՀ-ը համագործակցում է մի շարք գիտահետազոտական ինստիտուտների հետ, իսկ մագիստրոսական հետազոտությունները որոշ ֆակուլտետներում արվում են այդ ինստիտուտներ և լաբորատորիաներ հաճախելու արդյունքում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ուսանողների համահեղինակությամբ տպագրված հոդվածների բաշխվածությունը խիստ տարբեր է ըստ ֆակուլտետների: ՄՈՒՀ-ն ունի սեփական գիտական ժողովածուները, որոնք նույնպես տպագրում են ուսանողական հոդվածներ, սակայն ուսանողների մոտիվացիայի մակարդակը բարձր չէ՝ հոդվածների տպագրման և գիտական գիտաժողովներին մասնակցելու հարցում:

Հետևելով նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությանը՝ ընդլայնելու ուսանողների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ի գիտահետազոտական աշխատանքներում, իրականացվել են որոշ քայլեր, այդ թվում՝ ՈՒԳԸ գործունեությունը և ամսագրերում ուսանողներին տպագրվելու հնարավորության ընձեռումը: Սակայն ՄՈՒՀ-ում գործող ՈՒԳԸ-ն վերջերս է սկսել ակտիվանալ և դեռևս չունի հստակ մշակված և գիտակցված իրավունքների և պարտականությունների շրջանակ, ուստի դեռևս չի նպաստում ուսանողների գիտահետազոտական ներուժի կիրառմանն և մոտիվացիային մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ ուսանողները նշեցին, որ ուսումնառության արդյունքում ավելի շատ պրակտիկ աշխատանքների վրա

շեշտադրման կարիք ունեն, ինչը հետագայում կնպաստի նաև հետազոտական աշխատանքներ իրականացնելու հմտությունների ձևավորմանը:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՀՊՄՀ-ում կա Ուսանողական խորհուրդ, որի ուսանողական հանրության կառավարման գործառույթների հետ մեկտեղ կարևորվում է նրանց իրավունքների պաշտպանության գործառույթը: ՈՒԽ ներկայացուցիչները գիտխորհրդի և ֆակուլտետային խորհուրդների անդամներ են: Առանձին կուրսերում նույնպես, ՈՒԽ անդամների նախաձեռնությամբ, բարձրացվում են ուսանողությանը վերաբերող և հուզող հարցեր: Բացի ըստ անհրաժեշտության առաջ եկող քննարկումներից, ՈՒԽ-ն պարբերաբար իրականացնում է պլանավորված հանդիպումներ և քննարկումներ: ՈՒսանողները հնարավորություն ունեն սեփական նախաձեռնությամբ իրենց բողոքներն ու առաջարկները ներկայացնել ինչպես ՈՒԽ-ին, այնպես էլ ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներին: Օրինակ՝ ՈՒԽ-ի կողմից վերջերս բարձրացված խնդիրը՝ Google Classroom-ի ծանրաբեռնվածության հետ կապված բողոքը, ստացել է լուծում և էլեկտրոնային հարթակի օգտագործմամբ ուսումնառության ծանրաբեռնվածությունը կրճատվել է:

Հարկ է նշել, որ փորձագիտական այցի ընթացքում ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի մասին ընկալումները միանշանակ չեն և հաճախ ուսանողական համակազմը ՈՒԽ-ն դիտարկում է որպես միջոցառումներ կազմակերպող կառույց:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ նաև, որ ուսանողների շահերի պաշտպանության հիմնական գործողությունները վերաբերում են գնահատականների բողոքարկմանը, որի համար ՄՈՒՀ-ն ունի կարգավորման շրջանակ: Այլ բնույթի բողոքները հիմնականում հնարավոր է լինում լուծել կամ կարգավորել լսարանային մակարդակում: Ուսանողների իրավունքները սահմանված են համալսարանի կանոնադրության, ՈՒԽ կանոնադրության և ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթի մեջ:

Նախորդ հավատարմագրման արդյունքում ՄՈՒՀ-ին փորձագիտական խորհուրդ է տրվել. ստեղծել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ուսումնական միջավայր: Այդ ուղղությամբ ՄՈՒՀ-ը ձգտում է ապահովել հավասար հնարավորություններ և մատչելի ուսումնական միջավայր, այդուհանդերձ անհրաժեշտ ենթակառուցվածքային ռեսուրսներով դեռ ապահովված չէ:

ՀՊՄՀ-ն ՀՈՒԱԱ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս առավել ակտիվ համագործակցել այլ բուհերի ՈՒԽ-ների հետ:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՀՊՄՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների որակի ապահովման և գնահատման մեխանիզմները հիմնականում հարցումներն են, երբեմն էլ՝ ֆոկուս խմբային հարցազրույցները: Դրանց արդյունքում դուրս բերված պատկերը բնորոշում է բավարար գոհունակության մակարդակ նշված ծառայություններից: Չնայած հավատարմագրման նախորդ շրջափուլի փորձագիտական խորհրդատվությանը ուսանողների կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերի և մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ՝ անցկացվող հարցումների և հարցազրույցների արդյունավետության գնահատման մեխանիզմներ չեն մշակվել: Բացի այդ, առկա չեն օգտագործված գործիքների և ստացված տեղեկատվության հուսալիությունը և ճշգրտությունը վավերացնող մոտեցումներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՊՄՀ-ն մշակել և իրականացնում է տարբեր ֆորմալ ընթացակարգեր, որոնք ուղղված են դիմորդների կողմնորոշման և ուսանողների հավաքագրման գործընթացների արդյունավետ համակարգմանը: Գնահատելի է, որ ՄՈՒՀ-ն իրականացրել է ուսանողների և դիմորդների կազմի սոցիալական հիմքի ուսումնասիրություն, որի արդյունքում, որպես թիրախային խումբ շեշտադրում է կատարել մարզաբնակ դիմորդների վրա: Սակայն նմանատիպ մոտեցումը կարող է ռիսկային լինել՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի մանկավարժական բնութագիրը, մայրաքաղաքաբնակ դիմորդների նվազման արդյունքում մայրաքաղաքի դպրոցների հետագա կադրային սղությունը, ինչպես նաև ՄՈՒՀ-ի ուսանողների թվաքանակի նվազումը (2016/2017 թթ.՝ 9683 ուսանող, 2017/2018թթ.՝ 8941): Իսկ այն, որ բուհը դեռևս չի ներդրել ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմների թափանցիկության երաշխավորման հստակ մեխանիզմներ, կարող է ռիսկային լինել կոռուպցիոն դրսևորումների աճի և օբյեկտիվության ապահովման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գնահատում է ՄՈՒՀ-ի նախաձեռնությունները և կատարած աշխատանքները ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված ընթացակարգերի և մեխանիզմների մշակման գործում, ինչպես նաև ֆակուլտետային մակարդակով գործող ընթացակարգերը, սակայն գտնում է, որ մշակված գործիքներն ունեն վերանայման կարիք: Կիրառվող գործիքները որոշ դեպքերում խնդիրները բազմակողմանիորեն դուրս բերելու և հասկանալու հնարավորություն չեն ընձեռում, հարցադրումները հստակ չեն ձևակերպված կամ բնույթով ուղղորդող են: Բացի այդ, ընթացակարգերը դեռևս չեն ապահովում գործընթացում ՄՈՒՀ-ի բոլոր շահակիցների ներգրավումը: Շահակիցների հատվածական ընդգրկումը և գործիքների վավերության պակասը, տեղեկատվության համակարգման և համահամալսարանական ընթացակարգերի վերանայմանը ոչ բավարար ուշադրությունը ռիսկային են դարձնում ՄՈՒՀ-ի խնդիրների փաստացի վերահանումը, ինչպես նաև դրանց հիմքով ապացուցահեն որոշումների կայացումը: ՄՈՒՀ-ում առկա չեն ավանդական և պարտադիր խորհրդատվությունից զատ խորհրդատվության այլ ձևեր, լրացուցիչ պարապմունքները հիմնականում սահմանափակվել են անգլերենի դասընթացներով, որոնց արդիականության և շարունակականության մասին հավաստումները բացակայում են: Ուսանողներին ուղղված խորհրդատվության ձևերի բազմազանեցման պակասը վտանգում է ուսանողակենտրոն ուսուցման թիրախավորված և նպատակային իրացումը ՄՈՒՀ-ում:

Թեև ՀՊՄՀ-ում չկա վարչակազմին դիմելու կոնկրետ սահմանված ժամանակացույց, ուսանողների կարծիքով ՄՈՒՀ-ը հնարավորություն է տալիս ազատորեն դիմել վարչակազմին՝ իրենց հուզող հարցերով: Գնահատելի է լսարանային այնպիսի միջավայրի առկայությունը, որտեղ հարցեր կարող են բարձրացվել և քննարկվել դասախոս-ուսանող հարաբերությունների համատեքստում. ըստ էության, սա խնդիրների վերհանման հիմնական օղակն է ՄՈՒՀ-ում: Google Classroom-ը նույնպես հնարավորություն է տալիս քննարկել առարկայի հետ կապված հարցերը դասախոսների հետ: Այնուամենայնիվ, ուսանողների՝ բարեփոխումներին ուղղված հարցեր բարձրացնելու և քննարկելու մոտիվացիան ցածր է նաև բարեփոխումներին սեփական մասնակցության դերի չկարևորման պատճառով: Ուսանողների այսպիսի պասիվությունը, ինչպես նաև խնդիրների չկանոնակարգված քննարկումները, այդ թվում և վարչակազմի հետ, խոչընդոտում են առկա խնդիրների համակարգված ճանաչումը, դրանց փաստաթղթավորումը, հետագա վերլուծությունը և թիրախային ու հասցեագրված լուծումը:

Ուսանողների զբաղվածությանն աջակցումն իրականացվում է հիմնականում դասախոսների անձնական շփումների և պրակտիկայի ընթացքում ուսանողի կարողություններով աչքի ընկնելու շնորհիվ: ՄՈՒՀում գործող ՄՈՒՀ-գործատու կենտրոնի կապը թույլ է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակիցների հետ, անմիջականորեն չի

նպաստում ուսանողների զբաղվածությանը՝ սահմանափակվելով թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության տրմադրմամբ: ՄՈՒՀ-գործատու կենտրոնի աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմների, ինչպես նաև գործատուների, շրջանավարտների հետ ակտիվ կապի, շրջանավարտների զբաղվածության մասին հստակ և ճշգրիտ վիճակագրության բացակայությունը խաթարում է ՄՈՒՀ-ի՝ ՄԿԾ-ների արդյունավետության, շրջանավարտների զբաղվածության իրական պատկերի ընկալումը և չի նպաստում ՄՈՒՀ-ում բովանդակահեն փոփոխություններին: Չնայած հավատարմագրման նախորդ գործընթացում տրված փորձագիտական խորհրդատվությանը՝ ՄՈՒՀ-գործատու-շրջանավարտ կապի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքներ հաստատությունը դեռևս չի գրանցել: Գնահատման կարիք ունի կենտրոնի դերակատարությունը ուսանողների ուսումնառությունն ու կարիերայի կողմնորոշման գործընթացը ավելի նպատակային և ուղղորդված դարձնելու տեսանկյունից:

ՀՊՄՀ-ն մի շարք անուղղակի միջոցներ է կիրառում ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածությունն ապահովելու համար, այնուամենայնիվ ուսանողների շրջանում ցածր է այսպիսի գործունեության մեջ ներգրավվելու մոտիվացիան: Ներկայումս կիրառվող ներգրավման մեխանիզմները դեռ չեն ապահովում հենց ՄՈՒՀ-ի դրած նպատակների իրականացումը: Ավելին, ՄՈՒՀ-ը չի ուսումնասիրում այդ մեխանիզմների արդյունավետությունը: Բացի այդ, խնդրահարույց է ՈՒԳԸ գործունեության արդյունավետությունը, որի ավելի լավ համակարգված և բովանդակային գործունեությունը կարող է հանգեցնել ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՀՊՄՀ-ում ուսանողների հավաքագրման, ընդունելության մեխանիզմների առկայությունը, ՄՈՒՀ-ի կողմից ուսանողի կրթական կարիքների ուսումնասիրման քաղաքականության իրականացումը, որակյալ բովանդակությամբ ուսանողի ուղեցույցի առկայությունը, ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի առկայությունը, ուսանողների բազմապիսի կարիքների վերհանմանն ուղղված հարցումների անցկացումը, ուսանողների վերաբերյալ նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների ուղղությամբ ՄՈՒՀ-ի իրականացրած քայլերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն **բավարարում է** չափանիշ 4-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է ***բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է «ՀՊՄՀ-ի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանք զբաղեցնելու ձևերի» և «ՊԴԱ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման» մասին կանոնակարգերի հիման վրա: Վերոնշյալ կարգերում սահմանված են վարչական և ուսումնաօժանդակ տարակարգերը, ՊԴԿ-ի տարակարգերի բնութագրերը՝ սահմանելով ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության ցուցանիշները, ՊԴԿ-ի դեպքում մեկ տարակարգից մյուսին անցնելու պահանջները, ինչպես նաև նկարագրված են մրցույթների կազմակերպման և անցկացման ընթացակարգերը:

Ըստ կանոնակարգային հենքի՝ ՀՊՄՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմի հավաքագրումը կատարվում է մրցութային սկզբունքով (միջնաժամկետ 3 տարի, երկարաժամկետ 5 տարի) և/կամ հրավերով (կարճաժամկետ՝ մինչև 1 տարի): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առավել հաճախ կիրառվում է հրավերի մեխանիզմը. ռեկտորը կամ ամբիոնի վարիչները հրավիրում եմ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների: ՊԴ կազմի ընտրության գործընթացի թափանցիկության համար ստեղծված են նախադրյալներ, այդուհանդերձ, դեռևս չի գնահատվում հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը: Ավելին, մրցութային սկզբունքի հետ մեկտեղ ռեկտորի հայեցողությանը տրվում է ավելի մեծ կշիռ մրցութային հանձնաժողովի համեմատ՝ պրոֆեսորադասախոսական տարակարգերի զբաղեցման համար մրցույթի անցկացման ժամանակ: ՄՈՒՀ-ում դեռևս չի արմատավորվել նաև դասախոսական կազմի պլանավորման գործընթացը՝ ելնելով կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման հրամայականից: Պլանավորումը, մեծամասամբ, կարճաժամկետ բնույթ ունի և ավելի շատ կապված է ծանրաբեռնվածության, այլ ոչ թե ՄԿԾ-ի որկական ապահովման հետ:

ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերի հիման վրա, որտեղ սահմանված են կողմերի իրավունքներն ու պարտավորությունները: Նախատեսված են աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն, ժամավճարային: Արտաքին և ներքին համատեղությամբ աշխատակիցների համար մրցութային ընտրություն չի անցկացվում:

Համալսարանում ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության չափանիշները դեռևս բացակայում են, բայց առկա է ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորման նորմատիվային բազա: Հաշվարկված է ուսանող-դասախոս և ուսանող-ուսումնաօժանդակ կազմ քանակական հարաբերակցությունը, ինչը կազմում է 11:1 և 8:1, համապատասխանաբար: Միևնույն ժամանակ հիմնավորված չէ այս որոշման անհրաժեշտությունը և արդյունավետությունը:

ՊԴԱ և ուսումնաօժանդակ անձնակազմի հեռացման քաղաքականությունը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև ՄՈՒՀ-ի կողմից մշակված ներքին կարգապահական կանոններով: Չկան դասախոսական կազմի փոփոխությունների վերաբերյալ որոշումների կայացման բավականաչափ թափացնիկ մեխանիզմներ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Սահմանված են պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների տեղակալման չափանիշները, և յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ՊԴ կազմ ընտրելիս հիմք է ընդունվում ՄԿԾ-ների մասնագրերում սահմանված պահանջները, որոնք ձևավորվել են 2015թ. փորձագիտական զեկույցում խորհրդատվության հիման վրա: Դրանք են՝ ա)

որակավորում, որը համապատասխանում է ՄԿԾ ելքային արդյունքներին, բ) տիրապետեն կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին, գ) ունենան մանկավարժական որակներ: Սակայն ՄԿԾ-ների մանսագրերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ մասնագրերում ներկայացվող այդ պահանջները շատ ընդհանրական են, միանման կիրառելի գրեթե բոլոր կրթական ծրագրերի համար, չեն հատկորոշում կրթական ծրագրերի մոդուլների դասավանդման համար անհրաժեշտ մասնագիտական կոմպետենցիաները և, ըստ էության, կրկին չեն արտացոլում մասնագիտական առանձնահատկությունները: Ընդ որում, դրանք նույն են թե՛ բակալավրի, թե՛ մագիստրոսի կրթական ծրագրերի համար: Ավելին, դեռևս չեն տարվում աշխատանքներ պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը ՄԿԾ-ների շրջանակներում շնորհվող որակավորումներին գնահատելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ չնայած գիտական աստիճան ունեցող դասախոսների տոկոսը համապատասխանում է լիցենզավորման պայմաններին, գիտական աստիճանաշնորհում ունեցող դասախոսները հավասար բաշխվածություն չունեն ըստ առանձին մասնագիտական կրթական ծրագրերի: Բացի վերոնշյալից, մագիստրոսի որոշ կրթական ծրագրերում բավականաչափ չէ գիտական աստիճան ունեցող դասախոսների ընդգրկվածությունը (օրինակ, «Դեկորատիվ կիրառական արվեստ կրթական ծրագրում» ընդգրկված են 2 թեկնածուական աստիճան ունեցող դասախոսներ), այնինչ ՄՈՒՀ-ն ունի պահանջ, որ մագիստրոսի կրթական ծրագրերում պետք է դասավանդեն գիտական աստիճան ունեցող դասախոսներ:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

2015թ. ՀՊՄՀ-ում մշակվել է ՊԴ կազմի ինքնագնահատման և փորձագիտական գնահատման ընթացակարգ, որտեղ նկարագրված են գնահատման գործընթացը, սկզբունքները, պայմանները, գործիքները և չափանիշները, սակայն տեսանելի չէ, թե արդյունքները ինչպես են վերլուծվելու և համապատասխանաբար կիրառվելու: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների գնահատման նպատակով փաստացի կիրառվում են ուսանողական հարցումները և դասալսումները: Ուսանողական հարցումները ՄՈՒՀ-ում ներդրվել են դեռևս 2012թ.-ից, մինչդեռ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջիններս համակարգված և պարբերական բնույթ չեն կրում, որոշ մասնագիտությունների գծով շահակիցներն ընդհանրապես ներգրավված չեն եղել հարցումներում: Իսկ հարցումների արդյունքները ոչ բոլոր ամբիոններում, ոչ միշտ են քննարկվում և հաշվի չեն առնվում դասախոսների հետ պայմանագրերի կնքման ժամանակ, չնայած նախատեսված է դասախոսական կազմի ձևավորմոն կանոնակարգով: Համապատասխանաբար քայլեր չեն ձեռնարկվում վերհանված խնդիրների շտկման ուղղությամբ: Որոշ դեպքերում նույնիսկ դասախոսները տեղեկացված չեն հարցման արդյունքներից և գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացություն են կատարում ամբիոնի վարիչի կամ ուսանողների վերաբերմունքից:

ՊԴ կազմի գնահատման մեկ այլ մեխանիզմ է դասալսումները, որոնք ավանդաբար կատարվում են ամբիոնի վարիչների և առաջատար դասախոսների կողմից, սակայն ոչ բոլոր ամբիններում է առկա դասալսումների ժամանակացույց: Ոչ բոլոր ամբիոններում են դասալսումները պլանավորվում ամբողջ տարվա կտրվածքով, երբեմն դա թողնված է ամբիոնի վարիչի հայեցողությանը և ինքն է որոշում՝ ում մոտ և ինչ հաճախականությամբ իրականացնել դասալսումներ: Դասալսումների արդյունքները լրացվում են դրա համար նախատեսված մատյաններում, և կազմվում է արձանագրություն: Վերջինիս համար ՄՈՒՀ-ը մշակել է հատուկ ձևաչափ, որտեղ ըստ մշակված բաղադրիչների (առարկայի իմացություն, դասավանդման մեթոդներ, լսարանի կառավարում) նշվում են դիտարկումներ, առանձնացվում են ուժեղ կողմեր, բարելավման ուղիներ: Այդուհանդերձ ամբիոններ

կատարած այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումների արձանագրումները տարբեր ամբիոններում տարբեր մոտեցմամբ են իրականացվում և ոչ միշտ են անդրադառնում մշակված ձևաչափին: Երբեմն գործընթացը կրում է ֆորմալ բնույթ, մասնավորապես, չկային վերհանված խնդիրներ, համարյա բոլոր արձանագրություններում ձևակերպումները կրկնվում էին: Ուսումնասիրված դասալսումների մատյանում ոչ մի թերի կողմ չկար արձանագրված, բայց ամբիոնի հաշվետվության մեջ նշված էր մեթոդական խնդիրների մասին: Ամբիոնների հաշվետվություններում նշված թերությունների շտկման ուղղությամբ գործնական քայլեր ոչ միշտ են ձեռնարկվում: Բացակայում են ամբիոնի վարիչի և գործընկեր դասախոսների տրված խորհրդատվությունների մասին վկայող փաստաթղթերը, ամբիոնների համապատասխան արձանագրությունները: Այնուամենայնիվ, դասախոսական կազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ այս գործընթացը ոչ ֆորմալ կերպով իրականացվում է:

2016թ.-ին ՀՊՄՀ-ում մշակվել է ՊԴԿ վարկանիշավորման կարգը և հաստատվել է գիտխորհրդի կողմից, որի նպատակն է ուսումնամեթոդական, գիտահետազոտական, հանրային գործունեության արդյունավետության գնահատումը: 2017թ.-ին այն ՊԴԿ վարկանիշավորումը փորձարկվել է առաջին անգամ ըստ կարգի որոշ բաղադրիչների: Ըստ վարկանիշավորման կարգի հաշվի են առնվում ՊԴ կազմի հետևյալ տվյալները. որակավորման ցուցանիշներ, ուսումնամեթոդական աշխատանք, գիտական աշխատանք, ներհամալսարանական և հանրային ծառայություններ, աշխատանք ուսանողների հետ տարեկան կտրվածքով: Վարկանիշային գնահատումը նախատեսվում է իրականացվել երկու տարին մեկ անգամ: Սակայն ներկայացված չեն վարկանիշավորման գործընթացի արդյունավետության վերաբերյալ նախնական վերլուծություններ, ինչպես նաև առկա չեն բավարար հիմնավորումներ հասկանալու համար, թե ինչպես են օգտագործվում գնահատման արդյունքները դասախոսների խրախուսման և առաջխաղացման, մասնագիտական վերապատրաստումների ծրագրերի մշակման և իրականացման համար: Շահակիցները ևս համակարգն արդյունավետ չեն համարում:

Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ում դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների հուսալիության, արդյունավետության և օբյեկտիվության համակարգված վերլուծություններ չեն իրականացվել: Բացակայում են նաև իրականացված գնահատումների խորքային /պատճառահետևանքային/ վերլուծությունները: Ինչպես նաև գնահատումների արդյունքները հիմք չեն հանդիսանում դասախոսների խրախուսման և առաջխաղացման, դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների կատարելագործման համար:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՀՊՄՀ-ն դեռևս չի որդեգրել և ներդրել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման հստակ քաղաքականություն, այնինչ 2015թ. փորձագիտական զեկույցում խորհրդատվություն էր եղել՝ մշակել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագիր և կանոնակարգ, որն ուղղված կլիներ անհրաժեշտ որակավորումների վերհանմանը ՄԿԾ-ների իրականացման համար:

Դասախոսների վերապատրաստման ուղղությամբ որոշակի քայլեր իրականացվում են, մասնավորապես, ամբիոններում մշակվել է դասախոսների վերապատրաստման ժամանակացույց: Վերջին տարիներին վերապատրաստման գործընթացն ավելի արդյունավետ համակարգելու համար, այն հանձնարարվել է իրականացնել Հետազոտական կենտրոնին: ՀՊՄՀ-ում ՊԴԿ-ի վերապատրաստումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով. վերապատրաստումներ ՀՊՄՀ-ում՝ միտված դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը, դասախոսական և

ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների վերապատրաստումներ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, վերապատրաստումներ՝ միտված ՀՊՄՀ-ի կրթական ծրագրերի մշակմանը և վերանայմանը Տեմպուսի Արմենքա ծրագրի շրջանակներում, ինչպես նաև հետազոտական գործունեության զարգացմանը և միջազգայնացմանը Տեմպուսի Բուստ ծրագրի շրջանակներում: Իրականացվել է նաև վերապատրաստումների շարք՝ Google Classroom էլեկտրոնային հարթակից դասախոսների օգտվելու հմտությունները զարգացնելու ուղղությամբ: Չնայած, որ իրականացվել են ՊԴԿ վերապատրաստումներ, հիմնավորված չեն դրանց նպատակները և խնդիրները, վերապատրաստումները չեն բխում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու պահանջից և խնդիրներից:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում աշխատող դասախոսներն, առանց որևէ սահմանափակման, հնարավորություն ունեն մասնակցելու արտագնա, այդ թվում միջազգային վերապատրաստումներին: Վերապատրաստման մասին տեղեկատվությունը, հրապարակվում է համալսարանի կայքում, ուղարկվում է Google classroom հարթակի միջոցով: Նշվեցին որոշ դեպքեր, երբ ՄՈՒՀ-ը հնարավորություն է ստեղծել դասախոսների համար անվճար հաճախել լեզվի դասընթացների, որպեսզի լեզվի վատ իմացությունը խոչընդոտ չհանդիսանա միջազգային ծրագրերին դիմելու համար: Սակայն դասախոսների վերապատրաստման կամ մասնագիտական զարգացման համար հիմնականում ֆինանսական ռեսուրսներ շատ սահմանափակ են կամ չեն հատկացվում:

Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ում դասախոսական կազմի մասնագիտական որակների և դասավանդման մեթոդաբանության կատարելագործմանը միտված գործողությունները պարբերական չեն իրականացվում: Դասախոսների վերապատրաստումները հաճախ իրականացվում են վերջիններիս անհատական նախաձեռնությամբ: ՄՈՒՀ-ում և արտագնա վերապատրաստումների արդյունքում միջազգային փորձի փոխանակման և տեղայնացման դեպքերը սահմանափակ են: Կազմակերպվող վերապատրաստումների մեծ մասն իրականացվում է ՀՊՄՀ-ի դասախոսների կողմից, որոնք հանդես են գալիս որպես առաջավոր փորձի կրողներ, մինչդեռ այլ ՄՈՒՀ-երից հրավիրված դասախոսներ չկան: Բացակայում են վերապատրաստումների արդյունավետությունը և նպատակայնությունը գնահատող վերլուծություններ: Իրականացվող վերապատրաստումները հիմնականում չեն բխում դասախոսների մասնագիտական կարիքների գնահատումից և, հետևաբար, չեն կազմակերպվում վերապատրաստումների բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Դասախոսների մասնագիտական կարիքների վերհանման և վերլուծման հստակ մեխանիզմները բացակայում են և կապված չեն դասախոսական կազմի գնահատման արդյունքների հետ:

Որպես դասավանդողների մասնագիտական կատարելագործման մեկ այլ մեխանիզմ են դիտարկվում գիտաժողովների, սեմինարների և համաժողովների մասնակցությունը:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՀՊՄՀ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար կարևորում է բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմի ներգրավումը: ՄՈՒՀ-ում աշխատում է 747 դասախոս (առ 01.09.2019թ.), որոնցից 79,5%՝ հիմնական են: ՄՈՒՀ-ի հիմնական և համատեղությամբ աշխատող ՊԴԱ-ի 19-ը %՝ պրոֆեսոր է, 39,2 %-ը դոցենտ, 35,1 %-ը դասախոս, 6,7%-ը ասիստենտ: Հատկանշական է, որ 2017թ-ի նկատմամբ գիտական կոչում ունեցող դասախոսների քանակը, մասնավորապես, դոցենտի պաշտոնում աճել է:

ՄՈՒՀ-ում աշխատում են հրավիրյալ դասախոսներ թե այլ ՄՈՒՀ-երից, թե գործատուներ: Կրթական ծրագրերում պրակտիկ բաղադրիչի ներդրման նպատակով արտաքին համատեղության կարգավիճակով հրավիրվում են նաև պրակտիկ

գործունեություն ծավալող մասնագետներ. գործատու դասախոսների ներգրավվումն ունենում է իր դրական ազդեցությունը, քանի որ վերջիններս առավել մոտ և քաջատեղյակ են աշխատաշուկայի պահանջներին:
ՀՊՄՀ-ում դեռևս բացակայում է դասախոսական կազմի կայունության ապահովման հստակ քաղաքականությունը: ՄՈՒՀ-ում բացակայում են՝ ըստ հետազոտության, դասավանդման և վարչական ոլորտներում իրականացրած աշխատանքների, պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության վերլուծություն, չնայած որ ՄՈՒՀ-ում դասախոսների ծանրաբեռնվածությունը բավական մեծ է, և ոչ միշտ է արտացոլում դասախոսների ամբողջ բեռնվածությունը: ՊԴ կազմի բեռնվածությունը որոշվում է ըստ տարակարգերի: Տարիներ շարունակ դասախոսների ծանրաբեռնվածությունը կազմել է 1080 ժամ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ այս ուսումնական տարում՝ բողոքների արդյունքում բեռնվածությունը փոքր ինչ նվազել է: Այնուամենայնիվ, տարբերությունն էական չէ, և բացի լսարանային ժամերից և ուսանողի հետ աշխատանքից մասնագիտական գործունեության այլ ձևերի, օրինակ՝ որակյալ հետազոտության համար փաստացիորեն ժամանակ չի մնում: Հարկ է նշել, որ դասախոսների ճնշող մեծամասնություն դասավանդում է 10 առարկա, կան դեպքեր, երբ առարկաների թիվը հասնում է 16-ի: Տնական ժամանակ դասախոսները կատարել են աշխատանք Google classroom հարթակում, որի համար չեն վարձատրվել: Հարթակում աշխատանքը բավականին մեծ ժամ է կազմել, քանի որ որոշ դասընթացներում նախատեսվում էր հանձնարարություն և գնահատում յուրաքանչյուր ուսանողի համար: Google classroom-ի ակտիվության պահանջը նվազեցվել է, հարթակում ծախսվող ժամանակը մասնակիորեն արտացոլվել է ՊԴ կազմի բեռնվածությունում:

Բացակայում են նաև ընթացակարգերը կարճաժամկետ անաշխատունակության դեպքում դասախոսների փոխարինման մեխանիզմների վերաբերյալ: Ինքնավերլուծությունում ներկայացված են ՊԴԿ-ի աշխատանքից ազատման և ընդունման տվյալների դինամիկան, սակայն բացակայում են կատարված վերլուծություններ աշխատանքից ազատման պատճառների վերաբերյալ: Ներկայացված չէ ըստ ֆակուլտետների ՊԴԿ-ի դինամիկայի տարբերակված վերլուծություն՝ հասկանալու համար, թե որտեղ կա հոսունության խնդիր, և ինչ է պլանավորվում հաստատությունը այդ ուղղությամբ:

ՀՊՄՀ-ում ՊԴ կազմի միջին տարիքը ըստ ֆակուլտետների տատանվում է 44-ից մինչև 58 միջակայքում, ընդ որում, 51 ամբիոնից 30-ը մտնում են բարձր ռիսկայնության խմբում (միջին տարիքը տատանվում է 51-65 տարեկան), 14 ամբիոն միջին ռիսկայնության խմբում են (միջին տարիքը 46-50 տարեկան), և միայն 7 ամբիոնում դասախոսների միջին տարիքը կազմում է 38-45 տարեկան: ՄՈՒՀ-ը կարևորում է և նախաձեռնել է հետամուտ լինել սերնդափոխության գործընթացին, ուսման տարիներից ուղղորդել խոստումնալից ուսանողներին հետբուհական կրթություն ստանալ՝ ներառելով նրանց գիտահետազոտական աշխատանքներում, գրավիչ դարձնելով մանկավարժական-գիտական գործունեությունը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ում դեռևս չեն կիրառվում ինստիտուցիոնալ մակարդակում ՊԴԱ-ի մասնագիտական առաջխաղացմանն ուղղված հստակ քաղաքականություն և ընթացարկարգեր: ՄՈՒՀ-ում դասախոսի առաջընթացի տակ հիմնականում հասկանում են նրա մասնագիտական վերապատրաստումը: Բացակայում են դասախոսների մոտիվացիան բարձրացնելու մեխանիզմներ և խրախուսման հստակ քաղաքականություն կամ ընթացակարգեր: Այնուամենայնիվ, գործում են խրախուսման որոշ ձևեր. ինչպես օրինակ՝ դասախոսների գիտական հոդվածների անվճար հրապարակում ՄՈՒՀ-ի պարբերականներում և միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների դեպքում գումարի

փոխհատուցում: Ընդ որում, հրապարակումների թվի աճը գրանցվել է նաև հենց այս խրախուսման մեխանիզմի կիրառման արդյունքում: Մեկ այլ խրախուսման մեխանիզմ է հանդիսանում դասախոսական կազմի շարժունության հնարավորությունների ընձեռումը, չնայած որ բացակայում են շարժունությունը խթանող և խրախուսող հստակ մեխանիզմները, իսկ շարժունությանը մասնակցած դասախոսների թիվը բավական քիչ է ՄՈՒՀ-ում աշխատող դասախոսների համակազմում:

ՊԴԱ վարկանիշավորման կարգում նշվում է, որ վարկանիշային գնահատման արդյունքները կիրառվելու են դասախոսների խրախուսման և առաջխաղացման համար: Մինչդեռ այս առումով որևէ փաստ չի ներկայացվել փորձագիտական խմբին: Ըստ ներկայացված տվյալների՝ 2015թ.-ից ի վեր չկա նաև աշխատավարձի բարձրացում, իսկ ֆինանսական միջոցներով խրախուսման դեպքերը խիստ սահմանափակ են: ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացնում նաև կիրառվող խրախուսման մեխանիզմների արդյունավետության գնահատում:

ՀՊՄՀ-ում ՊԴ կազմի զարգացման և կայունության ապահովման ճանապարհն է ամբիոնների համալրումը լավագույն շրջանավարտներով՝ ուղղորդելով նրանց հետբուհական կրթական ծրագրեր: Այս ուղղությամբ կատարված են որոշակի քայլեր, մասնավորապես, 2015թ. մշակվել է «ՀՊՄՀ-ի սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը և միջազգային հետազոտությունների իրականացումը խրախուսելու քաղաքականությունը»: ՀՊՄՀ-ում հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ կադրերի ներգրավմանը գիտահետազոտական աշխատանքին և առաջխաղացմանը: Այս առումով իր դերակատարումն է ունեցել 2015թ.-ի փորձագիտական զեկույցի խորհրդատվությունը, որի հիման վրա ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել երիտասարդների առաջխաղացման ուղղությամբ: Վերջին երեք տարիներին աճել է դոցենտի գիտական կոչում ունեցողների թիվը, և այդ աճի տեսակարար կշռի մեջ, ըստ ՀՊՄՀ-ի տվյալների, ակնհայտ մեծամասնություն են կազմում երիտասարդ մասնագետները:

Տեսանելի է նաև, որ կանանց և տղամարդկանց միջև կա անհավասարակշռություն դոցենտի պաշտոնից պրոֆեսորի պաշտոնին անցնելու դեպքում: Ըստ ներկայացված տվյալների կին դոցենտների թվաքանակը միջինում երկու անգամ ավել է տղամարդկանց թվից, իսկ պրոֆեսորի պաշտոնում կանանց թիվը եռակի անգամ փոքր է, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ բացակայում են գենդերային առումով զգայուն մեխանիզմները կանանց առաջխաղացման համար:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Վարչական և ուսումնաօժանդակ կազմի իրավունքները, պարտականություններն ու գործառույթները նկարագրված են «ՀՊՄՀ-ի ստորաբաժանումների տեսակները, աշխատատեղերի տարակարգերը և դրանք զբաղեցնելու ձևերի» կանոնակարգում: Ինչպես նաև մշակված են որոշ վարչական և ուսումնաօժանդակ պաշտոնների համար անձնագրեր:

Վերջին տարիներին աշխատաքներ են իրականացվել վարչական և և ուսումնաօժանդակ աշխատակազմի վերապատրաստման ուղղությամբ, մասնավորապես, կազմակերպվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝ հաղորդակցում և կոնֆլիկտների կառավարում, կրթական օրենսդրություն, տնտեսագիտություն և այլ թեմաներ, ինչպես նաև իրականացվել են առցանց կրթության ուղղությամբ վերապատաստումներ: Չի իրականացվել վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանում: Միևնույն ժամանակ որևէ հիմքեր չկան փաստելու համար, որ իրականացված վերապատրաստումները արդյունավետ են եղել:

Վերջին տարիներին վարչակազմում ընդգրկվել են միջազգային ծրագրերի, կրթության որակի փորձագետներ, ոլորտի երիտասարդ նորարարական մտածողությամբ

մասնագետներ: Նախորդ հավատարմագրման խորհրդատվություններին համապատասխան մշակված բարելավման գործողությունների պլանի հիման վրա բարելավվել է համալսարանի վարչական ստորաբաժանումների հաշվետվողականության մեխանիզմը:

Վարչակառավարչական համակարգում ևս իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես կրճատվել է Ռազմավարական պլանավորման վարչությունը, որի գործառույթները դրվել են Կրթական բարեփոխումների վարչության վրա, որը առանց այդ էլ իրականացնում է գործողությունների լայն շրջանակ: Ինչպես նաև կրճատվել է ներքին աուդիտի բաժինը, չնայած որ ներքին շահակիցները վերջինիս գործառույթն արդյունավետ են գնահատում: Այդուհանդերձ, իրականացված փոփոխությունների վերաբերյալ ՄՈՒՀ-ի կողմից հստակ հիմնավորումներ չներկայացվեցին փորձագիտական խմբին: ՄՈՒՀ-ը չի իրականացվում վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ ՀՊՄՀ-ն ապահովված է համապատասխան որակավորումներ և մասնագիտական անհրաժեշտ որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով:

ՀՊՄՀ-ի աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևերի՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն, ժամավճարային առկայությունը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ներգրավել մասնագիտական ոլորտի առաջատար մասնագետներ, և դրանով իսկ լուծել ՄԿԾ-երի դասախոսական կազմի՝ որակյալ կադրերով ապահովման խնդիրը: Դիտարկելով ՊԴ-ի կազմը արտացոլող փաստաթղթերը, ինչպես նաև հանդիպելով ՊԴԿ-ի ներկայացուցիչների հետ, կարելի է փաստել, որ կրթական ծրագրերը մեծամասամբ սպասարկում են համապատասխան որակավորումներ, գիտական կոչում և աստիճան ունեցող դասախոսներ, իրենց ոլորտի անվանի մասնագետներ: Այդուհանդերձ հարկ է նշել, որ դասախոսական կազմի կողմից դասավանդվող առարկաների բաշխման քաղաքականությունը անհասկանալի կերպով է իրականացվում, մասնավորապես, կան դասախոսներ, ովքեր, չունենալով գիտական կոչում, դասավանդում են շուրջ 10 առարկա, մինչդեռ կոչում ունեցող դասախոսները դասավանդում են 1 կամ 2 առարկա:

ՄԿԾ-ների մասնագրերում նկարագրված մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները շատ ընդհանրական են: Ավելին, դրանք նույն են բակալավրիատի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար բոլոր մասնագիտությունների դեպքում և հիմնականում առնչվում են տվյալ ոլորտում մասնագետների ընդհանուր որակավորմանը և մանկավարժական փորձին: Փորձագիտական խումբը գտնում է, որ այսպիսի ընդհանրական մոտեցումը կրթական ծրագրեր սպասարկող ՊԴԿ-ի պահանջներին չի կարող երաշխավորել անհրաժեշտ կոմպետենցիաներ ունեցող մասնագետների ընտրություն: Իսկ ոչ մրցութային կարգով ՊԴ կազմի համալրումը կարող է ազդել ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունների որակի և գործընթացի թափանցիկության և օբյեկտիվության վրա: Այս ամենի հետ մեկտեղ, այն փաստը, որ ռեկտորին տրվում է առանձին հայեցողականություն մրցույթային հանձնաժողովի որոշումը չեղարկելու առումով, խախտում է մրցութայնության սկզբունքը և կարող է ստեղծել կոռուպցիոն ռիսկերի հնարավորություններ: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ ՀՊՄՀ-ի վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի պլանավորման, հավաքագրման, ընտրության և հեռացման մեխանիզմների արդյունավետությունը բավարար վերլուծված և գնահատված չեն բուհի ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման տեսակետից: Այս իրողությունը կարող է հանգեցնել ոչ բավարար կոմպետենցիաներով օժտված վարչական, ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրմանը, ինչը բնականաբար բացասաբար

կանդրադառնա կառավարման արդյունավետության և ՄԿԾ-երի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀՊՄՀ-ն կիրառում է պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, ՀՊՄՀ-ում ՊԴԿ-ի պարբերական գնահատման համար մշակված բազմագործոն համակարգի ամբողջովին ներդրված և կիրառված չլինելը, վարկանիշավորման առաջին փուլի վերաբերյալ վերլուծությունների բացակայությունը, փորձագիտական խմբի համար դժվար գնահատելի է դարձնում գործընթացի նպատակայնությունն ու արդյունավետությունը: Ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքները ուսումնասիրելուց հետո, կարելի է փաստել, որ ստացված տվյալները չեն կարող համարվել հուսալի, քանի որ մեթոդաբանությունը հստակ չէ, տվյալների հավաքագրման մեխանիզմները սահմանափակ են, իսկ վերլուծության սկզբունքն՝ անհասկանալի /կան տվյալներ, որոնք նույնն են թե առկա համակարգի, թե հեռակա համակարգի համար/: Որպես այդպիսին գնահատումների խորքային վերլուծություններ չկան, որոնք հնարավորություն կտային պարզել հիմնական ձեռքբերումները և թերացումների պատճառները: Այն, որ դեռևս չեն կիրառվում ինքնագնահատման կամ գործընկերային գնահատման մեխանիզմները, դժվարացնում է գործընթացի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալը: Բազմակողմանի գնահատման կիրառումը հնարավորություն կտար որոշումների կայացումը հիմնավորել հավաստի տվյալներով: Ի լրումն, հաշվի առնելով այն, որ բացահայտված թերությունների վերացման համար հիմնականում չեն իրագործվում բարելավման համապատասխան միջոցառումներ, իսկ գնահատման արդյունքները հիմք չեն հանդիսանում որոշումների կայացման համար, ռիսկի տակ է դրվում դասավանդման որակի բարելավումը: Վերոնշյալը կարևոր է, քանի որ ըստ վարկանիշավորման կանոնակարգի 2019 թ. պետք է մեկնարկի վարկանիշավորման երկրորդ փուլը, իսկ առաջին փուլի արդյունքները կարող են նպաստել գնահատման գործընթացի բարելավմանը:

ՀՊՄՀ-ն կարևորում է մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը, սակայն այս ուղղությամբ հատկացվող թե՛ ռեսուրսներն են սահմանափակ (բյուջեից հատկացումներ գրեթե չկան), թե՛ կատարված աշխատանքները: Իրականացված վերապատրաստումները հիմնականում դասախոսական կազմի սեփական նախաձեռնությամբ են տեղի ունենում: Չնայած դասախոսները հնարավորություն ունեն մասնակցելու միջազգային վերապատրաստումների, ՄՈՒՀ-ի կողմից առաջադրվել են վերապատրաստումների թեմաներ և մշակվել է ժամանակացույց, այս ուղղությամբ լուրջ ձեռքբերումներ չկան: Փորձագիտական խմբին չեն ներկայացվել փաստեր, որ վերապատրաստումները հիմնված են ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխան ՊԴԿ-ի կարիքների վերհանման, մասնագիտական և ուսումնամեթոդական գործունեության արդյունքների վերլուծության վրա: Սա նշանակում է, որ այս գործընթացը բավարար չափով համահունչ չէ ռազմավարական ծրագրում նախանշված մարդկային ռեսուրսների կառավարում նպատակին և դրան առնչվողխնդրին, այն՝ «շարունակել համալրեր ՊԴ կազմը կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին համահունչ»:

Առավել մտահոգիչ է դասախոսական կազմի ծանրաբեռնվածության խնդիրը. այն բավականին մեծ է, և հաճախ չի արտացոլում դասախոսների ամբողջ իրական բեռնվածությունը, ինչը ռիսկային կարող է լինել ՊԴ կազմի կայունության ապահովման տեսանկյունից: Հարկ է նաև նշել, որ այս պահին զգալի հոսունության խնդիր ՀՊՄՀ-ն չունի, չնայած որ ծանրաբեռնվածությունն ու վարձատրությունը համահունչ չեն և շահակիցների մոտ դժգոհության պատճառ են հանդիսանում: Ոչ պակաս մտահոգիչ է միևնույն դասավանդողի կողմից վարվող դասընթացների մեծաքանակությունը (10-17), ինչը մի կողմից կարող է ազդել դասավանդման որակի վրա, մյուս կողմից՝ վտանգել կրթական գործընթացների բնականոն ընթացքը: Սա նշանակում է, որ մեկ դասախոսի դուրս գալու

կամ առողջական խնդիրներ ունենալու դեպքում վտանգվում է ՄԿԾ-ների իրականացումը: Քանի որ ՄՈՒՀ-ում չի իրականացվում մարդկային ռեսուրսների հստակ պլանավորում և բացակայում է մարդկային ռեսուրսների պահպանման քաղաքականությունը, խնդրի ռիսկայնությունը մեծանում է:

Հստակ է ՀՊՄՀ-ի առաջնահերթությունը սկսնակ դասախոսների և երիտասարդ կադրերի առաջխաղացման հարցում: Այն փաստերի հիման վրա, որ վերջին երեք տարում ավելացել է երիտասարդ դասախոսների քանակը, ինչպես նաև վարչական կազմում պատասխանատու պաշտոններ սկսել են զբաղեցնել երիտասարդ մասնագետներ, կարելի է ասել, որ երիտասարդ կադրերի առաջխաղացումը սկսել է կարևորվել ՄՈՒՀ-ի ղեկավարության կողմից:

ՄՈՒՀ-ում գործում են դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի խրախուսման որոշ մեխանիզմներ, սակայն դրանք պետք է զարգացնել աշխատակիցների մասնագիտական առաջընթացին նպաստելու նպատակով: ՄՈՒՀ-ը պետք է ավելի շատ խրախուսի տեղական և միջազգային հանդեսներում՝ դասախոսների, գիտաշխատողների հետազոտության արդյունքների հրապարակումը: Դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական, գիտահետազոտական և մանկավարժական կատարելագործման, ինչպես նաև նրանց առաջընթացի հետ կապված կարիքները հոգալու համար հատկացվող ֆինանսական ռեսուրսները բավարար և կայուն չեն, ինչը կարող է վտանգել անձնակազմի կայունությանը և նպաստել կադրերի հոսունությանը: ՀՊՄՀ-ն պետք է փնտրի այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ և ջանքեր գործադրի ֆինանսական հոսքերի բազմազանեցման ուղղությամբ, հակառակ դեպքում մարդկային ռեսուրսների կորուստը վտանգի տակ կարող է դնել ոչ միայն ՄԿԾ-ների, այլև ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների պլանավորված ժամկետներում իրականացումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՀՊՄՀ-ի՝ անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական, այդ թվում ոլորտի մասնագետներով և գործատուներով, և ուսումնաօժանդակ կազմով ապահովվածությունը, ՊԴԿ-ի պարբերական գնահատման համար ՀՊՄՀ-ում մշակված և հիմնականում գործող համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի առկայությունը, նախորդ փուլի հավատարմագրումից հետո երիտասարդ կադրերի առաջխաղացման կարևորումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն **բավարարում է** չափանիշ 5-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է ***բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀՊՄՀ-ի հետազոտական գործունեության հավակնությունները և հետաքրքրությունները սահմանված են ՌԾ-ում՝ «Արդիական հետազոտություն և նորարարություն» խորագրի ներքո: Համաձայն ռազմավարական ծրագրի՝ հետազոտությունը համարվում է ՄՈՒՀ-ի գերակայություններից մեկը և ՀՊՄՀ-ն, ձգտելով զարգացնել իր գիտահետազոտական

գործունեությունը, իր առջև խնդիր է դրել աստիճանաբար դառնալ գիտահետազոտական համալսարան: Այդ նպատակին հասնելու համար ՀՊՄՀ-ի գերակա խնդիրներից են «գիտահետազոտական, գիտահրատարակչական գործունեության արդյունավետությունը, գիտական կադրերի պատրաստումը, մտավոր գործունեության արդյունքների փոխանցումը»: Միևնույն ժամանակ, հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի սահմանած նպատակները և խնդիրները հավակնոտ են և շատ ընդհանրական, չեն արտացոլում ՄՈՒՀ-ի կոնկրետ հետազոտական հետաքրքրությունները և առաջնահերթությունները, չնայած որ նախորդ փորձագիտական զեկույցում ևս նշվել էր հետազոտական գործունեության գերակա առաջնահերթությունների ամրագրման անհրաժեշտությունը: Հստակ մեխանիզմներ դեռևս չեն գործարկվում հետազոտական բուհ դառնալու անցումը բարեհաջող ապահովելու համար: ***Շահակիցների ընկալումներում ամբողջովին արմատացած չէ ՀՊՄՀ-ն որպես գիտահետազոտական բուհ ընկալելու միտումը:***[30]

Հաճախ նախանշված գործողությունները շատ լայն են, ոչ իրատեսական նախանշված ժամկետի համար, իսկ ԳԱՑ-երը՝ ոչ չափելի: ՄՈՒՀ-ում, բացի ՌԾ գործողությունների պլանից, բացակայում են հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու կոնկրետ գործողություններն ու պահանջվող ռեսուրսները, որոնց համապատասխան կմշակվեր և կծավալվեր ամբիոնների գիտական գործունեությունը:

Գիտահետազոտական գործունեության իրականացմանը, զարգացմանն ու կայունության ապահովմանն ուղղված ֆինանսական հատկացումներն, ըստ բյուջեի, փոքր են հետազոտական համալսարան դառնալու հավակնությունների տեսակետից: Բյուջեով նախատեսված գիտության և հետազոտության ծախսերը կազմել են են 2018թ.-ին 4,25%, 2017թ.-ին 3,17%, 2016թ. 4,61%, սակայն հստակեցված չէ, թե այս գումարները ռազմավարական ծրագրի որ խնդիրների և գործողությունների համար են նախատեսված: Միայն 2019-2020թթ. դրամական ելքերի նախահաշվի փաստաթղթում է տեսանելի գումարների բաշխումը ըստ ՌԾ-ի հետազոտություն և նորարարություն ուղղության որոշ խնդիրների: Մասնավորապես, ՀՊՄՀ-ի կողմից ֆինանսավորվել է 2 գիտական ծրագիր. «Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիա» և «Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիա»: Հիմնավորված չէ, թե ինչու հատկապես այս լաբորատորիաներին է տրվել առաջնահերթություն, որքանով են այս ուղղությունները առաջնահերթ համարվում ՀՊՄՀ-ի համար գիտական գործունեությունը զարգացնելու առումով: Մինչդեռ, նախորդ փորձագիտական զեկույցում որպես խորհրդատվություն նշվում էր հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող տեսական և կիրառական հետազոտությունների շրջանակի ընդլայնման և համակարգման անհրաժեշտության մասին: Մյուս կողմից, համաձայն տրամադրված փաստաթղթերի, համալսարանը հատկացնում է ֆինանսական միջոցներ՝ գիտաժողովների, լաբորատորիաների համար սարքավորումների և նյութերի ձեռքբերման, գրադարանի մասնագիտական գրականության համալրման համար:

ՄՈՒՀ-ը միայն մասնակիորեն է առաջնորդվել հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվություններով՝ ՄՈՒՀ-ի ՌԾ-ում ավելացնելով և շեշտադրելով հետազոտական բաղադրիչը, սակայն չի հատկորոշել գիտահետազոտական գործունեության կոնկրետ ուղղությունները:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

---

[30] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է. «Շահակիցները ևս ՄՈՒՀ-ն ընդունում են որպես մանկավարժական կադրեր պատրաստող ուսումնական հաստատություն, ոչ թե որպես գիտահետազոտական հաստատություն»:

Հետազոտության ոլորտում ՀՊՄՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող երկարաժամկետ ռազմավարությունը սահմանված է ՌԾ-ում: ՀՊՄՀ-ի միջնաժամկետ ծրագրերը հիմնականում առնչվում են ՀՀ ԿԳՆ Գիտական կոմիտեի կողմից բազային և թեմատիկ ֆինանսավորմանը: Համաձայն ներկայացված տվյալների գրանցվում է վերոնշյալ ծրագրերի աճ վերջին տարիների ընթացքում:

Հարկ է նշել, որ ֆակուլտետային կամ ամբիոնային հետազոտական ուղղությունները, որոնք պետք է համահունչ լինեն ՌԾ-ին, հստակ սահմանված չեն: Հետազոտությունները հիմնականում իրականացվում են անհատ դասախոսների նախաձեռնությունների շրջանակներում: Առանձին դեպքերում պրոֆեսորադասախոսական կազմի անդամները ներգրավված են ամբիոնների և ստորաբաժանումների մակարդակով իրականացվող հետազոտական թեմաներում: ***Ամբիոնների տարեկան աշխատանքային պլաններից կարելի է միայն ենթադրել, թե որոնք են հիմնական հետազոտական ուղղությունները***,[31] իսկ գործողությունները ձևակերպված են շատ ընդհանրական, առանց չափելի վերջնարդյունքների: Յուրաքանչյուր ամբիոնի հաշվետու տարում կատարված աշխատանքները ներառվում են ՀՊՄՀ-ի տարեկան հաշվետվությունների մեջ, սակայն դրանցում հստակ չեն երևում ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների կապը ՄՈՒՀ-ի առաջնահերթությունների հետ:

Թեպետ համալսարանում իրականացված հետազոտական ծրագրերի մասին ներկայացված փաստաթղթերում առկա են հետազոտական աշխատանքների արդյունքների որակական և վերաբերյալ քանակական տվյալներ, բացակայում են այդ հետազոտական նախագծերի ձեռքբերումների վերաբերյալ վերլուծությունները, մասնավորապես, թե որքանով են դրանք նպաստում ՀՊՄՀ-ի ռազմավարության իրականացմանը, որքանով են հետազոտության արդյունքները ներառվում ուսումնական գործընթացի մեջ, որքանով են այդ արդյունքները հասանելի ներքին և արտաքին շահակիցներին (չնայած որ 2015թ. փորձագիտական զեկույցում որպես խորհրդատվություն առաջարկվել է մշակել և կիրառել գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման գործիքներ, առաջընթացը չափելու մեխանիզմներ): Հարկ է նշել, որ բացակայում է նաև գիտահետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերլուծություն՝ ըստ համալսարանի հետազոտական ուղղությունների և ամբիոնների: Գիտահետազոտական կենտրոնի հաշվետվությունները, ինչպես նաև ՌԾ-ի գործողությունների պլանի իրականացման վերաբերյալ ընթացիկ 2017-2018թթ. հաշվետվությունը ընդամենը կատարողականի փաստում է և ավելի շատ մեխանիկական, քան բովանդակային վերլուծական բնույթ ունի:

Փորձագիտական այցի ընթացքում ներկայացվել է նաև համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին գիտության գծով պրոռեկտորի զեկույցը, որը, սակայն, չի պարունակում որակական կամ քանակական տվյալներ իրականացված գործընթացների արդյունավետության վերաբերյալ, այլ առաջադրում է բազային և թեմատիկ հետազոտական ծրագրերի թեմաները, միջոցառումները, հրապարակումների քանակը և առաջարկություններ գործընթացը բարելավելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ չի իրականացվում միջնաժամկետ և կարճաժամկետ հետազոտական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում, ինչի անհրաժեշտությունը տեսել էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը:

---

[31] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է. «Չնայած ամբիոնների տարեկան աշխատանքային պլաններում նախանշվում են հետազոտական ուղղություններ. . .»

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության համակարգումը իրականացվում է կենտրոնացված՝ Գիտահետազոտական կենտրոնի կողմից: Գիտահետազոտական կենտրոնը որպես կենտրոնացված կառույց իրականացնում է բազմազան գործառույթներ և ծրագրեր (նորմատիվ փաստաթղթերի և հայեցակարգերի մշակում, խորհրդատվություններ, վերապատրաստումներ, ասպիրանտական կրթության համակարգում, տեղեկատվական-վերլուծական աշխատանք և այլն): Գիտահետազոտական կենտրոնը իր գործունեության մեջ առաջնորդվում է ՌԾ-ում նախանշված գիտահետազոտական ոլորտի խնդիրներով: Փորձագիտական խումբը դժվարանում է գնահատել Կենտրոնի պլանավորման գործընթացը, քանի որ Կենտրոնի կողմից տարեկան պլաններ փորձագիտական խմբին չներկայացվեցին: Ինքնավերլուծության մեջ ներկայացված են Կենտրոնի տարեկան հաշվետվությունները, որտեղ նշվում են կատարողականները ըստ ՌԾ-ի արդիական հետազոտություն և նորարարություն նպատակի գործողությունների պլանի, սակայն նշվում է միայն կատարվածի կամ չկատարվածի փաստը: Առկա չեն կատարված գործողությունների՝ որակական և քանակական տվյալներով հիմնավորված արդյունավետության վերլուծություններ:

Թեև ՄՈՒՀ-ն ունի գիտահետազոտական գործունեությունը համակարգող կառույց, դեռևս ներդրված չեն հետազոտությունների իրականացմանը և դրանց զարգացմանը միտված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ փաստացի, առ այսօր ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացումն ու նորարարությունը խթանող մեխանիզմներ չեն գործարկվել: Ինչպես ասպիրանտական կրթության կազմակերպման շրջանակներում իրականացվող հետազոտությունների, այնպես էլ ՄՈՒՀ-ի հետազոտությունների արդյունքները դեռևս չեն առևտրայնացվում, չնայած որ բուհը նախորդ փորձագիտական զեկույցի խորհրդատվություններին համապատասխան բարելավման գործողությունների պլանով հանձնառել էր մշակել գիտական արդյունքի առևտրայնացման մեխանիզմներ և կատարելագործել առևտրայնացման գործընթացը: Գործատուների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ գրեթե բացակայում են նաև կիրառական հետազոտությունները վերջիններիս հետ համագործակցության շրջանակներում:

Հետազոտության զարգացումն և նորարության խթանումը ՄՈՒՀ-ը տեսնում է լաբորատորիաների ստեղծմամբ (շուրջ 13 լաբորատորիաներ են հիմնվել): Այդուհանդերձ, հատկապես բնագիտական ուղղվածություն ունեցող լաբորատորիաները բարելավման և նորացման կարիք ունեն: Որպես հետազոտական գործունեության արդյունք դիտարկվում է դասախոսների կողմից հոդվածների հրապարակումը (որը, հիմնականում տեղի է ունենում դասախոսների անձնական նախաձեռնությամբ):

ՀՊՄՀ-ում գործում է ուսանողական գիտական ընկերություն, սակայն ուսանողների կողմից կատարվող հետազոտությունները ու հետաքրքրությունները թույլ են կապակցվում ՀՊՄՀ-ի պրոֆիլի հետ: Ուսանողների հետազոտական աշխատանքի խթանման և զարգացման քաղաքականություն ՄՈՒՀ-ը որպես այդպիսին չի իրականացնում: Ուսանողների կողմից հրապարակումները սահմանափակ են: Ուսանող – դասախոս համատեղ հետազոտության լավ փորձեր կան Հատուկ մանկավարժության և հոգեբանության մասնագիտությունների շրջանակներում, որի տարածումը համահամալսարանական մոտեցում չի ստացել: ***Նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խումբը ևս կարևորել էր դասախոս-ուսանող հետազոտությունների ընդլայնումը և առաջարկել էր որպես խորհրդատվություն: Խորհրդատվությանն արձագանքելու նպատակով բուհը որոշ քայլեր ձեռնարկել է հետազոտությունների ծավալն ընդլայնելու նպատակով: Չնայած նկատելի է հաշվետու ժամանակաշրջանի համար գրանցված ցուցանիշների դրական***

դինամիկան, արդյունավետությունը ընդհանուր ցուցանիշը ցածր է բուհի ուսանողական ողջ հանակազմի թվի համեմատ[32]:

ՀՊՄՀ-ն մշակել է հետևյալ կանոնակարգային փաստաթղթերը հետազոտական գործունեության արդյունավետության մեծացման համար. «Սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը և միջազգային հետազոտությունների իրականացումը խրախուսելու քաղաքականությունը», «Ցիտման նորմերի և գրագողության մասին կանոնակարգը»: Սակայն փորձագիտական խմբին չեն ներկայացվել վկայություններ այս կարգերի գործուն լինելու վերաբերյալ: Ավելին, ՀՊՄՀ-ում դեռևս չկան ակադեմիական ազնվությունը երաշխավորող համընդգրկուն մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ի ֆինանսական օժանդակությամբ հրատարակվում է 7 պարբերական: Այդ պարբերականներից 3-ը ներառված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի հանդեսների ցանկում: Որպես ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմ ՄՈՒՀ-ը դիտարկում է ՊԴ կազմի գիտական գործունեության արդյունքների անվճար տպագրման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, ՀՊՄՀ-ն կարևորում է դասախոսների վարկանիշային գնահատման մեջ միջազգային գիտական շտեմարաններում, օրինակ՝ РИНЦ և SCOPUS-ում տպագրվելու փաստը, չնայած որ վարկանիշավորման համակարգը դեռևս փորձարկման փուլում է, և արդյունքները դեռ չեն կիրառվել դասախոսների առաջխաղացման և խրախուսման համար: ՀՊՄՀ-ն հանձնառում է աջակցել դասախոսներին տպագրվել միջազգային շտեմարաններում ընդգրված ամսագրերում՝ փոխհատուցելով տպագրման համար անհրաժեշտ ծախսերը:

ՀՊՄՀ-ում միջառարկայական, միջֆակուլտետային, միջամբիոնային հետազոտությունները խիստ սահմանափակ են: Լավ փորձ են «Հատուկ կրթության» ՄԿԾ-ի շրջանակներում իրականացվող միջամբիոնային ուսումնասիրությունները, որը, սակայն, ՄՈՒՀ-ում տարածված պրակտիկա չեն: Բացակայում է կուտակած փորձի փոխանակումը ամբիոնների միջև՝ համաչափ զարգացումն ու ձեռքբերումների տարածումը երաշխավորելու նպատակով:

Հարկ է նաև նշել, որ որպես մանկավարժական կադրեր պատրաստող ամենախոշոր ուսումնական հաստատություն, ***հանրակրթությանը կամ միջին մասնագիտական կրթության արդի հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունները համակարգված չեն***,[33] չնայած որ նախորդ հավատարմագրման շրջանակներում փորձագիտական խումբը խորհուրդ էր տվել ընդլայնել և համակարգել հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող տեսական և կիրառական գիտական հետազոտությունների շրջանակը, այս խորհրդատվությունը արտացոլված չէր 2015թ.-ին ՄՈՒՀ-ի կողմից հաստատված բարելավման գործողությունների պլանում:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՀՊՄՀ-ում առանձին ֆակուլտետների, ամբիոնների մակարդակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Ստեղծվել է միջազգայնացման գծով պատասխանատուների ինստիտուտ ֆակուլտետների մակարդակում: Նկարագրված է միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալի պաշտոնի անձնագիրը: Միևնույն ժամանակ ներկայացված չեն կոնկրետ օրինակներ, թե ինչ ձեռքբերումներ է

---

[32] Փոփոխվել է համալսարանի ներկայացուցիչների և փորձագետների միջև քննարկման արդյունքում: Նախկին տարբերակում եղել է ... «ՄՈՒՀ-ը բավարար քայլեր չի ձեռնարկել հետազոտությունների ծավալի աճի համար՝ ընդլայնելու դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը դրանցում, չնայած, որ նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խումբը կարևորել էր այդ հարցը և առաջարկել էր որպես խորհրդատվություն»:

[33] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների հիման վրա: Նախկին տարբերակում եղել է. «... սակավաթիվ են հանրակրթությանը կամ միջին մասնագիտական կրթության արդի հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված հետազոտությունները»:

գրանցել այս կամ այն ֆակուլտետը գիտահետազոտական գործունեության միջազգայնացման առումով:

ՄՈՒՀ-ը իր կարևոր ձեռքբերումն է համարում անգլերեն լեզվով տպագրվող WISDOM պարբերականի Scopus և Web of Science գիտաչափական շտեմարաններում գրանցումը: Այս պարբերականը 2017թ.-ից հանդիսանում է նաև Հրատարակչական էթիկայի հանձնաժողովի անդամ: Այս փաստը հնարավորություն է ընձեռում ՀՊՄՀ-ի ՊԴ կազմին տպագրվել ավելի հաճախ: ՀՊՄՀ-ն ունի հավակնություն ևս երկու ամսագիր գրանցել վերոնշյալ շտեմարաններում:

ՀՊՄՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող քայլերից են միջազգային գիտաժողովների կազմակերպումը (2017թ.ին 5, իսկ 2018թ.-ին 10 գիտաժողով), ՊԴ կազմի գործուղումները և մասնակցությունները միջազգային գիտաժողովներին, ձեռքբերված պայմանագրերը արտասահմանյան ՄՈՒՀ-երի և գիտական կառույցների հետ, ՊԴ կազմի տպագրված աշխատանքները միջազգային գիտաչափական շտեմարաններում: 2017թ-ին գրանցվել է տպագրությունների աճ Web of Science, Scopus և РИНЦ շտեմարանում ընդգրկված ամսագրերում, սակայն 2018թ.-ին տեսանելի է այս ցուցանիշի կրկնակի նվազում:

Գիտահետազոտական գործունեությամբ առավել ակտիվ զբաղվող դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄՈՒՀ-ում և հանրապետության այլ ՄՈՒՀ-երում կազմակերպվող ազգային և միջազգային գիտաժողովներին: Սակայն, ՄՈՒՀ-ն ինքը նշում է, որ առկա է ՊԴ կազմի օտար լեզվի, մասնավորապես՝ միջազգային գիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման ոչ բավարար մակարդակ:

Չնայած ՄՈՒՀ-ը տեսնում է հետազոտությունների միջազգայնացման անհրաժեշտությունը, միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածության համակարգման քաղաքականություն կամ խրախուսման կանոնակարգված մեխանիզմներ առկա չեն: Բացակայում է հետազոտության միջազգայնացմանն ուղղված գործողությունների հստակ պլանավորումն ու իրականացումը՝ ԵԲԿՏ ինտեգրմանը նպաստելու նպատակով, թեպետ ՄՈՒՀ-ն իր բարելավման գործողությունների պլանում, հաշվի առնելով նախորդ փորձագիտական խմբի խորհրդատվությունը միջազգայնացմանն ուղղված հստակ քաղաքականության ներդրման ուղղությամբ, պլանավորել էր մշակել և հաստատել միջազգային հետազոտական գործունեության առանձին կանոնակարգ:

Չնայած ՀՊՄՀ-ն ունի մեծ թվով պայմանագրեր, գրեթե չեն իրականացվում հետազոտություններ միջազգային համագործակցության շրջանակներում: Չկան նաև միջազգային գիտահետազոտական կենտրոնների կամ կառույցների հետ համագործակցության հիմքեր: Բուհը ներգրավված չէ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում: Հետազոտության արդյունքների առևտրայնացում միջազգային մակարդակով չի իրականացվում:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՀՊՄՀ-ում դեռևս բացակայում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմները, որոնք նախանշված էին բարելավման գործողությունների պլանում: ՊԴ կազմի և ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավվածության խթանման մեխանիզմները հստակ չեն: Ամբիոնի, առանձին դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում չի իրականացվում՝ ուսումնական գործընթացի վրա ազդեցության տեսանկյունից:

ՄԿԾ-ների կառուցվածքի և բովանդակության ուսումնասիրություններից հստակ երևում է, որ բառացությամբ մի քանի ՄԿԾ-ների (օրինակ՝ Կրթության հոգեբանության և

սոցիոլոգիայի ֆակուլտետ), քիչ են հետազոտական բաղադրամասի կրթական մոդուլները: Հետազոտական բաղադրիչը ուսումնական գործընթացում կապված է միայն ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման հետ: Ընդ որում, ավարտական աշխատանքները կամ մագիստրոսական թեզերը երբեմն չեն կապվում որակավորման կամ նույնիսկ ամբիոնի ուղղվածության հետ: Նաև կարելի է փաստել, որ կրթական ծրագրերում նկարագրված դասավանդման և ուսումնառության մեթոդները միտված չեն ներառել ուսանողին հետազոտական աշխատանքի մեջ:

Կարելի է փաստել, որ դասավանդողների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները ոչ ֆորմալ կերպով են ներդրվում ուսումնական գործընթաց՝ միայն հատվածային արտացոլվելով առարկայական նկարագրերում: Հետազոտության արդյունքները ոչ միշտ են օգտագործվում տպագիր աշխատությունների տեսքով որպես դասագիրք, ձեռնարկ կամ մեթոդական ուղեցույց: Չի իրականացվում դասընթացների բարելավման վրա դասախոսների անհատական հետազոտության արդյունքների ազդեցության գնահատում կամ հետազոտական գործունեության արդյունավետության գնահատում՝ ուսումնական գործընթացի վրա ազդեցության տեսանկյունից:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող նպատակների ամրագրումը ռազմավարական ծրագրում առանձնացված խնդիրների ու դրանց իրագործման հնարավոր քայլերի տեսքով: Այդուհանդերձ, ի նպաստ հետազոտական գործունեության արդյունավետության ապահովման, առաջնահերթ պետք է համարել սահմանված խնդիրների իրականացման և գնահատման կոնկրետ մեխանիզմների մշակումը, ինչը դեռևս թերի է, սակայն կապահովեր ստացվելիք արդյունքների հստակությունը և չափելիությունը: ՀՊՄՀ-ի գիտահետազոտական գործունեության ոլորտում ռազմավարական նպատակը և խնդիրները խիստ հավակնոտ են: Փորձագիտական խումբը կարծում է, որ նախանշված գործողությունները շատ լայն են ձևակերպված, ոչ իրատեսական ՌԾ-ի իրականացման հինգ տարիների համար և հաճախ ոչ չափելի: Տպավորություն է ստեղծվում, որ ՄՈՒՀ-ը ՌԾ-ում ավելի շատ նշել է, թե ինչ հնարավոր ուղիներ կարելի է ձեռնարկել գիտահետազոտական համալսարան դառնալու համար, քան ինչ է ՄՈՒՀ-ը նպատակադրված իրագործել մոտակա հինգ տարիներին: Միևնույն ժամանակ, մտահոգիչ է, որ ՄՈՒՀ-ը, ձգտելով դառնալ գիտահետազոտական համալսարան, դեռևս չի սահմանել հետազոտական գործունեության տեսլականն ու դրա հստակ հիմնավորումներն արտացոլող, առանձին և ամբողջական ռազմավարությունը: Վերջինս հնարավորություն կտար առավել ամուր հիմքերի վրա դնել ու կանոնակարգել իրականացվող հետազոտական աշխատանքները, ինչպես նաև ուրվագծել և հիմնավորել դրանց հեռանկարային զարգացման թիրախային ուղղությունները և ռազմավարական առաջնահերթությունները: Այս իմաստով, ՄՈՒՀ-ը դեռ չի կարող համապատասխանել գիտահետազոտական ՄՈՒՀ դառնալու իր հավակնություններին:

ՀՊՄՀ-ն հստակ չի նախանշում, թե կոնկրետ որ ուղղություններն է զարգացնելու, որոնք են գիտահետազոտական գործունեության գերակա առաջնահերթությունները: Դրա վկայությունն այն է, որ ՌԾ-ում չի նշվում, թե կոնկրետ ինչ գիտական դպրոցներ և առնտրայնացման նպաստող ինչ հետազոտական թեմաներ է ցանկանում զարգացնել: Մյուս կողմից, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը ուղիղ կերպով միտված չէ ՌԾ-ի խնդիրների իրագործմանը, քանի որ գործողությունները պլանավորվում են ոչ թե վերևից ներքև, այլ բխում են ֆակուլտետների, առանձին ամբիոնների և դասախոսների նախաձեռնությունից:

Ըստ էության, բացակայում է ՄՈՒՀ-ի կողմից հետազոտական գործունեության արդյունավետ և նպատակային ֆինանսավորումը: Տվյալ պարագայում ֆինանսական միջոցների և կայուն մուտքերի սղությունն, այդուհանդերձ, չի կարող իրավիճակի լիարժեք արդարացում կամ հիմնավորում հանդիսանալ. տեղին կլիներ ապահովել առկա միջոցների օգտագործման առավել նպատակային և արդյունավետ պլանավորումը: Գիտահետազոտական գործունեությանն ուղղված հավելյալ ֆինանսական մուտքերի աղբյուր կարող են հանդիսանալ դրամաշնորհային ծրագրերը: ՄՈՒՀ-ը գիտակցում և կարևորում է դրանց հայթայթման անհրաժեշտությունը, սակայն գործնական իրականացման քայլերն ու արդյունքները դեռևս շոշափելի չեն: ՄՈՒՀ-ում դեռևս արմատավորված չէ հետազոտությունները (և դրանց արդյունքները) որպես եկամուտի կայուն աղբյուր դիտարկելու հայեցակարգը, ինչը թույլ կտար առևտրայնացնել հետազոտական գործընթացն ու դրա վերջնարդյունքները, խթանել առավել կիրառական և արդիական (այդ թվում՝ միջազգային մակարդակով գիտահետազոտական գործունեության արդի միտումներին համահունչ) հետազոտությունները՝ համապատասխանաբար, զգալի ավանդ ունենալ ֆինանսական մուտքերի կայունության ապահովման առումով:

ՀՊՄՀ-ի ՌԾ-ում սահմանված հետազոտական խնդիրների և դրանցից բխող գործողությունների իրագործման համար պահանջվում են լուրջ կադրային և ֆինանսական ռեսուրսներ, ինչը տեսանելի չէ բյուջեի պլանավորման և բաշխման մեջ: Գիտահետազոտական կենտրոնը որպես հետազոտական գործունեության համակարգման հիմնական պատասխանատու կառույց, որն ունի բազմաթիվ գործառույթներ, ունի սուղ կադրային ռեսուրս: Կենտրոնի տարեկան հաշվետվություններն, ըստ էության, գործունեության արդյունավետության վերլուծություններ չեն, այդ իսկ պատճառով դժվար է փաստել, թե որքանով է Կենտրոնը արդյունավետ իրականացնում իր վրա դրված պարտականությունները: Կենտրոնը ֆինանսավորում է ստանում ՀՀ ԿԳՆ գիտական պետական կոմիտեից: Կարծում ենք՝ այս փաստը չի կարող ապահովել կենտրոնի գործունեության կայունությունը և շարունակականությունը ՌԾ-ին համահունչ, քանի որ ԳՊԿ-ն ունի իր առաջնահերթությունները: Այս իմաստով, փորձագիտական խումբն ունի մտավախություններ, որ ՀՊՄՀ-ի ռազմավարական խնդիրներից բխող պլանավորման գործընթացը միտված չէ հետազոտական համալսարան դառնալու հավակնությանը և ռիսկային է դարձնում ՌԾ-ով սահմանված նպատակների իրականացումը:

Թեպետ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային բազմազանությունը և կադրային ռեսուրսը միջառարկայական և միջմասնագիտական համալիր հետազոտությունների զարգացման լայն հնարավորություններ է ընձեռում, այս առումով ևս նպատակային աշխատանքներ չեն իրականացվում, մինչդեռ հենց միջառարկայական ու միջմասնագիտական հետազոտություններն են ապահովում հետազոտական ներուժի արդյունավետ օգտագործումը, համատեղ աշխատանքների նոր հնարավորությունների և ոլորտների բացահայտումը, արդի պայմաններում պահանջված, մրցունակ և կիրառական արդյունքների ստացումը: Իսկ միջամբիոնային կամ միջառարկայական հետազոտությունների սակավաթվությունը խոչընդոտում է նաև ՄՈՒՀ-ի համաչափ զարգացումը և լավագույն փորձի տարածումը:

Գիտական ժողովածուներում աշխատակիցների անվճար հիմունքներով հոդվածներ տպագրելու, ինչպես նաև գիտաժողովներին մասնակցելու հնարավորությունները որոշակի խթան կարող են հանդիսանալ հետազոտողների համար, սակայն այն չի կարող դիտարկվել որպես ամբողջական մեխանիզմ հետազոտական գործունեության ակտիվացման համար:

Փաստաթղթերի վերլուծությունից և փորձագիտական այցի շրջանակներում կայացած հանդիպումներից կարելի է դատել, որ ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Զուգահեռաբար, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչները գիտակցում են և չեն ժխտում այս ուղղությամբ

աշխատանքների ինտենսիվացման անհրաժեշտությունը: Հետաքրքիր հնարավորություններից բացի, այսպիսի համագործակցությունը ավելի բարձր պահանջներ է դնում ՄՈՒՀ-ի առջև, որոնք, ներկա դրությամբ, թերի կերպով են ապահովվում և բավարարվում: Մասնավորապես, հետազոտությունների միջազգայնացման գործընթացը միակողմանի բնույթ է կրում՝ կենտրոնանալով միջազգային գիտաժողովներին առանձին աշխատակիցների մասնակցության ու միջազգային հանդեսներում տպագրության վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը՝ իր պարբերականները միջազգային գիտական շտեմարաններում գրանցելու ուղղությամբ: Վերջինս դրական ազդեցություն կարող է ունենալ միջազգային և տեղական մակարդակներում ՀՊՄՀ-ի հետազոտական վարկանիշի ձևավորման և հետազոտական ներուժի արդյունավետ ու նպատակային օգտագործման առումներով: ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման մյուս ասպեկտները, ի դեմս միջբուհական գործընկերության հիմունքներով միջազգային հետազոտական ծրագրերին մասնակցության, եվրոպական արդի հետազոտական համագործակցության ցանցերին ու հարթակներին ինտեգրվելու՝ դեռևս զարգացած չեն, ուստի ՄՈՒՀ-ի հետազոտության միջազգայնացման, հետազոտության արդյունքների ճանաչման հեռանկարները վտանգված են:

Զգացվում է առավել ակտիվ և գործնական քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն հետազոտական և ուսումնական գործընթացների միջև ներդաշնակ կապ և շարունակականություն ապահովելու առումով: Մագիստրոսական հետազոտությունները, որոնք ներկայացվում են որպես հետազոտական և կրթական գործընթացների փոխկապակցման օրինակ, անհրաժեշտ են, բայց ոչ բավարար և չեն վկայում տվյալ ոլորտում ՄՈՒՀ-ի արձանագրած էական հաջողությունների մասին: Բացակայում են հետազոտական բնագավառում ուսանողների ներգրավվածության, ՊԴ կազմի անդամների, ինչպես միմյանց, այնպես էլ ուսանողների հետ հետազոտական համագործակցության արդյունավետ, կանոնակարգված և կայուն հարթակներն ու գործիքակազմերը: Դրանց առկայությունը, մի կողմից, կնպաստեր աշխատակիցների և ուսանողների հետազոտական ակտիվությանը, մյուս կողմից՝ դրա միջազգայնացման հնարավորությունների վերհանմանը: Այն, որ ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտությունները խիստ սահմանափակ են, իսկ ուսանողների նախաձեռնողականությունը քիչ է, վտանգում է ուսանողների մոտ հետազոտական հմտությունների և կարողությունների ձևավորումը: Այդուհանդերձ, հետազոտական և ուսումնական գործընթացների միջև եղած փոխադարձ կապի արդյունավետության վերաբերյալ հնարավոր կլիներ դատել և ամբողջական պատկերացում կազմել միայն համապատասխան ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա, որոնք բուհի կողմից դեռևս չեն իրականացվում: Միևնույն ժամանակ, հետազոտություն-ուսուցում գործընթացների փոխկապակցվածության իրականացումն առավել արդյունավետ և համակարգված կլիներ համապատասխան ընթացակարգերի և մեխանիզմների առկայության դեպքում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվություններին համապատասխան բարելավումների պլանով հանձնառված գործողությունները մեծամասամբ իրականացված չեն, մասնավորապես, գիտահետազոտական գործունեությունը զարգացնելու հստակ քաղաքականությունը բացակայում է, հանրակրթական դպրոցի խնդիրներին վերաբերող տեսական և կիրառական հետազոտությունները սակավաթիվ են, ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիան պակաս է, գիտական արդյունքի առևտրայնացման հստակ մեխանիզմներ չկան, գիտահետազոտական աշխատանքի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման

մեխանիզմներն անբավարար են գործարկվում, գիտահետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված հայեցակարգ կամ քաղաքականությունը բացակայում են, հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև սերտ փոխկապակցվածություն չկա՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն **չի բավարարում** չափանիշ 6-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է ***անբավարար:***

ՉԱՓԱՆԻՇ VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՀՊՄՀ-ն իր Ռազմավարական ծրագրով որպես հինգերորդ նպատակ է սահմանում ֆինանսական կայուն և բազմազան հոսքերի, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնումը և ժամանակակից պահանջներին բավարարող համալսարանական ենթակառուցվածքների ապահովումը:

ՄՈՒՀ-ն ունի 6 գործող ուսումնական մասնաշենք՝ շուրջ 31 400 ք.մ. ընդհանուր տարածքով: Այս վեց մասնաշենքերից երկուսը, այդ թվում նաև ակտիվորեն շահագործվող Կիրառական արվեստի մասնաշենքը, վթարային են: Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցները նշեցին, որ ՄՈՒՀ-ում առկա է լսարանային անբավարարության խնդիր: Բացի այդ, ներքին շահակիցները փաստեցին, որ ՄՈՒՀ-ը պատշաճ կերպով չի ***ջեռուցվում***[34]***:***

Իրականացնելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունը՝ ***ՄՈՒՀ-ը տեխնիկական միջոցներով հագեցրել է լսարանային ֆոնդի 60%-ը***[35]***. լսարանների***ի մի մասը սարքավորված է էկրաններով, հեռուստացույցներով և պրոյեկտորներով: Լսարանների դասավորությունը ավանդական է (theater) և չի նպաստում ինտերակտիվ, համագործակցային մեթոդներով հագեցած դասապրոցեսի անցկացմանը:

ՄՈՒՀ-ն արձագանքել է հավատարմագրման նախորդ շրջափուլի խորհրդատվությանը, որը վերաբերում էր ուսումնագիտական ենթակառուցվածքների բարելավմանը: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ ՄՈՒՀ-ում առկա են մի շարք լաբորատորիաներ, որոնց մի մասը ՀԲ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված մեդիա-լաբորատորիաներն են: Բացի այդ, վերջերս բացվել է նոր կենսաբանական լաբորատորիա: Այնուամենայնիվ, հարկ է նշել նաև, որ դիտարկված բնագիտական լաբորատորիաներում նյութերը սակավ են, չկան անհատական պաշտպանիչ միջոցներ, նյութերի հետ աշխատանքի հրահանգներ, առկա չէ լաբորատոր անվտանգության քաղաքականություն: Դիտարկված լաբորատորիաներում նյութերը և սարքավորումները

---

[34] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «. . . ձմռանը գրեթե անհնար է լինում նորմալ դասապրոցես իրականացնել լսարաններում ցածր ջերմային ռեժիմի պատճառով»:

[35] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «Իրականացնելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունը՝ ՄՈՒՀ-ը մասնակիորեն հագեցրել է լսարանները տեխնիկական միջոցներով»

հիմնականում հին են: Պատշաճ տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն չունի օտար լեզուների լինգաֆոնային կաբինետը:

Ի հակադրություն սրա, Կուլտուրայի ֆակուլտետում առկա է պատշաճ կահավորում: Ստուդիաների և պարասրահների առկայության հետ մեկտեղ նկատելի են հանդերձարանների փոքր մակերեսը և լողարանների բացակայությունը:

ՄՈՒՀ-ն ունի ժամանակակից կահավորումով և տեխնիկական հագեցվածությամբ հարմարավետ դահլիճներ՝ նախատեսված հանդիպումների, կլոր սեղանների և քննարկումների կազմակերպման համար:

ՄՈՒՀ-ում գործում է բուֆետ-ճաշարան՝ պատշաճ սպասարկմամբ և բարեհամբույր անձնակազմով: ՄՈՒՀ-ում առկա է մարզադահլիճ:

ՄՈՒՀ-ն ապահովում է անլար ինտերնետ միակցվածություն, ***սակայն, սահմանափակ օգտվողների թիվը սահմանափակ է /800 հոգի***[36]: ՀՊՄՀ-ն գործարկել է Google Classroom հարթակը. այս համատեքստում ՄՈՒՀ-ը տեղադրել է համակարգիչներ ընթերցասրահներում:

Գրադարանային հագեցվածության առումով՝ ՄՈՒՀ-ն ապահովել է ընթերցասրահների առկայությունը տարբեր մասնաշենքերում, որտեղ հիմնականում տեղադրված են կոնկրետ ՄԿԾ-ներին վերաբերող գրքեր և գրականություն: ՄՈՒՀ-ը ջանքեր է գործադրում հագեցնելու գրադարանը տպագիր գրականությամբ, ինչպես նաև էլեկտրոնային գրքեր հայթայթելու ուղղությամբ: Նկատելի է 2014թ. դրությամբ 260 էլեկտրոնային գրքից 2018թ. 12159 էլեկտրոնային գրքի առկայության ցուցանիշը: Հարկ է սակայն ընդգծել, որ ՄՈՒՀ-ը բաժանորդագրված չէ ժամանակակից մասնագիտական էլեկտրոնային շտեմարանների: Ունի մասնակի հասանելիություն մի շարք բաց հասանելիությամբ, անվճար էլեկտրոնային ռեսուրսների, որոնք սակայն մանկավարժագիտական կամ կրթական ռեսուրսներ չեն:

ՄՈՒՀ-ը մեկնարկել է գրադարանային ռեսուրսների թվայնացման գործողություններ, սակայն գրադարանի բաժանորդների հետ հարաբերությունն ու շփումը դեռ թվայնացված չէ: Չկա էլեկտրոնային հաղորդակցություն, էլեկտրոնային կատալոգ, գրքերի առկայության հեռահար ստուգում, գրքի պատվիրում էլեկտրոնային միջոցներով և այլն:

Թեև ՄՈՒՀ-ն ընդունում է, որ իր ուսանողական համակազմի գերակշռող մեծամասնությունը ՀՀ մարզերից են, համալսարանը չունի հանրակացարան: Միևնույն ժամանակ, գիտակցելով այդպիսի ենթակառուցվածքի առկայության հրամայականը, ՄՈՒՀ-ը փորձում է ներգրավել օտարերկրյա դրամաշնորհատուների՝ հանրակացարանի կառուցման համար կապիտալ ներդրումներ ներգրավելու նպատակով:

ՄՈՒՀ-ի կողմից անցկացված հարցումները, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում տեղ գտած քննարկումները վկայում են, որ շահակիցներից ոչ բոլորն են բավարարված ՄՈՒՀ-ում առկա ենթակառուցվածքներով և ռեսուրսներով, սակայն անբավարարվածության պատճառները վերլուծված չեն:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Արդյունավետ կրթական և հետազոտական միջավայր ստեղծելու, այն պահպանելու ու բարելավելու նպատակով ՀՊՄՀ-ն բյուջեում հատկացումներ է կատարում տեխնիկական սարքավորումներով լաբորատորիաները, ինչպես նաև գրադարանային ֆոնդը համալրելու համար: ՄՈՒՀ-ի բյուջեում հատկացումներ են արվում «Կապիտալ և ընթացիկ վերանորոգումների», ինչպես նաև «Սարքերի, սարքավորումների, համակարգչային

[36] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է « . . . որի ծածկույթը, սակայն, սահմանափակ է»:

տեխնիկայի և գույքի ձեռքբերման» ուղղություններով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այսպիսի հատկացումներն ունեն նվազման միտում (2014թ. 1.03% և 2.01%-ից 0,10% և 0,83% 2018թ., համապատասխանաբար):
Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ում ռեսուրսների բաշխումը կապակցված չէ ՌԾ-ում մատնանշված ուղղությունների հետ: Սահմանված չեն առաջնահերթություններ, իսկ ռեսուրսների հատկացումների հիմնավորման վերլուծություններ չեն իրականացվել: Նվազել են ՄՈՒՀ-ի հիմնական գործունեությունից մուտքերը (ուսման, կրթական ծառայություններ), որը չի փոխհատուցվում ՄՈՒՀ-ի կողմից այլ՝ իր կանոնադրական նպատակներին և պրոֆիլին համահունչ գործունեությամբ (օրինակ, հանրապետության մանկավարժական կադրերի վերապատրաստումներ, տնօրենների քննությունների և այլ դասընթացների կազմակերպում): Նվազումն ավելի շատ է, քան ցույց է տրված բյուջեի՝ ընդամենը մուտքերի նվազում տողում: Այս նվազումը քողարկվել է այլ եկամուտների աճով: ՄՈՒՀ-ի ծախսային հիմնական ուղղությունը աշխատավարձներն են: Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում աշխատավարձային ֆոնդի նվազումը մի քանի անգամ գերազանցում է ընդհանուր եկամուտների կրճատման ծավալները: ՄՈՒՀ-ի ռեսուրսային ապահովվածության բարելավմանն ուղղված ծախսերը փաստացիորեն աննշան են՝ 2018թ.-ին չեն հասնում անգամ 1%-ի, իսկ գրադարանային ծախսերը զգալիորեն ետ են մնում փոստի, հեռահաղորդակցության, ներկայացուցչական կամ տարածքի մաքրման, սպասարկման ծախսերից:

ՄՈՒՀ-ի ծախսային մյուս հիմնական ուղղությունը տեխնիկական միջոցների ձեռքբերումն է: Հատկանշական է, որ նախորդ տարիներին նվազել են ՄՈՒՀ-ի մուտքերը՝ ուսանողների թվի կրճատման պատճառով: Ֆինանսական միջոցների հայթայթման այլ եղանակները միջազգային ծրագրերն ու ԳՊԿ ֆինանսավորումն են, որոնք հիմնականում կարճաժամկետ են՝ 2 – 3 տարի և ունեն թիրախավորված նպատակայնություն նաև ծախսային մասով: ՄՈՒՀ-ն ունի ծախսերի բաշխվածությունը ըստ ՌԾ ուղղությունների, որտեղ տատանումներ են նկատվում գիտության և հետազոտության ծախսերի տողում. 2016թ.-ի 4,16%-ից հետո նկատվել է անկում, թեև վերջին տատանումը դրական է (2017թ. – 3,17%-ից աճ է գրանցվել 2018թ.՝ 4,25%):

ՄՈՒՀ-ը ձգտում է ինտենսիվացնել միջազգային շփումները, սակայն բյուջեում առանձին հատկացումներ չկան այս ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Ամառային դպրոցների կազմակերպման բոլոր ծախսերը հոգում է ՄՈՒՀ-ը: Սակայն բյուջեի ծախսային մասում այդպիսի տող առանձնացված չէ:
Առհասարակ, պլանավորված բյուջեի և փաստացի կատարողականի մեջ տեսանելի է բացասական սալդո:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՀՊՄՀ-ն բոլորովին վերջերս ընդունել է «Համալսարանի ռեսուրսների կառավարման, բաշխման և մշտադիտարկման քաղաքականությունը» (31.01.2019թ.), և ինքնավերլուծության ժամանակահատվածի համար այս փաստաթուղթը չի կիրարկվել:

ՄՈՒՀ-ի ֆինանսական հոսքերը երկու հիմնական աղբյուրներից են՝ բյուջետային, հիմնականում պետական պատվերով սովորող ուսանողների ծախսերի փոխհատուցման և այլ մուտքերի տեսքով (մոտավորապես 20%-ի չափով), ինչպես նաև արտաբյուջետային, որտեղ դրամական հոսքերի հիմնական մասը (մինչև 70%) գոյանում են ուսանողական վարձավճարներից: Մոտավորապես 10%-ի տիրույթում են դրամաշնորհներից գոյացող միջոցները: Արտաբյուջետային այլ աղբյուրները կազմում են մոտավորապես մինչև 5%: ՀՊՄՀ-ում ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը նշված տարբերակներով

սահմանափակվում է: Չի կիրառվում ըստ ՄԿԾ-ների ֆինասնական բաշխման մեխանիզմները, այն է՝ տարբերակված ֆինանսավորումը: ՄՈՒՀ-ը ստանձնել է Ռազմավարական գերակայություններին համապատասխան փաստացի ֆինանսական ելքերի բացվածքի կազմումը, սակայն այս բացվածքից տեսանելի չէ գումարների բաշխման քաղաքականությունը: Ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է տարեկան կտրվածքով ուսումնական տարվա սկզբին:

Բյուջեի բաշխումը սովորաբար չի իրականացվում ըստ ռազմավարական ծրագրի ուղղությունների: Ֆինանսական ռեսուրսները բաշխվում են ըստ տվյալ պահի առաջնահերթությունների առաջնային և հետաձգման համար հնարավոր ծախսերի, կատարվում են հատկացումներ ըստ տողերի: Ըստ բյուջեի հիմնական հատկացումները կատարվում են աշխատավարձային ֆոնդի, ուսանողների վարձավճարների զեղչերի, պետբյուջե վճարումների, գիտության ծասխերի և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովման ծախսերի հիմքերով: ՄՈՒՀ-ում բյուջեի բաշխումը քննարկվում և հաստատվում է հոգաբարձուների խորհրդում:

Ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկողությունն իրականացնելու նպատակով ՄՈՒՀ-ը հիմնել է Ֆինանսների ծրագրավորման և վիճակագրության վարչություն և Ներքին աուդիտի բաժին: Վերջինը դեռևս նշված է ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում, սակայն բաժնի երկու հաստիքներն էլ լրացված չեն, և այն փաստացի չի գործում: Այս երկու ստորաբաժանումների գործունեության արդյունավետության վերաբերյալ հիմնավորումներ կամ վերլուծություններ փորձագիտական խմբին չներկայացվեցին:

ՄՈՒՀ-ում չեն կատարվում ծախսերի արդյունավետության վերլուծություններ: Բացի այդ, ֆինանսական հատկացումների համար հիմնավորումներ առկա չեն. տեսանելի չէ, թե որտեղից է եկել այս կամ այն ծախսային անհրաժեշտությունը: Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը գնահատելու համար համալսարանն անցել է արտաքին աուդիտ անկախ աուդիտորական ընկերության կողմից:

ՀՊՄՀ-ում ծախսերի պլանավորումն իրականացվում է համալսարանի ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող հայտերի/պահանջագրերի հիման վրա:

Այնուամենայնիվ, ուսումնասիրված փաստաթղթերը ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ում չի իրականացվում ֆինանսական միջոցների երկարաժամկետ պլանավորում, չկան ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության արդյունավետության գնահատման հիմքեր: Բացի այդ, թեև նախորդ փորձագիտական խորհրդատվությամբ նշվում էր ՄԿԾ-ների կարիքների վերհանման ու վերլուծությունների հիման վրա ՄԿԾ-ների իրականացման և շարունակականության համար ֆինանսական հատկացումների անհրաժեշտությունը, այսպիսի վերլուծություններ առկա չեն, և ըստ փաստաթղթերի չկա ֆինանսական ռեսուրսների բազմազանեցված բաշխում ըստ ՄԿԾ-ների՝ ոչ մուտքերի, ոչ ելքերի մասով:

Փորձագիտական այցի ընթացքում դիտարկումները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ը նախորդ շրջափուլի եկամուտներն օգտագործել է՝ տեխնիկական հագեցվածությունը ապահովելու համար: Վերջին տարիներին, ուսանողների թվի քանակի կրճատման հետևանքով եկամուտների կրճատմանը զուգահեռ, ՄՈՒՀ-ն անցել է խնայողության և գոյատևման ռեժիմին:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

2014թ. մշակված է ուսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման ու վերանայման ընթացակարգ: Այնուամենայնիվ, չկան ապացույցներ առ այն, որ այս ընթացակարգը գործում է:

Ըստ էության, ռեսուրսների համապատասխանությունը ՄԿԾ-ների և ՌԾ նպատակների իրականացման տեսանկյունից վերլուծված չէ:

ՄՈՒՀ-ը որպես կայունության երաշխիք դիտարկում է ֆինասական ռեսուրսների բազմազանեցման հնարավորությունները: Մասնավորապես մատնանշվում են պետական բյուջեից ֆինանսավորում ստանալը, դրամաշնորհային ծրագրերը, վճարովի ծառայությունները/վերապատրաստումները: Այդուհանդերձ, այդպիսի հնարավորությունների իրացման իրատեսականությունը նույնպես գնահատված չէ: Ինչպես նաև դեռևս նկատելի չեն լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման համար ինսաիտուցիոնալ համընդգրկուն մոտեցումն ու նախաձեռնողականությունը:

ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը կատարվում է ավանդական եղանակով, ըստ ծախսային տողերի: Կան նյութատեխնիկական բազայի պլանավորման մեխանիզմներ: Չնայած համալսարանը դեռևս չունի նյութատեխնիկական ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ՄԿԾ-ները հիմնականում ապահովված են նվազագույն բավարար ռեսուրսային բազայով, ինչը հաստատվեց այցի ընթացքում: ՄՈՒՀ-ում առկա են համակարգչային լսարաններ և լաբորատորիաներ՝ համալրված համակարգչային տեխնիկայով, ծրագրային ապահովմամբ, միշտ գործող ինտերնետային կապով:

ՄԿԾ-ների իրականացման համար գրադարանը շարունակաբար ջանքեր է գործադրում համալրելու առկա գրականությունը: ՄՈՒՀ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքներով գրադարանի մասնագիտական գրականության մակարդակից բավարարվածության ցուցանիշները շահակիցների կողմից գնահատված են բավարարի տիրույթում:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՀՊՄՀ-ում փաստաթղթավորումն ու փաստաթղթաշրջանառությունն իրականցվում է «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փաստաթղթաշրջանառության կարգի» համաձայն: ՄՈՒՀ-ում տեղ են գտել որոշ փոփոխություններ այս կարգի հիման վրա, սակայն փաստաթղթաշրջանառության ամբողջական էլեկտրոնային համակարգի ներդրումը դեռևս ավարտված չէ:

Հաշվապահությունն իրականացվում է մասամբ էլեկտրոնային ձևով: ՄՈՒՀ-ում գործում է Ուսուցման գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ (ՈՒԳԱԿՀ) էլեկտրոնային տեղեկատվական հարթակը՝ ապահովելով ուսանողների և ՊԴ կազմի մասին տեղեկությունների շրջանառումը: Այնուամենայնիվ, նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ներքին փաստաթղթաշրջանառության ավտոմատացման /թվայնացման/ հետ կապված աշխատանքները դեռևս ավարտված չեն:

Բուհը չունի արտաքին տեղեկատվության հրապարակման հստակ քաղաքականություն: Փաստաթղթերը հրապարակված և հասանելի են համալսարանի կայքում: Կարևորագույն բոլոր փաստաթղթերը թվայնացված են:. Գործում է փաստաթղթերի արխիվացման համակարգը:

Google Classroom հարթակի գործարկմամբ դասախոս-ուսանող մակարդակում թղթային հենքով փոտաթղթաշրջանառությունը՝ առարկայական ծրագրերի, թեմատիկ տրոհումների, դասախոսությունների և առաջադրանքների, գնահատվող թեստերի ծավալը նվազել է՝ փոխադրվելով էլեկտրոնային միջավայր:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՄՈՒՀ-ի բոլոր մասնաշենքերում գործում է անվտանգության ծառայություն: Առանձին հատվածներում իրականացվում է տեսահսկողություն: ԱԻՆ-ի պրոակտիվ ջանքերով իրականացվող համագործակցության շրջանակներում իրականացվում են հակահրդեհային անվտանգության միջոցառումներ: Բնական աղետների դեպքերի համար առկա է տարհանման պլան:

ՄՈՒՀ-ում առկա է երկու բուժկետ՝ առաջին օգնության պարագաներով:

Գործում է սննդի ծառայություն:

Վերջին երկու տարիներին ՀՊՄՀ-ն «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ հետ կնքել է կամավոր բժշկական ապահովագրության պայմանագիր ՊԴ կազմի համար:

Արձագանքելով նախորդ փորձագիտական խորհրդատվությանը՝ ՄՈՒՀ-ը որոշ աշխատանք է կատարել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքների բավարարումը տարբեր ծրագրերի ներդրմամբ: Այնուամենայնիվ, ֆիզիկական ենթակառուցվածքների մասով հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարություններ առկա չեն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՀՊՄՀ-ում, ի թիվս այլ հարցումների, շահակիցների շրջանում անց են կացվում հարցումներ նաև ռեսուրսային ապահովման մասին: Ներկայացված բովանդակությունը թույլ է տալիս փաստել, որ այսպիսի հարցում անց է կացվել մեկ անգամ, սակայն դրա անցկացման ժամկետն անորոշ է, օրինակ՝ դասախոսների դեպքում կարիքների վերլուծության փաստաթղթի թվագրված չլինելու պատճառով հնարավոր չէ տեսնել, թե ինչպիսի գործողություններ են պլանավորվել կամ իրականացվել վերհանված կարիքին անդրադարձի, բարելավման քայլերի գնահատման տեսանկյունից:

Հարցումներն ի ցույց են դրել բավարարվածության բավականին ցածր մակարդակ մի շարք ուղղություններով, այդ թվում՝ բուժկետի ծառայություններից, մասնագիտական գրականության պակասից, սանիտարահիգիենիկ վիճակից: Փորձագիտական այցի ընթացքում տարբեր շահակիցներ նշեցին, որ ՄՈՒՀ-ում առկա ռեսուրսային բազան հարստացման և արդիականացման կարիք ունի: Դիտարկված կրթական ծրագրերն իրականացնելու համար առկա ռեսուրսները՝ համակարգչային տեխնիկան, բազմաթիվ կիրառական ծրագրային փաթեթներ, գրադարանային ֆոնդը, սակայն, լիարժեքորեն հասանելի են դասավանդողներին և ուսանողներին: Այս արդյունքների քննարկման վկայությունները բացակայում են: Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման պարբերաբար գործարկվող և արդյունավետ մեխանիզմ առկա չէ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը բավարար է գնահատում ՄՈՒՀ-ի ջանքերը միտված ուսումնական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովելուն: ՄՈՒՀ-ը բաց է ռեսուրսների հատկացումների հարցում ու պատրաստակամ, ինչպես նաև ձգտում է բարելավել լսարանային և լաբորատոր պայմանները, արդիականացնել ակադեմիական ենթակառուցվածքները: Կենտրոնական մասնաշենքերը, ինչպես նաև Բանասիրության և Կուլտուրայի ֆակուլտետների մասնաշենքերը գտնվում են բարվոք վիճակում:

Ունենալով քաղաքի կենտրոնում տեղադրված բավականին մեծ տարածք՝ ՄՈՒՀ-ը կանգնած է երկու վթարային մասնաշենքերի վերագործարկման կամ դրանք քաղաքի

ծայրամաս տեղափոխելու մարտահրավերի առաջ: Երկու վթարային մասնաշենքերից դիտարկվածը՝ Կիրառական արվեստի մասնաշենքը վտանգավոր է մարդկային կյանքի համար և ակնհայտորեն չի կարող բավարարել կրթական միջավայրի համար ընդունելի պահանջներին:

Հակադրությունն էլ ավելի է խորանում մյուս մասնաշենքների բարվոքության համեմատ: Բացառությամբ Կուլտուրայի ֆակուլտետի, որտեղ նույնպես կա հիմնականում սանիտարահիգիենիկ ենթակառուցվածքների ներդրման անհրաժեշտություն, մյուս մասնաշենքերում վիճակը բավարարում է նվազագույնի պահանջներին: Լսարանների արտաքին տեսքն անհրապույր է, մի մասը ուշ գարնան ամիսներին անհնար է գործարկել տոթի պատճառով: Հարկ է ընդգծել ջերմային ռեժիմի կարգաբերման անհրաժեշտությունը բոլոր մասնաշենքերում: Գոյություն ունեցող պայմաններում հնարավոր է իրականացնել ՄԿԾ-ները, սակայն առկա ֆիզիկական վիճակը հանգեցնելու է ուսանողի՝ սովորելու մոտիվացիայի և գործնական հմտությունների ձեռքբերման հնարավորությունների նվազմանը՝ սահմանափակվելով հիմնականում գիտելիքի ձեռքբերմամբ:

Տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության ուղղությամբ կատարված քայլերը բավարար չեն ՄՈՒՀ-ում ժամանակակից ՏՀՏ միջոցներով դասապրոցես կազմակերպելու համար, ինչը նվազեցնում է ինչպես Google Classroom հարթակի արդյունավետ գործարկման ներուժը, այնպես և դասերի վարման ինտերակտիվությունը:

ՄՈՒՀ-ի գրադարանային ռեսուրսների մասնագիտական գրականության ծավալով և արդիականությամբ բավարարվածության հարաբերական ցածր ցուցանիշի հիմքում ընկած պատճառները, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարաններին բաժանորդագրության բացակայությունը ռիսկային են դարձնում ժամանակակից հետազոտական գրականության հասանելիությունը, դասավանդվող բովանդակության արդիականությունը և գիտելիքի եռանկյունու ներդնումը:

Հանրակացարանային ենթակառուցվածքների ուղղությամբ ՄՈՒՀ-ի պլանավորած գործողությունները կարող են նպաստել ավելի մեծ շարժունությանը, սակայն այս պահին դրանց բացակայությունը խոչընդոտում է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հանրապետության մարզերից ներգնա ուսանողների ներգրավումը: Փորձագիտական խումբը գիտակցում է այսպիսի լուրջ ենթակառուցվածքի ստեղծման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների ներգրավման բարդությունը և բարձր է գնահատում տարբեր դրամաշնորհատուների որոնման նախաձեռնությունները, այդ թվում՝ ասիական երկրներում :

Ի հակադրության վերոնշյալ դժվարություններին, ՄՈՒՀ-ի ներքին բարվոք վիճակի ապահովումը, հատկապես պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակի առումով մեծ ներդումների կարիք չունի: ՄՈՒՀ-ում առկա սանիտարահիգիենիկ վիճակը և հիգիենիկ նյութերով ապահովման մակարդակը, բացառությամբ վարչական տարածքների, ՄՈՒՀի մասին թողնում է անխնամության այնպիսի տպավորություն, ինչը հարիր չէ բարձրագույն կրթական հաստատությանը:

Ֆինանսական ռեսուրսների՝ ըստ ՌԾ առաջնահերթությունների բաշխման քաղաքականության բացակայությունը վտանգում է ՄՈՒՀ-ի՝ ՌԾ գերակա ուղղությունների փաստացի իրագործումը: Հատկապես ակնհայտ է գիտահետազոտական, միջազգայնացման, ՄՈՒՀ-ի ռեսուրսների արդիականացման և ՊԴ կազմի վերապատրաստման ուղղություններով նպատակային հատկացումների պակասը:

Խնդրահարույց է այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ը սահմանափակ նախաձեռնողականություն է դրսևորել բազմազանեցնելու ֆինանսական աղբյուրները: Հետազոտական բազային և թեմատիկ ֆինանսավորումները, ինչպես նաև միջազգային ծրագրերը չեն կարող ապահովել շարունակական զարգացումը, ըստ որում այդ ծրագրերի շրջանակներում ստեղծված արդյունքը դեռևս իմաստավորման, ներդրման և տարածման

խնդիր ունի, ինչի համար ՄՈՒՀ-ի կողմից սեփական միջոցներից գումարների չհատկացումը դատապարտելու է նորաստեղծ կամ փոխառյալ գիտելիքի և աշխատակարգերի ճահճացմանը, ինչը և տեսանելի է այսօր:

Տարիներ շարունակ ՄՈՒՀ-ը բացասական հաշվեկշռով է դուրս գալիս պլանավորած բյուջեի նկատմամբ, չնայած իր ունեցած խնայողություններին. ֆինանսական ռեսուրսների փաստացի պլանավորման ժամանակ նախկին փուլի փաստացի կատարողականը նոր պլանավորման փուլում հիմք չհամարելը և ծախսերի արդյունավետության որոշման պակասը կարող են հանգեցնել ֆինանսական սխալի և թերպլանավորման՝ դրանից բխող հավանական դեֆոլտային հետևանքներով:

ՄՈՒՀ-ը չի իրականացնում զգալի ներդրումներ՝ առանձին ՄԿԾ-ների շարունակական և կայուն զարգացման և բարելավման ուղղությամբ: Այնուամենայնիվ, առկա ռեսուրսներով ՄԿԾ-ների իրականացումը հիմնականում հնարավոր է: ՄՈՒՀ-ի ռեսուրսային ապահովվածությունը գոյատևման մակարդակի է, սակայն որակի կայուն բարելավման համար ենթակառուցվածքները և ներդրումները բավարար չեն:

Գնահատելի է ՄՈՒՀ-ի կողմից փաստաթղթաշրջանառության և հաշվապահության թվայնացման ուղղությամբ ներդրված ջանքը, հատկապես սեփական ներուժի ներգրավմամբ, սակայն այստեղ գործընթացների թվայնացվածության ոչ ամբողջական լինելը կարող է դանդաղեցնել մի շարք ընթացակարգային կարգավորումներ:

ՄՈՒՀ-ը զգալի ջանքեր է ներդրել՝ ապահովելու անվտանգ միջավայր, օժանդակելու ՊԴ կազմի առողջապահական ապահովագրությանը, սակայն ուսումնական մասնաշենքերի հավելյալ ֆիզիկական հարմարեցումների առկայությունը հնարավոր կդարձներ նաև համընդհանուր ներառականությունը:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները ՄՈՒՀ-ում շահակիցների շրջանում անցկացվող հարցումներն են, որոնք այնուամենայնիվ, հատվածական են, մեկանգամյա, ի ցույց չեն դնում դինամիկան, և հիմք չեն ծառայում նյութատեխնիկական հագեցվածության կամ ֆիզիկական ռեսուրսների բերալավման կարիքի վերհանման համար: Այսպիսի գործուն մեխանիզմների փաստացի բացակայությունը վտանգում է ռեսուրսների պատշաճ պլանավորումը և ծախսային արդյունավետությունը արդեն իսկ սուղ միջոցների պարագայում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի՝ ենթակառուցվածքային ռեսուրսների և կամպուսների առկայությունը, գրադարանային տպագիր ռեսուրսների առկայությունը, տեխնիկական և տեխնոլոգիական համալրման և հարստացման ջանքերը, ՌԾ գերակայությունների հետ փոխկապակցված բյուջետավորման փորձը, փաստաթղթաշրջանառության թվայնացումը, հիմնականում անվտանգության և ապահով միջավայրի կազմակերպումը և ըստ էության միջոցների սղության մասնակիորեն օբյեկտիվ հիմնավորումը, սակայն միևնույն ժամանակ չանտեսելով նախորդ փորձագիտական խորհրդատվությամբ մատնանշված ՄՈՒՀ-ի՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման և ծախսարդյունավետության համար անհրաժեշտ ներքին վերլուծությունների, տարբերակված և առաջնահերթություններով թելադրվող ֆինանսական պլանավորման, գոյություն ունեցող ռեսուրսների շարունակական արդիականացման հրամայականը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն ***բավարարում է*** Չափանիշ 7-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում **է բավարար**:

ՉԱՓԱՆԻՇ VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

***8.1* ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:**

ՀՊՄՀ-ն իր 2016-2020 թթ. ՌԾ-ում նպատակադրել է հանրային ներգրավման և սոցիալական համագործակցության իրականացումը (նպատակ 6), մասնավորապես կարևորելով «հասարակության հետ կապերի հետագա զարգացումը»:

ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ուղղված է գործունեության բոլոր շահակիցներին, այնուամենայնիվ, հաշվետվությունների համար առկա չէ առանձին կարգ: Միևնույն ժամանակ, հաշվետվողականությունը կարգավորվում է ՄՈՒՀ-ի հիերարխիկ կառույցով, որտեղ ստորադաս բաժինները հաշվետու են ավելի վերադասներին, օրինակ՝ ամբիոնները ֆակուլտետին, ֆակուլտետը՝ համակարգող պրոռեկտորին: Բոլոր ստորադաս մակարդակների հաշվետվությունները մեկտեղվում են ռեկտորի ամենամյա հաշվետվություններում, որոնք քննարկվում են հոգաբարձուների խորհրդում:

ՄՈՒՀ-ը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացնում է բազմապիսի հաշվետվություններ արտաքին գերատեսչություններին և պատկան մարմիններին:

ՄՈՒՀ-ն ունի հանրային հաշվետվողականության հետաքրքիր ձևաչափ, ըստ որի ֆիլմի տեսքով հանրության են ներկայացվում ՄՈՒՀ-ի գործունեությունն ու ձեռքբերումները: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ երկարաժամկետ և ամենամյա պլանի ձևաչափի և հաշվետվության ձևաչափի և բովանդակության միջև համապատասխանությունը միշտ չէ, որ տեսանելի է:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ը վերանայել է հաշվետվությունների ձևաչափը՝ մոտարկելով ստորաբաժանումների հաշվետվությունները ՈԱԱԿ ինքնավերլուծության ձևաչափին: Այսպիսի ձևաչափով է ներկայացվում նաև ռեկտորի հաշվետվությունը, որը հսկայածավալ է՝ մինչև 500 էջ և բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների մեխանիկական համախումբն է:

Հարկ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ը 2015թ.-ի փորձագիտական խորհրդատվության հիման վրա փորձել է ներդնել հաշվետվողականության արդյունավետության գնահատման մեխանիզմ, մասնավորապես իրականացրել է «ՀՊՄՀ ռեկտորի հաշվետվության, ՄՈՒՀ-ի վարած քաղաքականության թափանցիկության բացահայտմանն ուղղված հարցում»: Հարցման արդյունքների վերլուծության փաստաթուղթը, ի թիվս այլոց, թվագրված չէ և պարունակում է մի շարք ցուցանիշներ, որոնց ստացման մեթոդաբանական հիմքերը տեսանելի չեն (օրինակ՝ «հարցվածների 65%-ը նշել է, որ մասնակցել է ռեկտորի հաշվետվությանը»):

***8.2* ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:**

Նախորդ շրջափուլի մեկ այլ խորհրդատվությանն (ապահովել հասարակայնության հետ հաղորդակցման շարունակականությունն ու հետևողականությունը) արձագանքելով՝ ՀՊՄՀ-ն բազմաձևաչափ հաղորդակցությունների համար պատասխանատու է սահմանել Լրատվության և հանրության հետ կապերի վարչությանը, որի գործունեությունը կարգավորվում է 2014թ-ին ընդունված կանոնադրությամբ: Հասարակության հետ հաղորդակցության շարունակականության և հետևողականության ապահովման նպատակով ՄՈՒՀ-ը կիրառում է բազմապիսի մեդիա միջոցներ՝ «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթ, կայք, ֆեյսբուքյան էջ, յութուբյան ալիք, «ՖԱՄԱ» ուսանողական ռադիոալիք, «Հաջողության բանաձև» հեռուստահաղորդում: ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջը

պատկերացում է տալիս հաստատության առանցքային գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև դիմորդներին և շահակիցների համար օգտակար տեղեկատվություն. առկա են հաշվետվություններ ուսանողների ընդունելության, իրականացված նիստերի և այլն վերաբերյալ, առանցքային որոշումներ և հրամաններ, ստորաբաժանումների, վարչությունների կանոնադրություններ, ուսման վարձի գեղչման համակարգի, ծրագրերի, կրթաթոշակների մասին տեղեկատվություն և այլն:

Կայքէջում ներկայացված են ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումները: Այնուամենայնիվ, կայքի խրթին կառուցվածքի պատճառով ՄԿԾ-ների մասնագրերը, առարկայական նկարագրերը դժվար հասանելի են. դրանք Բակալավրիատ/Մագիստրատուրա կամ ֆակուլտետների անվանումների ակտիվ հղումների տակ լինելու փոխարեն գտնվում են Որակի ապահովման և կառավարման բաժնի կայքէջի Փաստաթղթեր բաժնում:

Կայքէջի ռուսալեզու և անգլալեզու տարբերակները նույնպես համալրված են տեղեկատվությամբ:

Բացի հասարակության հետ կապերի ապահովման բուն լրատվության տարածման գործառույթների իրականացման, ՄՈՒՀ-ը նաև այցեր է իրականացնում տարբեր կրթական հաստատություններ, այդ թվում՝ դպրոցներ, ՄԿՈՒ հաստատություններ՝ բարձրացնելով հանրային իրազեկությունը ՄՈՒՀ-ի գործունեության մասին:

Այնուամենայնիվ, գործընթացների թափանցիկությանն ուղղված կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը բուհը չի գնահատում:

***8.3* ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

Արձագանքելով նախորդ շրջափուլի հավատարմագրման շրջանակներում տրամադրված խորհրդատվությանը (կատարելագործել հասարակության լայն շրջանակների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները)՝ ՄՈՒՀ-ն ապահովել է հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման որոշակի մեխանիզմների առկայությունն ու գործարկումը՝ կայքէջի (օրական 5 նամակ), ֆեյսբուքյան էջի (օրական 25 նամակ) հետադարձ կապի բաժինները, ինչպես նաև դպրոցների հետ իրականացվող հանդիպումները: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ հետադարձ կապի մեխանիզմներ կարող են համարվել նաև պրակտիկայի արդյունքների քննարկումներն ընդունող հաստատությունների հետ: Որպես հետադարձ կապի մեխանիզմ ՄՈՒՀ-ի կողմից դիտարկվում են նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների ներկայացրած հաշվետվությունները:

Կայքէջի հետադարձ կապի միջոցով դիմորդների կողմից հիմնականում բարձրացվում են մասնագիտությունների և ***վարձավճարի վերաբերյալ հարցեր***[37]:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցները հիմնականում անմիջականորեն չեն մասնակցել ՄԿԾ-ների կազմման աշխատանքներին կամ միայն ծանոթացել են մշակված բովանդակությանը՝ այն ընդունելով ի գիտություն: Արտաքին շահակիցները համալսարանական որոշումների կայացման գործընթացին մասնակցում են միայն կոլեգիալ կառավարման մարմինների ներկայացուցչության մակարդակում:

2018թ. ՄՈՒՀ-ն արտաքին շահակիցներից միայն գործատուների շրջանակում իրականացրել է կարիքների ուսումնասիրություն: Որպես առաջարկ գործատուները կարևորել են գործնական պարապմունքների ավելացումը, ուսանողների մեթոդական կարողությունների զարգացումը, պրակտիկաների ժամանակահատվածի ավելացումը:

---

[37] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «...վարձավճարի վերաբերյալ հարցեր: Գոյություն ունեցող հարթակներում այլ արտաքին շահակիցների հետ շփումների վերաբերյալ փաստեր չկան»:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-գործատու հետադարձ կապը և գործատուների համագործակցությունը ՄՈՒՀ-ի հետ իրականացվում է անձնական կապերի միջոցով՝ ֆակուլտետի, ամբիոնի պատասխանատուների կամ հենց դասախոսների միջնորդությամբ:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը դեռևս չի գնահատվում:

***8.4* ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

ՄՈՒՀ-ում հասարակությանը գիտելիքի փոխանցման հաստատված քաղաքականություն չկա, սակայն գործընթացի բազմապիսի տարրերն իրականացվում են ոչ ֆորմալ ձևով:

ՀՊՄՀ-ում գործում է «ՀՊՄՀ-ի ուսանողի մասնագիտական կամավորական գործունեության և դրա համար ուսանողին հավելյալ կրթական միավորներ տրամադրելու, ամրագրելու, հաշվառելու և ճանաչելու ժամանակավոր կարգը», որի շնորհիվ կամավորական աշխատանքի համար ուսանողները միավոր են ստանում, որը գումարվում է նրանց ամփոփիչ գնահատականին: Հարկ է նշել, որ չնայած կարգի առկայությանը և սահմանված առավելագույն 5 միավորի հավելման դրույթին, ավարտական աշխատանքների պաշտպանությունների դիտարկումից պարզ դարձավ, որ գործընթացի իրականացումը երբեմն չի համապատասխանում կարգի պահանջին:

ՀՊՄՀ-ն գիտելիքի փոխանցումն իրականացնում է իր մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպվող հանդիպումների, աշխատաժողովների (ծնողական կրթություն), վերապատրաստումների (սփյուռքահայ և տեղացի ուսուցիչների վերապատրաստումներ), ինչպես նաև թանգարանների, լաբորատորիաներում (օրինակ՝ «Մանկության հիմնախնդիրները ուսումնասիրող» լաբորատորիա) և հետազոտական գործունեությամբ գոյացվող արդյունքների (օրինակ՝ «Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում» ուսումնամեթոդական ձեռնարկ) տարածման միջոցով: ՄՈՒՀ-ի մասնագետները հեղինակում են դպրոցական դասագրքեր, ՄՈՒՀ-ը տարբեր մեդիա միջոցներով նաև բարձրացնում է հանրային իրազեկությունը սոցիալական տարբեր խնդիրների մասին, օրինակ «Փոխօգնության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ հաշմանդամության մասին նկարահանված ֆիլմը:

Մանկավարժական արժեքների և մանկավարժագիտության կարևորության մասին գիտելիքների փոխանցումն իրականացնում են նաև ՄՈՒՀ-ի թանգարանը, «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը և «Հաջողության բանաձև» հեռուստահաղորդումը: Թանգարանը նաև մասնակիորեն հարմարեցված է որոշ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար:

Բացի այդ, ՄՈՒՀ-ն ակտիվ գործող կրթամշակութային կենտրոն է, որը կազմակերպում է միջոցառում-քննարկումներ, ցուցահանդեսներ, համերգներ, միջոցառումներ: Մշակութային արժեքների և հանրային հաշվետվողականության լավագույն օրինակ կարող է ծառայել պարարվեստի ՄԿԾ-ի ամփոփիչ ատեստավորման ելույթը: Հարկ է այնուամենայնիվ նշել, որ ՄՈՒՀ-ը հանրային պահանջարկի, ինչպես նաև հասարակական մարտահրավերների ուսումնասիրություն դեռևս չի իրականացնում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը կարևորում է հաշվետվողականությունը, թափանցիկությունն ու հանրայնացումը, ներառելով այն իր ՌԾ-ում: Թեև հաշվետվողականության գործընթացների հոսքի առանձին նկարագրությունը

բացակայում է, կազմակերպական կառուցվածքի աստիճանակարգությամբ ապահովվում է հաշվետվողականությունն ավելի ստորին օղակներից դեպի վերադաս օղակներ:

Փորձագիտական թիմը դրական է որակում ՄՈՒՀ-ի՝ ՈԱԱԿ ձևաչափին հաշվետվությունների մոտարկման նախաձեռնությունը, միևնույն ժամանակ նշելով, որ հաշվետվությունները հիմնականում կրում են փաստերի, որոշ վիճակագրությունների արձանագրման բնույթ, բացակայում են եզրահանգումները, հայտնաբերված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների առաջարկները, վերլուծական մոտեցումը, ինչը կարող է խոչընդոտել թույլ կողմերի վերհանման և հետագա բարելավման ու զարգացման գործընթացներին: Կարելի է եզրահանգել, որ ձևաչափի փոփոխությունը դեռևս չի հանգեցրել իրական վերլուծականության, ինչը խոչընդոտում է իրական պատկերի ճանաչումը և ապացուցահեն որոշումների կայացումը:

ՄՈՒՀ-ը կիրառում է բավարար թվով և բազմապիսի հարթակներ իր գործունեությունը հանրության համար թափանցիկ և հասանելի դարձնելու համար: Կայքէջերում գործում են հետադարձ կապի մեխանիզմներ, սակայն հարկ է նշել, որ արտաքին շահակիցների, հատկապես գործատուների և շրջանավարտների հետ կապը դեռևս թույլ է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի՝ հանրության շրջանում գիտելիքի և արժեքների տարածմանն ուղղված գործողությունները: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն ունի զգալի չիրացված ռեսուրս և ներուժ այս ուղղությամբ՝ հաշվի առնելով մանկավարժագիտության և կրթության ոլորտի բազմապիսի հայեցակերպերը, որտեղ ՄՈՒՀ-ը կարող է հանդես գալ որպես առաջատար նոու-հաուի կրող: Մի շարք մասնագիտությունների գծով ՀՀ բուհական համակարգում մենաշնորհատեր լինելով՝ ՄՈՒՀ-ը կարող է գրավել առկա խորհրդատվական ծառայությունների շուկան, ինչը ոչ միայն կստեղծի հանրօգուտ արժեք, այլև լրացուցիչ ֆինանսական հոսքեր կապահովի:

Դրական գնահատելով բոլոր զարգացումները՝ փորձագիտական խումբն ընդգծում է, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի ներդրել օգտագործվող գործիքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, ինչը խաթարում է ինստիտուցիոնալ բոլոր հատույթներում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի հավուր պատշաճի իրացումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում առկա աստիճանակարգված հաշվետվողականությունը, ընթացիկ գործընթացները և զարգացումները հանրությանը հասանելի դարձնելու հարթակները, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի, գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմների առկայությունը, ներքին շահակիցներին և պետական կառավարման պատկան մարմիններին, ինչպես նաև հանրության լայն շրջանակներին ուղղված հաշվետվողականությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը **բավարարում է** չափանիշ 8-ի պահանջին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է ***բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ն միջազգայնացման ուղղությամբ տարվող գործունեության առաջնահերթ լինելը սահմանել է՝ ներառելով այն ՌԾ-ում որպես յոթերորդ ուղղություն և անվանելով այն «միջազգային և արտաքին գործունեության ընդլայնում»: ՌԾ գործողությունների կատարման պլանով սահմանված են 3 խոշոր խնդիրների տրոհված գործողությունները, վերջիններիս գնահատման ցուցիչները, վերջնարդյունքները, պատասխանատու ստորաբաժանումները: ***ՄՈՒՀ-ը հաստատել է «2015 – 2020թթ. միջազգայնացման քաղաքականությունն ու ռազմավարությունը»***:[38] ՌԾ-ում սահմանված քանակական ԳԱՑ-երը հիմնավորված չեն:

Միջազգայնացման խնդիրների տիրույթը ներառում է ինչպես կրթական ծրագրերի և ուսումնական գործունեության, այնպես և հետազոտության, ուսանողական և ՊԴ կազմի միջազգային շարժունության և միջազգայնացման գործողություններ: Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով արտաքին կապերի հաստատումը խրախուսող հստակ ընթացակարգեր և մեխանիզմներ դեռևս մշակված չեն: Չնայած ՄՈՒՀ-ը կարևորում է փորձի փոխանակմանը նպաստող միջավայրի ստեղծումը, միջազգային փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումը, սակայն վերջիններս հստակ քաղաքականությունների կամ ընթացակարգերի տեսքով սահմանված չեն:
Թեև միջազգային կապերն ու գործունեության միջազգայնացումը ՄՈՒՀ-ի համար ռազմավարական առաջնահերթություններ են, բյուջեի բաշխման մեջ միջազգայնացմանն ուղղված թիրախային ծախսեր չկան: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ միջազգայնացման հետ կապված մի շարք ծախսեր, օրինակ՝ Ամառային դպրոց և այլն, գտնվում են բյուջեի բաշխման այլ տողերում, օրինակ՝ ուսումնական ծախսեր, ներկայացուցչական ծախսեր և առաջին հայացքից տեսանելի չեն:

***9.2* ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:**

ՀՊՄՀ-ն ունի Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր և Միջազգային համագործակցության բաժին 5 հաստիքով, որը գործում է համապատասխան կանոնադրությամբ: Միջազգային համագործակցության բաժնի գործառույթները հիմնականում վերաբերում են համալսարանի գործունեության միջազգայնացմանը նպաստող գործողություններին, որոնք բնույթով կազմակերպչական են: Բաժինը նաև կազմակերպում և իրականացնում է հանդիպումներ՝ ուսանողներին և ՊԴ կազմին շարժունեության հնարավորությունների տեղեկացման, թեկնածուների հավաքագրման և ուղղորդման նպատակով: Միջազգային համագործակցության բաժինը տեղեկատվություն է հավաքագրում նաև ստորաբաժանումներից՝ տարբեր մակարդակներում և օղակներում ընթացող միջազգային գործընթացների մասին: ՄՈՒՀ-ի տարբեր ֆակուլտետներում միջազգային գործընթացների մասին իրազեկության կամ գործողությունների ակտիվացման նպատակով ՀՊՄՀ-ում ներդրվել է գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալի պաշտոնը: Այսպիսի ինստիտուտի ներդրման արդյունավետության գնահատումներ դեռևս չկան:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՀՊՄՀ-ում միջազգայնացմանն ուղղված գործընթացները համակարգային չեն և միջազգայնացման նախաձեռնողականությունը ստորաբաժանումներում հիմնականում անհատական է:

---

[38] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է. «Այդուհանդերձ, սույն առաջնահերթությունն այդպես էլ իր արտահայտումը չի գտնում հստակ մշակված առանձին քաղաքականությունում, ընթացակարգերում և գործընթացներում»:

Միջազգայնացման գործողությունները խոչընդոտվում են ուսանողական համակազմի և ՊԴ կազմի օտար լեզուների իմացության ցածր մակարդակի պատճառով: Այս հանգամանքը նաև պայմանավորում է ՊԴ կազմի սահմանափակ անդամակցությունը և ներգրավվածությունը միջազգային ցանցերում կամ ասոցիացիաներում:

Բաժնի գործունեության արդյունքների և ձեռքբերումների վերլուծություններ չկան: Գնահատված չէ բաժնի գործունեության արդյունավետությունը կամ մինչ այժմ իրականացված միջազգային ծրագրերի և փոխանակումների ազդեցությունը ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների և գործունեության այլ ձևերի վրա: Առկա չէ նաև միջազգային ծրագրերի արդյունքների հիման վրա հաջորդիվ բարելավման քայլերի իրականացման պլաններ:

ՀՊՄՀ-ն տարբեր ձևաչափերի միջազգային համագործակցություն ունի ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ինչպես նաև ԱՊՀ երկրների և Չինաստանի հետ. առկա է գործող կրկնակի դիպլոմի ծրագիր (Պիտեր Պազմանի համալսարան, Հունգարիա), ինչպես նաև իրականացվում են մի քանի օր տևող այցեր, կամ ֆինանսավորման ու ներդրումների համար նախնական պայմանավորվածություններ (Չինաստան): Այսպիսի համագործակցությունը կանոնակարգվում է հաստատությունների միջև համապատասխան համաձայնագրերով: ՄՈՒՀ-ը փաստում է, որ 2015թ.-ի համեմատությամբ այսպիսի գործող պայմանագրերի թիվն աճել է՝ 29-ից հասնելով 41-ի: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միջազգային համագործակցության պայմանագրերի մեծ մասը կա՛մ ավարտված կարճաժամկետ ու դրվագային համագործակցությունը կարգավորող փաստաթղթեր են, կա՛մ լայն շրջանակային համաձայնագրեր՝ կոնկրետ կամ թիրախային գործողությունների բացակայությամբ:

ՀՊՄՀ-ում ուսանողական և ՊԴ շարժունությունը հիմնականում ապահովվում է ԷՐԱԶՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ ծրագրի շրջանակներում: ՄՈՒՀ-ը փաստում է, որ 2015 – 2018թթ. նկատվել է ՊԴ և վարչական կազմի շարժունության աճ՝ 297 դեպք, արձանագրվել է 27% աճ 2011 – 2015թթ.-ի համեմատ: Վարչական և ՊԴ կազմի շարժունության թվերը, ծրագրային, բովանդակային հատկորոշիչները, այնուամենայնիվ, տարբերակված չեն: Ուսանողների շարժունության մասով բոլոր հինգ տարիների համար նշվում է արտագնա ուսանողների ցուցանիշը՝ 339 հոգի: Պիտեր Պազմանի հետ համագործակցության շրջանակն ու ամառային դպրոցը դիտվում են որպես ուսանողների ներգնա շարժունության հիմնարար եղանակ: Ըստ տարիների տարբերակված տվյալների աղյուսակում ուսանողների ներգնա շարժունություն է արձանագրվել միայն 2016 – 2017 և 2017 – 2018 թվականներին՝ համապատասխանաբար 5 և 2 ուսանողներով:

Հատկանշական է, որ ներգնա շարժունություն է ապահովվում նաև նախապատրաստական դասընթացների միջոցով, որոնց դիմում են Միջին Արևելքի և Պարսից ծոցի երկրների այն ուսանողները, որոնք նպատակ ունեն շարունակել ուսումնառությունը Եվրոպայում և դիտարկում են ՀՊՄՀ-ն որպես լեզուների և այլ ոլորտային գիտելիքի զարգացման հարթակ:

Ինչ վերաբերում է արտաքին շարժունությանը, ըստ տարիների տարբերակված տեղեկույթն առկա է սկսած 2015 – 2016 ուստարուց: Այս տեղեկության համաձայն, որևէ տարում ուսանողների շարժունության ցուցանիշն ըստ տարիների չի գերազանցել 11-ը: Շահակիցների հետ հանդիպումների ընթացքում փորձագիտական խմբի համար պարզ դարձավ, որ միջազգային ուսանողների կարիքների վերհանման և գնահատման գործիքներ չեն կիրառվում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի մի շարք ստորաբաժանումներ, օրինակ՝ Պրակտիկայի բաժինը, մեծապես կարևորում է միջազգային փոխանակումների միջոցով պրակտիկայի կազմակերպման հնարավորությունը, ***2016թ. մինչ***

օրս գրանցվել է Լիլի համալսարանում պրակտիկայի անցկացման երկու դեպք.[39] ՄՈՒՀ-ը պրակտիկայի անցկացման նոր հնարավորություն է ստեղծել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների համար Ցյուրիխի համալսարանի հետ երկկողմ փոխանակմամբ՝ ընդհանուր թվով տասնվեց ուսանողների համար :

Միջազգային գործունեության բաղադրիչներից են նաև ԷՐԱԶՄՈՒՍ Կարողությունների զարգացման ծրագրերը. 3 այսպիսի ծրագիր իրականացվել և ամփոփվել է ինքնավերլուծության ժամանակահատվածում, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ը հիմնականում պասիվ է միջազգային ծրագրերի դիմելու հարցում:

ՀՊՄՀ-ն ունի Ամառային դպրոց, որին մասնակցում են տարբեր երկրների ուսանողներ: ՄՈՒՀ-ը կարևորում է Ամառային դպրոցը որպես ՀՀ և ՀՊՄՀ-ի մասին միջազգային իրազեկման բարձրացման գործիք:

ՄՈՒՀ-ի միջազգային գործունեության կարևոր ուղղություններից է նաև սփյուքահայ ուսուցիչների վերապատրաստումը, որը ՄՈՒՀ-ն իրականացրել է ՀՀ պատկան կառույցների պատվիրակմամբ:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ հետազոտության ոլորտում միջազգայնացումը սահմանափակվում է «Իմաստություն» ամսագրի միջազգային շտեմարաններում ներառմամբ: ՄՈՒՀ-ը ձգտում է առաջիկայում այսպիսի գրանցում ապահովել ևս երկու ամսագրերի համար: Այնուամենայնիվ, ակտիվ միջազգային հետազոտական նախագծեր և ծրագրեր առկա չեն:

ՄՈՒՀ-ն ունի մի շարք դասընթացներ, որոնք կարող են իրականացվել օտար լեզվով, առկա են երկու մագիստրոսական ծրագրերի օտարալեզու, հավանաբար թարգմանված, առարկայական նկարագրեր, սակայն ՄԿԾ ողջ մասնագիրը, պրակտիկայի, թեզի, ինչպես նաև դասավանդումն օտարալեզու անցկացնելու տվյալներ չկան:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՄՈՒՀ-ն անդամակցում է մի շարք անդրազգային կառույցների, որոնցից են Համալսարանների Եվրասիական Ասոցիացիան, Եվրոպայի մանկավարժական համալսարանների ռեկտորների ասոցիացիան և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալությունը: Բացի այդ, ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր միջազգային համալսարանների հետ ԷՐԱԶՄՈՒՍ ծրագրի, երկկողմ համաձայնագրերի և Ամառային դպրոցի շրջանակներում:

ՄՈՒՀ-ն ունի համագործակցություն նաև ՄԱԿ-ի այն կառույցների հետ, որոնք զբաղվում են երեխայի իրավունքով և դրան հարակից այլ իրավունքների իրացմամբ: Բացի այդ, համագործակցության որոշ շրջանակներ կան այլ միջազգային կառույցների հայաստանյան ներկայացուցչությունների հետ (Բրիտանական խորհուրդ և այլն):

Համագործակցության գոյություն ունեցող ձևաչափերը հանգեցրել են առանձին ֆակուլտետներում ՄԿԾ-ների բարեփոխումների, առանձին բաժինների փորձի փոխանակման: Ձեռքբերված լավագույն փորձի տարածման ուղղությամբ հստակ քայլեր չկան:

Համագործակցության ակտիվացում է նկատվում հատկապես Ամառային դպրոցի շրջանակներում, ինչի մասին վկայում է գործընկերներ երկրների աշխարհագրական տիրույթի ընդլայնումը:

Հարկ է ընդգծել, որ տեղական աշխատաշուկայի հետ ՄՈՒՀ-ը համագործակցության բավականին հաջողված փորձ ունի: Համագործակցությունն առավել սերտ է պրակտիկաների

---

[39] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է. «այնուամենայնիվ, այս պահին այսպիսի հնարավորությունները բացակայում են»

իրականացման տեսանկյունից: Կան որոշ փորձեր տեղական կառույցների հետ համագործակցության շրջանակներում հետազոտական նախագծեր և թեզեր գրելու գործողություններում, սակայն դրանք սահմանափակ են:

Փորձագիտական ուսումնասիրության և այցի ընթացքում պարզ դարձավ, որ թե՛ տեղական, թե՛ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, միջազգային բաժնի գործունեության վերլուծություն և արդյունավետության գնահատում, ՄՈՒՀ-ի գործունեության տարբեր դրսևորումների վրա համակարգային ազդեցության որոշարկում առկա չէ: Չնայած ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր, դրանց ***որոշ*** մասն, ըստ էության, չի գործում[40]:

9.4 **ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի ցածր լինելը խոչընդոտում է միջազգայնացման գործընթացների ակտիվացմանը, այնուամենայնիվ, այս ուղղությամբ իրավիճակի բարելավման քաղաքականություն ՄՈՒՀ-ում առկա չէ: Բոլոր ՄԿԾ-ներում ներառված են օտար լեզվի դասընթացներ՝ ռուսաց և անգլերեն լեզուների, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս դասընթացները չեն ձևավորում բավարար գիտելիք՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար:

ՄՈՒՀ-ում ուսանողների համար կազմակերպվել են անգլերենի լրացուցիչ պարապմունքներ, այնուամենայնիվ, այս կառույցի ֆեյսբուքյան էջը վկայում է, որ կառույցն այլևս ակտիվ չէ: Չի իրականացվել այս պարապունքների արդյունավետության գնահատում:

ՊԴ կազմի՝ օտար լեզվի իմացության մակարդակը, ըստ ՄՈՒՀ-ի, 100% է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս ցուցանիշը դուրս չի բերվել կոնկրետ ուսումնասիրման արդյունքում, այլ հիմնված է մոտավոր պատկերացումների վրա. ենթադրվել է, որ ՊԴ կազմն անխտիր գոնե տիրապետում է ռուսերենին: Միևնույն ժամանակ, ՄՈՒՀ-ը փաստում է, որ ՊԴ կազմի՝ միջազգային գործընթացներին ներգրավվածությունը խոչընդոտվում է հենց լեզվի իմացության պակասի պատճառով: Ընդ որում, ՄՈՒՀ-ի չի իրականացնում դասախոսների լեզվի իմացության գնահատում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը գնահատում է ՄՈՒՀ-ի ՌԾ-ում ուղղություն 7-ի՝ «Միջազգային և արտաքին գործունեության ընդլայնում» ներառումը, միևնույն ժամանակ փաստելով, որ ՄՈՒՀ-ը չունի առանձին միջազգայնացման հստակ քաղաքականություն, որը կհստակեցներ ՄՈՒՀ-ի առաքելությամբ սահմանված ուղղությունների իրացումը և կներառեր բոլոր/տարբեր առանցքային ոլորտները՝ օտարերկրյա ուսանողների և դասախոսների գրավում, միջազգային գործընկերային կապեր, ուսանողների փոխանակման ծրագրեր, ուսումնական պլանների միջազգայնացում, միջազգայնացում բուհում, միջազգային բենչմարքինգ և այլն: Փորձագիտական խումբը մատնանշում է, որ միջազգայնացման մի շարք տարրեր առկա են, սակայն դրանք համակարգված կերպով չեն իրականացվում: Որոշ դեպքերում միջազգայնացմանն ուղղված քայլերը պայմանավորված են անձնական նախաձեռնությամբ և անձնական կապերով: Միջազգայնացման և արտաքին հարաբերությունների այնպիսի քաղաքականության բացակայությունը, որը կանդրադառնա համալսարանի գործունեության բոլոր հայեցակերպերին, կարող է ռիսկային դարձնել ՄՈՒՀ-ի համակարգային

[40] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է « Չնայած ՄՈՒՀ-ն ունի համագործակցության պայմանագրեր, դրանց մեծ մասն, ըստ էության, չի գործում »:

միջազգայնացումը: Արդյունքում, ՄՈՒՀ-ը կարող է դուրս մնալ միջազգային ժամանակակից զարգացումների շրջանակից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հետ համագործակցությունը, այդ թվում նաև Հունգարիայում Հայագիտություն ամբիոնի ստեղծման առումով, ինչպես նաև ամառային դպրոցների կազմակերպումը, փոխանակման ծրագրերը և դեպի Ասիա ընդլայնվող կապերի հեռանկարը: Փորձագիտական խումբը մատնանշում է նաև բոլոր համագործակցությունների համար գործնական կարգավորման մեխանիզմների և համաձայնագրերի առկայությունը, քանի որ շրջանակային կամ դրվագային համաձայնագրերը չեն ապահովում միջազգայնացման գործողությունների համակարգված իրականացումը:

Դրական է, որ ՀՊՄՀ-ն փորձ է անում իջեցնել միջազգայնացման գործընթացներ մինչև առանձին ֆակուլտետներ, սակայն առհասարակ Միջազգային համագործակցության բաժնի և գիտության ու միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալների գործունեության վերլուծության և արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայությունը ռիսկային է դարձնում բոլոր ֆակուլտետներում միջազգային գործընթացների օրգանական փոխպայմանավորումը և կապը կրթական, հետազոտական և այլ գործընթացների հետ:

Փորձագիտական խումբը մտահոգ է շարժունության այն ցածր ցուցանիշներով, որոնք արձանագրվում են ՄՈՒՀ-ում: Տարվա կտրվածքով, Ամառային դպրոցի ցուցանիշները չհաշված, իրական ուսանողական և ՊԴ շարժունությունն ու փոխանակումը թե՛ ներգնա, թե՛ արտագնա ուղղություններով կազմում է մինչև 0.1%: Այսպիսի ցուցանիշները վկայում են այն մասին, որ ՄՈՒՀ-ում կան լրջագույն խոչընդոտներ: ՄՈՒՀ-ի համար շահեկան կլիներ ակտիվ քայլեր ձեռնարկել երկու հստակ ուղղություններով՝ ա/ խթանել ուսանողների և ՊԴ կազմի օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացությունը, բ/ բարձրացնել շահակիցների մոտիվացիան՝ հստակ ի ցույց դնելով փոխանակումների և միջազգային փորձառությունների արդյունավետությունը հետագա ուսումնառության և մասնագիտական գործունեության համատեքստում: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄՈՒՀ-ի՝ Ամառային դպրոցների միջոցով հայոց կրթական և մշակութային ժառանգության հանրահռչակման նախաձեռնությունը՝ միևնույն ժամանակ փաստելով, որ ՄՈՒՀ-ի համար ավելի շահեկան կլիներ Ամառային դպրոցների՝ ՄՈՒՀ-ի մասնագիտությունների հետ կապակցվածությունը: Ավելին, ՄՈՒՀ-ը դեռևս լուրջ անելիքներ ունի միջազգային հետազոտական նախագծերի նածաձեռնման/մշակման և մասնակցության, ինչպես նաև հետազոտական արդյունքի միջազգային ճանաչման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը նաև դրական է գնահատում միջազգային տարբեր ծրագրերի միջոցով ձեռքբերված գործընկերային հարաբերությունների շարունակականությունը՝ որպես միջազգային գործընթացների հավանական ինտենսիվացման երաշխիք, միևնույն ժամանակ առանձնակիորեն շեշտելով հավատարմագրման նախորդ շրջափուլի փորձագիտական զեկույցում նշված և խորհրդատվություններին համապատասխան բուհի կողմից հաստատված բարելավման գործողությունների պլանով դրանց անդրադարձող գործողությունների չկատարման փաստը:

ՄՈՒՀ-ում միջազգային գործընթացների համար պատասխանատու մարմինների գործունեության արդյունավետության գնահատման, դրանից բխող քայլերի, հետագա բարելավման գործողությունների, ինչպես նաև միջազգայնացման համար բոլոր մակարդակներում առկա կարիքների, այդ թվում և միջազգային ուսանողների կարիքների գնահատման մեխանիզմների բացակայությունը խաչընդոտում է ՄՈՒՀ-ի հստակ և թիրախավորված պլանավորումը՝ միտված միջազգայնացման ակտիվացմանը: Այս առումով փորձագիտական խումբը շեշտում է ՌԾ գործողությունների իրականացման պլանով սահմանված ԳԱՑ-երի անիրատեսականությունը և հավակնոտությունը՝ ՄՈՒՀ-ի ներկայիս

կարողությունների մակարդակում: Միջազգային գործընթացների արդյունավետ իրականացման համար ՄՈՒՀ-ը պետք է հանձն առնի ելակետային իրավիճակի իրատեսական գնահատումը և սեփական տեսլականին միտված իրատեսական ԳԱՑ-երի սահմանումը՝ կապիտալիզացնելով իր ձեռքբերումներն ու ամրագրված կարողունակությունները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի՝ ունեցած անդամակցությունը անդրազգային մի շարք կազմակերպությունների, համագործակցային կապերը, միջազգային հարաբերությունները, այդ հարաբերությունների հավանական ընդլայնման հեռանկարները, կրկնակի դիպլոմ շնորհող ծրագրի լավ փորձը, ամառային դպրոցը, առանձին ենթակառուցվածքի առկայությունը, աստիճանակարգության ստորին օղակների հետ համագործակցության խթանման ջանքերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ-ն **բավարարում է** Չափանիշ 9-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9 -ի պահանջներին գնահատվում ***է բավարար:***

ՉԱՓԱՆԻՇ X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՄՀ-ն իր որակի ներքին ապահովման քաղաքականությունը սահմանել է 2012թ-ին: Քաղաքականության և ընթացակարգերի նկարագրություններ կան հետագայում հաստատված այլ փաստաթղթերում՝ «ՀՊՄՀ-ի որակի ապահովման հայեցակարգ», «ՀՊՄՀ-ի որակի ներքին ապահովման ուղեցույց», «ՀՊՄՀ Որակի կառավարման համակարգի (կառավարում, թափանցիկություն, հաշվետվողականություն) և որակի ապահովման ուղեցույցներ»: ՌԾ-ում սահմանված են որակին առնչվող խնդիրներ (օր. «Խնդիր 1.4. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը») և դրանց իրականացման քայլեր: Չնայած ՄՈՒՀ-ն ունի մի շարք նկարագրված ընթացակարգեր, դրանք դեռ ներդրված չեն գործնականում և մեծամասամբ միասնական ՈԱ քաղաքականության և ՈՆԱ համակարգի մաս չեն կազմում: Որակի ապահովման քաղաքականությունը չի անդրադառնում ՄՈՒՀ-ի ՌԾ ուղղություններին և առաջնահերթություններին, դրա հիման վրա չի պլանավորվել ՄՈՒՀ-ում կրթական և այլ գործընթացների շարունակական բարելավում: Քաղաքականությունը մշակված է Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների նախորդ տարբերակի հիման վրա, և մասամբ է հաշվի առնում ազգային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները: Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն ՈԱԲ կողմից դեռևս չի իրականացվել, իսկ դրանց ազդեցությունը չի գնահատվել:

Որակի ձեռնարկում նկարագրված այնպիսի ՈՆԱ մեխանիզմներ, ինչպիսիք են դասավանդման և ուսումնառության որակի ապահովումը (ՄԿԾ-ների գնահատումը դասախոսների կողմից, ՄԿԾ-ների արտաքին գնահատումը, ՄԿԾ-ների մշտադիտարկումը վիճակագրական՝ որակական և քանակական ցուցիչների հիման վրա, ուսանողների

առաջընթացի ուսումնասիրումը, ուսանողի ծանրաբեռնվածությունը, ուսանողների գիտելիքի գնահատման մշտադիտարկումը, ՊԴ կազմի կատարողականի մշտադիտարկումը), հետազոտության ՈԱ, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությունը, շրջանավարտների մասնագիտական հետագծի ուսումնասիրումը, գործատուների հետադարձ կապի ապահովումը, աշխատաշուկայի պահանջի ուսումնասիրությունը կամ ***չեն իրականացվում, իսկ եթե իրականացվում են պարբերական բնույթ չեն կրում***[41]: Որակի ապահովման փաստացի կիրառվող մեխանիզմներից են ինքնավերլուծությունը, հարցումներն ու ֆոկուս խմբերը, ՊԴԱ վարկանիշավորման գործընթացը, դասալսումները: Դրանց կիրառումը պարբերական, համակարգված բնույթ չի կրում, արդյունքները նպատակային ազդեցություն չեն ունենում կրթական կամ այլ գործընթացի վրա: Գործիքակազմի հուսալիությունն ու արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման ու մշակման, արդյունավետության գնահատման գործընթացներն ապահովված չեն հստակ մեթոդաբանությամբ: Գնահատումների արդյունքների համապարփակ բովանդակային վերլուծություններ չեն իրականացվում, չեն ուսումնասիրվում խնդիրների պատճառներն ու հետևանքները: Փաստաթղթավորված վերլուծություններում թիրախային, խոշոր խնդիրներ չեն վերհանվել: Ինքնավերլուծությունում ներկայացված որոշ տվյալներ մոտավոր տոկոսային արժեքներ են: Հարցումներում կան տվյալներ, որոնք թե առկա համակարգի, թե հեռակայի համար նույնն են, մասնավորապես ենթակառուցվածքների արդյունավետության վերաբերյալ հարցումներում: Ուսումնասիրությունների, վերհանված խնդիրների հիման վրա բարելավումներ չեն իրականացվում: Բարելավման հստակ մեխանիզմներ (քաղված դասեր) չկան: Հարցումների արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ չի ապահովվում. Թեև արդյունքները հրապարակված են կայքում, հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցները դրանցից տեղյակ չեն:

ՈԱ համակարգին առնչվող պաշտոնական փաստաթղթերի հասանելիությունը շահակիցներին ապահովվում է համալսարանի կայքի Որակի ապահովման համակարգի տեղեկատվական պորտալ բաժնում: ՄՈՒՀ-ում դեռևս մշակված չեն որակի ապահովման գործընթացների կատարողականի գնահատման հստակ ցուցիչներ: Որակի ապահովման լավագույն փորձի բացահայտման և տարածման գործուն մեխանիզմներ չեն կիրառվում:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՊՄՀ-ում 2012թ.-ից հիմնվել է Կրթության որակի ապահովման և կառավարման բաժին (ՈԱԲ) 3 հաստիքով: Աշխատակիցների հավաքագրման գործընթացում կարևորվել է մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների սահմանումը, որտեղ ներառված են տվյալ ոլորտում մասնագիտական կարողություններն ու հմտությունները: Հարկ է նշել, որ ՈԱԲ աշխատակիցների կատարողականի գնահատում և կարիքների վերհանում չի իրականացվում: Բաժնի կանոնադրությունը հաստատվել է 2018թ-ին: Բաժնի գործունեությունը համակարգում է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը, որը ենթակա է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորին: Սահմանվել են պաշտոնի անձնագրեր, որտեղ ձևակերպված են բաժնի աշխատակիցների գործառույթները: Նշանակված են որակի ֆակուլտետային, ամբիոնային պատասխանատուներ, որոնց հետ հանդիպման արդյունքում պարզվեց, որ մեծամասամբ տեղյակ չեն ՈԱ քաղաքականությունից և ՈԱԲ գործընթացներից: Ըստ այդմ, հաշվի չի առնված նախորդ փորձագիտական զեկույցի՝ ՈԱ պատասխանատուների մասնագիտական

[41] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «Որակի ձեռնարկում նկարագրված այնպիսի ՈՆԱ մեխանիզմներ, ինչպիսիք են . . . պարբերաբար չեն իրականացվում»:

զարգացման հնարավորությունների ընդլայնման խորհրդատվությունը: Բաժինն իրականացնում է տարեկան պլանավորում, որը հիմնված չէ ՌԾ կամ ՄՈՒՀ-ի որակի հայեցակարգային փաստաթղթերի վրա: Որակի ապահովման հաշվետվությունները ներկայացնում է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությունը: Հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք իրականացված գործընթացների թվարկում են, այլ ոչ բովանդակային հաշվետվություններ՝ որակական և քանակական տվյալներով, ձեռքբերումների և թերացումների պատճառների վերլուծություններով: ՄՈՒՀ-ն էլ է իր ԻՎ SWOT-ում նշում, որ իր որակի ապահովման պատասխանատուների մասնագիտական փորձի պակաս կա, իսկ Բաժնի աշխատակազմի և միջազգային կրթության ոլորտի մասնագետների հետ համագործակցությունը պասիվ է:

ՈԱԲ գործունեության պայմանների դիտարկումները փաստեցին, որ ներկայումս բաժինն ապահովված է անհրաժեշտ գրասենյակային տեխնիկայով, կահույքով և նյութական ռեսուրսներով: ՈԱԲ կադրային ապահովման համար ստեղծված են անհրաժեշտ հաստիքները: Նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ ըստ անհրաժեշտության: ՄՈՒՀ-ը կազմել է բյուջեի 2019-2020թթ. միջնաժամկետ պլանավորման նախագիծ, որտեղ ՈԱ բաժնին 2019թ. ամրագրվել են ՈԱ գործընթացների համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների ցանկ և դրա հիման վրա հատկացվող բյուջեն: Սակայն այդ փաստաթուղթը դեռ չի հաստատվել:

Հանդիպումներին մասնակցած համալսարանի ներքին շահակիցները՝ ուսանողները, ՊԴ կազմը, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակազմի մնացած ներկայացուցիչները հիմնականում տեղեկացված չէին ՄՈՒՀ-ի ՈԱ ձեռնարկի և դրանում ներառված դրույթների մասին:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ՄՈՒՀ-ը 2016թ-ին հաստատել է ՀՊՄՀ որակի ապահովման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման և կարիքների գնահատման կարգ, որի համաձայն. «ՀՊՄՀ-ն պարբերաբար իրականացնում է իր շահակիցների ներգրավվածության ապահովում, կարիքների ուսումնասիրություն, գնահատում և հաշվի է առնում արդյունքները ռազմավարության փոփոխման, զարգացման և կատարելագործման համար»: Այդուհանդերձ, շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ կարգն ըստ էության չի գործում, քանի որ թե՛ ՈԱ ձեռնարկի, թե՛ կանոնակարգող փաստաթղթերի մշակման գործընթացում շահակիցների ներգրավվածությունը թույլ է եղել: Առհասարակ շահակիցների ներգրավվածությունը, հատկապես արտաքին, որակի ապահովման գործընթացներում պասիվ է: Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածությունը ՄՈՒՀ-ը փորձում է ապահովել՝ համապատասխան հանձնախմբերում ներգրավելով կամ հարցումներ անցկացնելով: Սակայն ուսանողները և ՊԴ կազմը ակտիվ մասնակցություն չեն ցուցաբերել և հարցման արդյունքներից էլ տեղյակ չեն: Հեռակա ձևով սովորող և միջազգային ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ նրանք հարցումների չեն մասնակցել: Ըստ հանդիպման արդյունքների՝ արտաքին շահակիցները (շրջանավարտները և գործատուները), հիմնականում, ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում, հարցումներին մասնակցությունը պասիվ է եղել: Ուստի նախորդ հավատարմագրման խորհրդատվությունը՝ հատկապես արտաքին շահակիցների ներգրավվածության մեծացման և արդյունավետության գնահատման մասով, չի իրականացվել: Միայն պրակտիկայի վերաբերյալ հետադարձ կապ է ապահովվել պրակտիկայի բաժնի ջանքերի շնորհիվ: Արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում իրականացվում է հիմնականում անձնական նախաձեռնությամբ և

կապերով: Աշխատաշուկայի ներկայացուցիչների կարծիքը ուսանողների և ծրագրերի որակի վերաբերյալ հարցվում է պրակտիկաների գնահատման ժամանակ:

Ներգրավման գործող մեխանիզմները արդյունավետության գնահատում չեն անցել, գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր դեռ չկան՝ չնայած նախորդ փորձագիտական խմբի դիտողությանը: Շահակիցների մասնակցության աստիճանը որակի ապահովման գործընթացներին և վերջինիս արդյունավետությունը չի գնահատվում: ՈՆԱ քաղաքականության ընկալումը շահակիցների կողմից ցածր է:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Համալսարանի ՈԱ բաժինը կարևորում է որակի շարունակական բարելավումը՝ որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք, մասնավորապես ՈԱԲ կանոնադրության համաձայն՝ բաժնի խնդիրներից է. «ՀՊՄՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակումը և պարբերաբար վերանայումը, վարչական աջակցությունը բոլոր մակարդակներում»: Սակայն ՄՈՒՀ-ում դեռևս չկան որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմներ և գործիքներ: ՄՈՒՀ-ը նշում է, որ Որակի ապահովման համակարգի հիմքում ընկած են ՀՀ և արտասահմանյան գործընկեր մի շարք կազմակերպությունների հետ համատեղ TEMPUS «ՄԱՀԱԹՄԱ», «ԷՍՊԱՔ», «ԱՐՄԵՆՔԱ», «ԲՈՒՍԹ» ծրագրերի արդյունքները: Սակայն որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման նպատակով չի իրականացվել թիրախային բենչմարքինգ: Փաստաթղթերում նկարագրված և ներկայումս գործող որակի ներքին ապահովման համակարգերի միջև էական տարբերություններ կան: Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ հանդիպման ժամանակ փորձագիտական խմբին ներկայացվեց, որ ՄՈՒՀ-ը ներկայումս որակի ապահովման քաղաքականության վերանայման խիստ անհրաժեշտություն է տեսնում, քանի որ գործող քաղաքականությունը ժամանակավրեպ է, ներկա մարտահրավերները հաշվի չի առնում: Համակարգի վերանայում, սակայն, դեռևս չի իրականացվել՝ չնայած նրան, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվություններում առաջարկվում էր. «բարելավել ՈԱ մեխանիզմները, որոնց միջոցով ՄՈՒՀ-ը կկարողանա գնահատել և շարունակաբար վերանայել ՈՆԱ համակարգը»:

Որակի ապահովման համակարգի ընթացիկ մշտադիտարկման և գնահատման համակարգեր ևս ներդրված չեն, համապատասխանաբար բացակայում են նաև արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները: ՈԱ գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջովին փակ չէ: Նախորդ հավատարմագրումից հետո վերհանված խնդիրների լուծման համար նախատեսվող գործընթացների մեծամասնությունը դեռևս պլանավորման և իրականացման փուլում են. ոչ բոլոր գործընթացների համար է իրականացումն ավարտված: Բարելավման նպատակով իրականացվող գործընթացները հիմնված չեն գնահատման արդյունքների վրա: Ժամանակ առ ժամանակ կատարվող գնահատումներին չեն հաջորդում բարելավման գործընթացների պլանավորումներն ու իրականացումը: Վերլուծական հենքի վրա վերանայումների հիմնավորումներ չկան: Իրականացվող գործընթացները ցիկլային կապված չեն ՌԾ-ին: Ուստի նախորդ զեկույցի խորհրդատվությունը ՊԻԳԲ շրջափուլի՝ բոլոր մակարդակներում կիրառման ապահովման մասին, իրականացված չէ:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՄՈՒՀ-ը որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար հիմնական հիմք է դիտարկում ինստիտուցիոնալ կարողությունների արդեն 3-րդ սերնդի

ինքնավերլուծությունը: Սակայն ներկայացված ԻՎ-ն ըստ էության վերլուծական փաստաթուղթ չէ, բնույթով նկարագրողական է, ներկայացված տեղեկատվությունը հիմնավորված չէ որակական և քանակական տվյալներով: Որոշ դեպքերում ներկայացված տվյալները մոտարկված են և հիմնված չեն վերլուծությունների վրա: Որոշ չափորոշիչների պահանջը և ներկայացված տեղեկատվությունը չեն համապատասխանում իրար: Տվյալների հավաքագրման, վերլուծության և կիրառման ինստիտուցիոնալ, համակարգված մոտեցում չկա: Առանձին ստորաբաժանումների ներսում գործընթացը կանոնակարգվում է, սակայն տարբեր ստորաբաժանումների միջև տեղեկատվության տարածման և կառավարման մեխանիզմները հստակ չեն: Սահմանված չեն որակի ցուցիչներ, և հաշվետվություններն ըստ ցուցիչների չեն իրականացվում:

Որակի ապահովման գործընթացների արդյունքում կատարված վերլուծությունները փաստաթղթավորվել և հրապարակվել են կայքում: Չնայած դրան, որոշ գործընթացների վերաբերյալ, օրինակ, ՈԱԲ-ի գործունեության գնահատում և հաշվետվություններ, հարցումների արդյունքների որակական, բովանդակային վերլուծություններ, որակի ապահովման և այլ մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ, ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպում-քննարկումների արձանագրություններ, անհրաժեշտ փաստաթղթային հիմքերը բացակայում են:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՄՈՒՀ-ն իր ՌԾ Խնդիր 1.4-ի քայլերում սահմանում է. «Ապահովել որակի ներքին գնահատման չափորոշիչների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը, հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում և դրանց մասնակից դարձնել համալսարանի ներքին և արտաքին շահակիցներին»:

Այդ նպատակով ստեղծվել է Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության առանձին կայքէջ: Որակի ապահովման արտաքին գնահատման համար ՄՈՒՀ-ի իրականացված ինքնավերլուծությունը, կից փաստաթղթերը, ռեկտորի հաշվետվություններն ու կանոնակարգային հիմքերը հրապարակված են ***կայքէջում:***[42] ***Միևնույն*** տեղեկատվությունը հրապարակված է մի քանի տեղ: Կայքը չի օգտագործվում հետադարձ կապի ապահովման համար: Շահակիցների տեղեկացվածությունը որակի վերաբերյալ տեղադրված նյութերի մասին թույլ է:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՀՊՄՀ ՈՆԱ քաղաքականության վերաբերյալ մի շարք հաստատված փաստաթղթերի հիման վրա հստակ ընթացակարգերի բացակայությունը վկայում են այն մասին, որ այդ փաստաթղթերում ներկայացված սկզբունքներն ու մոտեցումները գործընթացների չեն վերածվել: Այսինքն, ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգը դեռևս ներդրման փուլում է և բավականաչափ ինտեգրված չէ գործընթացներում, համակարգված չի գործում և չկա ինստիտուցիոնալ մոտեցում: Հստակեցված և ներդրված չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային ՄՈՒՀ-ին գնահատել իր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ձևավորման ընթացքը: Համակարգի արդյունավետ գործարկմանն ուղղված քայլերը դեռևս համակարգված բնույթ չեն կրում: Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործիքակազմի

[42] Փոփոխվել է համալսարանի դիտարկումների արդյունքում: Նախկին տարբերակում եղել է «Կայքում տեղեկատվություն գտնելը պարզեցման կարիք ունի»:

անկատարությունը և վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չեն տալիս գնահատել ՈԱ գործընթացների ազդեցությունը ՄԿԾ-ների և համալսարանի գործունեության բարելավման վրա: Առկա չէ գործընթացների արդյունավետության ներքին գնահատման միասնական համակարգ, որը կամբողջականացներ բոլոր մեխանիզմները և ընթացակարգերը: Նույն կերպ առկա չեն նաև պարբերական գնահատման, ինչպես նաև բարեփոխումների ձևակերպման ավանդույթներ: Կատարված հարցումների արդյունքները բովանդակային, որակական վերլուծության չեն ենթարկվում, ինչը դրանց կիրառումը ոչ նպատակային է դարձնում: Ըստ էության, ՄՈՒՀ-ի ՈՆԱ քաղաքականությունը և ընթացակարգերը կյանքի չեն կոչվել և ներդրվել՝ չդառնալով որակի ապահովման գործող համակարգ:

Թույլ է համագործակցությունը ՈԱԲ, որակի ֆակուլտետային և ամբիոնային պատասխանատուների և ստորաբաժանումների միջև, ինչը խոչընդոտում է որակի մշակույթի ներդրմանը ՄՈՒՀ-ում: Ներկայումս ՈՆԱ համակարգը կենտրոնացած է առանձին, հատվածային ընթացակարգերի վրա՝ անտեսելով բարելավմանն ուղղված գնահատումը և համակարգային մոտեցումը: Կիրառվող ՈԱ մեխանիզմները հուսալիության և արժանահավատության գնահատում չեն անցել, ինչը հնարավորություն չի տալիս ՄՈՒՀ-ին գնահատել դրանց արդյունավետությունը:

ՈՆԱ գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային ռեսուրսներ՝ նշանակելով որակի պատասխանատուներ ֆակուլտետներում և ամբիոններում: Չնայած ՄՈՒՀ-ը կարևորում է համապատասխան որակավորում և փորձ ունեցող մասնագետներով ՈԱ բաժնի համալրումը, այդուհանդերձ գործունակ թիմ ստեղծելու և վերլուծական մոտեցում որդեգրելու համար դեռ հետագա մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք կա: ՈԱԲ-ին տրամադրված նյութական և ֆինանսական ռեսուրսները ընդհանուր առմամբ բավարար են գործունեության իրականացման համար:

Չնայած հաստատված կարգում նկարագրված տարբեր մեխանիզմների առկայությանը՝ ՄՈՒՀ-ում ներքին և արտաքին շահակիցների փաստացի ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում շատ թույլ է: Ներգրավվածության հիմնական մեխանիզմ է դիտվում հարցումը, սակայն մասնակցության ցածր տոկոսը, կամ հարցման ոչ պարբերական իրականացումը թույլ չի տվել թիրախային խնդիրները վեր հանել: Ավելին, դրանց հիման վրա հետագա բարելավումների բացակայությունը վատ է անդրադարձել ներքին շահակիցների մոտիվացիայի վրա՝ հանգեցնելով ձևական մասնակցության: Մյուս կողմից այն, որ շահակիցների կարիքները հիմնականում վեր են հանվում հարցումների միջոցով, արդյունքում սահմանափակվում են նրանց հետ կապի և օբյեկտիվ տեղեկատվության ստացման հնարավորությունները: Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների և արտաքին շահակիցների փաստացի ներգրավվածություն առկա չէ. կատարված հարցումներում և ուսումնասիրություններում վերջիններս կրում են պասիվ մասնակցողական բնույթ, ինչը չի ապահովում որակի համատեղ հետազոտություններ կամ արդյունքների ներդրում համապատասխան ոլորտներում:

ՈՆԱ համակարգի վերանայման խիստ անհրաժեշտություն կա, քանի որ փաստաթղթային հիմքերը և գործող համակարգը ըստ էության իրար չեն համապատասխանում: ՈՆԱ համակարգը դեռևս չի խթանում շարունակական բարելավումը: ՈՆԱ համակարգը ցուցիչների և հետադարձ կապի կարիք ունի՝ իր ուժեղ և թույլ կողմերը մատնանշելու ու բարելավման պլաններ մշակելու համար:

Չնայած 3-րդ սերնդի ինքնավերլուծությանը, այն դեռևս չի դարձել վերլուծական փաստաթուղթ: Այն բավարար հիմքեր չի ստեղծում որակի ապահովման արտաքին

գնահատման գործընթացների համար: Ինքնավերլուծական մշակույթը դեռ չի արմատավորվել ՄՈՒՀ-ում:

Ներքին և արտաքին շահակիցների համար ՄՈՒՀ-ի գործընթացների որակի վերաբերյալ փաստաթղթային հիմքերի ներկայացումը կայքէջում հնարավորություն է տալիս ապահովել թափանցիկություն՝ չնայած կայքում տվյալների դյուրին գտնելու հետ կապված պարզեցման կարիք կա: Կայքի հուսալիությունը և արդյունավետությունը վերլուծված չլինելու պատճառով ՄՈՒՀ-ը չի բացահայտել շահակիցների անտեղյակությունը գործընթացների որակի վերաբերյալ ՈԱԲ հետազոտությունների արդյունքներից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հաշվի առնելով այն, որ նախորդ հավատարմագրման ժամանակ վերհանված ՈՆԱ համակարգի խնդիրները մեծամասամբ շարունակում են լինել արդիական. համակարգը դեռ ձևավորման փուլում է, բավականաչափ ինտեգրված չէ ՄՈՒՀ-ի գործունեության մեջ, խթան չի հանդիսանում հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման համար և դեռևս չի նպաստում որակի մշակույթի ձևավորմանը, որակի ապահովման գործընթացները համակարգված չեն իրականացվում, իսկ դրանցում ներքին և արտաքին շահակիցները պասիվ են ներգրավված, համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետության որակական գնահատում և դրանց արդյունքում վերանայման աշխատանքները բացակայում են, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՊՄՀ որակի ապահովման համակարգը դեռ բավարար չափով չի նպաստում գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը և **չի բավարարում** չափանիշ 10-ի պահանջը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՀՊՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի 10-ի պահանջներին գնահատվում է ***անբավարար:***

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	*Բավարար*
II. Կառավարում և վարչարարություն	*Անբավարար*
III. Կրթական ծրագրեր	*Անբավարար*
IV. Ուսանողներ	*Բավարար*
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	*Բավարար*
VI.Հետազոտություն և զարգացում	*Անբավարար*
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	*Բավարար*
VIII. Հասարակական պատասխանատվություն	*Բավարար*
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	*Բավարար*
X. Որակի ներքին ապահովման համակարգ	*Անբավարար*

11 հոկտեմբերի 2019թ.

Քրիստինե Սողիկյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քրիստինե Սողիկյան– 2000թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետը («անգլերենի և ֆրանսերենի մասնագետ, ուսուցիչ» որակավորմամբ), իսկ 2003թ.-ին՝ նույն համալսարանի առկա ասպիրանտուրան: 2000թ.-ից աշխատում է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական, վերանվանումից հետո՝ լեզվահասարակագիտական համալսարանում: Մասնակցել է բազմաթիվ միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դասընթացների՝ լինելով արտասահմանյան մի շարք համալսարաններում, այդ թվում՝ Սիրակուզի, Կոլումբիայի, Միչիգանի, Մասաչուսեթսի համալսարաններ (ԱՄՆ): 2000-2008թթ. դասավանդել է ինչպես ՀՀ տարբեր միջնակարգ դպրոցներում, այնպես էլ արտասահմանում՝ որպես անգլերենի ուսուցիչ: 2005-2007թթ. եղել է Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի փորձագետ (Ավստրիա)՝ համահեղինակելով The European Portfolio of Student Teachers of Languages (EPOSTL) համաեվրոպական մանկավարժամեթոդական ինքնագնահատման թղթապանակը: 2008թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը, 2012թ.՝ դոցենտի կոչումը: 2011-2012թթ. դասախոսել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում, այդ նույն ժամանակահատվածում եղել է նաև ԵՊԼՀ-ի «Գրավոր խոսքի» մեթոդական խմբի ղեկավար: 2012թ. մինչ օրս նույն համալսարանի Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչն է: 2001թ. մինչ օրս աշխատում է որպես գրավոր և հաջորդական/համընթաց թարգմանիչ՝ մի շարք միջազգային կազմակերպությունների, դեսպանատների հետ համագործակցությամբ: Երեք տասնյակից ավելի հոդվածների հեղինակ և համահեղինակ է: 2018 թ.-ից ներառված է ՀՀ ՄՈՒՀ-երի հավատարմագրման գործընթացներում որպես փորձագետ:

Գագիկ Քթրյան – 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի բակալավրիատը՝ «մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2007թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2010թ. շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Հաշվողական մաթեմատիկա» մասնագիտությամբ՝ «Բազմաչափ բազմանդամային միջարկման և Գասքա-Մաեզթուի վարկածի վերաբերյալ» թեմայով: Հետազոտությունների ոլորտը ներառում է բազմաչափ բազմանդամային միջարկումը (ինտեր-պոլյացիա), սովորական և մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավա-սա-րումները և այլն: 2008թ.-ից դասավանդում է բարձրագույն կրթության համակարգում: 2012–2015թթ. կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր և որակի ապահովման կենտրոնի ղեկավար է եղել Մովսես Խորենացու անվան համալսարանում, 2015–2018թթ. որակի ապահովման և վերլուծության բաժնի պետ (2-րդ դասի խորհրդական)՝ ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում: 2018թ. նոյեմբերից մինչ այժմ աշխատում է ՀՀ ՊՆ տեղեկա-տվու-թյան և հասարակայնության հետ կապերի վարչությունում՝ որպես Հասարակայության հետ կապերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (1-ին դասի խորհրդական): Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված մի շարք համաժողովների: 2012թ.-ին մասնակցել է «Որակի ներ-քին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով վերապատրաստմանը: 2015թ.-ից փորձագետ է ՀՀ բուհերի հավատարմագրման գործըն-թացներում:

Նարինե Խաչատրյան – 1999թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը «Հոգեբանություն» մասնագիտությամբ՝ որպես դիպլոմավորված մասնագետ: 1999-ից աշխատել է ԵՊՀ-ում որպես գիտաշխատող, այնուհետև՝ դասախոս: 2006թ. ստացել է հոգեբանական գիտությունների

թեկնածուի աստիճանը, իսկ 2008-ին դոցենտի կոչում: 2011թ.-ից մինչ այժմ ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի վարիչն է և «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի գիտական ղեկավարը: Մասնակցել է մասնագիտական ուղղվածության մի շարք միջազգային հետազոտական, վերապատրաստման և փոխանակման ծրագրերին: 2010թ. եղել է Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների (ACTR/ACCELS) երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագրի (JFDP) կրթաթոշակառու և վերապատրաստում է անցել Կանզասի համալսարանում, ԱՄՆ: 2014թ. մասնակցել է «Բուհերում միջազգայնացման խթանում մշակութային և կառուցվածքային հարմարման միջոցով» (PICASA, TEMPUS) ծրագրին և անցել է վերապատրաստում Բելգիայում: Իրականացրել է մի շարք դրամաշնորհային ծրագրեր ինչպես գիտահետազոտական, այնպես էլ նորարարական դասընթացների մշակման ուղղվածությամբ: Չորս գրախոսվող պարբերականների, այդ թվում նաև միջազգային պարբերականի *(Current Issues in Personality Psychology)* խմբագրական կազմի անդամ է: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է անձի զարգացման կայունության և բարեկեցության, տոլերանտո գիտակցության, անձ և մշակույթ հիմնախնդիրները, գենդերային հոգեբանություն, հոգեկան առողջություն և ապաքինում: Ավելի քան 35 տպագիր աշխատանքների՝ գիտական հոդվածների, ուսումնամեթոդական մեթոդական ձեռնարկների հեղինակ է: 2019թ. ընդգրկվել է ՈԱԱԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբում՝ որպես փորձագետ:

Փիթեր Քաղիս - 1998թ. ավարտել է Լյուվենի Կաթոլիկ համալսարանը կենսաբանության մագիստրոսի որակավորմամբ: Պարոն Քարիսը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի (NVAO) Հավատարմագրման կազմակերպության ավագ խորհրդատու է: Վերջին մի քանի տարիների ընթացքում ներառված է եղել Ֆլանդրիայի ինստիտուցիոնալ դիտարկումների ներդրման նախագծում և հանդիսացել է ՄՈՒՀերի և քոլեջների գնահատման մեթոդաբանության մշակման պատասխանատու: Նա Ֆլանդրիայի բարձրագույն կրթության համայնքի շահագրգիռ կողմերի հնչեցրած խորհրդի քարտուղարն է և ակտիվորեն նպաստել է այնտեղ որակի ապահովման նոր համակարգի զարգացմանը: 2018 թ. նա մասնակցել է ENQA Leadership Development Program- ին, որը ներառում է բարձրագույն կրթության գլոբալ միտումները, EHEA-ի զարգացումները, բարձրագույն կրթության քաղաքականության զարգացումները և որակի ապահովման շրջանակի վերաբերյալ աշխատանքները:

Սրբուհի Միչիկյան – 2019թ. ավարտել է Երևանի Պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատը՝ «Սոցիոլոգիա» մասնագիտությամբ: 2016թ. մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի կազմակերպած «Ուսանող-փորձագետների վերապատրաստման» եռամսյա դասընթացին: 2017-2018թթ. նույն կենտրոնում իրականացրել է կամավորական աշխատանքներ: 2017 թվականից հանդիսանում է Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի սոցիալական հարցերով հանձնաժողովի անդամ: Մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի և տեղական գիտաժողովների: 2017 թ.-դեկտեմբեր-2018թ. փետրվար ամիսներին աշխատել է «Հույսի կամուրջ» կազմակերպությունում՝ որպես նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում ներառական կրթության գնահատման դիտարկող: 2018 թ.-ից ներգրավված է որակի ապահովման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

20.05.2019թ. - 24.05.2019թ.

	20.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական համալսարանի ռեկտորի հետ	10:00	10:30	30 րոպե
2	Հանդիպում հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների հետ	10:40	11:30	50 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ	11:40	12:15	35 րոպե
4	Հանդիպում պրոռեկտորների, ֆինանսների ծրագրավորման և վիճակագրական վարչության պետի և ռազմավարական ծրագրի մշակողների հետ	12:15	13:15	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:15	14:15	60 րոպե
6	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	14:30	15:30	60 րոպե
7	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ	15:40	16:40	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	16:50	18:00	70 րոպե
	21.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում դեկանների հետ	09:45	10:45	60 րոպե
2	Հանդիպում ինքնավերլուծությունում ներկայացված ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների վարիչների և ծրագրերը մշակող խմբի հետ	11:00	11:45	45 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	12:00	13:30	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հետ (8-10 հոգի)	14:45	15:30	45 րոպե
6	Հանդիպում համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի հետ (8-10 հոգի)	15:45	16:30	45 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	16:30	18:00	90 րոպե
	22.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների կամ ներկայացուցիչների հետ (Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին, Ուսումնական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժին, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժին, Գիտահետազոտական կենտրոն, գիտաուսումնական աշխատանքների համակարգման բաժին, Սփյուռք գիտաուսումնական կենտրոն, Պրակտիկայի կենտրոն)	09:45	10:30	45 րոպե
2	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ (10 հոգի)	10:45	11:30	45 րոպե
3	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ	11:45	12:30	45 րոպե

	(առկա բակալավրիատ, մագիստրատուրա, 8-10 հոգի)			
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	12:45	13:45	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (հեռակա բակալավրիատ և մագիստրատուրա, միջազգային ուսանողներ 10 հոգի)	14:00	14:45	45 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում (դեկանատներ, ամբիոններ, լաբորատորիաներ, հետազոտական կենտրոններ)	15:00	16:00	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	16:00	18:00	120 րոպե
	23.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Համալսարան-գործատու համագործակցության կենտրոն, Լրատվության և հանրության հետ կապերի վարչություն, Միջազգային համագործակցության բաժին, Անձնակազմի հաշվառման բաժին, Հաշվապահություն, Հատուկ բաժին)	10:00	11:00	60 րոպե
2	Դասալսումներ	11:15	13:00	105 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	14:15	15:15	60 րոպե
5	Ռեսուրսների դիտարկում (Գիտական գրադարան, Պատմության թանգարան, SS կենտրոն, համակարգչային լսարաններ, մարզասրահ, առաջին օգնության կենտրոն, դահլիճներ, լսարաններ, «ՇԱԽՄԱՏ» գիտահետազոտական ինստիտուտ հիմնարկ)	15:30	16:30	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ քննարկումներ	16:30	18:00	90 րոպե
	24.05.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Ռեսուրսների դիտարկում (արվեստանոցներ, արհեստանոցներ)	9:45	11:15	90 րոպե
2	Բաց հանդիպում	11: 15	12:00	45 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ	12:00	13:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	13:00	13:45	45 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ քննարկումներ	13:45	14:15	210 րոպե
6	Հանդիպում ռեկտորի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՀՊՄՀ ինքնավերլուծություն և հավելվածներ, էլեկտրոնային հարցաշար	
2.	Ֆակուլտետային պլանների հաշվետվություն ներկայացված որպես ՌԾ-ով սահմանված նպատակների ձեռքբերումների վերլուծություններ	1.3
3.	Կազմակերպական կառուցվածքի արդյունավետության վերլուծություն	2.1
4.	Ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականություն /հաստատված 31.01.2019/	2.3
5.	Աշխատաշուկայի կարիքների և կրթական միջավայրի վերլուծություններ	2.4
6.	Ստորաբաժանումների, ամբիոնների, դեկանատների աշխատանքային պլանների նմուշներ	2.5
7.	Ֆակուլտետների և ամբիոնների կանոնադրություններ	2.5
8.	«Ֆակուլտետային խորհրդի գործունեության կանոնակարգ», ներառյալ անդամների ընտրության ընթացակարգ	2.5
9.	Ֆակուլտետային խորհրդի ուսումնամեթոդական հանձնաժողովների գործունեության կանոնակարգ (առանձին փաստաթղթի առկայության դեպքում) կամ համապատասխան բաժնի առկայությունը «Ֆակուլտետային խորհրդի գործունեության կանոնակարգ»-ում	2.5
10.	Ֆակուլտետային խորհրդի և ուսումնամեթոդական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ	2.5
11.	Ռեկտորի տարեկան հաշվետվությունները ներկայացված որպես ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններ	2.5
12.	Ավարտական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ	2.7
13.	«Օտար լեզու», ՄԿԾ-ների առարկայական նկարագրերը բակալավրի և մագիստրոսի որակավորման համար	3.1
14.	ՄԿԾ-ների վերանայման համար ստեղծված աշխատանքային խմբերի հանդիպման արձանագրություններ և հաշվետվություններ	3.1
15.	Դասացուցակներ	3.1
16.	Ամբիոնի նիստի արձանագրությունները	
17.	Ամփոփաթերթեր ներկայացված ՄԿԾ-ների և օտար լեզուներով ՄԿԾ-ների համար /առկա, հեռակա՝ 2013-2018թթ/	3.2
18.	Հաճախումների մատյան/դասամատյան /առկա, հեռակա՝ 2013-2018թթ/	3.2
19.	Դասախոսների դասալսումների արդյունքների վերլուծություն Դասալսումների թերթիկներ	3.2
20.	Թեմատիկ տրոհումներ ներկայացված որպես դասի պլաններ	3.2
21.	Ուսանողների ինքնուրույն աշխատանքներ՝ ռեֆերատ, կուրսային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 2-ը՝ գերազանց և անբավարար գնահատված), խմբային աշխատանքների նյութեր	3.3
22.	Ուսանողների ավարտական աշխատանքներ՝ թեզեր, դիպլոմային աշխատանքներ (յուրաքանչյուր մասնագիտությունից 6-ը՝ 2 բավարար, 2 գերազանց և 2 անբավարար գնահատված)	3.3
23.	Ուսանողների ակադեմիական թերթիկներ	3.3
24.	Ուսանողների գնահատման տեղեկագրեր	3.3
25.	«Օտար լեզու/անգլերեն», «Ընդհանուր հոգեբանություն», «Մանկավարժություն», «Բարձրագույն մաթեմատիկա» առարկաների	3.3

	հանձնարարությունները/առաջադրանքները	
26.	Ներկայացված թեզերի գրախոսումները	3.3
27.	Թեզերի պատրաստմանը ներկայացվող պահանջներ	3.3
28.	Թեզերի գնահատման չափանիշներ	3.3
29.	Թեզերի պաշտպանության կարգ	3.3
30.	Քննական հարցաշարեր, տոմսեր	3.3
31.	Քննական թեստերի օրինակներ	3.3
32.	ARMENQA արդյունահետ դասընթացների և կրթական ծրագրերի մշակում դասախոսական ձեռնարկ որպես կրեդիտների հաշվարկման կարգը	3.3
33.	Պետական ավարտական հանձնաժողովների արձանագրությունները վերջին 3 տարիների համար, դրանց քննարկումների արձանագրությունները և կայացված որոշումները	3.3
34.	Էրազմուս + կրեդիտային շարժունության ուղեցույց որպես ուսանողների և դասախոսների շարժունությունը կանոնակարգող փաստաթուղթ	3.4
35.	Դասավանդման և ուսումնառության արդյունավետության գնահատման մեխանիզմներ/գործիքակազմ/ լրացված հարցաթերթիկներ	3.5
36.	Արտաքին կարծիք ՄԿԾ-ների վերաբերյալ, դրա հիման վրա կատարված փոփոխություններ	3.5
37.	Ուսանողների տեղափոխությունները առկայից հեռակա և հակառակը/ վերջին 5 տարվա համար	4.1
38.	Ուսանողների թիվը ըստ ֆակուլտետների	4.1
39.	Օտարերկրյա ուսանողների թիվ, աշխարհագրություն՝ ըստ ՄԿԾ-ների	4.1
40.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խմբերի հաշվետվություններ և վերջինիս վերաբերյալ ֆակուլտետային խորհուրդների նիստերի արձանագրություններ	4.1
41.	Նախապատրաստական բաժնի գործառույթներն ու պայմանագիրը ներկայացված որպես բաժնի փաստաթղթային փաթեթ՝ ունկնդիրների գնահատման թերթիկներ, մատյաններ, առաջադրանքներ, քննությունների արդյունքներ	4.1
42.	Ուսանողների շրջափոխման կանոնակարգ	4.2
43.	Ուսանողների ուսումնական վարձավճարի մասնակի փոխհատուցման կանոնակարգ	4.2
44.	Ուսումնական զեղչերից օգտվող ուսանողների տոկոսը	4.2
45.	Ֆակուլտետների նիստերի արձանագրություններ	4.2
46.	Պրակտիկա գնալուց առաջ և հետո կազմակերպված գիտաժողովների արձանագրություններ	4.2
47.	ՈՒԳԸ կանոնադրություն ՈՒԽ և ՈՒԳԸ նիստերի արձանագրություններ ՈՒԽ և ՈՒԳԸ տարեկան միջոցառումների օրակարգեր և արձանագրություններ ՈՒԽ և ՈՒԳԸ տարեկան հաշվետվություններ	4.2 4.7
48.	Ուսումնական խորհրդատուների/ գործունեությունը կանոնակարգող հիմքեր, աշխատանքային պլան՝ Ընթացիկ միջոցառումների ցանկ, արդյունքներ	4.2
49.	Պրակտիկայի խմբերին կցված մեթոդիստների հաշվետվություններ, կամ նշումներ ներկայացված խորհրդատվության մասին	4.3
50.	Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի գործառույթները, աշխատանքայի պլանը, տարեկան հաշվետվությունները	4.5

51.	Գործատուների հետ կնքված պայմանագրի օրինակ	4.5
52.	2015-2018թթ շրջանավարտների ընդհանուր քանակը՝ ընդհանուր և ըստ ՄԿԾ-ների	4.5
53.	Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներ	4.8
54.	Դասախոսական կազմի հավաքագրման նպատակով իրականացվող մրցույթի պահանջները	5.1
55.	Դասախոսների թղթապանակի /պորտֆոլիո/ օրինակներ, ներկայացված ՄԿԾ-ների ուղղությամբ	5.1
56.	Դասախոսների աշխատանքային անհատական զարգացման պլաններ	5.1
57.	ՊԴ կազմի գործառույթները, պաշտոնի անձնագիր	5.1
58.	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հետ կնքվող պայմանագրերի օրինակ	5.1
59.	Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքից հեռացման քաղաքականություն	5.1
60.	Դասալսումների և հարցումների վերլուծությունների արդյունքները՝ դիտողություններով, առաջարկություններով, արված եզրակացությամբ, որոնք ներկայացվում և քննարկվում են այլ դասախոսների հետ, ամբիոնի և ռեկտորատի նիստերում	5.3
61.	Ամբիոնի, ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի, գիտխորհրդի նիստերի արձանագրություններ ուսանողների դժգոհությունների և առաջարկությունների վերաբերյալ	5.3
62.	Դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ծրագիր, հաշվետվություններ, արդյունավետության գնահատման վերլուծություններ	5.4
63.	Հաստիքացուցակ	5.5
64.	Սեմինարների, ժողովների թեմաներն ու ժամանակացույցը	5.5
65.	Վարչական անձնակազմի հաշվետվություններ	5.7
66.	Գիտ. պետ. կոմի ծրագրերը ներկայացված որպես Գիտահետազոտական կենտրոնի տարեկան պլաններ	6.1
67.	Ամբիոնների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետազոտական ծրագրեր, և վերջիններիս ձեռքբերման վերլուծություններ	6.2
68.	Գրագողությունը բացահայտող ծրագրերով ստուգման արդյունքի նմուշներ, այդ թվում՝ բացասական եզրակացությամբ	6.3
69.	Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար	6.3
70.	Միջազգային գիտաժողովներում ուսանողների զեկուցումների ցանկ	6.4
71.	Ռեկտորի տարեկան հաշվետվությունները ներկայացված որպես ՄՈՒՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները և հաշվետվությունները	8.1
72.	ՄՈՒՀ-ի վերաբերյալ գովազդային բուկլետների օրինակներ	8.2
73.	Օտարալեզու կրթական ծրագրեր	9.2
74.	Օտար լեզվով դասավանդվող դասընթացների ցանկն ու ժամանակացույցը	9.2
75.	Կրթության որակի ապահովման եվ կառավարման բաժնի տարեկան աշխատանքային պլանները /վերջին 3 տարվա/	9.2
76.	ՈԱ գործընթացների իրականացման պլանները վերջին 3 տարվա համար	10.1
77.	Որակի ապահովման պատասխանատուների պաշտոնների անձնագրեր	10.1
78.	Ռեկտորի հաշվետվությունները ներկայացված որպես Կրթության որակի ապահովման եվ կառավարման բաժնի հաշվետվությունները վերջին 3 տարվա համար	10.1